

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(16)

ԵՐԵՎԱՆ 2017

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Առաքելյան Ս. Ա. – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից,
անդամ,

Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Միքայելյան Մ. Վ. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Միքայելյան Վ. Հ. – հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ս. Ա. Առաքելյան
և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան - Եր: ԵՊՀ հրատ., 2017 թ.-237 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2017թ.

© Հեղ. խումբ, 2017 թ.

YEREVAN STATE UNIVERSITY

IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 2(16)

YEREVAN 2017

YSU PUBLISHING_HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - *doctor of historical science, professor*

EDITORIAL COUNCIL

Arakelyan S. A. - candidate of historical science professor

Asatryan A. G. - doctor of art, professor

Derdzyan H. M. - doctor of law, professor

Gasparyan S. K. - doctor of philological science, professor

Gharibyan G. A. - doctor of economic science, professor associate member of NAS,
RA

Manucharyan H. G. - doctor of political science, professor

Minasyan E. G. - doctor of historical science, professor

Mikaelyan M. V. - doctor of economic science, professor

Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor

Muradyan S. P. - doctor of philological science, professor

Nahapetyan R. A. - doctor of historical science, professor

Zakaryan S. A. - doctor of philosophy science, professor

Akunq. Collection of scientific articles/Edit.council S. A. Arakelyan and others;
Editor – in - chief A.A. Nersisyan. - Yer. YSU publishing - house, 2017 – 237 p.

© YSU publishing-house 2017

© Author group, 2017

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1940-ԱԿԱՆ ԹԹ.)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջափուլ թեակոխեց իբրև պատմամշակութային գիտության լիովին կազմավորված բնագավառ: Խորհրդային կարգերի հաստատումով սկսվեց հայագիտության զարգացման նոր փուլ՝ Հայաստանում գիտության մյուս բնագավառների հետ միասին բարենպաստ պայմաններ և զարգացման լայն հեռանկարներ ստեղծվեցին նաև ազգագրական գիտության համար: Նյութական հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետազոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանքների ծավալման համար¹: Այն, ինչ նախկինում ինքնուրույն պետականության բացակայության պատճառով մեզանում կատարվում էր առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական և նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, սկսեց իրականացվել պետական հոգածությունը՝ վայելող համապատասխան հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրված, հետևողական գործունեությամբ: Խորհրդային ազգագրության խնդիրների ու հեռանկարների, սոցիալիստական գյուղի վերափոխումների անդրադարձների վերաբերյալ պահանջներ էին առաջ քաշվում միութենական ազգագրության կողմից²: Սոցիալիստական գաղափարաբանության հիմնական պահանջներին համապատասխան քաղաքականացվում էր հասարակական գիտությունների ուսումնասիրությունը, գլխավոր խնդիրն էր դառնում պետական իշխանության ու կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության քարոզչությունը, սոցիալիստական վերափոխումները ներկայացնելը: Գաղափարական այս պարտադրանքի պայմաններում հայագիտության, այդ թվում նաև ազգագրական գիտության ապահով և անկաշկանդ զարգացումը ըստ էության դարձավ անհնարին: Այդուհանդերձ, հայ ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային տարիների ակնառու էին: Խորհրդային շրջանում հայ ազգագրության ընթացքը նույնպես կարելի է բաժանել զարգացման երկու ժամանակաշրջանի.

ա) 1920-1940-ական թթ., երբ տակավին գործում էին դեռևս նախահեղափոխական շրջանից հայտնի բազմավաստակ ազգագրագետներ և բանագետներ (Ե. Լալայան, Խ. Մամուլեյան, Մտ. Լիսիցյան, Մ. Աբեղյան, Հ. Օրբելի և այլք), որոնք հավաքչական գործունեությանը զուգընթաց հրատարակեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ:

բ) 1950-1980-ական թթ., երբ ասպարեզ եկավ ազգագրագետների նոր սերունդ, որը հենվելով ավանդականի վրա, գիտության տվյալ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, ծավալեց հավաքչական և հետազոտական լայն

¹ Տե՛ս Է. Կարապետյան, Դ. Վարդույան, О некоторых задачах армянской советской этнографии, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1952, № 1, էջ 67-74:

² Տե՛ս Ս. Պ. Գոլոսով, Основные задачи и путь развития советской этнографии, «Институт этнографии, краткие сообщения» М.-Л., 1950, № XII:

գործունեություն Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Հայաստանի պատմության պետական թանգարանում, Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնում ու Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր-Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով ողջ պատմական Հայաստանում և Անդրկովկասում փակվեցին ազգագրական հրատարակչությունները, Հայոց ազգագրական ընկերությունը և նրա գործունեությանը նպաստող կազմակերպությունները: Նահատակվեցին կամ ցաքուցրիվ եղան նախախորհրդային շրջանում հայտնի բազմաթիվ ազգագրագետ-բանահավաքներ, որոնք համախմբված էին հատկապես «Ազգագրական հանդես»-ի շուրջը: Նորաստեղծ Խորհրդային Հայաստանին վիճակված էր ամեն ինչ նորից սկսել³: Խորհրդային իշխանության առաջին տարիներին նոր կադրերի մեծ պակաս կար, բուհերի ուսումնական ծրագրերում բացակայում էր ազգագրագետ կադրեր պատրաստելու պահանջը, Մոսկվայի և Լենինգրադի բուհերում շատ թույլ էր կովկասագիտական առարկաների դասավանդման մակարդակը, հույս չէր ներշնչում դրանցում հայ ազգագրագետ կադրեր պատրաստելու գործընթացը: Մի կողմից երկրի տնտեսական ծանր վիճակը, մյուս կողմից կադրերի պակասը բացասաբար էին անդրադառնում հայ ազգագրության հավաքչական և գիտահետազոտական աշխատանքները արդյունավետ իրականացնելու վրա: Հարկավոր էր մի նյութական հիմք, որի վրա հենվելով հնարավոր կլինեք ստեղծել ու աճեցնել նոր ազգագրական կադրեր: Խորհրդային ժամանակաշրջանում 1920-1930-ական թթ. դժվարին նյութական պայմաններում, բայց պետության անմիջական իրավասությամբ, այդուհանդերձ նախորդ սերնդի անբասիր աշխատանքով ազգագրական գիտության զարգացման հնարավորություններ ստեղծվեցին:

Երվանդ Լալայանի 1920-ականթթ. գործունեությունը:

Խորհրդային շրջանում ազգագրական գիտության արդեն ձևավորված հիմնական սկզբունքների մի մասը պահպանվեց, սակայն զգալի էին նաև արձանագրված փոփոխությունները: Այս հարցում անուրանալի է անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանի վաստակը: Պատմաազգագրական շրջանացման և Ե.

³ Տե՛ս **Лисициан Ст.**, Армянская этнография за 15 лет, «Советская Этнография» (այսուհետ՝ ՇԵ), 1936, № 4-5, էջ 270-274, **Է. Վարապետյան, Դ. Վարդումյան**, Սովետահայ ազգագրության մի քանի խնդիրների մասին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, № 1, էջ 67-74, **Вардумян Д. С.**, Этнографическая работа в Армении в 5-6 пятилетиях, ՇԵ, 1956, № 3, էջ 146-148, **Խույնի**, Армянская этнография за годы Советской власти, ՇԵ, 1962, № 5, էջ 111-116, **Խույնի**, Ազգագրություն / «Գիտությունը Հայաստանում 50 տարում», ՀՍՍՀ ԳԱ հր., Եր., 1973, էջ 65-70, **Карапетян Э. Т.**, К 60-летию армянского этнографического периодического издания «Азггракан андес», ՇԵ, 1956, № 2, էջ 111-114, **Мелик-Пашаян К.В.**, Жизнь и деятельность Эрванд Лалаяна, ՇԵ, 1965, № 2, էջ 135-146, **Խույնի**, Ստեփան Լիսիցյան (ծննդյան 100-ամյակ առթիվ), «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1965, № 4, էջ 31-42, **Ա. Օղաբաջյան**, Խաչիկ Սամվելյանը ազգագրագետ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 11, էջ 33-42, **Վ. Բրդյան**, Ազգագրություն (հայագիտությունը 50 տարում), Եր., 1970, էջ 195-229, **Դ. Վարդումյան**, Ազգագրություն, ՊԲՀ, 1970, № 4, էջ 135-145, **Խույնի**, Հայ ազգագրությունը Ի դարում, «Բազմավեպ», 1-4, 2003, էջ 451-465, **Վ. Վ. Մելիք-Փաշայան**, Սովետահայ ազգագրության անցած ուղին, ՊԲՀ, 1968, № 11, էջ 54-67:

Լալայանի մշակած սկզբունքով հետազոտությունները⁴ շարունակվեցին նաև խորհրդային շրջանում: XIX դարի վերջին քառորդից արմատավորված պատմահամեմատական մեթոդի կիրառությունը զարգացման լայն հեռանկարներ բացեց հայագիտության բոլոր բնագավառների, այդ թվում հայ ազգագրական գիտության առաջընթացի համար:

1920-ական թթ. Ե. Լալայանը ազգագրորեն, տեղագրորեն և հնագիտորեն հետազոտեց Կոտայքի շրջանը, մշակեց անցյալում իր կուտակած հարուստ ազգագրական նյութը: Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի միջոցներով նախ 1926 թ., ապա 1928 թ. Ե. Լալայանը գործուղվեց Կոտայքի շրջան: 1926 թ. ամռանը 40 օր մնալով գիտարշավը հայտնաբերեց և գրի առավ շուրջ 400 հին ու նոր ժողովրդական քառյակներ, հինգ տասնյակ հեքիաթներ, գրույցներ ու առակներ⁵: Կոտայքում կատարված դիտարկումների մի մասը հրատարակվեց ՀԽՍՀ գիտության և արվեստի (ՀԳԱԻ) տեղեկագրում⁶: Այստեղ նա իր կնոջ՝ Հայկանուշ Հարությունյանի և բանահավաք Շահեն Կուժիկյանի օգնությամբ գրի առավ սոցիալական հարաբերությունների, կրոնական պատկերացումների վերաբերյալ մեծ քանակությամբ ազգագրական և հատկապես բանահյուսական նյութեր: Ե. Լալայանը ստանձնել էր ոչ միայն նորաստեղծ թանգարանի, հատկապես ազգագրության բաժնի հոգսերը, այլև Երևանի և Արարատյան հովտի ազգագրության ուսումնասիրությունը: Նրա ծրագրերի մեջ էր մտնում նաև Երևանի զավառագիտական թանգարանի կազմակերպումը: Նա շարունակում է պեղումները Էլառում:

Ե. Լալայանի այդ տարիների հնագիտական ու ազգագրական ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից»⁷, «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ»⁸, «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում»⁹ հոդվածներում, «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում»¹⁰ (Եր., 1931) մենագրությունում: Իր հնագիտական աշխատանքները ամփոփող այս գրքում Լալայանը նկարագրել և արժևորել է իր պեղած բրոնզեդարյան փոխադրամիջոց սայլը, որ գտնվել էր Սևանա լճի ավազանում: Փաստորեն, սա փոխադրամիջոցների վերաբերյալ թերևս առաջին հաղորդումն էր: Դրա կարևո-

⁴ Տե՛ս Ե. Լալայան, Ջավախք, «Ազգագրական հանդես» (այսուհետ՝ ԱՀ), Շուշի, 1896, գ. 1, էջ 117-378, **նույնի՝** Վարանդա, ԱՀ, Թիֆլիս, 1997, գ. 2, էջ 5-255, **նույնի՝** Միսիան, ԱՀ, Թիֆլիս, 1898, գ. 3, էջ 105-272, **նույնի՝** Ջանգեզուր, ԱՀ, Թիֆլիս, 1898, գ. 4, էջ 7-117, Գանձակ, ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. 5, էջ 213-260, **նույնի՝** Բորչալու, ԱՀ, Թիֆլիս, 1902, գ. 9, էջ 197-262, **նույնի՝** Գողթն, ԱՀ, Թիֆլիս, 1905, գ. 12, էջ 109-174, **նույնի՝** Վայոց-ձոր, ԱՀ, Թիֆլիս, 1906, գ. 14, էջ 133-155, **նույնի՝** Նոր- Բայազետ, ԱՀ, Թիֆլիս, 1907, գ. 16, էջ 8-65, **նույնի՝** Վասպուրական, ԱՀ, Թիֆլիս, 1910, գ. 20, էջ 116-212, **Лалаян Е.** Ванский випайет (Васпуракан), СМОМПК, 1915. Вып. XLIV. Отд. Второй, էջ 1-84, **նույնի՝** Մուշ-Տարուն, ԱՀ, Թիֆլիս, 1917, գ. 26, էջ 155-175: Տե՛ս նաև Ե. Լալայան, Երկեր 5 Հատորով, հ. 1, Եր., 1983, հ. 2, Եր., 1988, հ. 3, Եր., 2004:

⁵ Տե՛ս Ե. Լալայան, Կոտայք (հաշվետվություն), ՀՍԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի (այսուհետ՝ ՀԳԱԻ) «Տեղեկագիր», 1927, № 2, էջ 220-225:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս նույն տեղը, № 1, Եր., 1926:

⁸ Տե՛ս նույն տեղը, 1930-31, № 4-5:

⁹ Տե՛ս նույն տեղը, 1928, № 3:

¹⁰ Ե. Լալայան, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931:

րությունը նկատի ունենալով է, որ այն պահվում է Հայաստանի պատմության թանգարանում: «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետով» հողվածում հեղինակը համառոտակի նկարագրում է Նիժի և Վարդաշենի տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ուտիների ծագման մասին եղած տեսակետները: Սոցիալական երևույթներին անդրադառնալիս ուշագրավ տվյալներ է բերում ուտիների տոհմական հնավանդ սովորությունների, կենցաղի մասին: «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում» հետազոտության մեջ Ե. Լալայանը անդրադառնում է հուղարկավորության ձևերին և նրանց հետ կապված սովորություններին: «Տղաբերքի սովորությունների զարգացումը Հայոց մեջ» հողվածում գիտնականը, օգտագործելով իր երկար տարիների ընթացքում հավաքած դաշտային ազգագրական նյութերը, ինչպես նաև համեմատական ազգագրության հարուստ տվյալները, հանգամանորեն բացահայտում է տղաբերքի սովորությունների էվոյուցիան՝ սկսած հնագույն շրջանից մինչև XX դարի սկիզբը:

Անգնահատելի են գիտնականի հետազոտական աշխատանքները հայ ժողովրդական մշակույթի՝ հնագիտության և բանահյուսության ոլորտներում ևս, որոնք սույն հողվածի խնդիրներից դուրս են, թեև Ե. Լալայանը բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ, ուստի պատահական չէ, որ ազգագրական հետազոտությունների մեջ մեծ տեղ էր հատկացրել նաև բանահյուսական նյութերին: Ըստ նրա՝ բանահյուսական նյութերը լրացնում ու լուսաբանում են քննարկվող այս կամ այն պատմաազգագրական շրջանի ընտանեկան-հասարակական բարքերն ու հավատալիքները: Նույն կերպ հնագիտությունը ոչ այլ ինչ է, քան նախապատմական ազգագրություն, որն իր բոլոր խնդիրների սկիզբը որոնում է հնագիտության մեջ¹¹:

Ե. Լալայանի թանգարանաստեղծ գործունեությունը:

1920-1940-ական թթ. ազգագրական գործն ամբողջությամբ կենտրոնացվեց Երևանում ստեղծված Հայաստանի պատմության պետական թանգարանում: Խորհրդային կարգեր հաստատվելուց քիչ անց Հայաստանի լուսժողկոմատը կարևորեց կենտրոնական թանգարան հիմնելու հարցը: Այցելուների համար բացվել է 1921 թ. օգոստոսի 20-ին՝ Գեղարվեստական թանգարան անվանմամբ: Առաջին վարիչը Վ. Ախիկյանն էր, իսկ երկու ամիս անց՝ Մարտիրոս Մարյանը: Թանգարանի առաջին ցուցանմուշները Հայաստանի կառավարության գնած գեղարվեստական մի քանի տասնյակ կտավներն էին: Նույն թվականի ձմռանը Ե. Լալայանը Թիֆլիսից Երևան տեղափոխեց Կովկասի Հայոց ազգագրական ընկերության՝ Ե. Լալայանի ջանքերով հիմնված թանգարանն ու մասնագիտական գրադարանը՝ 20 հազար գրքով: Լուսժողկոմատի հանձնարարությամբ Ե. Լալայանի անմիջական ղեկավարությամբ թանգարանում կազմակերպվեցին հնագիտական և ազգագրական բաժինները և նա էլ դարձավ դրանց առաջին վարիչը: Տասնյակ տարիների ընթացքում Ե. Լալայանի և «Հայոց ազգագրական ընկերության» երազանքը ազգային թանգարան ունենալու մասին վերջապես իրականանում է: 1922 թ. Մոսկվայից Երևան տեղափոխվեցին նաև Լազարյան

¹¹ Տե՛ս **Վ. Վ. Մելիք-Փաշայան, Ա. Մ. Նազարյան**, Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը / **Երվանդ Լալայան**, Երկեր հինգ հատորով, հ. 1, էջ 18, 28-29: Հայաստանի պատմության թանգարանը հիմնադրվել է Հայաստանի առաջին հանրապետության պառլամենտի ընդունած օրենքով (№ 439, 09.09.1919թ.) և կոչվել է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան:

Ճեմարանի՝ պատերազմի տարիներին այնտեղ պահված թանգարանային արժեքները, այդ նույն թվականին Ե. Շահագիզի ջանքերով՝ Նոր Նախիջևանի հայկական համայնքի հնությունների թանգարանային հավաքածուները: Այս ամենը կենտրոնանալով Գեղարվեստի թանգարանում՝ փոխեց նրա բովանդակությունը, ուստի նույն թվականի վերջերին թանգարանը վերանվանվեց Պետական կենտրոնական թանգարան: Թանգարանը այնուհետև հարստացավ այլ տեղերից ձեռք բերված մի շարք արժեքներով, այդ թվում նաև պատմագրական արխիվային նյութերով: Կենտրոնական թանգարանում ձևավորվեցին հնագիտական, ազգագրական, գեղարվեստական և պատմագրական բաժինները՝ հանձնրվելով ՀՄԽՀ լուսժողկոմատի իրավասությանը և ղեկավարվելով հատուկ խորհրդի կողմից¹²: 1922 թ. վերջերին Ս. Սարյանի զբաղվածության պատճառով Ե. Լալայանը ժամանակավորապես դարձավ թանգարանի տնօրենը: Նա 1926 թ. այստեղ տեղափոխեց «Անվոն Հնադարանի» բեկորները, որը Առաջին աշխարհամարտի ծանր օրերին մեծ դժվարությամբ հասցվել էր Սանահին: 1929 թ. թանգարան տեղափոխվեց XIX դ. վերջերին Մ. Խրիմյանի կազմած Էջմիածնի վանքի Ազգագրական թանգարանը: Թանգարանի հավաքածուները (15289 առարկա) համալրվեցին Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ շրջաններից գիտարշավների միջոցով պարբերաբար հավաքված իրերով և Երևանի զանազան գերատեսչությունների ունեցած նյութերով: Հավաքված հնագիտական և ճարտարապետական նոր նյութերը հնարավորություն տվեցին ստեղծելու նաև ճարտարապետական բաժին (1930 թ.), որի առաջին վարիչը դարձավ Թ. Թորամանյանը: Սրանով բոլորվեց Պետական կենտրոնական թանգարանի կազմակերպման առաջին շրջանը: 1931թ. այն վերանվանվեց Կուլտուր-պատմական թանգարան: 1935 թ. ՀԿԿ կենտկոմի հրամանով մայր թանգարանի հավաքածուների հիման վրա ստեղծվեցին ինքնուրույն թանգարաններ. 1. Գեղարվեստական բաժնի (ղեկավար՝ Դրամբյան) հիման վրա կազմակերպվեց Կերպարվեստի թանգարանը (այժմյան Հայաստանի ազգային պատկերասրահը), 2. գրական բաժնի հիման վրա ձևավորվեց Գրական թանգարանը (այժմյան՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), 3. հնագիտության, ազգագրության և ճարտարապետության բաժինների հիման վրա էլ մայր թանգարանը 1935 թ. վերանվանվեց Պետական պատմական թանգարան: 1939 թ. Պետական պատմական թանգարանը Լուսժողկոմատի համակարգից անցավ ՍՍՌՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի համակարգ՝ դառնալով նրա գիտահետազոտական հաստատություններից մեկը: Այնուհետև թանգարանը նոր անվանափոխումների ենթարկվեց. 1962թ. Հայաստանի պատմության պետական թանգարան, 2003 թ. Հայաստանի պատմության թանգարան:

Թանգարանի ազգագրության բաժնի վարիչը ի սկզբանե մինչև 1928 թ. Ե. Լալայանն էր, իսկ 1928-1946 թթ.՝ Ստ. Լիսիցյանը: Թանգարանն էր հիմնականում կազմակերպում գործողումները և գիտարշավները 1930-ական թթ.: Գիտական արշավների հիմնական նպատակը թանգարանային արժեքներ, առանձնապես երկրագործական գործիքներ, արտադրամիջոցների տարատեսակներ ձեռք բերելն էր: Աշխատանքները իրականանում էին Ստեփան Լիսիցյանի ղեկավարությամբ: Այդ տարիներից այստեղ պահվում են զգեստներ, զարդեր, ասեղնագործ

¹² Տե՛ս Վ. Բրդյան, Հայկական ՍՍՌ պետականպատմական թանգարան, «Էջմիածին», 1947, № 7-8:

բանվածքներ, գորգեր, արծաթյա և ոսկյա բազմապիսի պարագաներ, արհեստի ու երկրագործության գործիքներ, տնային պարագաներ, պաշտամունքային առարկաներ, հայկական դրամների հարուստ հավաքածու, նեգատիվների ու լուսանկարների ֆոնդեր, գիտական նյութերի արխիվ և այլն: Թանգարանում պահպանվում է 400.000 առարկայից բաղկացած ազգային հավաքածու: Թանգարանի հավաքածուները համարվում են հիմնականում Հայաստանի տարածքի հնավայրերից հայտնաբերված գտածոներով, գնումներով, նվիրատվություններով: Թանգարանը ներկայացնում է Հայաստանի մշակույթի և պատմության ամբողջական պատկերը նախապատմական ժամանակներից մինչև մեր օրերը: Ազգագրական բաժինը կրում է իր լավագույն ղեկավարներից մեկի՝ Ստ. Լիսիցյանի անունը:

Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմնումը:

Խորհրդային Հայաստանի գիտական առաջին հիմնարկը հիմնվում է 1921թ. փետրվարին Էջմիածնում՝ «Կուլտուր-պատմական ինստիտուտ» անվամբ՝ գիտականորեն Հայաստանի ժողովրդական մշակույթի ուսումնասիրության նպատակով¹³: 1922թ. մայիսից ինստիտուտը վերանվանվում է Հայաստանի գիտական ինստիտուտ՝ հետևյալ բաժանմունքներով. ա) հնագիտական, ազգագրական, գեղարվեստական, պատմության, բ)լեզվագիտական և ցեղաբանական, գ)բանասիրական, դ)պատմական-հասարակագիտական: 1925 թ. հունվարին այն ակադեմիական կառուցվածքով վերածվում է բարձրագույն գիտահետազոտական հիմնարկի՝ ՀՄԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի (նախագահ՝ Մ. Աբեղյան): Ինստիտուտի գիտական տեղեկագրում էր հրատարակվում 1920-30-ական թթ. ազգագրական, հնագիտական, բանագիտական աշխատությունների զգալի մասը: Ինստիտուտը 1926-28 թթ. հատուկ գիտական արշավախմբեր է կազմակերպում: Նրանցից մեկը, ինչպես նշել ենք, գլխավորում է Ե. Լալայանը: Մյուս գիտարշավը՝ երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանի գլխավորությամբ, Ախտայի (Հրազդան) և Կոտայքի գյուղերում հայտնաբերում ու ձայնագրում է շուրջ հիսուն ժողովրդական երգ¹⁴: Հաջորդ տարի՝ 1927 թ. ամռանը և 1928 թ. նույն գիտարշավը Թալինի, Ապարանի, Ստեփանավանի, Փամբակի շրջաններում գրի են առնում ևս 358 ժողովրդական երգ: Ինստիտուտը գնահատելի աշխատանք է կատարում ավանդական հայ բանահյուսության թանկարժեք նշխարների հայտնաբերման և գրառման, մշակման ու հրատարակման ուղղությամբ¹⁵: 1931 թ. Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմքի վրա կազմակերպվում է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտը, որն իր առաջնահերթ խնդիրն է համարում կորստյան ենթակա ազգագրական և բանահյուսական նյութերի հայտնաբերումը, գրառումը և ուսումնասիրությունը: Այնուհետև այս աշխատանքները

¹³ Այն ղեկավարելու համար հիմնված գիտական կոլեգիայում ընդգրկվում են Լևոն Մարգարյանը (նախագահ), Մենեքերիմ Տեր-Հակոբյանը (Մատենադարանի վարիչ), Լևոն Լիսիցյանը (թանգարանի վարիչ): Շատ չանցած նրանց փոխարինում են ճանաչված մտավորականներ Կ. Մելիք-Օհանջանյանը, Գ. եպիսկ. Հովսեփյանը, Խ. Սամունյանը: Նույն թվականին ինստիտուտը վերանվանվում է Էջմիածնի գիտական ինստիտուտի: Նրանում ներգրավվում են նաև Լևոն (Առաքել Բաբախանյան), Թ. Թորամանյանը, Գր. Չուբարյանը և այլք:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 227 (Սպ. Մելիքյանի զեկուցում-հաշվետվությունը):

¹⁵ Տե՛ս Ա. Տ. Ղանալանյան, Սովետահայ բանագիտությունը հիսուն տարում, «Պատմաբանասիրական հանդես», 1970, № 3, էջ 13-32:

շարունակում է Կուլտուրայի պատմության ինստիտուտին փոխարինած Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտը 1934-1939 թթ.:

Ազգագրության բնագավառում 1920-ական թթ. կեսերին կարևոր դեր խաղաց նաև ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտը, որը գտնվում էր Թիֆլիսում: Այստեղ աշխատում էին հայ ազգագրությամբ ու հնագիտությամբ զբաղվող մի շարք գիտնականներ, այդ թվում՝ Ստ. Լիսիցյանը, Լևոն Մելիքսեթ-Քեկը: Վերոհիշյալ հաստատությունները անհատական ուղևորությունների, գործուղումների ու խմբարշավների միջոցով հսկայական գործ կատարեցին թանգարանային արժեքների ձեռքբերման և ազգագրական նյութեր գրի առնելու տեսակետից:

Հայագիտության հետագա զարգացման տեսակետից կարևոր նվաճումներից էր պատմության և գրականության ինստիտուտի (1935 թ.), նույն տարում ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնումը, որոնց վրա 1943 թ. հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան:

Ազգագրական գիտության զարգացման, մասնագետ կադրերի պատրաստման տեսակետից նշանակալից դեր է խաղացել Երևանի պետական համալսարանը: ԵՊՀ-ն, իր գոյության տարիներին զարգանալով ու հզորանալով, դարձել է հանրապետության ուսումնագիտական ու կրթամշակութային խոշոր կենտրոն, ակնառու նվաճումներ գրանցել Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պատմաբան-ազգագրագետ Բարձրորակ կադրեր պատրաստելու գործում: Դեռևս 1930-40-ական թթ., որոշ ընդմիջումներով, «Ազգագրություն» առարկան դասավանդում էր պրոֆ. Ստ. Լիսիցյանը: Նրա մահից (1947) հետո երկար ժամանակ այդ առարկան ուսումնական պլաններից դուրս էր մնացել, որը վերականգնվեց 1964-1965 ուս.տարում:

1920-30-ական թթ. եռանդուն կերպով իր ազգաբանական գործունեությունը շարունակեց Խաչիկ Սամուելյանը: Ե. Լալայանը, Խաչիկ Սամուելյանը, Ստ. Լիսիցյանը հայտնի էին նախախորհրդային շրջանից հայագիտությանը մատուցած ծառայությունների համար: Հարուստ գիտելիքների հիմքով, նրանք կարողացան հարմարվել ժամանակի պահանջներին, վերաիմաստավորված ներկայացնելով իրենց հետազոտությունների արգասիքները, նորովի ծավալելով նաև դաշտային հավաքչական, թանգարանային-ցուցադրական աշխատանքները:

Խաչիկ Սամուելյան (1873-1940)¹⁶:

¹⁶ Ծնվել է 1873 թ. Արիմի Կերչ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թեոդոսիայի գիմնազիայում: 1895-1900 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի իրավաբանական ֆակուլտետը, 1901-1903 թթ. ուսանել է Ենայի (Գերմանիա) համալսարանում, սպա բնակություն է հաստատել Թիֆլիսում և 1907 թ. զբաղվել է լրագրությամբ: 1904-1907 թթ. եղել է «Кавказское сельское хозяйство» ամսագրի պատասխանատու քարտուղարը: 1907-1908 թթ. զբաղեցրել է Գևորգյան ձեմարանի դասախոսի, 1909-1921 թթ.՝ Նոր Նախիջևանի թեմական, Թիֆլիսի առևտրական դպրոցներում ուսուցչի, Շուշիի, Բաքվի, Ալեքսանդրապոլի դպրոցների տեսուչի պաշտոններ: Բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել «Մշակ», «Տարագ», «Արշալույս», «Սուրհանդակ», իսկ Խորհրդային շրջանում՝ «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Բանվոր» և այլ պարբերականներում: 1921-1922 թթ. ընտրվել է Էջմիածնի Գիտական ինստիտուտի կոլեգիայի անդամ, սպա վարել իրավաբանական տարբեր պաշտոններ, 1924-1934 թթ. նշանակվել է պետական կենտրոնական արխիվի վարիչ, որից հետո զբաղվել է մանկավարժական գործունեությամբ ԵՊՀ-ում, Նյութական կուլտուրայի և Մանկավարժական ինստիտուտներում: Վախճանվել է 1940 թ. (տե՛ս Գ. Մելիք-Փաշայան, Խ. Սամուելյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1974, № 1, էջ 86-96):

Խ. Մամուլեյանի գիտական աշխատությունները իրավագիտության, պատմության և հատկապես ազգագրության ասպարեզներում դեռևս նախախորհրդային տարիներին ակնառու էին¹⁷: Գիտնականը ակտիվ աշխատակցել է «Ազգագրական հանդեսին», տպագրելով մի շարք ուսումնասիրություններ, եղել է նաև Հայոց ազգագրական ընկերության և խմբագրական մասնաժողովի անդամ: Հին հայկական սովորության իրավունքի, գերդաստանի, տոհմական կառույցների, ամուսնության ձևերի, օժիտի, գլխագնի, քավորի, ժողովրդական հավատալիքների ուսումնասիրությունը կենտրոնական տեղ էր գրավում Խ. Մամուլեյանի աշխատություններում: Նա տեսաբան ազգագրագետ է, լավատեղյակ եվրոպական ռուսական առաջավոր գիտությանը: Տեսական բնույթ են «Առևանգամբ և գնամբ ամուսնություն», «Հայ ընտանեկան պաշտամունքը» ազգագրական ուսումնասիրությունները, որոնցում հարուստ փաստական նյութերով հետազոտվում են առևանգամբ և գնամբ ամուսնությունը, նրա զարգացման շրջանները, ցույց է տրված, որ առևանգամբ ամուսնությունը աստիճանաբար վերանում է, իսկ գլխագինը տեղի է տալիս օժիտին: Ըստ Խ. Մամուլեյանի՝ ընտանեկան պաշտամունքը խստորեն առնչվում է հոգիների պաշտամունքի, թաղման ձեսերի, ննջեցյալների պաշտամունքի հետ: Հանգամանորեն վերլուծվում են օջախի պաշտամունքին առնչվող հարցերը: Ուշագրավ հոդվածներից է նաև «Տոտեմիզմը հայոց մեջ», «Քարի պաշտամունքը հայոց մեջ» հոդվածները, որոնցում ներկայացվում է կենդանիների, թռչունների, սողունների, եզան, օձի, անգղի, այծի, գայլի, խոյի պաշտամունքը: Քարապաշտությունը, ըստ գիտնականի, հոգեպաշտություն է, աշխարհայացք և ոչ թե կրոն: Հնագիտական ազգագրական, մատենագրական հարուստ նյութերով ապացուցում է, որ քարապաշտությունը հայերի մեջ գոյություն է ունեցել վաղնջական ժամանակներից և հարատևել է մինչև XIX դարի վերջը: Այս հարցերի զգալի մասը արժաձված է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի առաջին հատորում¹⁸: «Հին Հայաստանի կուլտուրան» հետազոտության երկրորդ հատորում անդրադարձել է տնտեսական արտադրական և նյութական մշակույթի տարբեր կողմերին: Այսպես, օրինակ՝ փոխադրության հնագույն միջոցներից սայլերի, կառքերի և վերջիններիս մոդելների ու նկարների և Ախթալայում գտնված բրոնզե գոտու և Վանում պեղված ուրարտական կնիքի վրա եղած կառքի քանդակապատկերների ուսումնասիրությունը հեղինակին հանգեցրել է այն հետևության, որ Հայաստանի անիվավոր փոխադրամիջոցներն իրենց ծագմամբ ու զարգացմամբ անմիջական

¹⁷ Առաջին գիտական հոդվածներն են՝ «Очерки по обычному семейному праву», "Кавказский вестник", 1902, «Արյան վրեժ և փրկանք» // ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 269-303, «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտության մեթոդը» // ԱՀ, գ. XI, Թիֆլիս, 1904, էջ 5-32, «Առևանգամբ և գնամբ ամուսնություն» // ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1905, էջ 40-83, «Հայ ընտանեկան պաշտամունքը» // ԱՀ, գ. XIII, Թիֆլիս, 1906, էջ 112-130, ԱՀ, գ. XIV, № 2, Թիֆլիս, 1906, էջ 156-174, «Հայոց ժառանգական իրավունքը» // ԱՀ, գ. XV, Թիֆլիս, 1907, էջ 68-90, «Մայրական իրավունք» // ԱՀ, գ. XVII, № 1, Թիֆլիս, 1908, էջ 126-141, ԱՀ, գ. XVIII, № 2, Թիֆլիս, 1908, էջ 59-90, գ. XIX, Թիֆլիս, 1910, էջ 33-58, «Հայ սովորության իրավունքը», Վիեննա, 1911, «Սիմբոլը հայ սովորություններում» // ԱՀ., գ. XXII, № 1, Թիֆլիս, 1912, էջ 132-245, գ. XXIII, № 2, Թիֆլիս, 1912, «Մ. Գոշի «Դատաստանագիրքը» ու Հայոց քաղաքացիական իրավունքը» (Վիեննա, 1911), «Տոտեմիզմը հայոց մեջ» // «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գ. Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 15-34 և այլն):

¹⁸ Տե՛ս Խ. Մամուլեյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Եր., 1931, էջ 276-330:

առնչություն ունեն Առաջավոր Ասիայի հնագույն երկրների՝ ասուրա-բաբելական աշխարհի, փոքրասիական ժողովուրդների և այլոց փոխադրանքների հետ¹⁹:

Խորհրդային կարգերի օրոք հայ ազգագրության նշանավոր տեսաբանը, ի մի բերելով նախահեղափոխական շրջանում գրած աշխատությունները, քննության առարկա դարձրեց հայկական ընտանեկան-գերդաստանական հարաբերությունները, գյուղական համայնքը, ծիսական կարգերը, ամուսնության ձևերը, հայոց պաշտամունքը և այլն: Առանձին հետաքրքրությամբ Խ. Սամուելյանը հետազոտեց հայկական տոհմային կարգերը՝ ազգակցական հարաբերությունների հիման վրա, ազգապաշտպանական երևույթները, վրիժառության պարտականությունը, տոհմապետ-ազգապետների ծերակույտերի խաղացած դերը ազգակցական հարաբերություններում²⁰: Խ. Սամուելյանի ուսումնասիրություններում առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայկական գերդաստանը: Խ. Սամուելյանը նահապետական գերդաստանի որոշ հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել էր դեռևս հեղափոխությունից առաջ: Սակայն 1920-30-ական թթ. նա շարունակում է գիտահետազոտական աշխատանքները: Նահապետական գերդաստանը, «որը կազմում է գիտնականի եռահատոր աշխատության 3-րդ հատորի մի մասը» (էջ 165-204), գիտական պատշաճ ուսումնասիրություն է, որում քննության են առնված ընտանեկան համայնքը, դրա տնտեսական հիմքերը, գերդաստանի անդամների փոխհարաբերությունները, իբրև միջանկյալ ընտանետիպի, վերջինիս հարատևման, նրա հասարակական արժեքի, կոլեկտիվիստական բնույթի, այդ ընտանեձևի քայքայման և հարակից այլ հարցեր: Խ. Սամուելյանի ուսումնասիրությունների առանձին հիմնահարցեր է նաև գյուղական համայնքի հետազոտությունը²¹:

Խ. Սամուելյանը քննել է նաև ամուսնության ձևերն ու դրան առնչվող ծիսական համակարգերը: Ձեռքի տակ եղած գրավոր աղբյուրների հիման վրա հեղինակը հետազոտել է ավանդական հարսանեկան տոնահանդեսները, հարսանիքը կազմակերպելու համայնքային սովորությունները, հարսի բարոյական կերպարին առնչվող խնդիրները և այլն²²:

Խ. Սամուելյանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի տեսաբան էր: Նրա «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության մեջ առաջին փորձն է կատարվում ներկայացնելու Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի զարգացման փուլերը՝ սկսած նախնադարյան համայնական կարգերից մինչև XX դարը: Ու թեև աշխատության մեջ նյութական և հոգևոր ու սոցիալական մշակույթի հարցերի վերաբերյալ հեղինակի որոշ մեկնություններ, ձևակերպումներ և եզրահանգումներ թեև հնացել են, սակայն մեծ է նրա՝ հայ մշակույթի վերաբերյալ կատարած հետազոտությունների արժեքը: Մեծ է Խ. Սամուելյանի դերը նաև հայ իրավագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում: Հայ իրականության մեջ նա առաջինն էր, որ քննարկման նյութ դարձրեց սովորութային իրավունքի նորմերը և փորձեց տալ իրավունքի սահմանը, դրա տեղն ու դերը: Խ. Սամուելյանի բանահյուսական ուսումնասիրություններից է «Աշխատանքը հայ ժողովրդական երգերում»: Գիտնականը նաև արխիվային գործի հմուտ կազմակերպիչ էր: 1924-1934 թթ. եղել է պետական

¹⁹ Տե՛ս Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Եր., 1941, էջ 74-82:

²⁰ Տե՛ս Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. III, Եր., 1941, էջ 132-165:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 204-221:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 82-132:

կենտրոնական արխիվի վարիչը: Այս տարիներին Խ. Մամուլեյանը «Նիմանդ» կեղծանվամբ հրատարակեց երեք տասնյակից ավելի հակակրոնական բնույթի հոդվածներ և բրոշյուրներ:

Ստեփան Լիսիցյան (1865-1947)²³:

Մեծ է եղել Ստեփան Լիսիցյանի ներդրումը ազգագրական գիտության կազմակերպման և զարգացման գործում: Նա համարվում է խորհրդահայ ազգագրության հիմնադիրը²⁴: Գիտնականը ազգագրությամբ սկսել է զբաղվել 1920-ական թվականներից չայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու առաջին իսկ տարիներից: Նրա համար օրախնդիր էր մոռացությունից փրկել ազգագրական նյութերը և կենցաղային իրերը, գրանցել նաև բանահյուսական նյութերն ու բարբառը, որի համար էլ ձեռնամուխ է լինում ազգագրական գիտարշավներ կազմակերպելուն ու հետազոտական աշխատանքներ կատարելուն: 1924թ. չայաստանի կառավարության հրավերով Թիֆլիսից տեղափոխվելով Երևան, սկսվում է Ստ. Լիսիցյանի գործունեության մի նոր բեղմնավոր ժամանակաշրջան:

Չայ ազգաբանական գիտության բնագավառում Ստ. Լիսիցյանի ծավալած գործունեությունը ընթացել է երեք հիմնական ուղղություններով. ա) ազգագրական նյութերի հավաքչություն, բ) գիտահետազոտական, գ) գիտակազմակերպչական: Գիտնականի ազգաբանական գործունեության ժամանակաշրջանը 1920–1940-ական թթ. կեսերն են: Այն սկսվում է ՄՍՌՄ գիտությունների ակադեմիայի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտում (ԿՊՀԻ) աշխատելու տարիներից՝ 1924-1928 թթ. հիմնական և 1928-1936 թթ. արտահաստիքային: Թիֆլիսում այդ աշխատանքները գիտնականը և Լևոն Մելիքսեթ-Բեկը կոորդինացնում էին Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (ԿՊՀԻ) հետ: ԿՊՀԻ հանձնարարությամբ 1924 թ. ուսումնասիրությունների և ազգագրական նյութեր հավաքելու նպատակով Ստ. Լիսիցյանը մեկնում է Լեռնային Ղարաբաղ, Գ. Չուրսինը՝ Ջանգեզուր և Լազոն (Չ. Ղազարյան)՝ Լեռնային Քուրդիստան (Լաչին): Ապա նույն հիմնարկի հանձնարարությամբ 1925 թ. Ստ. Լիսիցյանը մեկնում է Ախալքալաք, Ախալցխա, Շիրակ,

²³ Ստեփան Լիսիցյանը ծնվել է 1865 թ. Թիֆլիսում, զինվորական բժիշկ, գեներալ Դանիել Լիսիցյանի ընտանիքում: Բարձրագույն կրթություն է ստացել Եվրոպայում. 1889 թ. ավարտել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և նույն թվականին մանկավարժական աշխատանքի է անցել Էջմիածնի Գևորգյան ձեռնարանում, տիրապետում էր 12 լեզվի: 1894-1915 թթ. դասավանդել է Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցում: Լիսիցյանի մանկավարժական-լուսավորական գործունեության կարևոր ներդրումներից է «Տարագ», «Աղբյուր» պատկերազարդ հանդեսների և «Հասկեր» մանկական հանդեսի հրատարակությանը մասնակցությունը: Նրա թարգմանությամբ ռուսերեն, անգլերեն լույս է տեսնում Խ. Լինիչի «Չայաստան» երկհատոր աշխատությունը, թարգմանում է նաև Չ. Մենկևիչի «Յո՞ւրթաս» վեպը: Ստ. Լիսիցյանը Թումանյանի «Վերնատուն» գրական միավորման եռանդուն մասնակիցներից էր: Գիտամանկավարժական ասպարեզում ձեռքբերումների համար 1941 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ կոչում:

²⁴ Տե՛ս Կ. Մելիք-Փաշայան, Սովետահայ ազգագրության անցած ուղին, «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1968, № 11, էջ 54-67: Ստ. Լիսիցյանի գիտական ու հասարակական ժառանգության մասին մանրամասն տե՛ս **Варданян Л.**, Ст. Лисициан и истоки армянской этнографии, Ер., 2005:

1927 թ.՝ Մեղրի, Նոր Բայազետ, 1928 թ.՝ Ագուլիս՝ հարուստ դաշտային ազգագրական նյութեր հավաքելով ինչպես տեղաբնակներից, այնպես էլ գաղթական հայերից²⁵: Գրառված նյութերում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ջուլֆա-Օրդուբադ տարածաշրջանում դեռևս գոյատևած «գուկեր» կոչվող էթնիկ խմբի վերաբերյալ տեղեկությունները, որոնք դեռևս հրատարակված չէին²⁶: Նյութերը գրի էին առնվում 1926 թ. ազգագրագետի կազմած «Գավառագիտություն» խորագրով, ապա դեռևս ձեռագիր «Ազգագրական հարցարանի» հարցաշարերով: Այդ ասպարեզում նրա մեջ զուգակցվել են անխոնջ հետազոտողը և գիտության հմուտ կազմակերպիչը:

Ստ. Լիսիցյանի անգնահատելի ծառայություններից մեկն այն էր, որ առաջինը սկսեց հավաքել արտադրամիջոցները և նյութական մշակույթի այն տեսակները, որոնք կարտացոլեին հայ ժողովրդի արտադրողական ուժերի զարգացման մակարդակը. ցավոք, դրանք մինչ այդ անուշադրության էին մատնված: Այդուհետ առավել հմտությամբ ուսումնասիրեց գյուղական բնակարանները և շենքերի ամբողջական համալիրները: 1925 թ. հունիսի 21-ին Ստ. Լիսիցյանը ԿՊՀԻ գիտնականների ժողովում զեկուցում է հայկական գյուղական բնակարանների ուսումնասիրման հարցի վերաբերյալ, որը նվիրված էր գլխատան ուսումնասիրությանը Ղարաբաղում²⁷: Տալիս է նաև գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղերսը ժամատան, այլ կերպ ասած՝ հայ դասական եկեղեցական ճարտարապետության ակունքների կապը ժողովրդական բնակարանի համալիրի ճարտարապետության հետ և այլն: Հաջորդ զեկուցումն այստեղ Բարձր Հայքի բնակարանների մասին էր²⁸: 1926-1927 թթ. նույն տեղեկագրում հրատարակվում են նաև Լիսիցյանի հետազոտած այլ ազգագրական շրջանների վերաբերյալ նյութերը ևս²⁹: Մեծ են եղել նրա ջանքերը Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Շատախի, Մոկսի, Սասունի, Ալաշկերտի պատմամշակութային բազում արժեքների հավաքման և գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ:

Նրա բացահայտումները վերաբերում է հայ գյուղական տան՝ «գլխատան» ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառույցների ծագումնաբանական ընդհանրություններին: 1927 թ. լույս է տեսնում Ստ. Լիսիցյանի «Շատախի պատմաազգագրական ուրվագծերը»³⁰ հոդվածը, որտեղ գիտնականը տալիս է Շատախի աշխարհագրական դիրքը, վարչական բաժանումը, էմիրների, մելիքների գործունեությունը, առաջին անգամ արձարծում

²⁵ Տե՛ս և **Լիսիցյան Ստ.**, *Армянская этнография за 15 лет*, СЭ, 1936, № 4-5, էջ 270-274:

²⁶ Տե՛ս և նույն տեղը, էջ 271:

²⁷ Տե՛ս և **Լիսիցյան Ստ.**, *К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам). «Известия кавказского историко-археологического института» (ИКИАИ), том III, Тифлис, 1925, էջ 97-108:*

²⁸ Տե՛ս և **Լիսիցյան Ստ.**, *Крестьянское жилище Высокой Армении*, ИКИАИ, т. IV, Тифлис, 1926, էջ 55-70, տե՛ս նաև էջ 136-138:

²⁹ Տե՛ս և **Լիսիցյան Ստ.**, *Из материалов по изучению жилищ Армении. «Крестьянское жилище Мегринского района»*, Тифлис, 1927, էջ 119-133, *Из материалов по изучению жилищ Армении. «Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов-Памбакского и Даралагязского»*, ИКИАИ, Тифлис, 1927, т. VI, էջ 133-140):

³⁰ Տե՛ս և **Լիսիցյան Ստ.**, *Историко-этнографические очерки Шатаха: «Мелики» (Сообщества сверстников)*, ИКИАИ, т. V, Тифлис, 1927, էջ 71-82:

«Եղբայրական միությունների» (հասակակիցների միության) հարցը: Ուշագրավ է նաև գիտնականի «Սրբավայրերը լեռնանցքներում» աշխատանքը³¹, որտեղ վերլուծվում ու բացահայտվում են նրանց ակունքները, որ առնչվում են հեթանոսական շրջանի լեռների ոգիների, կրակի և ջրի պաշտամունքին:

1928 թ. Ստեփան Լիսիցյանը նշանակվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ և գլխավորում այն մինչև կյանքի վերջը (1947 թ.): Թանգարանային ցուցանմուշներ հավաքելու և ազգագրական հավաքածուները համալրելու համար Ստ. Լիսիցյանը 1930-ական թթ. կազմակերպում է ազգագրական նոր գիտարշավներ դեպի Խորհրդային Հայաստանի տարբեր շրջանները, ինչպես նաև հարակից հանրապետությունների հայաբնակ վայրերը: Գիտնականը շատ էր կարևորում և առաջնահերթ ու անհետաձգելի խնդիր էր համարում արագ վերափոխումների պատճառով կորստյան մատնվող ավանդության մշակույթի տարբեր երևույթներին վերաբերող ազգագրական նյութի գրառումը: Այդ նպատակով, գիտարշավներին զուգընթաց, նա տեղերում թղթակիցների լայն ցանց է ստեղծում: 1931-38 թթ. ազգագրական գիտարշավը Ստ. Լիսիցյանի ղեկավարությամբ մեկնում է Միսիան և Գորիս (1931), Ղափան-Մեղրի (1932), Լոռի (1934-1935), Բոգոանովկա, Ախալքալաք և Ախալցխա (1936), Աշտարակ, Նոր Բայազետ, Մարտունի և Վարդենիս (1938): Այդ տարիների գիտական արշավների հիմնական նպատակը թանգարանային արժեքների, հատկապես երկրագործական գործիքներ ձեռք բերելն էր: 1931 թ. ապրիլին Զանգեզուրի երկրաշարժի հետևանքների հաղթահարման տարում և ապա 1932 թ. Ղափանի և Մեղրու շրջաններից հայթայթված ազգագրական հավաքածուների հիման վրա թանգարանում ստեղծվում է մշտական գործող «Զանգեզուր» ցուցահանդեսը: Ազգագրական գիտարշավների ընթացքում գիտնականը գրի է առնում ոչ միայն վիթխարի ազգագրական նյութ, այլև թանգարանի համար հայթայթում է շուրջ 1000 ցուցանմուշ, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում ոսկերչական, զինագործական, կավագործական իրերի ու գործիքների հազվագյուտ համալիրները: Այդուհետև միջոցների սղության պատճառով գործուղումներն ու գիտարշավները դադարում են մինչև 1943 թվականը: Թանգարանի ազգագրական բաժինը հարկադրված զբաղվում է հիմնականում հավաքված նյութերի հետազոտական աշխատանքով: 1936 թ. լույս է տեսնում Լիսիցյանի «Հայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում»³² հոդվածը, որում հանգամանորեն ներկայացված են այն նվաճումները, որոնց հասել էր խորհրդահայ ազգագրությունը մեկուկես տասնամյակի ընթացքում:

1920-30-ական թվականների աշխատանքների հանրագումարը եղավ «Ակնարկ նախահեղափոխական Հայաստանի ազգագրության» աշխատությունը³³, որը հայոց էթնոմշակության ամբողջական պատկերը տալու առաջին փորձն էր: Այստեղ ի մի են բերված խորհրդահայ ազգագրության նվաճումները և հնարավորինս ամբողջականորեն ներկայացված է հայոց նյութական ու հոգևոր մշակույթի, տնտեսական զբաղմունքների ու սոցիալական կյանքի ընդհանուր պատկերը՝ էթնիկ առանձնահատկություններով: Ստեփան Լիսիցյանը գիտակազմակերպչական վիթխարի ջանքեր գործադրեց հատկապես Հայաստանի

³¹ Տե՛ս Լիսիցյան Ստ., «Святыни» у перевалов, «Советская этнография», № 4-5, 1936, էջ 200-212:

³² Տե՛ս Լիսիցյան Ստ., Армянская этнография за 15 лет, СЭ, 1936, № 4-5, էջ 270-274:

³³ Տե՛ս Լիսիցյան Ստ., Очерки этнографии дореволюционной Армении, «Кавказский этнографический сборник» (այսուհետ՝ КЭС), М., 1955, էջ 182-264:

պատմության պետական պատմական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ լինելու տարիներին (1928–1946 թթ.), նրա անունով էլ 1947 թվականից առ այսօր կոչվում է այն:

Բացառիկ կարևոր է Ստեփան Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» դերը և նշանակությունը հայ ազգագրական գիտությունը զարգացնելու, բանահավաք կադրեր ներգրավելու գործում: Այդ ծրագրով են առաջնորդվում առ այսօր ազգագրագետների մի քանի սերունդներ: Այն ընդգրկում է ժողովրդի մարդաբանությունը, տնտեսական զբաղմունքները, նյութական և հոգևոր մշակույթը, հասարակական, ընտանեկան հարաբերությունները, ժողովրդական բանահյուսությանն ու արվեստին վերաբերող հնարավոր բոլոր հարցերը, ինչպես նաև անհրաժեշտ ցուցումներ դաշտային նյութեր հավաքելու կարգի մասին: Հարցարանը հրատարակվեց հեղինակի մահվանից երկու շաբաթ առաջ: Սա երրորդ համապարփակ հարցարանն էր հայ ազգագրական իրականության մեջ, եթե նկատի չունենանք Երվանդ Լալայանի, Ստ. Ջելինսկու և ազգագրության առանձին բնագավառներին վերաբերող այլոց հարցարանները, որոնք թեմատիկ բնույթի են և հրատարակվել են «Ազգագրական հանդեսի» տարբեր հատորներում³⁴:

1930-1940-ական թթ. Ստ. Լիսիցյանի ստեղծած՝ հայ ազգագրությանը վերաբերող հիմնարար աշխատությունները լույս տեսան հետմահու՝ «Ձանգեզուրի հայերը» (Եր., 1969) և «Լեռնային Ղարաբաղի հայերը» (ազգագրական ակնարկ) // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», գ. XII, (Եր., 1981, էջ 7-84) աշխատություններում: «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը 1992 թ. հրատարակվում է ռուսերեն³⁵: Գիտնականը 1920-1930-ական թթ. հավաքած դաշտային նյութերի հիման վրա մանրամասնորեն ներկայացրել է Արցախի ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթը, հիմնական զբաղմունքները, հավատալիքները, նիստուկացը, բացահայտել դրանց տեղական առանձնահատկությունները՝ միաժամանակ ցույց տալով պատմամշակութային ընդհանրությունը հայ էթնոսի հետ ամբողջությամբ վերցրած: Այդ հարուստ ազգագրական նյութի մեծ մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Այստեղ տեղին է կարևորել նաև Արցախի հայ բնակչության մինչքրիստոնեական հավատալիքներ-

³⁴ Այդուհանդերձ, հայ ազգագրության նոր, ավելի մանրամասն հարցադրումների ներառմամբ ծրագիր-հարցարան կազմելն ու հրատարակելը հույժ անհրաժեշտ է նաև մեր օրերում, որպեսզի կորուսյալ Արևմտյան Հայաստանի և սփյուռքահայության մեծ մասի ազգագրական ժառանգությունը կորստյան մատնվելուց հետո գոնե կարողանանք փրկել ՀՀ շրջաններում դեռ մնացած փաստերը: Մի թե հնարավոր չէ շարունակել Ե. Լալայանի, Ստ. Լիսիցյանի, Ա. Ալպոյաճյանի, Վ. Բոյանի, Դ. Վարդումյանի և այլոց թողած ավանդները՝ ավարտին հասցնելով եթե ոչ պատմական Հայաստանի, գոնե ՀՀ պատմաազգագրական շրջանների ուսումնասիրությունը: Բարեբախտաբար դեռևս կան արևմտահայ վերապրողների սերունդներ, որոնք շատ թե քիչ պահպանում են հիշողություններ «Էրզրի» մշակութային ժառանգության մասին: Շատ կարճ ժամանակից հետո դրանցից էլ կզրկվենք, դրա համար հույժ կարևոր են դաշտային ազգագրական հետազոտությունների խրախուսումը, ազգագրական երևույթներն ամբողջովին գրի առնելը (տե՛ս **Ռ. Նահապետյան**, Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից, Հայ ժողովրդական մշակույթ, 16, Սվանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 31-40):

³⁵ Տե՛ս **У Лисицын Ст.**, Армяне Нагорного Карабаха (этнографический очерк), Ер., 1992:

րի մասին Ի. Պետրուշևսկու ուսումնասիրությունը³⁶, որը գրվել է 1928 թ., այսինքն՝ այն ժամանակվա նյութերի հիման վրա, երբ դեռ ամբողջ թափով չէր ծավալվել կոլտնտեսային շարժումը, սոցիալիստական վերափոխումը³⁷: Այս ժամանակաշրջանը բնորոշ էր նրանով, որ արցախահայոց կենցաղում ու աշխարհայացքում անցյալից եկած ավանդույթները տակավին հարատևում էին, իսկ նոր սովորույթները գտնվում էին լինելիության ընթացքի մեջ: Գրքում նախ քննվում են երկրամասի բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական միջավայրը, բնակչության էթնիկական կազմն ու տեղաշարժերը, Շուշիի հիմնադրման պատմությունն ու իբրև քաղաք խաղացած դերը, պաշտամունքային-սովորույթային մի շարք երևույթներ, նյութական ու հոգևոր մշակույթի հարցեր: 1924 թ. բնակչությունը այստեղ կազմել է 130 հազար մարդ, ընդ որում՝ հայերը՝ 120 հազար, իսկ աղբրեջանցիները՝ 10 հազար (էջ 16-17):

Ժողովրդական հավատալիքների համակարգում Ստ. Լիսիցյանն առանձին-առանձին քննում է ժողովրդական տոները, հասարակական-ընտանեկան կենցաղին բնորոշ երևույթները, պաշտամունքի վայրերն ու ձևերը՝ զատելով, տարբերակելով քրիստոնեական և նախաքրիստոնեական շերտերը, վկայակոչում է մի շարք ավանդույթուններ ու հավատալիքներ՝ կապված բուսական ու կենդանական աշխարհի, բնության առանձին երևույթների հետ (ամպրոպ, կայծակ, ծառեր, քարայրներ, քարեր, աղբյուրներ, արջ, եղջերու և այլն): Նա հատուկ ուշադրություն է դարձնում այն պաշտամունքային վայրերի բազմաքանակությանը, որոնց անվանումները չեն առնչվում քրիստոնեական սրբերին, առանձնացնում է կանանց անունով հայտնի քրիստոնեական կառույցները, որոնց թիվը հասնում է 59-ի (104-ից) և իրավացիորեն այդ երևույթը փորձում է կապել Մեծ Սոր երկրպագության վերապրուկների հետ (էջ 53):

Այժմ հակիրճ անդրադառնանք նրա «Զանգեզուրի հայերը» հետազոտության մեջ քննարկվող հարցերին: Տնտեսական կենցաղի վերաբերյալ Ստ. Լիսիցյանը դեռևս 1940-ական թթ. համառոտակի անդրադարձել է Զանգեզուրի ազգագրական շրջանի վարուցանքի, բերքահավաքի, կալսման տեխնիկայի (էջ 126-134), այգեգործության (էջ 143-144)³⁸, անասնապահության (էջ 134-140, էջ 152-163)³⁹, օժանդակ և յուրացնող տնտեսաձևերի (էջ 140-147, էջ 163-167)⁴⁰, փոխադրամիջոցների (էջ 182-183)⁴¹, գյուղական բնակավայրերի, շենքերի (էջ 86), տարազի և ուտեստի (էջ 168-174) բնութագրությանը⁴²: «Բնակավայրեր և շենքեր» գլխում քննության են առնվում բնակավայրերի բնույթը և տեղադրության հետ կապված հարցերը: Զանգեզուրում մեծ մասամբ դարավանդային բնույթ ունեցող բնակավայրերը Ստ. Լիսիցյանն ուսումնասիրել է 1920-30-ական թթ.: Նա բացահայտել է ազգագրական այդ շրջանի բնակլիմայական, աշխարհագրական, տնտեսական

³⁶ Տե՛ս **Петрущевский И.**, О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха, Баку, 1930:

³⁷ Տե՛ս **Ստ. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 10:

³⁸ Տե՛ս նաև **Лисициан Ст.**, Очерки этнографии дореволюционной Армении, էջ 183-186: Հմմտ. «Хозяйства и материальная культура армян» /Народы Кавказа, т. II, М., 1962, էջ 463-469:

³⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 183-186: Հմմտ. Народы Кавказа, т. II, 469-471:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 176-200: Հմմտ. Народы Кавказа, т. II, էջ 472-478:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 200-203: Հմմտ. Народы Кавказа, т. II, էջ 478:

⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 202-204, 216-222:

ու քաղաքական գործոններով պայմանավորված բնակավայրերի տիպերը: Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ բնակավայրերի տեղաբաշխումը Չանգեզուրում ենթարկվել է աղբյուրների դասավորության, իշխող քամիների ուղղության և թշնամական հարձակումներից ապահովության պայմաններին: Գյուղերը խորը մտնում են ձորերի մեջ (Հալիձորը, Շինուհայրը, Խոտը, Հին Գորիսը, Վերինշենը, Քարահունջը, Խնձորեսկը և այլն): Կան ամբողջովին քարայր-բնակարաններ: Այդ տեսակետից տիպական է Խնձորեսկը: Այսպիսի բնակարաններ կան Հին Գորիսում, Տեղում, Խնածախում և այլուր: Ապա շարադրվում են Չանգեզուրի կենտրոն Գորիսի բարձրացման սոցիալ-տնտեսական հանգամանքները՝ կարևոր ճանապարհների հանգույց, առևտրական և վարչական կենտրոն լինելը: Այնու-հետև ներկայացվում են բնակարանները և գյուղատնտեսական շենքերը (էջ 84-114): Առանձին բաժին է հատկացված տարազի բնութագրմանը: Ըստ հեղինակի՝ Չանգեզուրի հայ կնոջ զգեստները շատ նման են Շամախու, Նուխու, Գանձակի, Ղարաբաղի, Ղարադաղի, Մեղրու և Ագուլիսի տարազներին: Նկարագրվում են կանանց տարազների տեսակները՝ աշխատանքային, տոնական, ինչպես նաև աղջիկների հագուստը և այլն: Տղամարդու զգեստները նույնն են, ինչ արևելյան Կովկասի տղամարդկանց հագուստները (էջ 115-124):

Հասարակական-ընտանեկան կենցաղի բազում հարցեր են քննարկված Սու. Լիսիցյանի աշխատություններում: Արձանագրելով մեծ, գերդաստանական ընտանիքի մնացուկների առկայությունը Չանգեզուրում՝ նշում է, որ փոքր ընտանիքի ներքին կյանքում շոշափելիորեն երևում են գերդաստանական հարաբերությունները՝ տղամարդու գերիշխանությունը տան մեջ, կնոջ ենթարկվածությունն ու չխոսկանությունը, աշխատանքի բաժանման հին ձևերը և այլն: Ընդգծելով տղամարդու դերի առաջնայնությունը հայ ընտանիքում, առանձնացրել է մոր դերակատարության մի քանի ուշագրավ փաստեր. մոր՝ հարսնացու ընտրելը, աղջկա ամուսնության գործում քեռուն դիմելը, ապագա զոքանչի՝ փեսացուին ակնհայտ ու գաղտնի հովանավորելը, պսակադրությունից հետո աղջկա տանը խնջույք կազմակերպելը, որը բնորոշ է միայն Չանգեզուրին և այլն: Սու. Լիսիցյանը լայն տեղ է հատկացրել ամուսնությանը, ընտանեկան հարաբերություններին և մանկատառությանը վերաբերող բազմապիսի սովորույթներին, սովել դրանց գիտական մեկնաբանությունները⁴³: Հայաստանի նախահեղափոխական շրջանի ընտանիքների ընդհանուր գնահատականի, ամուսնության ձևերի և հարսանեկան ծեսերի ամփոփ բնութագրությունը տրված է «Очерки этнографии дореволюционной Армении» աշխատության մեջ⁴⁴: Գիտնականը անդրադառնում է նաև հուղարկավորության համահայկական և Չանգեզուրի յուրահատկություններին⁴⁵, նաև գյուղական համայնքի դրսևորումներին⁴⁶: Սու. Լիսիցյանը Չանգեզուրում ուսումնասիրել է տեղական տոները, դրանց էության գիտական բացատրությունները (էջ 260-278): Ստեփան Լիսիցյանի այս փաստալից աշխատությունը Չանգեզուրի հայերի մասին կարևոր ավանդ է մեր ազգագրական գիտության մեջ:

Ստեփան Լիսիցյանի աշխատությունները զգալի չափով օգտագործվել են «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի

⁴³ Տե՛ս **Սու. Լիսիցյան**, Չանգեզուրի հայերը, էջ 185-207, 219-227:

⁴⁴ Տե՛ս Очерки этнографии ..., էջ 232-241:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 207-218:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 260-278:

«Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ժողովուրդները» բաժնում⁴⁷:

Այսպիսով, Սո. Լիսիցյանն իր ավելի քան կեսդարյա գործունեությունը նվիրաբերեց Հայաստանում հնագիտության, ազգագրության, թանգարանագիտության, ինչպես նաև աշխարհագրության և մանկավարժության զարգացմանը՝ հիմնարար աշխատություններով անգնահատելի ավանդ ներդնելով հայ նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մեջ: Նա մեծ ջանքեր է գործադրել բուհերում ազգագրություն առարկան ուսումնական ծրագրերում ընդգրկելու համար: Նրա ակտիվ քարոզչության շնորհիվ հետագայում իր նախապատրաստած ազգագրագետ կադրերի նոր սերունդը Վ. Բոդյան, Կ. Մելիք-Փաշայան, Դ. Վարդույան, Է. Կարապետյան և այլք, դարձան 1959 թ. ՀԽՍՀ ԳԱ համակարգում հիմնված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրագետ կադրերի հիմնական կորիզը: Թանգարանի ազգագրության բաժնի վերոնշյալ երիտասարդ ազգագրագետները, ինչպես նաև Վ. Պետոյանը և Ամինե Ավդալը 1944-1950 թթ. տարեկան մեկ-երկու ամսով գործուղվում են Հայաստանի տարբեր շրջաններ՝ Արարատյան դաշտավայր, այդ թվում Երևան, Աշտարակ, Թալին, Գուգարք, դաշտային ազգագրական հետազոտությունների համար, իսկ գիտությունների ակադեմիայի արվեստի բաժնից Սրբուհի Լիսիցյանը՝ հայ ժողովրդական պարերի գրանցման համար՝ Թալին-Արագած տարածաշրջան:

Մանուկ Աբեղյան (1865-1944):

Պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Աբեղյանը գիտական ասպարեզ իջավ XIX դարի վերջին տասնամյակներին և իր արդյունավետ գործունեությունը շարունակեց XX դարի առաջին կեսերին: 1899 թ. Մ. Աբեղյանը հրատարակում է երկու մենագրություն՝ «Հայ ժողովրդի հավատալիքները» և «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ»: Այդ զույգ աշխատությամբ փաստորեն հիմք է դրվում հայ ժողովրդական հավատալիքների, հնագույն առասպելների (Հայկի, Վահագնի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տորքի) և առասպելական վեպի (Տիգրանի և Արտաշեսի վիպական ցիկլեր) գիտական ուսումնասիրին: Մանուկ Աբեղյանը հայ ժողովրդական առասպելների լավագույն գիտակն էր: 1940 թ. մեծանուն հայագետը հրատարակում է «Ժողովրդական խաղիկներ» վերնագրով սովոր հատորը, որը պարունակում է տասնյակ տարիների ընթացքում հեղինակի (մասամբ նաև Կոմիտասի) գրի առած և տպագիր ու ձեռագիր աղբյուրներից հավաքած շուրջ 3.500 ժողովրդական խաղիկներ: Նույն թվականին հրատարակում է նաև «Գուսանական-ժողովրդական տաղեր» վերնագրով ժողովածուն: Ինչպես այս, այնպես էլ դեռևս 1931 թ. լույս տեսած «Հին գուսանական-ժողովրդական երգերը» ուսումնասիրությունները մեծարժեք գործեր են: «Հայ ժողովրդական հավատալիքը» ատենախոսության համար Ենայի (Գերմանիա) համալսարանում Աբեղյանը ստանում է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև, ինչպես նշեցինք, հետազոտում է հայ ժողովրդական բանահյուսությունը, ուսումնասիրում և համակարգում է պատմա-վիպական և քնարական ժանրի ժողովրդական ստեղծագործությունները, հայտնաբերում է «Սասնա ծռերի» երկրորդ տարբերակը՝ «Դավիթ և Մհեր» ժողովրդական վեպի

⁴⁷ Ст' у «Народы Кавказа» т. II, М., 1962 /«Хозяйства и материальная культура армян», էջ 463-523, «Семейный быт» (524-536), «Религиозные верования» (536-540), «Здравохранение» (540-544), «Фольклор, литература и искусство» (551-601):

Մոկաց պատումը (1886), հետագոտում է «Մասնա ծոերի» ժանրային գեղարվեստական հասկանիչները, բացահայտում նրա պատմական ատաղձն ու վիպական առասպելական շերտերը: 1889-1890 թթ. «Մուրճ» ամսագրում Մ. Աբեղյանը «Ազգային վեպ» խորագրով հրատարակում է մի ընդարձակ ուսումնասիրություն, որը նորահայտ «Մասունցի Դավիթ» հերոսավեպին նվիրված առաջին լուրջ ու ամբողջական հետազոտությունն էր: 1906-1908 թթ. «Ազգագրական հանդեսի» մի քանի գրքերում լույս է տեսնում Աբեղյանի՝ վեպին նվիրված երկրորդ, ավելի ընդարձակ ու բազմակողմանի հետազոտությունը՝ «Հայ ժողովրդական վեպ» վերնագրով՝ վեպի 15 պատումների նյութի հիման վրա: Ավելի ուշ (1936-1944 թթ. և 1951 թ.) Աբեղյանի ընդհանուր խմբագրությամբ լույս են տեսնում վեպի շուրջ 50 պատումների գիտական ամբողջական ժողովածուի երկու հոյակապ հատորները՝ «Մասնա ծոեր» վերնագրով: 1939 թ. կազմում և հրատարակության է պատրաստում վեպի հորեյանական համահավաք բնագրի առաջին ճյուղը («Մանասար և Բաղդասար»): Աբեղյանը նորովի ուսումնասիրում է հայերի հին ու նոր հավատալիքները, առասպելական գրույցները, հայ վիպական և քնարական բանահյուսությունը, հեղինակ է «Հայոց հին գրականություն» երկու հատորով և «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Ղերկետո դիցուհու արձաններ» աշխատությունները⁴⁸: Միայն նրա «Հայ ժողովրդական հավատք» ծավալուն ուսումնասիրությունը բավական է, որ նա գնահատվի որպես հայ բանագիտության և ազգագրության ամենաերևելի դեմքերից մեկը: Ի վերջո, գիտնականի բոլոր այս ոլորտի հետազոտությունների արդյունքների ամփոփումն է դառնում «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատությունը (1944 թ., 1946 թ.):

Հովսեփ Օրբելի (1887-1961):

Հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտության կայացման գործում նշանակալի ներդրում է ունեցել նշանավոր արևելագետ, հնագետ, ազգագրագետ, գիտության կազմակերպիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Հույժ ուշագրավ ազգագրական դիտարկումները վերաբերում են նրա գիտական գործունեության նախնական փուլին: Հակիրճ ներկայացնենք այն:

⁴⁸ Գեղամա լեռներում, Արագածում, Ջավախքում և այլուր տարածում գտած «վիշապներ» կոչվող ձկնակերպ քարե կոթողները ազգագրական և հնագիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: «Վիշապներով» զբաղվել են նաև **Ն. Յա. Մառք, Յա. Ի. Սմիռնովը** (տե՛ս «Вышапы», Ленинград, 1931), Գր. Ղափանցյանը («Հնության մի քանի հիշատակներ», «Արարատ», 1914, № 1), **Բ. Բ. Պիտորովսկին** («Вышапы, каменные статуи в горах Армении», Ленинград, 1939.), **Ա. Ս. Մնացականյանը** («Հայկական զարդարվեստ», Եր., 1955, էջ 547-557), ուրիշներ: Նշված գիտնականներից Մառք, Սմիռնովը, Պիտորովսկին, Ղափանցյանը՝ «վիշապները» կապում են ջրի ու ջուր պարզնող աստվածության, իսկ Աբեղյանը՝ հին հայոց սիրո և հեշտանքի դիցուհի Աստղիկի պաշտամունքի հետ: «Անկախ այս կարծիքի գիտական արժանահավատությունից, էականն այն էր, - գրում է բանագետ Ս. Հարությունյանը, - որ Աբեղյանն այստեղ հանգամանորեն քննում է Աստղիկ դիցուհու պաշտամունքի ընդհանուր արմատները, տեղավայրերը, առասպելները և բացահայտում նրա տեղն ու նշանակությունը հին հայոց ծիսապաշտամունքային համակարգում» (**Ս. Հարությունյան**, Մանուկ Աբեղյան, Գիտական վաստակի գնահատման ուրվագիծ, ՊԲՀ, 2006, № 1, էջ 3-27):

1906-1917 թթ. Անիի պեղումների իրականացում⁴⁹, Անիի, Լեռնային Ղարաբաղի և այլ հուշարձանների հայկական արձանագրությունների գրառում և հրատարակում⁵⁰, 1909 թ. Մոկսի հայերի և քրդերի ազգագրության ու բարբառի հետազոտություն՝ կազմելով հայ և քրդական բարբառների բառարաններ, Էրզրումի, Բայազետի, Վանի, Աղթամարի, Բագավանի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրություն և չափագրում, հնագիտական պեղումներ Թոփրակ կալեում և Հայկաբերդում, 1916 թ.՝ Ն. Մառի հետ Վանում, եռանդուն կազմակերպչական ջանքեր թանգարանագիտության, թանգարանաստեղծման ասպարեզում, տնօրենն էր Էրմիտաժի (1934-1954), ԽՍՀՄ ԳԱ հայկ. մասնաճյուղի, ապա՝ Հայաստանի ԳԱ պրեզիդենտ, ԽՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ղեկավար (1943-1947) և այլն: Այդուհանդերձ, Հ. Օրբելու դիտարկումները հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանի Մոկս գավառին, ուր նա այցելում է 1911-1912 թթ. և հավաքում եզակի ազգագրական, բանահյուսական և բարբառագիտական նյութեր: Մոկսի բնակչությունը խառն էր, այնտեղ ապրում էին թե՛ հայեր, թե՛ քրդեր: Այստեղ նա նյութերը գրանել է Մոկս քաղաքի Ապրիլիանանց, Անջղոնց, Տաշտ թաղամասերում՝ 23 հայ և մեկ քուրդ՝ հայերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն լեզուներին տիրապետող բանասացներից: Բանասացները հիմնականում տղամարդիկ էին, հիշատակված է նաև կին բանասաց՝ Նազե Շահամիրյան անվամբ, որից Հ. Օրբելին գրանել է զվարճախոսություններ⁵¹: Հ. Օրբելին կազմեց հայերեն-ռուսերեն և քրդերեն-ռուսերեն բարբառագիտական բառարաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թե՛ իմաստաբանությանը, թե՛ հնչյունաբանությանը: Օրբելու մեծ աշխատանքի արդյունքները նրա կենդանության օրոք լույս չտեսան: 1982 թ. հրատարակվեց միայն մի փոքրիկ մասը⁵², որն ընդգրկում է Մոկսի ազգագրական ակնարկը և գրի առնված բնագրերի ռուսերեն թարգմանությունները: Իսկ հայերեն և քրդերեն բառարանները, հայերեն բնագրերը, ցավոք, դեռևս մնում են անտիպ: 1968 թ. լույս տեսավ Հ. Օրբելու ընտիր աշխատությունների առաջին հատորը⁵³: Այն կազմված է երկու հիմնական բաժնից՝ ազգագրություն (Մոկսը և բնակիչները) և բանահյուսություն (հայ բանահյուսական բնագրեր, թարգմանություններ): Հավելվածում տրված են բնակավայրերի անվանումները՝ տեղի բարբառով, Մոկս քաղաքը իր հինգ թաղամասերով, ուր հայերից բացի, ապրում էին նաև քրդեր, գնչու-բոշաներ: Հաշվառված է 75 խոշոր բնակավայր, 5 ազարակ՝

⁴⁹ Հովսեփ Օրբելին Անիի հնադարանի տնօրենն էր: 1910 թ. հրատարակվեց նրա կազմած «Каталог Анийского музея древностей», СПб., 1910, տե՛ս նաև **Օրбели И. А.**, Избранные труды, Ер., 1963, էջ 23-102:

1911թ. Հ. Օրբելին ռուսերեն հրատարակեց իր «Անվտ ավերակները» գրքույկը (Развалины Ани. История. Современное состояние. Раскопки) (տե՛ս **И. А. Орбели**, Избранные труды, էջ 1-23): Հետմահու լույս տեսավ Հ. Օրբելու ընտիր աշխատությունների առաջին հատորը **Օրбели И. А.**, Избранные труды в двух томах, т. 1, Из истории культуры и искусства Армении X-XIII вв., М.-Л., 1968:

⁵⁰ Հ. Օրբելին ժամանակակից հայ վիճագրության առաջին հետազոտողը եղավ: Դեռևս 1914-1917 թթ. հիմնականում «Քրիստոնյա Արևելք» (ռուսերեն) հանդեսում, տպագրել է Անիի արձանագրությունների իր ուսումնասիրությունները («Իվան հայ վիճագրության», պր. 1, Եր., 1966):

⁵¹ Տե՛ս **Օրбели И.**, Избранные труды, Ер., 2002, էջ 195-196:

⁵² Տե՛ս **Օրбели И. А.**, Фольклор и быт Мокса, М., 1982:

⁵³ Տե՛ս **Օրбели И. А.**, Избранные труды, в двух томах, т. 1, М.-Л., 1968.

իրենց տնտեսություններով, ազգային կազմով, 19 լուսանկար, որ պատկերել են բնական տեսարանները, կառույցները, տարազը, տապանաքարերը, մի խումբ հայուհիներ՝ մանուկների հետ, Մուրթուլա Բեկն իր վարչակազմով և այլն: Գրողերը տեղադրված են ութ առանձին կիրճերում (ձորակներում): Գրքում Մոկսի աշխարհագրական և բնակչությունական միջավայրը և էթնիկ կազմը ներկայացնելուց հետո տրված են տեղեկություններ հայ (նստակյաց-երկրագործ) և քուրդ (քոչվոր-անասնապահ) ժողովուրդների թվաքանակի, զբաղմունքների՝ երկրագործության, անասնապահության, տնայնագործության, արհեստների, փոխադրամիջոցների, առևտրի, փոխանակության, նյութական մշակույթի՝ բնակավայրերի ու բնակարանների դասավորվածության, ներսույթի, հատակազծի, և վերջապես՝ հասարակական, հոգևոր կյանքի ու կենցաղի, սովորույթների ու ավանդույթների, ինչպես նաև քաղաքական ու ազգամիջյան փոխհարաբերությունների վերաբերյալ: Ուշագրավ են հատկապես միջէթնիկ հարաբերությունները՝ հեղինակին հյուրընկալած Մուրթուլա բեկի բնութագիրը, երեկոյան հավաքույթները նրա տանը, ըստ ավագության բարձերին բազմելը, որը հիշեցնում է հին իրանական ու հայկական «Գահնամակի» կարգը⁵⁴: Մոկսի հայերից գիտնականի գրի առած բանահյուսական տեքստերից առանձին խումբ են կազմում ժողովրդական հեքիաթները, մանրապատում զրույցները, կենդանական վեպերն ու առակները, վիպական երգերն ու բալլադները, աշխատանքի և ծխական երգերը, երգիծական և մանկական երգերը, առածներն ու ասացվածքները, հանելուկներն ու շուտասելուկները: Գրքի նշանակությունը կարևորվում է նրանով նաև, որ 1915-1916 թթ. Մոկսում ոչ մի հայ չմնաց: Ուսումնասիրվող հարցի շրջանակից դուրս չեն մնացել և մեջընդմեջ խոսվում է ամուսնության ու հարսանիքի, ժողովրդական տոների (Համբարձում, Վարդավառ, Տյառնընդատաջ) մասին և այլն⁵⁵: Մեծանուն գիտնականը ծանրակշիռ վաստակ ունի նաև հայ բանագիտության ասպարեզում: 1939 թ. «Մասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության միջոցառումները հանձնարարված էր գլխավորել Հ. Օրբելուն: Նա մեծ դեր ունեցավ «Մասունցի Դավիթ» համահավաք ժողովածուի (հայերեն և ռուսերեն) հրատարակման գործում (1939 թ.): Նրա նախաձեռնությամբ նույն թվականին Լենինգրադում տպագրվեց «Մասունցի Դավիթ» վեպի ռուսերեն թարգմանությունը և գիտնականի զեկուցումներով այն ներկայացվեց ԽՍՀՄ ժողովուրդների լայն շրջաններին⁵⁶: Նշենք, որ միջազգային բանագիտությանը մեր դյուցազներգությունը ծանոթ է հենց այդ թարգմանության շնորհիվ: Նրա ջանքերով էր, որ մեր դյուցազներգությունը, դուրս գալով ազգային սահմաններից, դարձավ համամարդկային մշակույթի սեփականություն: «Հայ հերոսական էպոսը» աշխատության և «Մասունցի Դավիթ» էպոսը («Խորհրդային գրականություն», ամսագիր, Եր., 1939, № 8-9) ուսումնասիրության մեջ Օրբելին հանգամանորեն անդրադարձել է էպոսի բովանդակությանը, կերպարներին, վեր է հանել էպոսի պատմական կորիզն ու ձևավորման ընթացքը, բացահայտել էպոսի և այլոց համանման գործերի միջև առկա ընդհանրությունները: Կենդանի, պատկերավոր,

⁵⁴ Տե՛ս **Դ. Վարդումյան**, Հովսեփ Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոկսում, «Նոր ազգագրական հանդես», Ա., Եր., 2005, էջ 122-124:

⁵⁵ Տե՛ս **Կ. Ն. Յուզբաշյան**, Ակադեմիկոս Հ. Օրբելի, Եր., 1971: Տե՛ս նաև **Դ. Վարդումյան**, Հ. Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոկսում, էջ 122-123:

⁵⁶ «Давид Сасунский, Армянский народный эпос», М.-Л., 1939, **Հ. Օրբելի**, Հայկական ժողովրդական էպոս, Եր., 1956: Նույնը՝ ռուսերեն:

ներշնչուն խոսքով նա վեր է հանել էպոսի պատմամշակութային ու գեղարվեստական արժեքները, ընդգծել նրա մեջ մարմնավորված ազատասիրական, հերոսական, խաղաղասիրական, մարդասիրական գաղափարները: «Առակները» ևս նրա հետազոտությունների շատ կարևոր մասն են: Ընդգրկելով հսկայական նյութ, հեղինակը ներկայացրել է XII-XIII դարերի Հայաստանի հասարակական կյանքն ու մշակույթը և փորձ կատարել պարզաբանելու, թե ինչպիսի արձագանք է գտել դարաշրջանը առակներում⁵⁷: Օրբելու ինչպես ազգագրական, այնպես էլ բանագիտական ուսումնասիրությունները աղբյուրագիտական և տնտեսական ընդհանրացնող գործեր են: Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին թողել է հարուստ գիտական ժառանգություն: Հայ մշակույթի ասպարեզում Հովսեփ Օրբելին գնահատված է եղել որպես ռահվիրա⁵⁸:

1920-40-ական թթ. նշանավոր ազգագրագետներից էր նաև **Երվանդ Շահազիզը (1856-1951)**՝ գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ: Բանասիրական գիտությունների դոկտոր (1944), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1946): 1922 թ. հրավիրվել է Երևան մասնակցելու Հայաստանի կենտրոնական կուլտուր-պատմական թանգարանի ստեղծման աշխատանքներին՝ նորաստեղծ թանգարանը՝ Նոր Նախիջևանից բերած արխիվային հարուստ նյութերով հարստացնելու համար: Թանգարանում աշխատել է որպես պատմագրական բաժնի վարիչ: Պատմաբանասիրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, որոնցից ազգագրական առումով ուշագրավ են՝ Նոր Նախիջևանի հայկական գաղթավայրի պատմությանը, ազգային սովորությունների և ավանդույթներին վերաբերող «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք» (ԱՀ, գ. 9, էջ 5-57), «Հին Երևանը» (Եր., 1931), «Աշտարակի պատմությունը» (Եր., 1987): Անտիպ է դեռևս «Չերքեզիա կամ Չերքեզիստան և չերքեզահայք» աշխատությունը:

Այլ հեղինակներ:

Հայ ազգագրության բնագավառում անառարկելի է նշանավոր լեզվաբան Գր. Ղափանցյանի (1887-1957)⁵⁹ հետազոտությունների կարևորությունը, առանձնապես հեթանոսական հավատալիքների ուսումնասիրության խնդրում: Տիրապետելով փոքրասիական մի շարք մեռած լեզուների (խեթերեն, ուրարտերեն, խուռիերեն և այլն)՝ Ղափանցյանը սեպագիր արձանագրությունների խորագինն ուսումնասիրությամբ պարզել է հայերի էթնիկական կապերը հարևան ժողովուրդների հետ, լեզվական փոխառություններն ու փոխազդեցությունները: Այդ առումով ուշադրության արժանի է «Chetto-armeniaca» (Եր., 1931) մենագրությունը, որտեղ քննել է հայերենի ու խեթերենի շուրջ 200 բառեր ու ձևեր, լուսա-

⁵⁷ Տե՛ս **Орбели Иосиф**, Басни средневековой Армении, М.-Л., 1956.

⁵⁸ Տե՛ս **Կ. Ն. Յուզբաջյան**, Հովսեփ Օրբելին որպես հայագետ, ՊԲՀ, 1987, № 1, էջ 11-22:

⁵⁹ Ծնվել է Աշտարակում, բարձրագույն կրթությունն ստացել է Պետերբուրգի համալսարանում, աշակերտել է Նիկողայոս Մառին: 1913 թ. ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայ-վրաց-պարսկական բաժինը և աշխատանքի անցել Էջմիածնի Գևորգյան ձեմարանում: 1914 թ. մասնակցել է Անիի Ն. Մառի կազմակերպած պեղումներին: 1921 թ. հրավիրվել է Երևանի համալսարան և մինչև 1954 թ. ղեկավարել է լեզվաբանության ամբիոնը: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է: Նրա հրատարակած աշխատություններից ուշագրավ են «Ընդհանուր լեզվաբանություն» (Եր., 1937-1939), «Ուրարտուի պատմություն» (1940), և այլ աշխատություններ (տե՛ս նաև Գրիգոր Այվազի Ղափանցյան, Գիտական գործունեության համառոտ ակնարկ, Եր., 1959):

բանել նաև փոքրասիական մի շարք ժողովուրդների մշակույթի ու պատմության կնճռոտ հարցեր: Ղափանցյանի «Խեթական աստվածները հայոց մեջ»⁶⁰, «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (Եր., 1944) մենագրությունները, «Զրահարսի պաշտամունքը հայերի մեջ»⁶¹ և «Խեթական մի առասպելի մասին, կապված կռունկի և գարնան աստվածության հետ»⁶² հոդվածները և «Հայասան - հայերի բնօրրան»⁶³ աշխատությունը մինչև օրս գնահատվում են որպես լուրջ ներդրում հայ ազգաբնակչության, հնագույն հավատալիքների լուսաբանման գործում: Ղափանցյանի նշանավոր աշխատություններից է նաև «Հայոց լեզվի պատմությունը» (Եր., 1961), որտեղ քննության են առնված հայ ժողովրդի կազմավորման հարցերը, հայոց լեզվի հնդեվրոպական նստվածքը:

Հայ ազգագրության վերաբերյալ ուշագրավ հետազոտություններ ունի Գ. Չուրսինը: Առաջինը նա հիմք դրեց Զանգեզուրի ազգագրական ուսումնասիրությանը, 1931 թ. լույս ընծայելով «Армяне Зангезура»⁶⁴ գիրքը: Նրան հետևում են Ն. Գրիգորովի, Ե. Մելիք-Շահնազարյանի, Ն. Շիրակունու, Գեղիվանովի հոդվածները, որոնք տպագրվեցին «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» մատենաշարով: Ստ. Լիսիցյանի, Գ. Չուրսինի հետ միասին Լ. Մելիքսեթ-Բեկը, աշխատելով Կովկասի պատմահնագիտական ինստիտուտում, նույնպես կարևոր ներդրում ունեցավ հայ ազգագրության բնագավառում: Ուշագրավ են Լ. Մելիքսեթ-Բեկի «Հայ ազգագրագետ-հնագետ Ե. Լալայանը»⁶⁵, «Կովկասում Կովսադայի սովորույթի հարցի մասին»⁶⁶ և այլ հոդվածներ⁶⁷:

Հայ հեթանոսական կրոնի ուսումնասիրության խնդրում ուշագրավ է նշանավոր բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանի «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ» (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Գրական-բանասիրական հետախուզումներ», գ. Ա, Եր., 1946) ուսումնասիրությունը: Հեթանոսական պաշտամունքի մեկ այլ աստվածության՝ Վահագնի պաշտամունքի վերաբերյալ ուշագրավ հետազոտություն է կատարել Բ. Առաքելյանը⁶⁸: Ուշադրության արժանի է նաև Թ. Սվդալբեգյանի՝ արևի ու կրակի աստված Միհրին նվիրված «Միհրը հայոց մեջ»⁶⁹ աշխատությունը, իսկ բնության մեռնող և հարություն առնող աստվածություններին, հողի ու ջրի պաշ-

⁶⁰ Տե՛ս **Капанцян Г. А.**, Хетские боги у армян: в связи с генезисом армянского пантеона вообще, «Երևանի պետական արևմտագիտական ինստիտուտի հոդվածներ», հատ. 14, 1940, էջ 243-316:

⁶¹ Տե՛ս **Գր. Ղափանցյան**, Զրահարսի պաշտամունքը հայերի մոտ // «Խորհրդային գրականություն», 1940, թիվ 6, էջ 124-135:

⁶² Տե՛ս «Մատի անվան կարիքների աշխատություններ», № 1, 1945, էջ 173-186:

⁶³ Տե՛ս **Капанцян Г. А.**, Хайаса-колыбел армян. Этногенез армян и их начальная история, Եր., 1956:

⁶⁴ Տե՛ս **Чурсин Г.** Армяне Зангезура, Тифлис, 1931, էջ 221-264:

⁶⁵ Տե՛ս **Меликсет-Бекоев Л.**, Армянский этнограф-археолог Е. А. Лалаян (К пятилетию со времени его кончины), СЭ, 1936, № 4-5, էջ 225-226:

⁶⁶ Տե՛ս **Меликсет-Бекоев Л.**, К вопросу об обычае кувады на Кавказе в связи с языковым пережитком матриархата, Сб. Академия наук СССР, XV, М.-Л., 1935, էջ 729-736:

⁶⁷ Տե՛ս **Меликсет-Бекоев Л.**, Указатель литературы по истории государства и права, обычному праву и юридическому древностям Грузии, Армении и Азербайджана, Тбилиси, 1939, **նույնի**՝ К истории удин (utica-argeniaca), «Труды Тбил. Гос. Ун-та», т. 23, 1942, էջ 25-55:

⁶⁸ Տե՛ս **Բ. Ն. Առաքելյան**, դիտողություններ վիշապաբաղ Վահագնի մասին, «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.», № 2, 1951, էջ 75-81:

⁶⁹ Տե՛ս **Թ. Սվդալբեգյան**, Միհրը հայոց մեջ. Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 13-79:

տամունքին է նվիրված Վ. Բոդյանի «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ» ուսումնասիրությունը⁷⁰:

Միյուրքում էլ լույս տեսան պատմաագագրական մի քանի շրջանների վերաբերող ուսումնասիրություններ, որոնք ավելի շատ տեղեկատվական, աղբյուրագիտական արժեքավոր ազգագրական գործեր են և արժանի են ուշադրության⁷¹:

Այդուհանդերձ հարկ է նշել, որ խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներին (1920-1940-ական թթ.) յուրատեսակ քամահրական վերաբերմունք է եղել ազգագրական գիտության նկատմամբ, մասնագետներ գրեթե չեն պատրաստվել և միայն անցյալից հարատևող վերը նշված «մի քանի նախանձախնդիրների, հատկապես Սո. Լիսիցյանի ջանքերով է, որ գոյատևել է ազգագրությունը, վախվորած ծվարելով ՀՊԹ-ում և ԵՊՀ-ի աշխարհագրության մասնաճյուղում (գավառագիտություն անվան տակ)»⁷²: Ազգագրական գիտության նկատմամբ վերաբերմունքը, պայմանավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերով, հետզհետե փոխվում է Երկրորդ աշխարհամարտին հաջորդած նոր պայմաններում:

Ի մի բերելով վերը ասվածը՝ վստահորեն կարելի է պնդել, որ 1920-1940-ական թթ. հանդիսացան այն շրջափուլը, երբ ազգագրության բնագավառում սկզբնավորվեց և զարգացում ապրեց թանգարանային գործը, իսկ Գիտության և արվեստի, Կուլկասի պատմա-հնագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, Գիտությունների ակադեմիայի ստեղծմամբ նոր թափ ու ծավալ ստացավ ազգագրական նյութերի հավաքչական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեությունը: Նախախորհրդային շրջանում գործող ազգագրագետներ Ե. Լալայանը, Խ. Սամուելյանը, Սո. Լիսիցյանը, Բանագետներ Մ. Աբեղյանը, Հ. Օրբելին և այլք արդեն խորհրդային տարիներին, հենվելով իրենց բազմամյա գիտելիքների և փորձառության վրա, ծավալեցին արդյունավետ հավաքչական և հետազոտական աշխատանք, որոշակի ներդրում ունենալով խորհրդահայ ազգագրության զարգացման գործում: Հայրենանվեր ազգագրագետներ-բանահավաքները խելամտորեն օգտագործեցին նաև նորագյուտ տեխնիկական միջոցները՝ լուսանկարում, ձայնագրում, չափագրում, քարտեզագրում, կինոնկարահանում և այլն, ինչի շնորհիվ գրանցված նյութերը ամբողջական տեսքով թողնվեցին հետագա ուսումնասիրողներին: Նրանց ծառանգության վրա արդեն XX դարի կեսերին սկսեց գործել ազգագրագետ-բանահավաքների հերթական սերունդը, որը ազգագրական նոր, ավելի համակողմանի հարցարանով առաջնորդվելով՝ հայ ազգագրությունը զարգացրեց ժամանակի պահանջներին համահունչ, ի մի բերելով ու հրատարակելով ինչպես թեմատիկ, այնպես էլ պատմաագագրական շրջանների ամբողջական հետազոտություններ: Այս շրջանը բնորոշվում է նաև ազգագրության և բանահյուսության՝ որպես գիտության ուրույն բնագավառների տարանջատման ու զարգացման ժամանակաշրջան:

⁷⁰ Տե՛ս «Աշխատություններ Հայաստանի պետական թանգարանի», № 3, Եր., 1950, էջ 5-71:

⁷¹ Տե՛ս **Արամ Երևմյան**, Մպահանի Չահարմահալ գավառը, «Բազմավեպ», 1923, № 7-12, 1924, № 1-3, 6-12, 1925, № 3, **Վահան Համբարձումյան**, Գյուղաշխարհ, պատմական և ազգագրական ուսումնասիրություն, Փարիզ, 1927, **Ս. Ա. Բախտիկյան**, Արաբկիր և շրջակայքի գյուղերը, Պեյրուօ, 1934, **Թորոս Ազատյան**, Ակն և ակնցիք, Բսթանապու, 1943 և այլն:

⁷² Տե՛ս **Ղ. Վարդումյան**, Հայ ազգագրությունը Ի դարում, «Բազմավեպ», 1-4, 2003, էջ 452:

Բանալի բառեր - «Ազգագրական հանդես», հավաքչական և հետազոտական գործունեություն, ազգագրություն, բանահյուսական նյութեր, թանգարաններ, նյութական և հոգևոր մշակույթ, հավատալիքներ

Ռաֆիկ Նահպետյան , Հայ ազգագրական գիտությունը Խորհրդային շրջանում (1920-1940-ական թթ.)-Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջափուլ թևակոխեց իբրև պատմամշակութային գիտության լիովին կազմավորված բնագավառ: Խորհրդային կարգերի հաստատումով սկսվեց հայագիտության զարգացման նոր փուլ՝ Հայաստանում գիտության մյուս բնագավառների հետ միասին բարենպաստ պայմաններ և զարգացման լայն հեռանկարներ ստեղծվեցին նաև ազգագրական գիտության համար: Նյութական հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետազոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանքների ծավալման համար: Հայ ազգագրագետներ Ե. Լալայանը, Խ. Մամվելյանը, բանասերներ Ս. Աբեղյանը, Հ. Օրբելին մեծ դեր ունեցան խորհրդահայ ազգագրության զարգացման առումով: Ազգագրության շրջանակներում զարգացավ նաև թանգարանային գործը, կազմավորվեց Արվեստի և գիտության ինստիտուտը, Կովկասի Պատմա – հնագիտական ինստիտուտը: Այն, ինչ նախկինում ինքնուրույն պետականության բացակայության պատճառով մեզանում կատարվում էր առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական և նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, սկսեց իրականացվել պետական հոգածությունը՝ վայելող համապատասխան հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրված, հետևողական գործունեությամբ: Խորհրդային ազգագրության խնդիրների ու հեռանկարների, սոցիալիստական գյուղի վերափոխումների անդրադարձների վերաբերյալ պահանջներ էին առաջ քաշվում միութենական ազգագրության կողմից: Գաղափարական այս պարտադրանքի պայմաններում հայագիտության, այդ թվում նաև ազգագրական գիտության ապահով և անկաշկանդ զարգացումը ըստ էության դարձավ անհնարին: Այդուհանդերձ, հայ ազգագրական ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային տարիներին ակնառու էին:

Рафик Наапетян, Армянская этнографическая наука в советское время (1920-1940гг.)-Армянская этнографическая наука вошла в советскую эпоху как полностью сформированная область культурно-исторической науки. В статье описывается процесс развития армянской этнографии в 1920-1940гг. в новых общественно-политических условиях, а также деятельность тех преданных делу специалистов, которые обеспечили подобающий уровень исследований данной сферы. Так, работающие в досоветское время этнографы Е. Лалаян, Х. Самуелян, фольклористы М. Абегиан, О. Орбели и др. в советские годы осуществили эффективную собирательную и исследовательскую деятельность, основываясь на своих знаниях и предыдущем опыте и внося свой вклад в развитие этнографии Советской Армении. В области этнографии формировалось и нашло развитие музейное дело, а создание Института Науки и искусства, Историко-археологического института Кавказа, Ереванского государственного университета, Академии наук обусловила новый размах собирательной, научно-исследовательской и научно-организационной деятельности. Преданные родине этнографы-фольклористы умело использовали также новые технические средства, как фотографирование, записи, разметки,

картографирование, видеозапись и др., благодаря чему собранные материалы остались следующим поколениям исследователей в полном объеме. Указанный период также определяется как период разделения и развития этнографии и фольклора в качестве самостоятельных областей.

Rafik Nahapetyan, Armenian ethnographic science in the Soviet era (1920-1940)- Armenian ethnographic science entered the Soviet era as a fully formed area of cultural and historical science. The article describes the development of Armenian ethnography in 1920-1940 within new socio-political conditions, as well as the activities of those dedicated professionals who provided the proper level of research in this field. Thus, ethnographers E. Lalayan, H. Samuelyan, folklorists M. Abegyan, O. Orbeli, etc., who worked in pre-Soviet times, carried out effective collective and research activities in Soviet years based on their knowledge and previous experience and contributed to the development of ethnography Soviet Armenia. In the field of ethnography, the museum business was formed and developed, and the creation of the Institute of Science and Arts, Historian-Archaeological Institute of the Caucasus, Yerevan State University, Academy of Sciences determined the new scope of collective, scientific research and scientific and organizational activities. Ethnographers-folklorists, dedicated to their native land, skillfully used also new technical means, such as photographing, recording, marking, mapping, video recording, etc., thanks to which the collected materials were fully left to the next generation of researchers. This period is also defined as the period of separation and development of ethnography and folklore as independent fields.

**ԱՇԽԱՐՀԻԿ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

ԴԱՎԻԹ ԹԻՆՈՅԱՆ

Կիլիկիայի հայոց թագավորության 13-րդ դարի վերջին քառորդը իրավամբ բեկումնային դարձավ տեղի հայկական քաղաքակրթության համար: Դարի նախորդ կեսի ընթացքում սկսված գործընթացներն՝ ի դեմս տարածաշրջանում մոնղոլական գերակա դիրքերի հաստատման, հասել էին իրենց տրամաբանական բարձրակետին և այժմ արդեն սկսվել էր աստիճանական վայրէջքը: Անկասկած, այն տեղի էր ունենում բավական դանդաղ, հաճախ նաև աննկատ, բայց գործընթացն արդեն սկսվել էր: Այդ համատեքստում պետք է դիտարկել նաև 1266 թ. Մանիի ճակատամարտում հայկական բանակի կրած պարտությունը և դրա հետ կապված հետագա զարգացումները. «...Բսկ թագաւորն Հայոց թէպէտ և միշտ ջանայր աւերել զգօրութիւն Սարակինոսաց, և բազում անգամ գուն գործէր յորդորել զԱպաղայ և զԹաթարս ի քակտումն նոցունց, այլ Ապաղայ վասն մարտին ընդ սահմանակիցս՝ հրաժարեաց յոլովակի»¹: Հայոց թագավորը հարկադրված էր մեծ զիջումների գնով՝ համաձայնության գալ մամլուքյան սուլթանի հետ և ետ վերադարձնել գերևարված միակ ժառանգին՝ Լևոնին: Փաստացիորեն մեկ և կես տարի տևած ապարդյուն փորձերից հետո, ի վերջո, Հեթումը բանակցությունների գնաց մամլուքների հետ: Ընդ որում, բացի գահաժառանգին վերադրածնելու խնդրից, հայոց արքան կանգնած էր նաև մամլուքյան ներխուժման իրական վտանգի առջև: Սուլթան Բեյբարսը դեռ 1260 թթ. խաչակրաց տիրույթները ոչնչացնելու սկսած գործընթացը շարունակեց նաև 1268 թ.: Մայիսին գրավվեց Անտիոքը, փաստացիորեն սկիզբ դնելով ասիական Լևանտի ծովեզերքին խաչակրաց գրեթե երկու հարյուրամյա ներկայության ավարտական գործընթացին: Իրապես ստեղծվեց նոր իրավիճակ հայոց թագավորության համար, Անտիոքի նվաճումով մամլուքները դարձան սահմանակից Կիլիկիային և հետագա հարյուրամյակի ընթացքում հայոց թագավորության արտաքին ու հաճախ նաև ներքին քաղաքականությունը հիմնվելու էր հենց այս հանգամանքի վրա: Նման պայմաններում հայոց թագավորը, ստիպված էր գնալ զիջումների: Բացի մոնղոլների մոտ գտնվող Բեյբարսի մտերիմ Սոնկուրին մի քանի սահմանային բերդեր զիջելուց, Հեթումը փաստացիորեն պարտավորվեց նաև այլևս չմիջամտել Ասորիքում ընթացող պատերազմին: Այս հանգամանքը հատկապես որոշակի մեղադրանքների պատճառ հանդիսացավ հայոց թագավորի հանդեպ առ այն, որ վերջինս փաստացիորեն դավաճանում է իր քրիստոնեական «պարտքին»՝ հավատակից խաչակիրների հանդեպ:² Մակայն սա հարկավ, հանիրավի մեղադրանք է, հաշվի առնելով ինչպես հայոց թագավորության ունեցած ռեսուրսային հնարավորությունների բացակայությունը, այնպես էլ այն հանգամանքը, որ բազմաթիվ քրիստոնեական գահակալներ, ինչպես օրինակ Կոստանդնուպոլսի Պալեոլոգները և Սիցիլիայի թագավորությունը բավական սերտորեն համագործակցում էին

¹ Հեթում պատմիչ **Թաթարաց**, Յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, Վենետիկ, 1842, էջ 52:

² **Գալանուս**, 394:

մամլուքների հետ: Գահաժառանգի գերությունից դարձը տեղի ունեցավ 1268 թ. հուլիսին: Հենց այդ ժամանակ էլ Հեթումը ներկայացրեց գահից հրաժարվելու իր մտադրությունը: Մակայն գահաժառանգ Լևոնի անհամաձայնության պատճառով այն տեղի ունեցավ միայն 1270 թ. ընթացքում³: Ընդ որում, թե Հեթումի և թե Լևոնի այցելությունները Իրան՝ դանի արքունիք, ինչպես իրավացիորեն նկատում է հարցին խորագիտակ Լ. Տեր Պետրոսյանը, նպատակ ուներ ստանալ հայոց նոր գահակալի վավերացումը. «...կարգն ուներ ոչ թե վճռորոշ, այլ ընդամենը վավերացնող լիազորության բնույթ, այսինքն՝ ոչ թե մոնղոլներն իրենք էին որոշում թե ով պիտի թագավորի Կիլիկիայում, այլ վավերացնում էին Հայոց օրինական թագաժառանգի գահակալման իրավունքը»⁴: Քիչ անց Հեթումը օծվեց կրոնավոր Մակար հոգևոր անվամբ: Բայց անգամ նման պարագայում գահաժառանգ Լևոնը, փաստացիորեն զբաղեցնելով երկրի ղեկավարի պաշտոնը, շարունակում էր իրեն բնորոշել ոչ թե որպես Հայոց թագավոր, այլ Ավագ պարոն⁵. «..Ի եւթն հարիւրերորդի տասներորդի, իններորդի(1270) թուաբերութեան տումարի Հայոց.... և ի թագաւորութեան Կիլիկեցոյ նահանգիս Հեթոյ բարեպաշտի, և ի պարոնութեանն Հայոց Լևոնի որդոյ Հեթոյ արքայի»⁶: Մա հարկավ խոսում էր ինչպես վերջինիս բարոյական բարձր նկարագրի, այնպես էլ Հեթումի ունեցած բարձր ժողովրդականության մասին: Լևոնը օծվեց որպես հայոց թագավոր 1271թ. հունվարի վեցին՝ հոր մահից երկու ամիս անց միայն⁷: Լևոնի գահակալման շրջափուլը (1270-1289թթ.) փաստացիորեն համընկավ ցամաքային Լևանտում արևմտյան ազդեցության վերջնական վերացման հետ և այս պայմաններում հայոց գահակալին վիճակված էր դիվանագիտական մեծ ջանքեր գործադրել հայոց պետականության գոյությունը տարածաշրջանում ապահովելու համար: Դեռևս 1267 թ. իր երկարատև գրեթե կեսդարյա աթոռակալումն էր ավարտել Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը: Վերջինիս աթոռակալումը ըստ էության օրինակելի կարելի է համարել աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխգործակցության տեսանկյունից: Նման գործունեությունը շարունակական եղավ նաև հաջորդի, 1268 թ օծված Հակոբ Կլայեցու պարագայում: Հարկ է փաստել, որ նոր կաթողիկոսի ընտրությունը տեղի ունեցավ պետության ծանր շրջափուլում. երկրիրը դեռ ուշքի չէր եկել մամլուքյան արշավանքի հարուցած ավերածություններից, արքայորդին դեռևս գտնվում էր գերության մեջ և թերևս սրանով էր առավելապես պայմանավորված, որ Կոստանդին կաթողիկոսի մահից ինն ամիս անց միայն՝ 1268 թ փետրվարին՝ Հակոբը օծվեց կաթողիկոս: Հարկավ այստեղ նշանակություն կարող էր ունենալ նաև այն հանգամանքը, որ եկեղեցա-

³ Լևոն Տեր Պետրոսյանը Լևոն 2-րդի փաստացի գահակալման թվական է հիշատակում 1269 թ. Տես, Լ. Տեր Պետրոսյան, Խաչակիրներն և Հայերը, Հատոր Բ, էջ 297: Շատ ավելի ճիշտ կլինի կարծում ենք թվագրել փաստացի գահակալման թվականը 1270-ով, հաշվի առնելով այն, որ նույն 1269 թ. Լևոնը ինքը մեկնեց Աբաղա դանի մոտ և նրա բացակայության շրջանում երկրի փաստացի ղեկավարը շարունակում էր մնալ Հեթումը:

⁴ Խաչակիրները և հայերը, Հատոր Բ, էջ 323:

⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, Եր. 2001, հատոր Բ, սյ. 1961:

⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Կազմեց Ա. Ս. Մաթևոսյանը, Եր. 1984, էջ 396:

⁷ Հատկանշական է, որ օծման հանդիսավոր արարադրությունը տեղի ունեցավ սուրբ ծննդյան օրը, ինչպես Լևոն 1-ինի պարագայում 1198թ.:

կան ժողովին մասնակցելու համար “արևելքի” հոգևորականների ժամանմանը ևս ժամանակ էր անհրաժեշտ: Ինչևէ, հաշվի առնելով, որ Հակոբի ընտրությանը մասնակցել էին հայկական հոգևոր իշխանության երկու առանցքային հատվածների ներկայացուցիչները, վերջինիս օրինակարգությունը միջնադարյան հայկական եկեղեցական իրավունքի տեսանկյունից կասկածներ այլևս չէր կարող հարուցել: Հակոբի վերաբերյալ տեղեկությունները բավարար չափով շատ չեն, բայց և այնպես վերջինս եղել է հոգևոր իշխանության բավական ազդեցիկ ներկայացուցիչ: Նա Կոստանդինի աթոռակալման վերջին շրջանում ղեկավարել է Կոստանդնուպոլիս մեկնած պատվիրակությունը, եղել է կաթողիկոսի օգնականը, իսկ վերջինիս մահից հետո փաստացիորեն կատարել է տեղապահի պարտականությունները. «Այս տեր Յակօբ այր սուրբ եւ առաքինի եւ յոյժ գիտնական, որ արար զլուծմունս նուրբ գրեացն դժուարալոյծ բանիցն»:⁸ Բացի այդ, Հակոբը նաև հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնության ակտիվ ջատագովներից էր, որը նրան ընդունելի էր դարձնում «արևելքիների» համար: Պապականության առաջնայնության դեմ որոշակի վերապահումներ են նկատվում նաև հաջորդ կաթողիկոսների՝ Հակոբ Կլայեցու և այլոց մոտ⁹: Վերաբերմունքը Լևոն 2-րդի նկատմամբ հայ հոգևորականության մոտ, ի տարբերություն իրեն հաջորդող թագավորների (որոնց հանդեպ հայ հիշատակագիրները հաճախ կամ չեզոք են մնում կամ արտահայտվում գուսպ) ընդգծված դրական է: Եվ դրա համար կա պարզ բացատրություն, դա նոր արքայի ընդգծված ուշադիր և հոգատար վերաբերմունքն էր Հայոց եկեղեցու հանդեպ: «... էր սա (Լևոնը) այր հեզ և երկայնամիտ և ժուժկալ, քաղցրատեսիլ և պարկեշտ, ողորմած և ունկնդիր առ նա բողոքելոց: Միրէր զեկեղեցիսն Աստուծոյ և զվանորայս և զեկեղեցականս, մանաւանդ վարդապետս որ և տուն կարգեաց վարդապետաց վասն վարժելոյ զմանկունս՝ զսուրբ ուխտն Մեծքար կոչեցեալ»:¹⁰ Հատկանշական է նաև Լևոնի ակնհայտ ուշադրությունը «արևելյան գավառների» թեմերի հանդեպ. 1282 թ., երբ Սյունյաց Տեր Հայրապետ եպիսկոպոսը Կիլիկյայում էր, Լևոնը ընտրվում է Տաթևի վանքի միաբան. «Եւ նորա (Լևոնը) ի վաղ ժամանակաց ցանկացող եղեալ միաբանութեան սուրբ և գերափառ ուխտին Տաթևոյ»¹¹: Հայտնի է, որ գահակալման երկրորդ շրջանում՝ 1284 թ. Լևոնը Իրան կատարած այցելության ժամանակ ուխտի է մեկնում Մբ Թադեի վանք: Հայտնի են նաև նրա կատարած բազմաթիվ նվիրատվությունները «արևելյան թեմերի» եկեղեցիներին: Իր այս քայլերով Լևոնին հաջողվեց ստանալ «արևելքիների» համակրանքը: Նա կարդացավ ձեռք բերել իրապես համահայկական առաջնորդի ճանաչում, որի մասին են վկայում նրան տրված դրական որակումները «արևելքի» գրիչների ու պատմիչների կողմից:

Նոր գահակալի և կաթողիկոսի առաջին փորձություններից էր Լուզոունի եկեղեցական ժողովի մասնակցության հարցը: 1270 թթ. ռազմաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում բավական խճճված էր. պապական աթոռը լավ ըմբռնելով մամլուքներից եկող սպառնալիքները, փորձում էր քայլեր ձեռ-

⁸ **Մամուէլ Անեցի և Շարունակողներ**, Ժամանակագրություն, Աշխատասիրությամբ Կ. Մաթեոսյանի, Եր. 2014, էջ 253:

⁹ **Ռդնէ Գրուսէ**, Լևանտի կայսրությունը, Լ. Տեր Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Հատոր Ա, էջ 356:

¹⁰ Հուսարմունք ի գրոց պատմագրաց Մամուէլի քահանայի Անեցոյ, Վաղարշապատ, 1893, էջ 153:

¹¹ **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 434:

նարկել այն չեզոքացնելու ուղղությամբ: Այդ համատեքստում նրանք փորձում էին ներքաշել ինչպես մոնղոլներին, այնպես էլ Հայոց թագավորությանը: Մյուս կողմից պապական աթոռը փորձում էր լուծել նաև իր ավանդական, Հռոմի գլխավորությամբ եկեղեցիների միավորման հարցը: Այս առումով Լեոնը բավական բարդ խնդրի առջև էր կանգնել: Մի կողմից երկիրը դեռ չէր ապաքինվել վերջին մամուլային արշավանքի կորուստներից, մյուս կողմից նա ուներ հաշտության պայմանագիր մամուլների հետ, որի խախտումը հաշվի առնելով, ուժերի իրական դասավորվածությունը տարածաշրջանում չէր բխում հայոց թագավորության շահերից: Մյուս կողմից, որպես մոնղոլական դանի ստորակա հայոց թագավորը այդուհանդերձ պարտավոր էր նախատեսվող արշավանքին որոշակի մասնակցություն ցուցաբերել: Ինչևէ, ահա նման պայմաններում Հռոմի պապ Գրիգոր 10-րդը 1270թ. ֆրանսիացիների նախաձեռնած ձախողված խաչակրությունից հետո, հաշվի առնելով նաև, որ օժանդակության բացակայության դեպքում արևմտաեվրոպացիների վերջին հենակետերի զավթումը կարճ ժամանակի հարց է, փորձ է կատարում համախմբել եկեղեցու ուժերը, հրավիրելով եկեղեցական ժողով: Ի թիվս բյուզանդական կայսրի և մոնղոլների, 1273 թ. պապական հրավերը է ուղարկվում նաև Լեոնին և կաթողիկոսին: Ցավոք, թե ուղարկված հրավերը և թե պատասխանները մեզ չեն հասել, որոնց առկայությունը հնարավորություն կտար լույս սփռելու շատ հարցերի վրա: Մ. Օրմանյանը գալիս է այն եզրակացության, որ հայկական պատվիրակները չեն մասնակցել եկեղեցական ժողովին¹²: Եվ իրավամբ, որևէ վկայություն հայկական կողմի՝ ժողովին մասնակցության մասին փաստացի գոյություն չունի: Միակ վկայությունը առկա է Ղ. Ալիշանի մոտ՝ «1274 թ. Լեոն առաքել դեսպանս և նուիրակս ի ժողով Լուգոնի»¹³: Եթե անգամ հայկական պատվիրակությունը ներկա է եղել այդ ժողովին ապա կարելի է ենթադրել, որ այն ունեցել է բացառապես քաղաքական, այլ ոչ դավանաբանական նշանակություն: Ըստ երևույթին հայոց հովվապետը մերժել է հրավերը, իսկ արքան ուղարկել է խորհրդանշական պատվիրակություն: Ինչևէ, փաստորեն հայկական եկեղեցին, որպես ինքնուրույն միավոր, մասնակցություն չի ունեցել այս ժողովին: Դրանով է նաև բացատրվում հայկական պատվիրակության վերաբերյալ հիշատակման բացակայությունը աղբյուրներում: Ցավոք հայտնի չէ, թե հայկական կողմն ինչ պատճառաբանությամբ է կարողացել խուսափել տիեզերական ժողովի հրավերից, այդուհանդերձ փաստ է, որ հրաժարումը դրան մասնակցելուց հարկավ լուրջ դիվանագիտական ջանքեր է պահանջել հայոց աշխարհիկ և հոգևոր ինքնակալներից: Պապական նամակների ուղարկման հետ համընկնում է նաև Լեոն թագավորի դեմ կազմակերպած դավադրությունը, որը տարօրինակ կերպով չի արժանացել հետազոտողների ուշադրությանը: Գրիչ Ստեփանոսը վկայում է, որ արքայի դեմ նախապատրաստվում է դավադրություն, որի գլուխ են կանգնում «Վահրամ իշխան տերն Համուսին, եւ Լեոն տերն Մոլեւանին, եւ Ապլոարիպ իշխան երևելի: Մոքա ի յունաց»¹⁴: Ապա քիչ անց հեղինակը ավելացնում է նաև, որ դավադրության մեջ ներառված են եղել «էր եւ ի հայոց համախոհ անարեւնութեան սոցա դժնդակ եւ չար խորամանկութեամբ լցեալ ապերախտ եւ տիրանննք վատըշուերք

¹² Մ. Օրմանյան, Նշվ. աշխ., սյ 1967:

¹³ Ղ. Ալիշան, Միսուան և Լեոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 555:

¹⁴ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 434:

ումանք»¹⁵: Այստեղից կարելի է ենթադրել, որ յունաց անվան տակ ըստ երևույթին գրիչն ի նկատի է ունեցել հունադավան հայ իշխաններին, որոնք անգամ արդեն 13-րդ դարի վերջին քառորդում գտնվել են բյուզանդական քաղաքականության ուղեծրում, յուրատեսակ առումով շարունակելով այն «հինգերորդ շարայան» ավանդույթները, որն ավելի ցայտուն կերպով առկա էր 12-րդ դարում: Բավական խոսուն են նաև գրիչի տված որակումները դավադիրներին. «.. որպես շունք կատաղիք եւ ծառայք չարք գտեալք, աստուածասպան հրէիցն կցորդք»¹⁶ Ժամանակագրական առումով այս փորձը համընկնում է Լուգոունի ժողովի աշխատանքների նախապատրաստման հետ և հնարավոր է, որ պետական հեղաշրջման այս փորձը ուղղակիորեն կապված լինի այդ հանգամանքի հետ, որ Պալեոլոգները վերստին տիրանալով Կ.Պոլսին, իրենք ևս հանդես էին գալիս որպես տիեզերական ժողովի կայացման շահագրգիռ ուժ, ինչին փաստացիորեն հայոց եկեղեցին բնակաբար Լևոնի գիտությամբ ցանկություն չէր հայտնել մասնակցել: Իրադրությունը բարդանում էր նաև նրանով, որ «.. եւ այլք յուրվք ինուորական գնդէ, զորս աւելորդ էր յիշատակելն, որք միաբանեալ էին յեղեռն խորհրդոյ տիրասպանութեանն»¹⁷: Փաստորեն դավադրությանը մասնակից են եղել նաև արքայական բանակի ստորաբաժանումներ, քանզի «զինուորական գունդ» արտահայտության տակ հարկավ պետք է հասկանալ արքայական բանակի ստորաբաժանումները: Դավադրությունը սակայն բացահայտվում է, դավադիրները փորձում են ճողոպրել, Վահրամ իշխանը սպանվում է հենց Ստում, իսկ Լևոն Մոլևոնցին և Աբլղարիբը կարողանում են ճողոպրել և պատսպարվել Մոլևոնում: Այստեղ արդեն հստակորեն երևում է դավադրության արտաքին հետքը: Դավադիրներն օգություն են խնդրում իկոնիացիներից: Գրիչը ուղղակիորեն ակնարկում է նաև հունական պատրիարքի մասնակցության մասին: Ի վերջո, Լևոնին հաջողվում է գրավել ամրոցը, ձերբակալել Լևոն Մոլևոնցուն և մահապատժի ենթարկել Աբլղարիբին: Ժամանակագիրը ոչինչ չի նշում այլևս բանակում առկա դավադիրների մասին, բայց ենթադրելի է, որ այստեղ ևս խռովությունը խեղդվեց նախապես և լուրջ բախում տեղի չունեցավ: Դավադրության արագ չեզոքացումը նպաստեց նաև արտաքին միջամտության չեզոքացմանը: Փարվանան իկոնիական մեծ վեզիրը որն իր գործերն էր մոտեցրել սահմանին, իմանալով դավադրության ձախողման մասին, ինչպես նաև զգուշանալով իր լրան Աբաղայի գործողություններից ստիպված նահանջեց¹⁸: Երիտասարդ թագավորին հաջողվեց արագորեն լուծել թե իր և թե իր թագավորության առջև ծառայած այս լրջագույն խնդիրը, որի արդյունքում հաջորդող տասնամյակների համար գեթ ապահովվելու էր հարաբերական ներքին անդորրը:

Լևոնը և կաթոլիկոս Հակոբը շարունակեցին նաև իրենց նախորդների քաղաքականությունը «արևելյան գավառների» հանդեպ: Երկուսի քաղաքականությունն էլ ի վերջո հանգում էր իրենց տիտղոսներում» Ամենայն Հայոց» եզրույթի ընդգրկմանը. «Արդ, սույն ամենաբարի և պայազատ թագաւորս մեր Լեւոն, ի վերայ յոքունց բարեաց տեսակաց և բարեսիրութեանց որպէս Դաւիթ մեծն.. եւ մանաւանդ առաւել տենչամբ սրտի սիրելով զհայրենի և պարծելի բնիկ Հայկազանց

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ ԺԳ Դարի հիշատակարաններ, էջ 435:

աշխարհին՝ զՏունն Արևելից՝ որ առաջին է մասն և գլուխ արինակ իմն բոլոր աշխարհի»¹⁹: Հատկանշական է, որ չնայած Մերձավոր Արևելքում ձևավորված միանգամայն նոր տարածաշրջանային իրադրությանը և այն հանգամանքին, որ հունական (բյուզանդական) դավանաբանական ու քաղաքական աղեցությունը խիստ թուլացել էր, այդուհանդերձ բյուզանդական եկեղեցին մի վերջին բավական անհաջող փորձ ևս ձեռնարկեց հայոց եկեղեցու նկատմամբ իր ազդեցության վերականգնման ուղղությամբ: «Ի Ժամանակի աստ (1276թ.) յայսմիկ ի թագավորել լևոնի նստեր յանտիոք պատրիարգ յունաց ետիմեոս անուն: Մա սկսաւ նեղել զհայս եղելս ի քաղաքի անդ և սպառնայր չարիս հասուցանել նարնց. Ջի չեր հաւանեալ ծէսս կրոնից նոցա, և կամեր՝ զի կաթողիկոսն հայոց հնագանդեացի ինքեան»²⁰: Այն, որ հունական եկեղեցին և, այդ թվում, Անտիոքի աթոռը նախորդ շրջափուլերում ձգտում էին իրենց ենթարկել հայոց եկեղեցին, փաստ էր: Ցավոք Մ. Չամչյանը չի մանրամասնում թե ինչպես էր փորձում վերջինս իրականացնել հայկական եկեղեցու հնագանդեցումը: Ինչ վերաբերում է Ժամանակահատվածին, ապա ըստ երևույթին այստեղ գործ ունենք Անտիոքի հունական աթոռի և մամլուքյան համագործակցության հետ: 1275-76 թթ. նշանավորվեցին մամլուքյան ավերիչ ներխուժումներով, որոնցից առաջինի ժամանակ հայկական կողմը անպատրաստ գտնվեց, գրավվեցին թալանվեցին մի շարք առանցքային տնտեսական ու քաղաքական կենտրոններ, այդ թվում և մայրաքաղաք Միսր (չգրավվեց միայն միջնաբերդը): Երկրորդ արշավանքը որն արդեն թվագրվում է 1276 թ. հայկական կողմը առավել պատրաստված գտնվեց. «Եւ ի նոյն ամի դարձեալ դարձան ի Միս, և Տեր ոչ յաջողեաց նոցա, այլ փակեաց զնոսա ընդ ձեռամբ Լեւոն թագաւորի. և ի սուր մաշեաց զնոսա, և մնացեալքն փախստեա անկան ի խորշս իւրեանց»²¹: Հենց այդ ճակատամարտից հետո է, որ դիպվածի պատճառով վիրավորվում և քիչ անց մահանում է 13-րդ դարի հայոց պատմության առանցքային դերակատարներից մեկը՝ արքայի հորեղբայր Սմբատ սպարապետը: Հետաքրքրական է նույն գրչի մեկ այլ տեղեկությունը, ըստ որի՝ «Եւ ի սոյն ամի երիցս անգամ Հռոմոնց տաճիկն եկն երկիրն Հայոց, և Աստուած յաջողեաց թագաւորին Լևոնի և զնոսա սրով մաշեաց»²²: Կարելի է պնդել, որ այդ երկու արշավանքներն էլ թե մամլուքների և թե իկոնիացիների կողմից ունեցել են համակարգված և համաձայնեցված բնույթ: Ընդ որում, որքան էլ որ Ռումի սուլթանությունը ընդունել էր և փաստացի գտնվում էր մոնղոլական վերահսկողության ներքո, այդուհանդերձ սելջուկները փաստացիորեն հաճախ խախտում էին իրենց պարտավորությունները, թշնամական գործողություններ իրականացնելով տարածաշրջանում մոնղոլական ամենաառաջին հենարանի՝ Կիլիկյան թագավորության հանդեպ: Ընդ, որում այս իրադրությունը երկար չի շարունակվում, քանզի արդեն հաջորդ՝ 1277 թ. սելջուկյան պետությունը փաստացի գրկվում է ինքնավարությունից և անցնում ուղղակի մոնղոլական կառավարման ներքո²³: Ահա այս համատեքստում թերևս պետք է դիտարկել նաև Անտիոքի

¹⁹ Նույն տեղում, էջ 570:

²⁰ **Միքայել Չամչյանց**, Հայոց պատմություն, Հատոր Գ, Եր. 1984, էջ 270:

²¹ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 463:

²² Նույն տեղում:

²³ Այդ առումով հետաքրքրական է Աբադա դանի կողմից Լևոնին սուլթանության նախկին տարածքը կառավարման հանձնելու առաջարկը, որը սակայն խոհեմաբար մերժվում է հայոց թագավորի կողմից: Տես Հեթում, պատմություն թաթարաց, էջ 54, Լ. Տեր-Պետրոսյան, Հատոր Բ, էջ 325:

պատրիարքի նման փորձերը, որոնք ամենայն հավանականությամբ հովանավորվում էին մամլուքների կողմից: Ամեն դեպքում թվական համընկնումը խոսում է հենց այդ հանգամանքի օգտին: Ինչևէ, ըստ Մ. Չամչյանցի Լևոնին հաջողվում է ձեռքակալել պատրիարքին և արքայի անմարդաբնակ կղզի, որտեղից, ճիշտ է, նա շուտով տեղափոխվում է Կոստանդնուպոլիս, այդուհանդերձ հայոց թագավորը կարողանում է լուծել այս թնջուկը: Ինչ վերաբերում է հայ մամլուքյան դիմակայությանը, ապա օգտագործելով իլդանական պետությունում հայոց թագավորության ունեցած հնարավորությունները, Լևոնը ակտիվ մասնակցություն է ունենում 1280-81 թթ. սիրիական արշավանքին, որի արդյունքում նաև տարածքային ձեռքբերումներ է ունենում մերձեփրատյան շրջանում և դրանից հետո միայն 1282 թ. հաշտություն է կնքում մամլուքների հետ, որն անխախտ է մնում Հայոց թագավորի գահակալման հաջորդ փուլում:

Բանալի բառեր-Աշխարհիկ իշխանություն, հոգևոր իշխանություն, կաթողիկոս, Ամենայն հայոց թագավոր, տարածաշրջան, արևելյան գավառներ, դավանաբանական խնդիրներ, մամլուքներ, Մերձավոր Արևելք:

Դավիթ Թինոյան, Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Լևոն 2-րդի կառավարման շրջանում-Կիլիկիայի հայոց թագավորության 13-րդ դարի վերջին քառորդը իրավամբ բեկումնային դարձավ հայկական քաղաքակրթության Կիլիկյան հատվածի համար: Դարի նախորդ կեսի ընթացքում սկսված գործընթացներն ի դեմս տարածաշրջանում մոնղոլական գերակա դիրքերի զբաղեցման հասել էին իրենց տրամաբանական բարձրակետին և այժմ արդեն սկսվել էր դրա աստիճանական անկման գործընթացը: Ահա այդ խիստ կարևոր շրջափուլում է, որ գահակալում է Լևոն 2-րդ հայոց թագավորը, որի պաշտոնավարման տարիները համընկնում են Հակոբ Կլայեցի կաթողիկոսի արժանապատիվման հետ: Հայոց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ղեկավարներին հաջողվեց ըստ արժանվույն դուրս գալ ստեղծված ներքին և արտաքին խնդիրներից, հաջորդներին փոխանցելով գորեղ և կայուն պետություն:

Давид Тиноян , Взаимоотношения между светскими и духовными властями в период правления Левона 2-го-Последняя четверть 13-го века поистине была переломным в истории Киликийского армянского государства. Начавшийся в середине 13-го века становление монгольского владения в Передней Азии дошли своего апогея и начался постепенный упадок этой силы. В этом сложном периоде правил Левон 2-ой и католикос Акоп Клайеци. Им удалось с честью выйти из сложившей сложной ситуации. Это было этапом культурного и политического процветания армянского государства, а также периодом революционных перемен во всем переднеазиатском регионе.

Davit Tinoyan, The relations of secular and spiritual authorities during the reign of Levon II-The last quarter of the 13th century of the Armenian Kingdom of Cilicia became rightly a crucial period for Cilician sector of the Armenian civilization. The processes in the face of occupying prevailing positions by the Mongols within the region, and started in the previous half of the century, had reached their logical tiptop, and now the gradual downward process of it was already started. Here is a crucial

period when Levon II, an Armenian King, reigned, and whose reigning period coincided with the patriarchal authority of the catholicos Hakob Klayetsi. The leaders of the Armenian secular and spiritual authorities succeeded worthily in overcoming domestic and foreign problems, leaving the successors a strong and stable state.

**ՇՈՒՇԻՒ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՁԳՄՅԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ (1991-1994 ԹԹ.)**

ՄԱՐԻԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Արցախյան ազատագրական պատերազմում իր ուրույն ներդրումն ունի Շուշիի առանձին հրաձգային գումարտակը: Արցախում սկսված ազգային-ազատագրական պայքարում դեռևս 1989 թվականից ընդգրկվել էին դաշնակցական անհատներ, ովքեր հետագայում ջոկատների կազմում մասնակցեցին Արցախյան պատերազմին: ՀՅԴ կազմակերպական ներկայությունը բացահայտելուց հետո այդ անհատներն ու ջոկատները արդեն որպես դաշնակցական ջոկատներ ներգրավվում են թե՛ Արցախյան ազատամարտում, թե՛ Հայաստանի սահմանամերձ շրջանների գյուղերի ինքնապաշտպանական մարտերում: Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանում, Մարտակերտում, Ասկերանի, Մարտունու, Շուշիի, Հադրութի շրջաններում ՀՅԴ-ն ուներ մարտական ջոկատներ, որոնք ինքնապաշտպանական ուժերի կազմում զբաղված էին հայկական բնակավայրերի պաշտպանությամբ¹:

1991 թվականին ՀՅԴ կողմից որոշում է կայացվում առանձին ջոկատներին ուժերը տարբեր շրջաններ չուղարկել և հանդես գալ միասնական ուժով: 1991 թվականի նոյեմբերի 25-ին համապատասխանաբար Արամ Մանուչարյանի, Վարդան Ստեփանյանի, Մարո Փամփուխյանի, Հայկ Աբրահամյանի գլխավորությամբ առաջին անգամ 4 ջոկատային խմբեր ուղղաթիռներով ժամանում են Հադրութի շրջան: Մի քանի օր հետո նրանք տեղափոխվում են Ստեփանակերտ և ստանձնում են Կրկժան թաղամասի պաշտպանությունը: Այդ ժամանակահատվածում հիշյալ զինվորական ստորաբաժանումը կոչվում էր ՀՅԴ ջոկատ: Իբրև այդպիսին այն մասնակցել է Հասանաբաղի, Մալիբեյլուի, Խոջալուի համար մղվող մի շարք մարտերի:

1992 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ՀՅԴ Երևանի, Արթիկի, Թալինի, Հրազդանի, Աբովյանի, Չարենցավանի, Արարատի, Արտաշատի, Էջմիածնի, Բաղրամյանի ջոկատները (այդ թվում՝ նաև ուսանողական) սկսում են հավաքվել Ստեփանակերտում, որպեսզի միասնաբար հանդես գային Շուշիի ազատագրման համար մղվող մարտերում: Այս գորամիավորումն արդեն անվանվում է ՀՅԴ վաշտ՝ իր մեջ համախմբելով ավելի քան 280-300 ազատամարտիկի:

Կազմավորվում է 7 դասակ՝ Հրանտ Մինասյանի, Միքայել Մանուկյանի, Գրիգոր Գրիգորյանի, Հայկ Աբրահամյանի, Արամ Մանուչարյանի, Ալբերտ Ալավերդյանի և Գրիգոր Սարգսյանի հրամանատարությամբ: Մինևույն ժամանակ Պավել Գյուրջյանի գլխավորությամբ գործող ՀՅԴ Արտաշատի դասակը Քարինտակի ինքնապաշտպանների հետ էր մարտնչում:

1992 թվականի մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը ՀՅԴ վաշտն ընդգրկվում է Շուշիի ազատագրման գործողության մեջ: Հրանտ Մինասյանի, Միքայել Մանուկյանի ու Գրիգոր Գրիգորյանի դասակները Շուշիի ազատագրման գործողությանը մասնակցում էին քաղաքի բանտի, Հայկ Աբրահամյանի դասակը՝ Քիրս լեռան, իսկ Պավել Գյուրջյանի դասակը՝ Քարինտակի ուղղություններով: Մնացած ուժերը

¹ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 հանրագիտարան», Ե., 2004, էջ 536:

Ժիրայր Մեֆիլյանի հրամանատարությամբ հանձնարարություն էին ստացել շրջանցել Շուշին ու Ջառիսյուն, դուրս գալ Լիսագոր ու փակել Լաչինից դեպի Շուշի տանող թշնամու օգնության շտապող ուժերի ճանապարհը: Հիմնականում բոլորի կողմից կատարվում են նրանց առաջադրված խնդիրները:

Ժիրայր Մեֆիլյանի հրամանատարությամբ գործող հիմնական ուժերը փակում են ճանապարհը Ջառիսյու գյուղի մատույցներում: Նրանք այնտեղ մարտի են բռնվում հակառակորդի օգնական ուժերի հետ: Այս մարտերի ընթացքում գոհվում է լիբանանահայ Վիզեն Չաքարյանը և վիրավորվում են 2 ազատամարտիկ՝ Արմեն Բեկթաշյանն ու Հարազատ Սահրադյանը: Մայիսի 9-ի մարտում Շուշիում գոհվում է Վազգեն Բեկյանը և վիրավորվում է Ժորա Կարապետյանը:

Շուշիի ազատագրումից հետո ՀՅԴ վաշտը մասնակցում է ևս մեկ հիշարժան մարտական գործողության՝ 1992 թվականի մայիսին Ջառիսյուի ազատագրմանը: Վաշտը Քարինտակի ջոկատի հետ համատեղ կասեցնում է հակառակորդի հարձակումը Լիսագոր-Շուշի ուղղությամբ, որտեղ թշնամու ուժերի մեծաքանակ կուտակում կար: Թշնամու հիմնական նպատակն էր ձեռքել հայկական ուժերի պաշտպանությունը և, հասնելով ռևանշի, հետ վերցնել Շուշին:

1992 թվականի մայիսի 15-ի մարտի ընթացքում վաշտը կարողանում է ետ մղել հակառակորդի գրոհը՝ նրան պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի կորուստներ: Կորցնելով մի քանի տասնյակ զինվոր, 1 տանկ, 2 հետևակի մարտական մեքենա (bmp) թշնամին նահանջեց դեպի Էլման դիրքեր: 2 օր անց հայկական ուժերն անցնում են հակահարձակման և մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը նրանք արդեն Բերդաձորում էին: Բերդաձորի հայաթափումից ուղիղ մեկ տարի անց ազատագրվում է Բերդաձորի ենթաշրջանը:

Այս մարտական գործողությունից հետո 1992 թվականի մայիսի 17-ի լույս 18-ի գիշերը ՀՅԴ հավաքական վաշտը շարժվում և գործում է Լաչինի ուղղությամբ: Ինքնապաշտպանական ընդհանուր ուժերի հարձակման ժամանակ վաշտն ապահովում էր ընդհանուր հարձակվող ուժերի ձախ թևը:

Լաչինի գործողությանը մասնակցում է նաև ՀՅԴ Քարինտակի ջոկատը: Մայիսի 18-ին հայկական ինքնապաշտպանական ուժերի առաջխաղացումը Լաչինից ձախ գտնվող Յուղոնիս, Ֆատալիբեյ, Ֆարաջան գյուղերի ուղղությամբ էր: Նրանք կեսօրին դուրս են գալիս հայ-ադրբեջանական սահման Կոռնիձորի մոտակայքում:

Նույն ժամանակահատվածում ՀՅԴ Նաիրիի, Բաղրամյանի, Թումանյանի շրջանների ջոկատները մարտնչում էին Շահումյանում, որտեղ հունիսյան ինքնապաշտպանական մարտերի ժամանակ նրանք ունենում են կորուստներ: Հունիսի 13-ին անհայտ կորում են Նաիրիի ջոկատի հրամանատար Կարոտ Մկրտչյանը, Ալեքսան Ասատրյանը, Գառնիկ Հովհաննիսյանը: Այդ ընթացքում վաշտի դասակները տարբեր տեղերում մասնակցում էին ինքնապաշտպանական մարտերի Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջաններում:

Երբ հայկական ուժերը նահանջելով հասնում են Խաչենի հովիտ, Կիչան, Մրխավենդ, 1992 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՅԴ վաշտը ստանում է հետևյալ առաջադրանքը՝ պաշտպանություն զբաղեցնել Կիչան-Մրխավենդ հատվածում: Նույն օրվա ընթացքում վաշտը ետ է մղում թշնամու 3 գրոհ: Այդ տեղանքում ՀՅԴ վաշտը կարողանում է զբաղեցնել պաշտպանություն 1992 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 1993 թվականի մարտ ամիսը:

Կիչան-Սրխավենդի հատվածում իրականացրած պաշտպանական մարտերի ժամանակահատվածում ՀՅԴ վաշտը վերածվում է գումարտակի և սկսում է կոչվել Շուշիի առանձին հրաձգային գումարտակ կամ Շուշիի առանձնակի գումարտակ²: Այն որպես գումարտակ կազմավորվել է 1992 թվականի սեպտեմբերի 1-ին ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի 1992 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 021 հրամանագրով ՀՅԴ կամավորական ջոկատների հիման վրա³: Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին շտաբի պետ, ՀՅԴ Գերագույն մարմնի Ազատամարտիկների հանձնախմբի նախագահ պահեստագործի գնդապետ Արտաշես Մխիթարյանի վկայության համաձայն՝ գումարտակի հիմնադրման օրը պաշտոնապես համարվում է նոյեմբերի 25-ը, քանի որ իբրև կանոնավոր ստորաբաժանում այն գործում էր 1991 թվականի նոյեմբերի 25-ից⁴: «Այդ վաշտն իր անբասիր գործունեությամբ զգալի ավանդ է ներդրել Արցախի տարածքում ընթացած գրեթե բոլոր նշանավոր մարտերում ԼՂՀ բանակի նվաճած հաղթանակներում: Ի դեպ, այդ ժամանակ ԼՂՀ բանակում վաշտից ավելի մեծ ռազմական միավորում դեռևս գոյություն չունեի»⁵, -կարդում ենք «Պետոն» մենագրության մեջ:

Ինքնապաշտպանական ուժերի նախագահի հրամանով գումարտակի հրամանատար է նշանակվում Ժիրայր Սեֆիլյանը, փոխհրամանատար՝ Պետրոս Ղևոնդյանը: 1994 թվականի փետրվարի 14-ին վերջինիս զոհվելուց հետո նույն թվականի մարտի մեկից գումարտակի հրամանատարի տեղակալ է նշանակվում Ռոմիկ Մարգարյանը: Մարտական տարբեր գործողությունների ժամանակ Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարներ են եղել Ժիրայր Սեֆիլյանը (ընդհանուր հրամանատար), Պետրոս Ղևոնդյանը, Հարմիկ Հովսեփյանը, Արտաշես Մխիթարյանը, Սասուն Կիրակոսյանը, Արմեն Եղյանը⁶:

Սկզբնական շրջանում գումարտակի շտաբի պետը Կարեն Ավետյանն էր, 1993 թվականի մայիսից՝ Ռոմիկ Մարգարյանն էր, 1994 թվականի մարտից՝ Արտաշես Մխիթարյանը:

Հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալը Հարմիկ Հովսեփյանն էր, իսկ թիկունքի գծով տեղակալը Արտաշես Մխիթարյանն էր մինչև 1994 թվականի մարտի մեկը, երբ նրա փոխարեն նշանակվում է Սասուն Կիրակոսյանը:

1-ին վաշտի հրամանատարը Վիկտոր Դավթյանն էր, 2-րդ վաշտինը՝ Ալբերտ Ալավերդյանը: 1994 թ. հունվարի 10-ին Կարախանբեյլիում վերջինիս զոհվելուց հետո այդ վաշտի հրամանատար է նշանակվում Ռուբիկ Ասատրյանը: 3-րդ վաշտի հրամանատարը սկզբնական շրջանում Ռոմիկ Մարգարյանն էր, ում՝ գումարտակի շտաբի պետ նշանակվելուց հետո նրա փոխարեն 3-րդ վաշտի հրամանատար է նշանակվում Բորիս Ղուկասյանը:

² Նույն տեղում:

³ 01.09.1992 թ. ՀՅԴ վաշտը կոչվում էր 51-րդ Առանձին մտոռհրաձգային գումարտակ (այսուհետև՝ ԱՄՀԳմ), 01.02.1993 թ.՝ 48-րդ ԱՄՀԳմ, իսկ 01.09.1993 թ.՝ Շուշիի առանձին հրաձգային գումարտակ (տե՛ս ՀՅԴ Գերագույն մարմնի Ազատամարտիկների հանձնախմբի արխիվի փաստաթղթերը):

⁴ Հասված Արտաշես Մխիթարյանի հետ իմ անցկացրած հարցազրույցից:

⁵ **Գևորգյան Համլետ**, «Պետոն», Ե., 2000, էջ 82-83:

⁶ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 հանրագիտարան», նշվ. աշխ., էջ 536:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի ծանր զենքի վաշտի հրամանատարը Ազատ Նազարյանն էր, իսկ շտաբային վաշտինը՝ Նորիկ Շահբազյանը:

Ձորամիավորումն ուներ առանձին դասակներ: Ականանետային դասակի հրամանատարը Տիրան Խաչատրյանն էր, ով ներկայումս Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի գեներալ-մայոր է և Պաշտպանության նախարարության Մարտական պատրաստության վարչության պետն է: Կրակային աջակցման դասակի հրամանատարը Հրաչ Գասպարյանն էր, ով զոհվել է 1994 թ. մարտին Սեիդահմեդլիում:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի ազատամարտիկների թվաքանակը տարբեր ժամանակահատվածներում տատանվել է 200-350-ի միջև: Ինչպես տեղեկանում ենք «Լարաբադյան ազատագրական պատերազմ 1988-1994» հանրագիտարանից, գումարտակը պարբերաբար համալրվել է կամավորականներով. «Շուրջ 1600 ազատամարտիկ, որոնցից 11-ը՝ ԱՄՆ-ից, 7-ը՝ Կանադայից, 6-ը՝ Միքիայից, 23-ը՝ Լիբանանից, 1-ը՝ Իտալիայից, 7-ը՝ Ֆրանսիայից, 9-ը՝ Իրանից, 6-ը՝ Վրաստանից, 3-ը՝ Ռուսաստանից, 45-ը՝ Ջավախքից»⁷:

Շուշիի առանձնակի գումարտակն ունեցել է հիմնական և փոփոխական կազմեր: Հիմնական կազմում ընդգրկված էին մշտական ծառայության ընդունվածները, այսինքն՝ այն կամավորականները, ովքեր որոշել էին անցնել ազգային բանակի շարքերը: Փոփոխական կազմի մեջ գտնվողները գալիս էին ջոկատներով և 2-3 ամսով ընդգրկվում էին գումարտակի տարբեր վաշտերում ու դասակներում: Նրանք, իրենց առջև դրված խնդիրներին լուծում տալուց հետո, վերադառնում էին տուն՝ հանգստանալու ու նորից ետ էին վերադառնում՝ թարմ ուժերով լի:

Հրամանատարներն ընտրվում էին հիմնական կազմից:

1991-1994 թթ. Շուշիի առանձին հրաձգային գումարտակը մասնակցել է ԼՂՀ Շահումյանի (Բուզլուխ, Մանաշիդ, Կարաչինար), Հաղրութի (Տոդ, Յոր, Սարիշեն), Ասկերանի (Հասանաբադ, Ղուշշուլար, Փառուխ, Լեսնոյ, Խոջալու), Շուշիի (Քարինտակ, Ջառիսլու, «Մարիբաբ» բարձունք), Մարտունիի (Մյուրիշեն), Մարտակերտի (Կարմիրավան, Սրխավենդ, Կիչան, Մադավուզ, Մադաղիս, Մարսանգի ջրամբար, Գյուլաթաղ, Մեհմանա, Չղրան, Գյունեփայա, Մանիքլու, Կուսապատ, Դամրու, Ջրաբերդ), Աղդամի (Դզրլքենգետլի, Բոյահմեդլի), Ֆիզուլիի (Յուխարի Քյուրդահմեդլի, Ախանլի, Աշաղի Մեյիդահմեդլի), Կուբաթլուի, Ջաբրայիլի, Քելբաջարի, Ջանգելանի շրջանների, Կրկժանի, Մալիբեկլուի, Շուշի-Լաչին հատվածի, Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին:

Ձորամիավորման համար առանձնահատուկ կարևորություն են ունեցել Շուշի-Լաչին հատվածի և Ջանգելանի ազատագրական, Մարտակերտի շրջանի Սրխավենդ-Կիչան պաշտպանական գոտու և Ֆիզուլիի ինքնապաշտպանական մարտերը:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակը կազմավորման պահից սկսած՝ Կիչան-Սրխավենդ հատվածում մղել է ինքնապաշտպանական կատաղի մարտեր, այդ ընթացքում 2-3 անգամ հայտնվելով շրջափակման վտանգի առջև: Կիչանի ջրավազանի կողմից թշնամական ուժերի ներթափանցման պատճառով գումարտակը բազմիցս ընդգրկվում է այդ շրջափակումը վերացնելուն ուղղված

⁷ Նույն տեղում:

մարտերում: Հակառակորդի՝ Կիչանը գրավելուց հետո գումարտակը մասնակցում է գյուղի վերագրավման և ազատագրման մարտերին:

1992 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Շուշի հանգստանալու մեկնած գումարտակի անձնակազմը մասնակցում է Լիսագոր-Սարիբաբ ուղղություններով հակառակորդի ներթափանցման փորձի կասեցմանը:

1993 թ. փետրվարից սկսվում են Մարտակերտի ազատագրման գործողությունները: Մինչև 1993 թ. հունիս-հուլիս ամիսները Շուշիի առանձին հրաձգային գումարտակը մասնակցում է Մարտակերտի ազատագրմանն ուղղված բոլոր, այդ թվում՝ ամենախոշոր գործողություններին, այն է՝ Մանիքլուի հեռուստաաշտարակի գրավմանը, Հակոբ Կամարիի, Մաղավուզի տարածքների ազատագրմանը:

1993 թ. սեպտեմբերին գորամիավորումն ուժերի մի մասով մասնակցում է նաև Կուբաթլուի շրջկենտրոնի ազատագրմանը և այնտեղ տեղակայված հակառակորդի կրակակետերի ոչնչացմանը:

1993 թ. հոկտեմբերին գումարտակը մասնակցում է Զանգեղանի ազատագրմանը, որից հետո 1993 թ. նոյեմբերից մինչև 1994 թ. հունվարի 7-ը Ֆիզուլիի շրջանում Ալխանլի, Քյուրդահմեդլի հատվածում անցնում է պաշտպանության:

1994 թ. հունվարի 4-ից սկսված ադրբեջանական ուժերի հարձակման ընթացքում 3 օր կիսաշրջափակման մեջ գտնվելու պայմաններում գումարտակը պահում է դիրքերը մինչև բանակի հրամանատարության կողմից կարգադրություն է լինում, որ նահանջել Կարախանբեյլի: Իրավիճակն այնպիսին էր, որ աջ և ձախ կողմերը նահանջել էին և հայկական ուժերի զբաղեցրած նախկին դիրքերում մնացել էր միայն Շուշիի առանձին հրաձգային գումարտակը: Ընդ որում, այդ կիսաշրջափակման մեջ գտնվելու պայմաններում գումարտակը 3 օր անդադար մարտեր էր մղում:

Բանակի հրամանատարության կարգադրության համաձայն՝ գումարտակը 1994 թ. հունվարի 7-ին նահանջում է դեպի Կարախանբեյլիի ջրավազան: Գումարտակն այդ դիրքերում է մնում մինչև 1994 թ. փետրվար ամիսը, երբ նրան խնդիր է առաջադրվում, և այն իր ողջ կազմով տեղափոխվում է Քելբաջար՝ մասնակցելու համար Քելբաջարի ազատագրման 2-րդ գործողությանը: Մարտերից մեկում 1994 թ. փետրվարի 14-ին գոհվում է Շուշիի առանձին հրաձգային գումարտակի փոխհրամանատար Պետրոս Առնոյանը:

Հիշյալ մարտական գործողությունն ավարտելուց հետո գորամիավորումը կրկին տեղափոխվում է Ֆիզուլի և 1994 թ. ապրիլ ամսին մասնակցում է Ֆիզուլիի շրջանում Աշադի Սեիդահմեդլի, Շուքյուրբեյլի գյուղերում տեղակայված թշնամու կրակակետերի վնասազերծման գործողություններին:

1994 թ. ապրիլի վերջին ու մայիսի սկզբին գումարտակը Պաշտպանության բանակի հրամանատարության կարգադրությամբ տեղափոխվում է Մարտակերտ՝ մասնակցելու համար Մարտակերտի շրջանի ազատագրման մարտերին: Մինչև հրադադարի հաստատումը 10 օր շարունակ գումարտակը մասնակցում է նշված մարտական գործողություններին Ջրաբերդ-Կարմիրավան հատվածում:

1991 թ. նոյեմբերի 25-ից մինչև 1994 թ. մայիսի 12-ն ընկած ժամանակահատվածում Շուշիի առանձին հրաձգային գումարտակը տվել է 56 զոհ, 250-ից ավել վիրավոր: Չոհված բոլոր ազատամարտիկները հետմահու պարգևատրվել են հիմնականում Արցախի Հանրապետության կառավարության կողմից: «Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից նրանցից շատերը նույն-

պես պարզներ են ստացել, բայց նրանք ավելիին էին արժանի: Երբ բոլոր գոհվածների ընդհանուր ցուցակով պարզևատրում են «Արիության» մեղալներով, շատ տղաների համար դա ընդունելի չէ: Օրինակ՝ Պետրոս Ղևոնդյանը Արցախի հերոս է, Արցախի Հանրապետության «Ոսկե արծվի» ու «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր է, բայց Հայաստանի Հանրապետության կողմից նա պարզևատրվել է ընդամենը «Արիության» մեղալով»⁸, նշում է Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին շտաբի պետ, ՀՅԴ Գերագույն մարմնի Ազատամարտիկների հանձնախմբի նախագահ, պահեստագործի գնդապետ Արտաշես Մխիթարյանը:

1994 թ. մայիսի 12-ին հրադադարի հաստատումից հետո Շուշիի առանձին հրաձգային գումարտակն ազատագրված տեղամասում անցնում է պաշտպանության, ապա մասնակից է դառնում բանակաշինության գործընթացին: Այն այժմ էլ ընդգրկված է հայոց բանակի շարքերում և 1996 թ. սկսած՝ հանդես է գալիս 77-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակ անվամբ, որի կազմում այսօր հին կազմից մարդ չկա: Ամեն տարի նոյեմբերի 25-ին ամենամոտ կիրակի օրը այդ գործմասի տոն օրն է, և Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին կազմը մասնակցում է կազմակերպվող տոնական միջոցառումներին: Վաշտերի ցուցակներում հավերժ մտցված են գումարտակի գոհված ազատամարտիկների անունները: Ասենք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ վաշտերում մտցված են համապատասխանաբար Պետրոս Ղևոնդյանի, Ալբերտ Ալավերդյանի և Հրաչ Գասպարյանի անունները: Յուրաքանչյուր օր երեկոյան անվանականչի ժամանակ կոնկրետ 1-ին վաշտում կարդում են՝ Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյան, և առջևում կանգնած զինվորն ասում է. «Զոհվել է 1994 թ. փետրվարի 14-ին Քելբաջարի ազատագրման ժամանակ»: Մնացած զինծառայողներն ասում են՝ փառք, իսկ նա իր հերթին գոչում է՝ հավերժ փառք: Այս արարողակարգը մշտապես կրկնվում է բոլոր վաշտերում:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին կազմը պահպանում է կապը ոչ միայն 77-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի, այլև ազգային բանակի հրամանատարության հետ, որոնց կողմից առ այսօր վետերան կամավորականները արժանանում են տարբեր պարգևների:

Բանալի բառեր-Շուշիի առանձին հրաձգային գումարտակ, ՀՅԴ մարտական ջոկատներ, 77-րդ մոտոհրաձգային գումարտակ:

Մարիամ Հովսեփյան, Շուշիի առանձին հրաձգային գումարտակի մարտական ուղին (1991-1994 թթ.)-Արցախյան ազատագրական պատերազմում իրենց ուրույն ներդրումն ունեն ՀՅԴ մարտական ջոկատները: Դրանք մարտնչում էին Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանում, Մարտակերտում, Ասկերանի, Մարտունու, Շուշիի, Հադրութի շրջաններում, նաև մասնակցում էին Հայաստանի սահմանամերձ շրջանների գյուղերի ինքնապաշտպանությանը: 1991 թ. ՀՅԴ-ն որոշում է կայացնում միավորել առանձին ջոկատները և հանդես գալ միասնական ուժով: 1991 թ. նոյեմբերի 25-ին կազմավորվում է ՀՅԴ ջոկատը, որը 1992 թ. մարտ-ապրիլ ամիսներին վերածվում է ՀՅԴ վաշտի: Շուշիի ազատագրման

⁸ Հատված Արտաշես Մխիթարյանի հետ իմ անցկացրած հարցազրույցից:

համար մղվող մարտերում այն իր մեջ համախմբում էր ավելի քան 250-300 կամավորականի:

Շուշիի ազատագրումից հետո ՀՅԴ վաշտը մասնակցում է Ջարխուլուի ազատագրմանը, ՀՅԴ Քարին տակի ջոկատի հետ կասեցնում է թշնամու հարձակումը Լիսագոր-Շուշի ուղղությամբ: ՀՅԴ վաշտը մասնակցել է նաև Բերդաձորի ենթաշրջանի ազատագրմանը, Լաչինի գործողությանը, Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական մարտերին:

1992 թ. սեպտեմբերի 3-ից մինչև 1993 թ. մարտ ամիսը ՀՅԴ վաշտը զբաղեցրել է պաշտպանություն Կիչան-Սրխավենդ հատվածում: Այս տարածքում իրականացրած պաշտպանական մարտերի ժամանակահատվածում ՀՅԴ վաշտը վերածվում է գումարտակի և սկսում է կոչվել Շուշիի առանձին հրաձգային գումարտակ: Այն որպես գումարտակ կազմավորվել է 1993 թ. սեպտեմբերի մեկին:

1993 թ. փետրվարից մինչև հունիս-հուլիս ամիսները գումարտակը մասնակցել է Մարտակերտի ազատագրմանն ուղղված բոլոր, այդ թվում՝ ամենախոշոր գործողություններին:

1993 թ. սեպտեմբերին գումարտակը մասնակցել է Կուրաթլուի շրջկենտրոնի, իսկ հոկտեմբերին՝ Ջանգելանի ազատագրմանը:

1993 թ. նոյեմբերից մինչև 1994 թ. հունվարի 7-ը գումարտակը Ֆիզուլիի շրջանում Ալխանլի, Քյուրմահմուդլու հատվածում անցնում է պաշտպանության:

1994 թ. փետրվարին գումարտակը մասնակցում է Քելբաջարի ազատագրման 2-րդ գործողությանը:

1994 թ. ապրիլի վերջի և մայիսի սկզբին, մինչև հրադադարի հաստատումը, գումարտակը 10 օր մասնակցում է Մարտակերտի շրջանի ազատագրական մարտերին Ջրաբերդ-Կարմիր ավան հատվածում:

1994 թ. մայիսի 12-ին հրադադարի հաստատումից հետո գումարտակը ազատագրված տեղամասում անցնում է պաշտպանության, ապա մասնակից է դառնում բանակաշինության գործընթացին:

1996 թվականից Շուշիի առանձին հրաձգային գումարտակն ընդգրկվում է հայոց բանակի կազմում նոր՝ 77-րդ մոտոհրաձգային գումարտակ անվամբ:

Мариам Овсепян, Боевой путь Шушинского отдельного мотострелкового батальона (1991-1994 гг.)-В освободительной войне Арцаха внесли свою лепту вооружённые отряды АРФД. Они боролись в Геташене, Шаумяне, Мартакерте, Аскеране, Мартуни, Шуши, участвовали в оборонительных боях приграничных деревень Армении.

В 1991 году партия решила соединить отдельные отряды и выступить единой силой.

25 ноября 1991 года создаётся отряд АРФД, который в марте-апреле 1992 года становится ротой АРФД. В освободительных боях за Шуши рота объединяла 250-

После освобождения Шуши рота принимала участие в освобождении Зарислу, вместе с отрядом АРФД Каринтак, пресекала наступление врага в направлении Лисагор-Шуши. Рота принимала участие в освобождении подрайона Бердадзор, в Лачинской операции, оборонительных боях Шаумянского района.

С 3-го сентября 1992 года по март месяцу 1993 года рота АРФД держала оборону в районе Кичан-Срхавенд. За время оборонительных боёв на этой территории

рота становится батальоном. Шушинский отдельный стрелковый батальон формируется 1-го сентября 1993 года.

С февраля по июнь-июль месяцы 1993 года батальон принимал участия во всех, в том числе самых крупных операциях за освобождение Мартакерта.

В сентябре 1993 года батальон принимал участие в освобождении райцентра Кубатлу, а в октябре-освобождении Зангелана.

С ноября 1993 года по 7 января 1994 года в секторах Алханлы, Кюрдмахмудли Физулинского района батальон переходил в оборону.

В феврале 1994 года батальон участвовал во второй операции освобождения Кельбаджара.

В конце апреля-начале мая, до объявления перемирия батальон 10 дней участвовал в боях за освобождение Мартакертского района в секторе Джраберд-Кармираван.

12 мая 1994 года после объявления перемирия батальон в освобождённом участке переходил к обороне, а потом участвовал в формировании профессиональной армии.

С 1996 года Шушинский отдельный стрелковый батальон внедрился в состав Армянской армии под новым названием-77-й мотострелковый батальон.

Mariam Hovsepyan, The military path of the separateinfantry battalion of Shushi (1991-1994)-The ARF-s military troops have their own unique contribution in the Warof Liberation of Artsakh. They fought in the regions of Getashen, Shahumyan, Martakert, Askeran, Martuni, Shushi and Hadrut. They also took part in the defense of Armenian frontier villages.

In 1991 ARF decided to combine certain groups and come up with a united force.

On November 25,1991, formed the Revolutionary Brigades, which turned into ARF company on March and April,1992-s. In the battles of the war for the liberation of Shushi it brought together more than 250-300 volunteer.

After the liberation of Shushi, ARF`s company participated in the defense of Zarislu, it also suspended the enemy`s attack with ARF`s KarinTaki brigade to Lisagor- Shushi direction. ARF`s company also participated in the liberation of Berdadzor, Lachin operation, self-defense battles of Shahumyan region.

From September 3,1992, up to March1993,ARF companyhad implemented a defense in Kichan-Srkhavend sector. During the defense battles of this area ARF company turned into the battalion and was called "The separate infantry battalion of Shushi". As a battalion it was established on September one,1993.

From February 1993 to June-July, the battalion participated in all defense operations of Martakert including the largest actions.

On September, 1993 the battalion participated in the defense of Kubatlu`s regional center, and in October in Zangelan`s liberation battles.

From November 1993, up to January 7, 1994, thebattalion penetrated to defense in Fizuli`s region, in Alkhanli, Kyudmahmudli sector.

On February 1994, the battalion participated in the 2-nd operation of the liberation of Kelbajar.

At the end of April and beginning of May, 1994, until the ceasefire was established, the battalion participated in the liberation battles in Martakert region in 10 days, in Jraberd-Redpart section.

After the ceasefire on 12 May, 1994, the battalion penetrated to defense in the places, which had already been liberated, then it became a part of the army creation operations.

From 1996, the Separate infantry battalion of Shushi has been included in Armenian army with a new name, which is called 77th rifle battalion.

ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ

ՆՎԵՐ ՄԻՍՈՆՅԱՆ

1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ Լենինի գլխավորությամբ իշխանության եկան բոլշևիկները, ազգային-ազատագրական շարժումները նոր թափ ստացան: Համաձայն բոլշևիկների կողմից հռչակված «Ազգերի լիակատար ինքնորոշման» իրավունքի՝ իրար հետևից նախկին ցարական Ռուսաստանի կայսրության սահմաններում առաջ եկան անկախ հանրապետություններ՝ մեջտեղ բերելով սահմանային մի շարք չլուծված հիմնախնդիրներ՝ ինչպես հայ-թուրքական, այնպես էլ հայ-վրացական ու հայ-ադրբեջանական հարաբերություններում: Քանի որ 1918 թվականի փետրվարի 10-ին Թիֆլիսում կազմավորված Անդրկովկասյան Սեյմի մեջ չկար ներքին համաձայնություն, ուստի անխուսափելի դարձավ Սեյմի կազմալուծումը: Հենց 1918 թվականի մայիսի 26-ին սեյմի վրաց ներկայացուցիչները հանդես են գալիս սեյմը լուծարելու և անկախ վրացական հանրապետություն հռչակելու հայտարարությամբ, որն, ըստ Ստեփան Շահումյանի գնահատականի, դավաճանական մի նոր փորձ էր հանդես գալու հարևան հայ ժողովրդի¹: Վրացիների այսօրինակ գործողությունը ոգևորեց միայն տեղի մուսավաթականներին, որոնք մայիսի 27-ին հռչակեցին Ադրբեջանի հանրապետությունը : Մուսավաթականների ոգևորությունը այնքան մեծ էր, որ թաթար Ջաֆարովը, հենված թաթարական Ազգային խորհրդում մուսավաթ կուսակցության վրա, համարում էր, «թե Ռուսաստանի բանը վերջացած է եւ կը սպասեր թուրքերի գալուն, որպեսզի Անդրկովկասը Թուրքիոյ մի վիլայեթ դառնայ»²: Նման քայլի անհրաժեշտությունը ժամանակին շատ էին կարևորում քեմալականները: Քյազիմ Կարաբեքիրի պաշտոնական դիմումներից պարզվում է, որ նրանք երազում էին, որպեսզի Թուրքիային միացվի Կովկասյան Ադրբեջանը՝ Նախիջևանի հետ միասին³:

1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հայ ժողովուրդը հայտնվեց ծանր կացության մեջ, որը պայմանավորված էր ռուսական բանակի նահանջով՝ համաձայն Լենինի գլխավորած կառավարության հրամանագրի, ըստ որի մինչև 1917 թվականի դեկտեմբերի 25-ը պետք է լիովին դատարկվեր Կովկասյան ռազմաճակատը, այնտեղ չպետք է մնար ոչ մի ռուս զինվոր⁴: Ռուս զինվորին այլևս չէր հետաքրքրում Հայաստանը, և հրամանագրի պահանջը լիովին բխում էր նրանց՝ տուն վերադառնալու ցանկությունից: Երբ ռուսական զորքը քաշվեց թիկունք, ռազմաճակատի պաշտպանության հոգսը ամբողջապես ծանրացավ հայերի վրա, տարբեր տեղամասերում սկսեցին կազմավորվել հայկական զորամասեր: Բացի այդ, Անդրկովկասյան կոմիսարիատը որոշում է կայացնում ճակատը լքող զորքի փոխարեն ազգային զորամասեր ստեղծել:

¹ **Ստեփան Շահումյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5. Երևան 1978թ., էջ 22:

² **Ռուբեն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. 7. Թեհրան, 1982թ., էջ 129:

³ **Երվանդ Մարգարյան**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան 1964թ., էջ 177:

⁴ **Արարատ Հակոբյան**, Հայաստանի Խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-20 թթ. Երևան 2005թ., էջ 35:

1917 թվականի դեկտեմբերի 25-ին (ճիշտ այն օրը, երբ Լենինի կառավարությունը ռազմաճակատը դատարկելու հրամանագիր էր հրապարակել) 4-րդ կորպուսի հրամանատարը կովկասյան ռազմաճակատի շտաբին հեռագրում է հետևյալը. «Հայերը, բոլշևիկների ազդեցության տակ, հրաժարվում են գնալ հայկական ստորաբաժանումներ: Հրամանատարական կազմն ի վիճակի չէ պայքարելու դրա դեմ և հեղինակություն չի վայելում: Նկատելի է բացորոշ արհամարհական վերաբերմունք դեպի սպաները»⁵: Արդեն 1918թ. դրությամբ ռուսական զորքերից դատարկված էին Երզնկայի, Բիթլիսի և Վանի ռազմաճակատները: Ուստի հրատապ էր դարձել պաշտպանելու ոչ միայն ռուսների կողմից լքված ճակատը, այլև պայքարելու այն գործիչների դեմ, ովքեր դասալքություններ կազմակերպելով բարոյալքում էին հայ զինվորականությանը: Ժամանակին այդ գործողությունների դեմ պայքար է ծավալել նաև հայտնի ռազմական գործիչ Մուրադը: Նրա վարած գործողություններին անդրադառնալով՝ Հայկակ Կոստյանը գրում է. «Նա հերոսական ճիգերով կը կռվեր ներսի քայքայում ստեղծողներու դեմ. կը պահեր ճակատը, կը պահանջեր նոր գործիչներ, ուժեր և մասնագետներ ծագելիք հրդեհը հեռու պահելու»⁶: Ցավոք, Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությամբ իշխանության եկած բոլշևիկները աստիճանաբար տարածվեցին դեպի Անդրկովկաս, նրանք տեղ գտան նաև Հայաստանում և ունեցան այնպիսի գործիչներ, որոնք նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանն աստիճանաբար գլորեցին դեպի խորհրդայնացում: Անդրկովկասում գործող հայ բոլշևիկները, եթե 1918 թվականին աննշան դիրքեր ունեին, ապա 1919-1920 թվականներին դրանք ամրապնդվում էին: Եվ պատահական չէր, որ 1919թ. հուլիսին ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն Հայաստան ուղարկեց իր ներկայացուցիչներ Ս. Կապանին և Ա.Մոավյանին⁷, իսկ 1919 թվականի սեպտեմբերին ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի ներկայացուցիչների նախաձեռնությամբ Հայաստանում ստեղծում են այսպես ասած կենտրոնական ղեկավար մարմին՝ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ): Հայ բոլշևիկները Հայաստանը խորհրդայնացնելու երազանքը չէին թաքցնում, նրանք ամեն մի հարմար պահ օգտագործում էին՝ հանդես գալու իրենց հակակառավարական ելույթներով: Դրանցից մեկն իր արտահայտությունը գտավ 1918թ. Հունիսի 8-ին Բաքվի սովետների նիստում Ստ.Շահումյանի կողմից արված հայտարարության մեջ: Նա, Լ. Չարաֆյանին հոգեկան հիվանդ անվանելով, հայտարարում է. «Հարկավոր է մեկ անգամ ընդմիջտ, առանց վերապահումի, առանց որևէ արդարացման դատապարտել Թիֆլիսում վարած հանցագործ քաղաքականությունը, որպեսզի կարողանանք վարել այն քաղաքականությունը, որը թելադրվում է հեղափոխության շահերով»⁸:

Գաղտնիք չէ, որ բոլշևիկյան գաղափարախոսության առանցքում ընկած էր համաշխարհային հեղափոխության հասնելու ցանկությունը: Նրանք հուսով էին,

⁵ **Երվանդ Մարգարյան**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թ.թ., Երևան, 1964., էջ 340:

⁶ **Հայկակ Կոստյան**, Հայկական Թերմոպիլե, «Դրօշակ» թիվ 5 մայիս, Փարիզ 1928թ., էջ 136:

⁷ **Ա.Հակոբյան**, նշվ. աշխ. էջ 204:

⁸ **Ստ.Շահումյան**, նշվ. աշխ. էջ 92:

որ կոմունիստական սկզբունքներն ու գաղափարները կկարողանան Ռուսաստանից Հայաստանի վրայով տարածել փոքր Ասիայում և Եվրոպական երկրներում⁹:

Բոլշևիկները Հայաստանը խորհրդայնացնելու և իրենց հետագա ծրագրերը կյանքի կոչելու համար ձեռքից բաց չէին թողնում քեմալականների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ցանկությունը: Հարկ է նշել, որ վեջիններիս միջազգային անբարենպաստ իրավիճակը, բոլշևիկների հետ համագործակցությունը դարձրեց ուղղակի անխուսափելի, իսկ ինչ մնում էր բոլշևիկներին, ապա նրանք գտնում էին, որ արևելքում իրենց գաղափարախոսությունը տարածելու համար հաջողության կհասնեն այն դեպքում, եթե նրանց օգնի Թուրքիան: Տվյալ դեպքում նրանց անհրաժեշտ էր ուժեղ Թուրքիա, և քանի որ «Թուրքիո հզորացման համար խոչընդոտ է հանդիսանում Հայկական հարցը, որն ուղղված էր գլխաւորապէս Թուրքիոյ դէմ, ապա, ուրեմն համաշխարհային յեղափոխութեան շահը պահանջում է միանգամ ընդ միշտ ազատել Թուրքիան այդ վտանգից՝ զոհաբերելով հայկական «մասնակի խնդիրը»¹⁰, գրում է Աշոտ Արծրունին: Ռուս-թուրքական մերձեցման տեսակետից քարոզչական և գործնական մեծ դեր է խաղացել նաև խորհրդային բանակի սպա Մեմեոն Բուլոյնու 1919թ. մայիսի 25-ից-հունիսի 12-ն ընդգրկող ժամանակահատվածում գաղտնի հանդիպումը Մ. Քեմալի հետ: Նա տեսակցության ժամանակ Քեմալին հավաստիացնում է հետևյալը. «Մոսկուան Թուրքիային թիկունք կը կանգնի եւ կարգիլի թրքական հողի վրայ քրդական, հայկական եւ պոնտական պետութիւնների ստեղծումը: Յատկապէս հայերը, -ասում է Բուլոյնուն, -գլխացաւանք են եւ մանաւանդ նրանց հնչակներն ու դաշնակցականները արկածախնդիր մարդիկ են, որ կարող են ծառայել ամեն բարձրացող ուժի»¹¹: Բացի այդ, քեմալականները խորհրդային կառավարությունից ստանալով օգնություն (զենք զինամթերք և այլ պարագաներ)՝ իրենց ռազմական ուժը գլխավորապէս ուղղեցին Հայաստանի դէմ: Արդեն 1919 թվականի վերջերին բոլշևիկա-թուրքական հարաբերությունները կարգավորված էին: Բոլշևիկները տարածաշրջանում անկայուն իրավիճակ ստեղծելու համար Հայաստանի սահմաններում ապրող թուրքերին ամեն կերպ հրահրելով՝ տրամադրում էին հայերի դէմ: Նրանց գործողությունների անդրադառնալով Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «Ոչ միայն վտանգ պիտի ներկայացնէին բոլշեւիկները՝ իբրեւ մի կազմակերպութիւն, որ յենուած էր ռուսական ուժի վրայ, այլեւ թուրքերի հետ համաձայնած լինելով, անոնք պիտի հրահրէին Հայաստանի թրքութիւնը, որ առանց այն էլ ըմբոստ վիճակի մեջ էր»¹²: Նույնիսկ նրանք դավեր էին լարում Հայաստանի դէմ՝ տարածելով տեղեկություններ, թէ Հայաստանը «մի երկիր է, ուր դահիճներն են թագավորում»¹³:

Անդրադառնալով ծայր առած դասալքությանը, պետք է նշել, որ այն ժամանակի ամենամտահոգիչ հարցերից մեկն էր, որի դէմ պայքարելու համար 1918թ. դեկտեմբերի 3-ին տեղի է ունենում մինիստրների խորհրդի նիստ, որը

⁹ «Բուտայիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայակական Հարցի մասին 1918-1923թթ.» էջ 147:

¹⁰ Աշոտ Արծրունի, Խորհրդային իշխանությունը եւ թուրանական շարժումը, «Դրօշակ», N12. դեկտեմբեր, Փարիզ 1929թ., էջ 270:

¹¹ Ռուբենա Փիրումեան, Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ յարաբերությունների ոլորտում 1917-1921թ.թ., Երևան 1997թ., էջ 225:

¹² Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. 7.Թեհրան, 1982թ., էջ 322:

¹³ Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993թ., էջ 476:

նախագահում էր Հովհաննես Քաջազունին: Նրանք ընդունում են գեներալ Միլիկյանի ներկայացրած դասալքության դեմ կռվելու առաջարկը և որոշում են. արդարադատության մինիստրին հանձնարարել՝ զինվորական մինիստրի դասալքության դեմ կռվելու մասին կազմած նախագծի վերաբերյալ գեկուցում ներկայացնել¹⁴: Հայաստանի կառավարությունը, ինչպես որ սպասվում էր, միջոցներ էր ձեռնարկում այդ վտանգը հեռու պահելու համար: Սակայն մեր կառավարության կողմից ձեռնարկված գործողությունները չկանխեցին դասալքությունները: 1919 թվականի դեկտեմբերի 22-ի դրությամբ դասալիքների թիվը ամբողջ հանրապետությունում կազմում էր 17.665 մարդ: Նրանց շարքերը լրացնում էին նաև հարյուրավոր մեծահարուստների ու ազգային ջոջերի, դոչինների հղիացած զավակները, որոնք «զինված» պարսկական, վրացական և այլ երկրների անձնագրերով, խուսափում էին հայրենիքի առաջ իրենց պարտականությունը կատարելուց¹⁵: Մի կողմից ծայր առած դասալքությունները, որոնք խարխալում էին հայկական բանակի հիմքերը, և մյուս կողմից բոլշևիկների քարոզչությունը արագացնում էին Հայաստանի խորհրդայնացման գործընթացը: Երբ 1920 թվականի մայիսին Հայաստանում բոլշևիկների բարձրացրած խռովությունը ճնշվեց, նրանց մի մասը ձերբակալվեց, իսկ մի մասն անցավ Ղազախի շրջան: Նրանք, այնտեղ միանալով տեղի թաթարներին և կարմիր բանակայիններին, Ադրբեջանի սահմանի երկայնքով տևական պատերազմական վիճակ ստեղծեցին Հայաստանի համար՝ ստանալով ադրբեջանցի գործիչների աջակցությունը: Այս գործողությունները Հայաստանի գործող կառավարությանը ստիպեցին վճռական միջոցների դիմել, ուստի 1920 թ. մայիսի 14-ին ադմինիստրացիայի և միլիցիայի բաժնի կարգադրությամբ որոշվում է, որ պետք է շտապ և ամենակտրուկ միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի ազիտատորներին ձերբակալելու համար¹⁶: Ազիտատորները 1919-1920 թվականներին իրենց հայադավ քարոզչությամբ և Հայաստանի կառավարության դեմ խռովություններ բարձրացնելու նպատակով հայկական գյուղերն էին լցվում Ղազախից: Այս առումով որոշակի հետաքրքրություն է պարունակում այդ տարածաշրջանի գավառամասի կոմիսարի գեկուցագիրը (որի անունը չի հիշատակվում փաստաթղթում). «Վերջերս թուրք բոլշևիկ ազիտատորներ են երևացել մեր գյուղերում (փաստաթղթում նշված է ներկայիս Տավուշի մարզի Կոթի, Ղալաչա (Բերդավան), Դովեղ, Բաղանիս, Ուրզունթալա (Այգեհովիտ) գյուղերը-Մ. Ս.), որոնք կոչ են արել իրենց հետ միանալու և մի ընդհանուր բոլշևիկյան կառավարություն կազմակերպելու համար: Թուրքերի ազիտատորները եղել են ղազախեցիները: Ինձ թվում է, որ սրանք մեր ժողովրդին կառավարության դեմ ապստամբեցնելու նպատակով են ազիտացիա մղում»¹⁷: Կառավարության կողմից ձեռնարկված հետևողական միջոցառումները, այնուամենայնիվ, չկարողացան կանխել գործակալների գործողությունները, որոնց մի մասն էլ գործում էր Կարսում: Այդ մասին են վկայում Իտալիայի արտաքին գործերի նախարարության վավերագրերը: Գաղութների իտալական ինստիտուտի նախագահը, 1920 թվականի հուլիսին Կ.Պոլսի հայկական թերթերից հավաքած տեղեկություններին ծանոթանալով՝ Իտալիայի քաղաքական

¹⁴ ՀԱԱ, ֆ. Պ-201, ց.1, գ.484, թ.77:

¹⁵ **Վանիկ Վիրաբյան**, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920թթ., Երևան 2006թ., էջ 237:

¹⁶ ՀԱԱ, ֆ. Պ-201, ց.1, գ.26, թ.184:

¹⁷ ՀԱԱ, ֆ. Պ-201, ց.1, գ.26, թ.65:

հարցերի գլխավոր տնօրեն Լագոյին հայտնում է հետևյալը. «Կարսում բացահայտվել է մեծ դավադրություն: Կատարված հետաքննությունը պարզել է, որ մոլոկանների, հույների և թուրքերի խորհուրդները միացել են հայ բոլշևիկների հետ՝ երկրի անկախությունը վերացնելու համար: Նրանք թույլ են տվել թուրք ազգայնականներին անցնել հայկական սահմանը»¹⁸: Ու թեև այն հրամանատար Սեպուհի կողմից ճնշվում է, ցավոք, նման դավադրությունները իրենց հայավնաս գործունեությամբ Հայաստանում առաջացրեցին այնպիսի ռազմաքաղաքական ճգնաժամային կացություն, որ Հայաստանի պարտությունը դարձավ անխուսափելի: Ժամանակին դրա ճիշտ նկարագիրը տվել են ինչպես Յ. Իրազեկը (Հ. Տեր-Հակոբյանը), այնպես էլ Յովի. Սահակյանը և Վահան Արծրունին: Նրանք դասալքություն ծնող պատճառների մեջ առանձնացնում են բոլշևիկյան քարոզչությունը՝ ասելով. «Նրանց մեծամասնականները կարողացան պղտորել և քայքայել Հայկական բանակը, հատկապես ազդելով Հայոց զորքի վրա՝ հնարավորություն տալով, որ դասալիքները հանգիստ լքեն ռազմաճակատը»¹⁹:

Դաշնակցությունը հաշվի առնելով Հայաստանի սոցիալական ծանր վիճակը և ռազմաքաղաքական բարդ իրավիճակը՝ բոլշևիկների հետ համագործակցելու քայլեր է ձեռնարկել: Այս առնչությամբ կարևոր է հայտնի դաշնակցական գործիչ Լիպարիտ Նազարյանցի գործողությունը: Նա, հաշվի առնելով երկու կուսակցությունների (խոսքը Դաշնակցության և բոլշևիկյան կուսակցության մասին է-Ն. Ս.) կանոնավոր հարաբերությունների անհրաժեշտությունը, հանդիպում է Տրոցկու հետ: Վերջինս ի նկատի ունենալով հայ իրականության մեջ Դաշնակցության հեղինակությունը, նպատակահարմար է գտնում համագործակցության եզրեր գտնել: Ինչ վերաբերում է Լենինին, ապա նա պատասխանում է Տրոցկուն այսպես. «Հայտնեցեք Լ. Ն-ին (խոսքը Լիպարիտ Նազարյանցի մասին է-Ն.Ս.), որ մեր և Դաշնակցութեան տեսական տարբերությունները չեն կարող արգելք լինել երկու կուսակցություններու ընդհանուր աշխատանքին գործնական գետնի վրա: Համաձայն եմ ձեզ հետ, որ պետք է խորհրդակցութիւն կազմել»²⁰: Շատ չանցած՝ հայ բոլշևիկները խոսվություն են բարձրացնում՝ մեղադրելով Տրոցկուն, որ նա, արհամարելով «հայկական կոմիսարիատը», պաշտպանում է «անգլիասեր» Դաշնակցությանը: Երկու օր հետո Նազարյանցը ստանում է Տրոցկուց մի գրություն, որտեղ գրված էր. «Մենք ի վիճակի պիտի չլինենք իրագործելու պայմանաւորուած խորհրդակցութիւնը, վասնզի համաձայն մեր ստացած տեղեկութիւններու, դաշնակցութիւնը կը հետեւի անգլիական օրիանտալիտի, որով մեր ընդհանուր աշխատանքը անհնարին կդառնայ»²¹: Տվյալ իրավիճակում պատկերն այլ կլինէր, եթէ մեր քաղաքական կուսակցությունները միահամուռ կամք դրսևորէին, սակայն այդ համագործակցության փորձերը ձախողվեցին: Անդրադառնալով ձախողման պատճառներին՝ գալիս ենք այն եզրահանգման, որ առաջին հերթին երկու կուսակցությունների՝ միջև կար գաղափարական տարբերություն

¹⁸ «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայակական Հարցի մասին 1918-1923թթ. » հ.,բ, Երևան 2010թ., էջ 104:

¹⁹ Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 239:

²⁰ Լ. Նազարյանց, Հայ հեղափոխական դաշնակցության և խորհրդային իշխանութեան միջև համաձայնութեան փորձեր, «Դրօշակ», N 8-9, օգոստոս-սեպտեմբեր, Փարիզ 1928թ., էջ 233:

²¹ Տե՛ս նույն տեղում. էջ 233:

և երկրորդ, հայ բոլշևիկները տարված էին միայն իշխանատենչությամբ: 1920 թ. հուլիսին Թերեքում (Վլադիկավկազ) գտնվող հայկական հյուպատոս Հակոբ քահանա Սառիկյանը Համո Օհանջանյանին հայտնում է, որ «Սովետական պատասխանատու գործիչների մեջ որևէ թշնամանք դեպի մեր երկիրը չի երևում, սակայն այլ են հայ կոմունիստները, մի կողմից խորին ատելությունը դեպի մեր երկրում տիրող կառավարությունը, միս կողմից իշխանութեան ձեռք ձգելու կոյր ձգտումը դրդում են անվերջ յարձակում գործել մամուլի էջերում Հայաստանի կառավարութեան վրայ»²²: Հ.Սառիկյանը Հայաստանում տեղ գտած անախորժությունները կանխելու լավագույն միջոց էր համարում այն, որ հայ ժողովուրդը պետք է միահամուռ կամք դրսևորեր՝ առաջ բերելով բոլոր քաղաքական կուսակցությունների համերաշխ գործակցությունը. «Այժմ ամելի քան երբեմից անհրաժեշտ է, որ հայ ժողովուրդն իր բոլոր խաւերով իր կառավարութեան հետ լինի, նրան թեւ ու թիկունք դառնայ»²³:

Նման բարդ իրավիճակում հայտնվելով՝ Հայաստանը բնականաբար չէր կարող դիմակայել քեմալականների 1920թ. սեպտեմբերի հարձակմանը, որը նախապես մշակված և համաձայնեցված է եղել բոլշևիկ պարագլուխների հետ: Ըստ մշակված սցենարի՝ թուրքերը ներխուժելու էին Հայաստան, իսկ համալրված և ուժեղացված 11-րդ կարմիր բանակը պետք է օգուվեր հայերի համար ստեղծված ռազմական գործողությունների ծանր պայմաններից և հանդես գալով որպես «ազատարարի», գրավեր և խորհրդայնացներ Հայաստանը²⁴: Իսկ թե ինչպիսի գործողություններ պետք է ծավալելին հայ բոլշևիկները Հայաստանի արագացված խորհրդայնացման հարցում, տեղեկանում ենք 1920 թվականի սեպտեմբերի 20-ին Բաքվում Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ընդունած Հայաստանի կուսակցական կազմակերպություններին ուղղված «հույժ գաղտնի» մի որոշումից: Փաստաթղթի 4-րդ կետում ասվում էր, որ «հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը, որի համար պետք է կազմալուծել հայկական կոմկոլ բանակը բոլոր միջոցներով, այն է կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին»²⁵: Ահա այս ճանապարհով «բոլշևիկներն ու թուրքերը ձեռք ձեռքի տված մարեցին հայ ժողովրդի ազատության արշալույսը»²⁶, գրում է Շահան Նաթալին: Ինչպես որ սպասվում էր, իրադարձությունները ընթանում էին ըստ մշակված պլանի. Թուրքիայի հարձակումով պետք է լուծվեր Հայաստանի խորհրդայնացման հարցը: Հետագա բարդություններից խուսափելու համար Հայաստանի Հանրապետության ղեկավարները տեղի տվեցին բոլշևիկներին հասկանալով պահի լրջությունը: Հայ քաղաքական գործիչներից հատկապես Հ. Քաջագունին, Դրոն, Ռուբենը և այլոք գտնում էին, որ երկու ճակատով անհնար է կոմիտեի՝ բոլշևիկների, եւ՝ տաճիկների դեմ: Երկիրը կարոտ է հանգստի, եթե բոլշևիկները կարող են տալ այդ

²² **Ռուբինա Փիրումեան**, Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշևիկ յարաբերությունների ոլորտում 1917-1921թ.թ., Երևան 1997թ., էջ 202:

²³ Տե՛ս՝ նույն տեղում. էջ 203:

²⁴ **Լենդրուշ Խուրշույան**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան 2002թ., էջ 176-177:

²⁵ Տե՛ս՝ նույն տեղում էջ 164:

²⁶ **Շահան Նաթալի**, Թուրքերը և մենք, Հայրենիք մատենաշար, թիվ 26, Երևան 2011թ., էջ 22:

հանգիստը, թող՝ տան, չխանգարենք²⁷: Ահա այս ճանապարհով Հայաստանի Հանրապետությունը անկում ապրեց և 1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրով իշխանությունը հանձնվեց բոլշևիկներին:

Բանալի բառեր-Անդրկովկասյան սեյմ, բոլշևիկ, (ՌԿԲԿ), Արմենկոմ, մուսաֆաթական Ադրբեջան, քենալական Թուրքիա, դասալքություն, Հայաստանի խորհրդայնացում:

Նվեր Միմոնյան, Բոլշևիկները Հայաստանի խորհրդայնացման նախաշեմին- Հռոկվածում ներկայացված է Հայաստանի Առաջին Հանրապետության անկման և խորհրդայնացման գործում բոլշևիկների դերակատարությունը: Խորհրդայնացման գործընթացն իրականացնելու համար բոլշևիկները, ի թիվս այլ գործողությունների, հայկական բանակում կազմակերպում էին դասալքություններ և Հայաստանի իշխող կառավարության դեմ ապակոդմնորոշող տեղեկություններ տարածում: Հայ բոլշևիկները իշխանատենչությամբ տարված մերժեցին Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված համագործակցության առաջարկը: Դրությունը ավելի օրհասական դարձավ, երբ թուրքերը համակողմանի օգնություն ստանալով բոլշևիկներից հարձակվեցին Հայաստանի վրա: Ստեղծված ռազմաքաղաքական ծանր կացությունը հանգուցալուծվեց Հայաստանի խորհրդայնացմամբ:

Нвер Симонян, Большевики накануне советизации Армении- В статье представлена роль большевиков при падении и советизации Первой Республики Армении. Чтобы осуществить процесс советизации, большевики в числе разных действий организовали дезертирство в рядах армянских солдат и распространяли недостоверную информацию против правящего правительства. Армяне большевики жаждущий власти, отвергли предложение сотрудничества сделанную со стороны правящего правительства. Положение обострилось, когда турки, получив всестороннюю помощь большевиков, напали на Армению. Сложившийся тяжелая военно-политическая ситуация разрешилась советизацией Армении.

Nver Simonyan, The Bolsheviks among the threshold of Sovietization of Armenia-In the article is represented the role of Bolsheviks in the decadence and Sovietization of the first Republic of Armenia. In order to realize the process of Sovietization Bolsheviks among other operations organized desertions and spread misleading information against the ruling government of Armenia. Armenian Bolsheviks driven by power refused the suggestion of collaboration by Armenian government. Situation became more fatal when turks getting comprehensive help from Bolsheviks attacked Armenia. This hard military-political situation was resolved by Sovietization of Armenia.

²⁷ **Մ.Վրացեան**, Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», ք. տարի, N1 նոյեմբեր, Բոստոն, 1923թ., էջ 71:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԸՍՏ «ԴՐՈՇԱԿ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ (1891Թ.
ՄԵՊՏԵՄԲԵՐ 1892Թ. ՓԵՏՐՎԱՐ)

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Դաշնակցությունն իր հիմնադրման առաջին տարիներին Արևմտյան Հայաստանի ազատագրումը տեսնում էր միայն հեղափոխության ճանապարհով, և այս անսահման պատրանքների և դյուրին խանդավառության շրջանը կարելի է համարել հեղափոխական շարժման ռոմանտիկ շրջան: Շատերի աչքին Թուրքիան քայքայված, մահամերձ պետություն էր. Բավական էր մի քանի հարված և Եվրոպան պիտի միջամտեր և մեծ երազը պիտի իրագործվեր...

Ուշագրավ է, որ հիմնադրման օրվանից գրեթե ամբողջ 3 տարի Դաշնակցությունը չուներ ծրագիր՝ տպված կամ գրված, թեև արդեն կուսակցության գործիչները հաստատվել էին մի շարք կենտրոններում: Մինիմում ծրագիր, մաքսիմում գործ՝ այսպիսին էր կարգախոսը¹:

1891թ. սեպտեմբերին լույս է տեսնում «Դրոշակի» երկրորդ համարը, որում ասվում է, որ ամեն քաղաքական կուսակցություն գաղափարի համար կռիվ սկսելով կարող է հաջողության կամ անհաջողության հույս ունենալ միայն այն ժամանակ, երբ կան հետևյալ 2 անհրաժեշտ պայմանները. ա) եթե ժողովուրդը, որի շահերի համար մղվում է պայքարը, հասկանում է այդ պայքարի անհրաժեշտությունը և մասնակցում է այդ կռիվին ուղղակի կերպով՝ գոնե ի դեմս իր ամենալավ ներկայացուցիչների, բ) եթե կռիվի համար ընտրված են այնպիսի նպատակահարմար ձևեր և միջոցներ, որոնք բոլորովին համապատասխանում են ներկա իրականության և պատմական թույլի պահանջած պայմաններին: Ինչ վերաբերում է առաջին պայմանին, ըստ «Դրոշակի», հայ ժողովուրդն արդեն ապացուցեց, որ հասկանում է տաճկական անարգ լծից ազատվելու անհրաժեշտությունը, թեև դրա համար պետք լինի զոհել սեփական ունեցվածքն ու կյանքը: Հայ ժողովուրդը դա ապացուցեց մասսայական ցույցերով Կարինում և Պոլսում: Եվ ժողովուրդը պայքարի անհրաժեշտության գիտակցմամբ մեկ քայլ առաջ է նույն այդ ժողովրդի սերուցքը համարվող մտավորականությունից²: Եվ ինչպես ճշմարիտ դիտարկում է «Դրոշակը», մտավորականությունը պետք է շտապեր արձագանքելու ժողովրդի կռիվին, նա իր գիտության պաշարով պետք է գնար աջակցելու նրան այդ դժվար թույլին և կազմակերպեր այդ կռիվը ընդդեմ անարդարության: Այդ հանգամանքը նոր շարժման ամենաբնորոշ և խորհրդավոր կողմն էր և պետք է դառնար նրա հարատևության և հաջողության գրավականը: «Դրոշակը» կանխատեսում է անում, որ ոչ բոլոր մտավորականները մինչև վերջ կգնան պայքարի ճանապարհով, շատերը միգուցե կկանգնեն կես ճանապարհին, մյուսները կանգ կառնեն գուցե ճանապարհի ամենասկզբում, սակայն դա ոչինչ է, քանզի այն ժողովուրդը, որ հասել է կռիվի անհրաժեշտության գիտակցությանը և կարողացել է իր վրա առնել այդ կռիվի, որքան ծանր, այդքան էլ փայլուն նախաձեռնությունը,

¹ Միքայել Վարանդյան, Հայ Հեղափոխական Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 78:

² «Դրոշակ» 1891 սեպտեմբեր, No 2:

կկարողանա իր միջից դուրս բերել նորանոր մտավորական ուժեր, որոնք ընդունակ կլինեն վճռել հեղափոխական շրջանի խնդիրները:

Ինչ վերաբերում է պայքարի հաջողությունն ապահովող երկրորդ պայմանին, պետք է նկատի ունենալ, որ այս կոնկրետ ժողովրդի կոնվն է նրա դարավոր բռնակալների դեմ: Իբրև ժողովրդական կռիվ, այն չի կարող կանոնավոր գործերի վարած պատերազմի ձև ունենալ և միամտություն է երևակայել, թե Տաճկա-Հայաստանում կամ նրա սահմաններում կարելի է պատրաստել և կազմակերպել մարտնչող զնդեր և կամ ամբողջ գործ, որ օր առաջ վճռական ճակատամարտի կրճնվի և այդպիսով կսկսվի և կվերջանա հայրենիքի ազատագրության գործը: «Դրոշակում» մեկընդմիջտ ամրագրվում է այն միտքը, որ հայ ժողովրդի կոնվը պետք է պարտիզանական բնույթ կրի: «Եվ այդ է ապացուցում և սովորեցնում մեզ ուրիշ ազգերի՝ բուլղարացիների, իտալացիների, հույների պատմական օրինակը», - գրում է «Դրոշակում»: Այսպես պետք է կոնվել գոնե մինչև այն ժամանակը, երբ պարտիզանական կոնվի առանձին ալիքները միախառնվելով կկազմեն ժողովրդական ապստամբության հեղեղը, որը կսրբի և կտանի Հայաստանի երեսից ստրկության, աղքատության, անարդարության դարավոր կնիքը:

Այստեղ օգնության պիտի հասնի մտավորականությունը, որը պիտի զբաղվի հեղափոխական ուժերի կազմակերպմամբ և երբ դա գլուխ գա, կհեշտանա նաև ժողովրդին զենք մատակարարելն ու ինքն իրեն կվճռվի թե ընթացիկ կոնվի և թե ապստամբական շրջանի միջոցների հարցը: Հեղափոխության հաղթանակի գրավականն ըստ «Դրոշակի» պետք է լիներ նրա ապակենտրոնացումը և տեղական ինքնուրույն նախաձեռնությունները և այն պետք է մտնի յուրաքանչյուր գյուղ ու քաղաք: Եվ այս միտքն ամրապնդելու և ժողովրդի պատրաստականությունն ապացուցելու համար «Դրոշակն» իր այս համարի ներքին տեսության բաժնում բավականին ծավալուն անդրադաձ է կատարում «ընկերակցության» գործակալների գաղտնի առաջադրանքներին և նրան, թե ինչպիսի ընդունելության են նրանք արժանացել՝ այցելելով ցանկացած հայկական գյուղ ու քաղաք: Ամենուրեք ժողովուրդը գտնվում է նույն ծանր դրության մեջ և «ընկերակցության» գործակալներին հայտնում էին իրենց պատրաստականությունը աջակցելու նրանց՝ այս ծանր կացությունից մի որևէ ելք գտնելու համար: Եվ դա են վկայում, ըստ «Դրոշակի», թղթակիցներից հասնող նամակները Պարսկաստանից, Տաճկա-Հայաստանի ամենատարբեր բնակավայրերից, որոնցում նույն իրադրությունն է նկարարագրվում՝ սպանություններ, հարստահարումներ, թալան, հալածանք:

Արտաքին տեսության բաժնում «Դրոշակն» այլևս նույն խանդավառությամբ չի ներկայացնում Եվրոպական պետությունների վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ և նկատում է որոշակի սառնասրտություն մեծ պետությունների կողմից:

Հեղափոխական շարժման առաջին տարիներին հեղափոխական գաղափարներով տոգորված երիտասարդների մոտ մեծագույն տեղ էր զբաղեցնում վրեժ-խնդրության մոլուցքը, ոչ միայն թշնամու, այլև հայ մարդու հանդեպ: Այսպիսի դեպք է նկարագրում Մ. Վարանդեանը. Արսեն Թոխմախեան անունով մի երիտասարդ, ով եղել է Խրիմյանի տաղանդավոր աշակերտներից մեկը, դաժանորեն խոշտանգվում է դաշնակցական ականավոր գործիչ Հունտյի ձեռքով (ողջ-ողջ նետվում է թոնրի մեջ և այրվում), որովհետև շուրկներ էին տարածվել (բնավ չհաստատված), թե իբր նա պաշտոն էր ստացել թուրքական կառավարությունում՝ լրտեսելու հայ հեղափոխականներին Կովկասում և Պարսկաստանում: Եվ

սա կատարվել է առանց վերին մարմնի գիտության, զուտ անձնական կամ թայ-ֆայական հողի վրա³:

Քանի որ կովկասյան իշխանությունները խիստ հսկողության տակ էին պահում ոչ միայն ՀՅԴ առաջնորդներին(1891թ. գարնանը առաջին անգամ ձերբակալվեց ՀՅԴ հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը, որին արտրեցին Քիշին, նրան շուտով միացավ Ջավարյանը), այլև Դաշնակցության մամուլը, ուստի «Դրոշակն» այլևս չէր կարող հրատարակվել Թիֆլիսում: Ռոստոմին հաջողվում է հայերեն տառերը տեղափոխել Շվեյցարիա և 1892թ.-ից սկսած՝ «Դրոշակը» լույս է տեսնում Ժնևում: Մինչև 1895թ. գլխավոր խմբագիրը հենց ինքը՝ Ռոստոմն էր:

1892թ. փետրվարին լույս է տեսնում «Դրոշակի» 3-րդ համարը, որում Դաշնակցությունը կիսվում է իր մտորումներով կապված կուսակցության ապագա տեսլականի, նրա իդեալների հետ և երևան է բերում ժողովրդի ծանր վիճակի, բռնի կրոնափոխության, սպանությունների պատճառները, որտեղ առաջին տեղի դափնին պատկանում է օսմանյան կառավարությանը, և մյուսը՝ ոչ պակաս նշանակալին՝ քուրդ ազգաբնակչությանը՝ իր քռչվոր, բարբարոս կենսակերպով, անկիրթ ու անհանդուրժող բարքերով, որին հակադրվում է հողագործ և արդար քրտինքով հաց վաստակող հայ գյուղացին: Այսպիսով, անխուսափելի է դառնում մրցակցությունը, կարելի է ասել կոթիվն ու նույնիսկ պատերազմը այս երկու տարբեր շրջաններին պատկանող ժողովուրդների և կարելի է ասել այս երկու համակարգերի միջև: Եվ նշվում է, որ ինչպես նախամարդը որսորդությունից անցում կատարեց դեպի անասնապահություն, այպես էլ պետք է քուրդը դառնա հաստատաբնակ՝ դիմի հողագործությանը, այլապես ավազակությունները կկրեն քրոնիկական բնույթ, և խաղաղության մասին խոսք լինել չի կարող: Մահմեդական զավթիչները, որոնք նվաճել են Հայաստանը, միշտ էլ արհամարհանքով են վերաբերվել «գեավոր» (անհավատ) քրիստոնյային, ոտնահարել նրա անգամ ամենատարրական իրավունքները, և հայն անգամ իրավուք չունի զենք կրելու՝ ինքն իրեն պաշտպանելու համար: Տաճիկ կառավարությունը մշակել էր մի համակարգ, որի միջոցով հարկերի ողջ ծանրությունը ընկնում էր մշակ գյուացու վրա և հարուստ բեգերն ու էֆենդիները վճարում են նույնչափ հարկ, որքան աղքատ գյուղացին: Մրա առաջնային հետևանքը, ըստ «Դրոշակի», ահռելի չափերի հասնող արտագաղթն է և դատարկված գյուղերն ու ավանները: Տաճիկ կառավարությունը մտցնում է պարտադիր ուսման օրեքը, որի համար վերցված տուրքը ծախսվում է մի քանի միջնակարգ դպրոցների վրա, ուր հաճախում էին միայն հարուստ մահմեդականների զավակները: Եվ «Դրոշակը» հեղափոխության միջոցով է տեսնում այս անտանելի վիճակից միակ ելքի ճանապարհը:

Ա) Հայ հեղափոխականները միշտ էլ դեմ լինելով որևէ առանձնաշնորհումների, զարգացնում և ընդարձակում են ընտրողական սկզբունքը: Ապագա ազատ Հայաստանում իշխող ռավակարական սահմանադրությունը՝ ծառայելով ընդհանուրի շահերին, պետք է հաստատված լինի յուրաքանչյուր չափահաս բնակչի ընտրելու իրավունքով՝ առանց որևէ ցենզի: Այսպիսի սահմանադրության վրա հաստատված կառավարությունը, անշուշտ, պիտի հաստատի 1)անձի կյանքի ապահովությունը, 2) տարբեր ազգությունների և դավանությունների քաղաքացիների հավասարությունը օրենքի առաջ և 3)մամուլի, խոսքի ազատությունը:

³ Միքել Վարանյան, Հայ Հեղափոխական Դաշնակցության պատմություն, էջ 79:

Նույնքան մեծ, եթե ոչ ավելի, նշանակություն ունի գյուղացու ապահովությունը և նրա բարօրությունը, որը հանդիսանում է հայության վերածնունդի հիմքերից մեկը: Եվ անհրաժեշտ է համարվում 1) տալ գյուղացուն հող և դրանից ազատորեն օգտվելու իրավունք: 2) ամեն տեսակ տուրքերի ենթարկվող իրերի գնահատումը պիտի կատարվի եվրոպական առաջադեմ հարկահանությունից չտարբերվող սկզբունքներով: 3) պետք է վերացնել զինվորական տուրքը, հաստատել տեղի և ժամանակի պահանջներին համապատասխան զինվորագրություն:

Բ) Հայաստանը առաջադիմության ճանապարհին դնելու համար անհրաժեշտ է նաև՝ 1) ամեն կերպ նպաստել ժողովրդի զարգացմանն ու ուսմանը, 2) զարգացնել արդյունաբերությունն ու մտցնել վերջինիս մեջ նոր ձևեր ու միջոցներ, 3) ուժ տալ գյուղացու համայնական սկզբունքներին զարգացնելով ընկերական հիմնարկությունները և լայնացնել դրանց սահմանը՝ գյուղից, թաղից սկսած մինչև գավառը, մինչև ամբողջ տերությունը⁴:

«Դրոշակի» այս ՝ 1892թ. փետրվարյան համարում արևմտահայության կյանքի ողջ թշվառությունն ու ծայրահեղ ծանր դրությունը ներկայացվում է երկրի տարբեր շրջաններից հասած նամակների միջոցով: Այսպես, օրինակ տպագրվում են նամակներ Ալաշկերտից, Խնուսից, Կարինից, Տրապիզոնից, Վանից և բոլորի բովանդակությունն էլ գրեթե նույնն են. ներկայացվում են թուրք պաշտոնյաների և քուրդ ավազակախմբերի պարբերական դարձած հարձակումները հայ գյուղացիների վրա, չհիմնավորված բանտարկությունները և ժողովրդի անգոր ու կառավարության ականջի համար խուլ ճիչերը:

Ալաշկերտում հայ հրոսակային խումբը մի ամբողջ օր կռիվ է մղում մի քանի անգամ թվով գերազանցող զինված քրդերի հետ, պատռում նրա շրջափակման ահռելի շղթան և գիտակցված նահատակների արյունով ցողում Հայաստանի հողը:

Կարինում Շամիլի խումբը իր համարձակ քայլերով արհամարհում է թշնամու վտանգը:

Վանում հայերի ձեռքով սպանվում է ատելի թուրք պաշտոնյան:

Շապին-Գարահիսարում մահով է վարձատրվում Հաջի Կարապետ ուսուցիչը իր մատնության համար:

Տրապիզոնի շրջակայքում գյուղացիները սպառնալիքով ստիպում են վաշխառու էֆենդիին զիջել իրենց պարքի կեսը:

1892թ. աշնանը տեղի ունեցավ Դաշնակցության առաջին համագումարը, որի ժամանակ մերժվեց ընդհանուր ապստամբության գաղափարը և որպես առաջնային խնդիր դրվեց ժողովրդի զինման և նրան մարզելու հարցը⁵: Այս առաջին համագումարում կայացվեց մի ծանրակշիռ որոշում՝ Դաշնակցության կենտրոնը վերացավ և այսուհետ կուսակցությունը սկսեց գործել ապակենտրոնացման նշանաբանի տակ: Սա բացատրվում է նրանով, որ հայ ազգը ցաք ու ցրիվ էր՝ Վանից մինչև Կիլիկիա, Թավրիզից մինչև Թիֆլիս և հեռավոր գաղութները, սրան գումարվում էր նաև հայության տարբեր հատվածների միջև մտածելակերպի և բարքերի տարբերությունը: «Պետք է լայն իրավունքներ տալ տեղական մարմիններին, դաշնակցական կոմիտեներին: Այսպես միայն կազմակերպությունը կարող է աճել».-ասում էր Զավարյանը: Սա նույնպես ուներ իր վտանգները. այն կա-

⁴ «Դրոշակ» 1892թ. Փետրվար No 3:

⁵ **Հրաչ Տասնապետեան**, Պատմություն Հայ Յեղափոխական շարժման և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, էջ 136:

րող էր բերել տեղական մարմինների ինքնագլուխ, քմահաճ և անիշխանական գործողությունների, ուստի հարկավոր էր խուսափել ծայրահեղություններից: Փոքր առաջ անցնելով, նշենք, որ երկար տարիների փնտրտուքներից և վեճերից հետո, հավատարիմ մնալով ապակենտրոնացման գաղափարին, բայց և ցանկանալով չեզոքացնել, կանխել այդ համակարգի ծայրահեղությունները, 1896թ. շրջանային ժողովը որոշում ընդունեց 1) կազմակերպել նոր Բյուրո (մեկն արդեն կար՝ Արևելյան Բյուրոն), ուժեղ խմբագրություն «Դրոշակի» համար, որի անդամներից մեկը մերթ ընդ մերթ պիտի շրջագայեր արտասահմանում, «կազմակերպեր նորանոր խմբեր, բանակցել այլ գործիչների հետ և առհասարակ աշխատեին վառ պահել հայկական բողոքը»... Այդ խմբագրությունը միևնույն ժամանակ լինելու էր ամբողջ Դաշնակցության արտասահմանյան ներկայացուցիչ-Բյուրոն : 2) ժողովը լիազորություններ սովեց երկու բյուրոներին և Կ.Պոլսի կենտրոնական կոմիտեին, հարկ եղած դեպքում իրար հետ խորհրդակցելով բանակցել այս կամ այն պետության կամ քաղաքական գործիչների հետ և որոշումներ ու վճիռներ կայացնելին ամբողջ Դաշնակցության անունից:

Բանալի բառեր–«Դրոշակ», Դաշնակցություն, Արևմտյան Հայաստան, ազատագրություն, հեղափոխություն, արևմտահայություն, Բյուրո, ժողով, ապակենտրոնացում, խմբագրություն, ժողովրդի զինում, առաջին համագումար, հրոսակային խումբ, կռիվ:

Վարինե Հովսեփյան, Արևմտահայության ազատագրության խնդիրն ըստ Դրոշակ պարբերականի մի քանի հրապարակումների (1891թ. սեպտեմբեր, 1892թ. փետրվար)–Չոզվածում վերլուծության են ենթարկվում Դաշնակցության որդեգրած սկզբունքներն արևմտահայության ազատագրական պայքարի կազմակերպման ուղղությամբ՝ համաձայն «Դրոշակ» պարբերականի երկու համարներում ընդգրկված հրապարակումների: Դրանցից պարզ է դառնում, որ կուսակցությունն ավելի շատ հակվածություն է դրսևորում առաջնորդվել հայդուկային կռիվներով՝ մերժելով ընդհանուր ապստամբության գաղափարը: Տեսական բնույթի հոդվածների հետ միաժամանակ տպագրվել են նաև նամակներ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից, որտեղ ներկայացվում է արևմտահայության կացությունը: Չոզվածում անդրադարձ է կատարվել նաև այդ նամակներին, ինչպես նաև ներկայացվել է կուսակցության կառուցվածքային համակարգը:

Карине Овсепян, Заодноармянский освободительный вопрос по нескольким номерам периодического журнала “Дрошак”(1891 сентябрь 1892 февраль)–В данной статье потвиргаются анализу приципы и направления организации борьбы по освобождению Западной Армении, принятые со стороны партии Дашнакцуюн, по двум номерам периодического журнала “Дрошак”. Из этих номеров становится ясно, что партия более склонна руководится партизанскими боями, откланяя идею всеобщей певолуции. Одножременно с теоритическими статьями, так-же печатались письма с разных регионов Западной Апмении , которые показывали все ужа-сы жизни армян.

Karine Hovsepyan, The Western Armenian liberation question in several issues of the periodical journal “Droshak” (1891 September 1892 February)-This article analyzes

the principles and directions of the organization of the struggle for the liberation the Western Arrmenia, adopted by the Dashnaktsutsyun Party, accorting to two issues of the periodical journal "Droshak". From these numbers it becomes clear that the party is more inclined to lead partisan battles, rejecting the idea of a universal revolution. At the same time along with theoretical articles, letters were also printed from different regions of Western Armenia, which showed all the horrors of the life of Armenians.

**ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԱՌԱՋԻՆ
ԼՈՐԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

ԼԻԱՆ ՄԱՍՅԱՆ

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը պատմական ճակատագրի բերումով հարկադրված է եղել հեռանալ իր հայրենիքից և հաստատվել աշխարհի տարբեր երկրներում՝ հիմնելով մեծ ու փոքր գաղթավայրեր, որոնք ժամանակի ընթացքում կամ ստվարացել են ու հզորացել՝ պահպանելով իրենց գոյությունը մինչև օրս, կամ՝ թուլացել ու վերացել:

Հայերը Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, կրոնական, մշակութային և այլ հանգամանքներից ելնելով: Սկզբնական փուլում հայերի ներգաղթը պայմանավորված էր հիմնականում տնտեսական ու կրթական գործոններով (հիմնականում ամուրի երիտասարդներ, ուսանողներ, առևտրականներ, արհեստավորներ, հողագործությամբ զբաղվողներ և այլն): Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական երեք վարչակարգերի (համիդյան, երիտթուրքական, քեմալական) կողմից շուրջ երեք տասնամյակների ընթացքում՝ 1894-1923 թթ. իրականացված կոտորածների հետևանքով հայության ներգաղթը դեպի Միացյալ Նահանգներ վեր է ածվում տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված և հասարակության բոլոր շերտերը ներառող զանգվածային գաղթի ընդգրկելով կայսրության հայաբնակ բոլոր շրջանները:

Հայերի բուն հոսքը դեպի Ամերիկա սկսվում է XIX դարի առաջին կեսից: Նրանց կազմում գտնվել են տարբեր խավերի պատկանող անձնավորություններ. մենք նրանց մեջ տեսնում ենք հատկապես սովորելու գնացող հայ ուսանողների: Նշենք, որ առաջին հայ գաղթականները հավաքական համայնքներ դեռ չեն ստեղծել և Ամերիկայում բնակություն են հաստատել ցրված ձևով:

Հայության առաջին խոշոր ներհոսքը դեպի Միացյալ Նահանգներ պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում և նրա մաս կազմող Արևմտյան Հայաստանում ամերիկյան միսիոներների ծավալված գործունեությամբ:

Հարկ է նշել, որ միսիոներների գործունեությունը չէր սահմանափակվում միմիայն քարոզչական նպատակով, այլ հող էր նախապատրաստում ուժեղացնելու Ամերիկայի տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Թուրքիայում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում:

Ամերիկյան քարոզիչների ազդեցությամբ 1834 թ. դեպի Միացյալ Նահանգներ հայ ուսանողների շարժման սկզբնավորողը, միաժամանակ առաջին ամերիկահայ մտավորականը, որը փորձել է համախմբել Ամերիկայի հայ բնակչությանը, պաշտպանել նրանց իրավունքները, եղել է Խաչատուր Ոսկանյանը կամ ինչպես Ամերիկայում անվանել են նրան՝ Քրիստափոր Օսկանը, ով հանդիսանում էր Կոստանդնուպոլսի միսիոներական դպրոցի սան: Նա մոտիկ կապեր էր ստեղծել ամերիկյան բարձր շրջանների հետ և իր այդ ծանոթությունների միջոցով աշխատել օգտակար լինել Ամերիկա եկող հայ գաղթականությանը¹:

¹ Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Բ, Երևան, 1967, էջ 344-345:

1870-ական թվականներից սկսվում է արևմտահայ պանդուխտների հոսքը դեպի Ամերիկա: Ամերիկայի գաղթականության առաջին համախմբումը և առաջին գաղութի հիմնումը տեղի է ունեցել Ուստրում, ուր մեծ թվով հայ բանվորություն է աշխատել տեղի երկաթալարի գործարանում: Ավելի ուշ, բայց արագ է կազմակերպվել Ամերիկայի արևելյան նահանգների գաղթավայրը: Հայ գաղթականների մասին Կալիֆորնիայում և Ֆիլադելֆիայում առաջին անգամ տեղեկություններ կան 1876 թվականից:

1870-1894 թթ. ընթացքում հայերի թիվը ԱՄՆ-ում զգալիորեն աճում է, ինչը հիմնականում արդյունք էր Թուրքիայում միսիոներական գործունեության զգալի ակտիվության²:

Ինչպես գրում է Վլադիմիր Վերթսմանը իր «Հայերը Ամերիկայում 1618-1976» գրքում, «Մի այլ օտար ժողովրդի՝ այլ երկիր ներգաղթի համար միշտ էլ լինում են որոշակի պատճառներ: Հայությունը Միացյալ Նահանգներ եկավ երկու խոշոր և տարբեր ազդակների արդյունքում. մեկը Օսմանյան Թուրքիայի բռնատիրական կարգերն էին, մյուսը՝ քրիստոնյա միսիոներների գործունեությունը»³:

Ամերիկայի հայ գաղթավայրը առաջին խոշոր զանգվածային գաղթականությունն ընդունել է 1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերից հետո, որին զոհ են գնում շուրջ 300 հազար հայեր, իսկ հարյուր հազարավորներ էլ ստիպված են լինում հեռանալ իրենց հայրենիքից և սփռվել աշխարհի տարբեր վայրերում⁴: Համիդյան ջարդերի հետևանքով արևմտահայերը գաղթում էին Ամերիկա, Աֆրիկա, Եվրոպա և Ռուսաստան: Արտագաղթող հայերի շուրջ 45%-ը մեկնում էր Ամերիկա: Միացյալ Նահանգներ էին մեկնում գերազանցապես Խարբերդի, Դիարբեքի և Սվազի վիլայեթներից, որն անկասկած, ամերիկյան միսիոներների գործունեության և ազդեցության հետևանք էր:

Սկսած 1895 թվից ԱՄՆ էին գաղթում տարեկան շուրջ 4 հազար հայեր: 1914 թ. այդ թիվը հասնում է 8 հազարի:

Ամերիկայի հայ գաղթավայրը զանգվածային մեծ թվով գաղթականություն ընդունեց թուրքահայ սահմանադրության ընդունումից, մասնավորապես 1909 թ. Ադանայի ջարդերից հետո, ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կազմակերպված հայ ժողովրդի կոտորածից, որը հետագայում պետք է կոչվեր ցեղասպանություն և 1921-1922 թթ. թուրքական բանակի կողմից Կիլիկիան, Զմյուռնիան և այլ վայրեր գրավելուց հետո:

Դեռևս XIX դարի վերջից հայության ստվարացող հոսքի հետևանքով աստիճանաբար բարգավաճում ու հզորանում է ամերիկահայ համայնքը, որն այսօր էլ շարունակում է առանցքային դեր կատարել Հայկական սփյուռքի համայնքների շարքում:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.) ԱՄՆ-ում բնակվում էր 60 հազար հայ, 1915 թ. Մեծ եղեռնից հետո (1920-1924 թթ.) ԱՄՆ է գաղթել շուրջ 21 հազար հայ⁵: Ճիշտ է նկատել Ա. Անդրեասյանը, որ «Միացյալ Նահանգներու մեր գաղութը տակաւին կը մնայ մեծագոյն հայկական կեդրոնա-

² Տե՛ս **Կիրակոսյան Ա.**, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը, (19-րդ դար-1914 թ.), Երևան, 2014, էջ 246:

³ Տե՛ս **Wertsman V.**, The Armenians in America 1618-1976, New York, 1978, p. 53.

⁴ Տե՛ս **Cardashian V.**, The Ottoman Empire of the twentieth century, Albany, New York, 1908, p. 187.

⁵ Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 7:

ցումը ամբողջ Սփիւռքի մէջ: 1920 թվականէն ետք, երբ օտարներու՝ Ամերիկա զանգուածային ներգաղթին դէմ կանգնուեցաւ արգելքի պատուարը՝ Միացեալ Նահանգներու հայոց թիւը մոտ քառորդ միլիոն կը համարուէր: Բացահայտ ճշմարտութիւն է, որ հայկական սփիւռքի ոչ միայն ամէնէն բազմամարդ ու բարեկեցիկ, այլ նաև ամէնէն ուժեղ կազմակերպուած գաղութը կը հանդիսանայ ամերիկահայութիւնը»²:

Դեպի Միացյալ Նահանգներ հայության ներգաղթի նոր ալիք է սկսվում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1948 թվականին ԱՄՆ Կոնգրեսի կողմից «Տեղահանված մարդկանց մասին» օրենքի հաստատումով՝ «Հայրենագուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեն» (նախագահ՝ Ջորջ Մարտիկյան) մինչև 1952 թ. իրականացրել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայում, Ավստրալիայում, Իտալիայում հայտնված 4.5 հազար ռազմագերի տարագրյալ հայերի փոխադրումն ու բնակեցումը ԱՄՆ-ում: 1947 թ. ԱՄՆ-ում ապրում էր 215 հազար հայ³:

Հայերի հոսքը ԱՄՆ նոր թափ է ստանում 1950-ական թթ.: 1965 թ. ԱՄՆ-ում ընդունված «Գաղթականական օրենք»-ով վերացվում են ներգաղթի նկատմամբ նախկինում գործող սահմանափակումները՝ խթանելով աշխարհի տարբեր կողմերից, մասնավորապես Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից և Խորհրդային Հայաստանից շուրջ 2 հազար հայերի ամենամյա հոսքը Միացյալ Նահանգներ:

1970-ական թթ. Խորհրդային Հայաստանից քաղաքական և տնտեսական պատճառներով սկսված արտագաղթի հետևանքով Միացյալ Նահանգների հայ համայնքը համալրում է հայության մի մեծ զանգված ևս⁴, որի արդյունքում արդեն 1970-1972 թթ. ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 450-500 հազար հայ:

1990-ական թթ. սկզբներին՝ պայմանավորված 1988 թ.-ի Մայիտակի երկրաշարժով, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու քաղաքական մի շարք գործոններով մեծ չափերի է հասնում հայերի արտագաղթը դեպի Միացյալ Նահանգներ⁵:

2003 թ. տվյալներով ԱՄՆ-ում հայերի թիվը հասնում էր շուրջ 1 մլն 200 հազարի⁶, որոնք բնակվում են հիմնականում Կալիֆորնիա, Նյու Յորք, Նյու Ջերսի, Ռոդ Այլենդ, Միչիգան, Մասաչուսեթս, Իլինոյս, Կոնեկտիկուտ և Ֆլորիդա նահանգներում:

Նշենք, որ Միացյալ Նահանգների հայության համայնքային կյանքի կազմակերպման ու համակարգման առաջին լուրջ աշխատանքներն իրականացվել են XIX դարի վերջերից, երբ ԱՄՆ հայությունը սկսում է ներկայանալ որպես համայնք: Նոր միջավայրում, սակայն, բավական դժվար էր մշակութային հարմարվողականության խնդիրը: Ներգաղթողները չունեին իրական պատկերացում տեղի մշակույթի, ավանդույթների և ընդհանրապես հյուրընկալող երկրի բնակչության կենսակերպի մասին: Հյուրընկալող հասարակությունը, իր հերթին, լինելով նույնչափ անձանոթ հայ ժողովրդին, նրա հետ հարաբերություններում առաջնորդվում էր «ասիացիների» մասին ունեցած բացասական կարծրատիպերով:

² Անդրեասյան Ա., Սփիւռքը և Հայրենիքը, Պէրյութ, 1962, էջ 9-11:

³ Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 37:

⁴ Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, Երևան, 2004, էջ 11:

⁵ Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002, էջ 7:

⁶ Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 37:

Գալով Միացյալ Նահանգներ՝ հայությունը մոռացության չմատնեց իր ավանդույթները ու սովորույթները՝ իր հետ բերելով սեփական փորձը, հմտություններն ու արժեքները:

Միացյալ Նահանգներում հայերի թվաքանակի աճին զուգընթաց, օտարության մեջ ազգային նկարագիրը, լեզուն, սովորույթները, մշակույթը պահելու, զարգացնելու, ինչպես նաև հայրենիքի հետ կապն ամրապնդելու և պահպանելու նպատակով ամերիկահայության ջանքերով դեռևս XIX դարի 80-ական թվականների երկրորդ կեսից սկզբում ԱՄՆ-ի արևելյան, ապա արևմտյան ափին աստիճանաբար ստեղծվել են բազմաթիվ ու բազմաբնույթ միություններ, կազմակերպություններ, ընկերություններ ու ակումբներ, միաժամանակ իրենց մասնաճյուղերն են ստեղծել հայ քաղաքական կուսակցությունները:

Ստեղծվում են նաև բազմաթիվ բարեգործական, կրթական, մշակութային, եկեղեցական, հայրենակցական և այլ կառույցներ ու կազմակերպություններ:

Հայոց ցեղասպանության ճանաչման, նորաստեղծ Հայաստանի հանրապետության և ընդհանրապես հայ ժողովրդի շահերի պաշտպանության նպատակով Միացյալ Նահանգներում ստեղծվում են ամերիկահայ առաջին լոբբիստական կազմակերպությունները:

Դեռևս 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացվում են չորս հայ քաղաքական կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ նիստեր, որոնց արդյունքում ձևավորվում է Ամերիկայի հայ ազգային միությունը («Armenian National Union of America»): Միությունը կազմված էր քաղաքական չորս կուսակցությունների՝ Հ. Յ. Դաշնակցություն, Ս. Դ. Հնչակյան, Հ. Ս. Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան, երկու եկեղեցիների՝ Հայ առաքելական և Հայ ավետարանական և Հ.Բ.Ը. Միության ներկայացուցիչներից: Ընտրվում է միության 18 անդամներից բաղկացած կենտրոնական մարմին, որը մինչև միության լուծարումը՝ 1922 թ.-ը, ղեկավարում է Միհրան Սվազլին (Սվազյան):

Ամերիկայի հայ ազգային միությունը հանդիսանում է Միացյալ Նահանգներում ստեղծված առաջին հայ լոբբիստական կազմակերպությունը⁷, որի նպատակը ձևակերպված է հետևյալ կերպ. «Միութեան նպատակն է Ամերիկայի հայ զաղութին նիւթական և բարոյական ուժերը համադրել և զանոնք ի սպաս դնել հետեւեալ երեք հիմնական նպատակներու իրագործման.

1. Հայկական ազատագրութիւն (խոսքը կամավորական շարժման մասին է),
2. Երկրի կարօտելոց նպաստ և Հայաստանի վերաշինութիւն,
3. Դիւանագիտական ձեռնարկ և հայանպաստ փրօփականտ»⁸:

Ազգային Միությունը ձեռնարկում է մեծ հանգանակություն, որի շնորհին երկու տարվա մեջ գոյացած մեծաքանակ գումարը տրամադրվում է վերոնշյալ նպատակների իրագործմանը: Հրատարակվում են անգլերեն լեզվով բազմաթիվ գրքեր՝ հայ դատի պրոպագանդայի համար:

Միության նախագահ Միհրան Սվազլին կազմակերպական աշխատանքներն ավարտելուց հետո հայտնում է Էջմիածնին, որ «Ամերիկայի մեջ ազգային ամբողջական միությունը կատարված իրողութիւն մըն է: Այն առաջ բերած է մեծ խանդավառություն ամբողջ Միացյալ Նահանգաց մեջ: Միությունը սկսել է իր

⁷ **Սվազյան Ք., Միհրան Սվազյան.** Մարդը, Հայրենասերը, «Գիտությունն աշխարհում», գիտահանրամատչելի հանդես, Երևան, 2010, էջ 14:

⁸ Տե՛ս **Լազեան Գ.,** Հայաստան եւ հայ դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 202-203:

տենդոտ գործունեությունը այն բոլոր ձեռնարկումների համար, որոնց շուրջ համաձայն են չորս քաղաքական կուսակցությունները, հայ և ավետարանական եկեղեցիները և Հայ բարեգործական միությունը»⁹: Միաժամանակ հայտնում էին, որ կանոնավոր կերպով տեղի են ունենում միության նիստերը, շուտով սկսվելու է հանգանակություն, որով ակնկալվում էր մեծ գումարներ հավաքել:

Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր Միության 187 մասնաճյուղ: Ամերիկայի հայ ազգային միությունը իր գործունեությունը համաձայնեցնում էր Փարիզի ազգային պատվիրակության հետ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմին Միացյալ Նահանգներում:

Չնայած Միության ներսում եղած քաղաքական բազմաթիվ տարաձայնություններին և հակասություններին, նրա ստեղծումը դրական և շատ կարևոր իրադարձություն էր ամերիկահայ համայնքի կյանքում, քանի որ այն համախմբել էր քաղաքական, եկեղեցական և բարեգործական կառույցները՝ խնդիր ունենալով հայկական շահերի և Հայ դատի պաշտպանության հիմնահարցերը:

Միացյալ Նահանգների ղեկավարության ու կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միության ծավալած հայանպաստ գործունեությունը շուտով տալիս է իր արդյունքները: Մասնավորապես, ԱՄՆ-ի նախագահ Վիլյոն Վիլսոնը գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ քննիչ հանձնախումբ է ուղարկում Հայաստանի Հանրապետություն, որպեսզի վերջինս տեղում ուսումնասիրի հայ ժողովրդի տեղահանումներն ու կոտորածները, նորաստեղծ հանրապետությանը տնտեսական օգնություն ցույց տալու հարցերը¹⁰:

Հենց Միության ջանքերով էր, որ ամերիկյան Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 1918 թ. սեպտեմբերի 29-ին և հոկտեմբերի 2-ին և 10-ին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների Հայկական հարցին առնչվող հաղորդումները:

Ազգային միության ծավալած աշխատանքների շնորհիվ 1919 թ. մարտին ամերիկյան առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչներ խնդրագիր են ներկայացնում Միացյալ Նահանգների նախագահին՝ արագացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի խաղաղության վեհաժողովում ձեռնարկվելիք ջանքերը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգային միությունը Միացյալ Նահանգների և Եվրոպայի պաշտոնատար անձանց կողմից ճանաչված անցագիր-վկայականներ է տրամադրում դեպի Հայրենիք մեկնող հայերին:

Ամերիկահայ ազգային միությունը կարևոր դերակատարում է ունեցել նաև Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի կողմից Մեծ եղեռնից փրկված հայ որբերին օգնություն ցույց տալու, ինչպես նաև նպաստելու Հայաստանի առաջին հանրապետության անունից Հովհաննես Քաջազնունու կողմից Միացյալ Նահանգներում հայկական բանակի համար կատարված հանգանակությանը:

Ժամանակակիցներից մեկի բնորոշմամբ «յառաջադիմող իմաստութեան կատարեալ մարմանցում» հմուտ դիվանագետ Միհրան Սվազյանի ղեկավարած Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համագաղութային, մինչև անգամ միջազգային և

⁹ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հատ. Բ, էջ 368:

¹⁰ Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 119:

հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը Միացյալ Նահանգներում¹¹:

Միացյալ Նահանգների՝ Առաջին համաշխարհային պատերազմ մտնելուց հետո, Ազգային միությունը Նյու Յորքում հիմնում է «Փրես Պիւրօ» («Մամուլի հայկական գրասենյակ»), որի գործադիր տնօրենն ու թողարկող հիմնական նյութերի հեղինակն է դառնում Վահան Քարտաշյանը (1918 թ. նոյեմբեր)¹²: Նա ամեն շաբաթ մեկնում էր Վաշինգտոն և հանդիպումներ ունենում ազդեցիկ անձանց հետ:

Մամուլի հայկական գրասենյակը, ըստ որոշման, պետք է գործեր Ազգային Միության նախագծով և ամերիկյան մամուլի միջոցով պետք է իրականացներ անհրաժեշտ քարոզչություն:

Շուտով, սակայն, հակասություններ են սկսվում Ազգային միության և Քարտաշյանի միջև. Միությունը, որն առաջնորդվում էր Փարիզի Ազգային պատվիրակության գծած քաղաքականությամբ, մեղադրում էր Քարտաշյանին, որ նա շեղվել է նախագծված ուղուց, գործում է Ազգային միությանը և Ազգային պատվիրակությանը հակառակ՝ մխրճվելով ինքնազուլիս դիվանագիտական գործերի մեջ:

1920 թ., երբ Փարիզի Ազգային պատվիրակության անդամ Աբրահամ Տեր-Հակոբյանը, իբրև լիազոր ներկայացուցիչ ժամանում է ԱՄՆ, Նյու Յորքի ազգային շրջանակները առաջարկում են նրան, որ վերջին իր հեղինակությունը օգտագործելով, կարողանա հաշտեցնել «Փրես Պիւրօ»-ի ղեկավարներին: Նրա ջանքերը, սակայն, այս ուղղությամբ ոչ մի արդյունք չեն տալիս:

Նման պայմաններում Ազգային Միությունը ստեղծում է մի նոր մարմին՝ Նյու Յորքում՝ «Հրապարակային կոմիտե» («Publicity Committee») անունով: Կոմիտեի անդամներ են ընտրվում Միհրան Գալաճյանը, Ռաֆայել Կոստանյանը, Վարդան Մալքոնը, Արշակ Մահտեսյանը, որը հենց նույն օրը հրաժարական է տալիս, Մովսես Հովսեփյանը, Խաչատուր Պեննեյանը և Վահան Քյուրքյանը:

Նորաստեղծ մարմինը 1920 թ. մարտի 16-ի իր առաջին իսկ նիստում որոշում է կազմել ազդեցիկ և հայասեր ամերիկացիների մարմին, որի նպատակը պետք է լիներ Հայաստանի անկախության ճանաչումը իր սահմանների մեջ՝ խորհրդակցելով Ազգային պատվիրակության լիազորի և Ազգային Միության հետ և առաջնորդվելով Ազգային պատվիրակության քաղաքական ծրագրով:

1918 թ. դեկտեմբերին Վահան Քարտաշյանը հիմնում է Միացյալ Նահանգներում հայկական մյուս լոբբիստական կազմակերպությունը՝ Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն («Armenian Committee for the Independence of Armenia»):

Ստորև մեջբերենք կազմակերպության հիմնադրման հետ կապված Քարտաշյանի խոսքերը. «Այդ ժամանակ էր, որ ես տեսա, որ հայկական մարմինը, ընդունակ չի լինելու առաջ մղել Հայկական հարցը Միացյալ Նահանգներում»:

¹¹ Ավագյան Զ., Մարդը, Հայրենասերը, էջ 15-16:

¹² Տե՛ս ԸՊԻՎԵՃԵԱՆ Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 496:

րում: Ես միաժամանակ, հասկացա, որ հայկական քարոզչությունը պետք է լինի ուժեղ և ուղղակի, որը պետք է այնքան հզոր լինի, որ կարողանա ազդեցություն ունենալ ԱՄՆ կառավարության վրա: Հետևաբար, 1918 թ. դեկտեմբերին ես կազմակերպեցի Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որի գործադիր ղեկավար դարձավ նախկին դեսպան Ջերարդը»¹³:

Կոմիտեն ուներ 72 հոգիանոց ընդհանուր խորհուրդ և առաջնորդվում էր 9 հոգուց բաղկացած գործադիր մարմնի կողմից, որի ղեկավարն էր Գերմանիայում ԱՄՆ նախկին դեսպան Ջեյմս Ջերարդը: Ընդհանուր խորհրդի պատվո նախագահն էր ԱՄՆ Գերագույն դատարանի նախկին անդամ և ապագա պետքարտուղար Չարլզ Էվանս Հյուզը: Կազմակերպության առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նրա բոլոր անդամները, բացի Քարտաշյանից, ամերիկացիներ էին. մենք նրանց մեջ տեսնում ենք օրենսդիրների, նախարարների, դեսպանների, ռեկտորների և քսանմեկ նահանգապետերի: Այսպիսով, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն չի կարող համարվել էթնիկ լոբբինգի դրսևորում, քանի որ նրա բոլոր անդամները, բացի Քարտաշյանից, ոչ թե հայեր էին, այլ ազդեցիկ ամերիկացիներ:

Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն 13 նահանգներում ուներ 23 մասնաճյուղ, իսկ կենտրոնական գրասենյակը գտնվում էր Նյու Յորքում: Կոմիտեն աջակցություն էր ստանում այնպիսի նշանավոր անձանցից, ինչպիսիք էին սենատոր Հենրի Քեթոս Լոդջը, Չարլզ Հյուզը, ով հետագայում զբաղեցրեց ԱՄՆ Գերագույն դատարանի գլխավոր դատավորի պաշտոնը, և պետքարտուղար Ջեննինգս Բրայնը: Կոմիտեի կարևորագույն խնդիրն էր ապահովել Միացյալ Նահանգների անմիջական օգնությունը Հայաստանին, ինչպես նաև հասնել նրան, որ ԱՄՆ-ն ստանձնի Հայաստանի մանդատը¹⁴:

Հենց կազմակերպության ջանքերի շնորհիվ էր, որ ԱՄՆ-ն 1920 թ. ապրիլի 23-ին ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը¹⁵ և դա այն դեպքում, երբ Միացյալ Նահանգները այդպես էլ չճանաչեց Կրաստանի և Ադրբեջանի անկախությունը:

Միաժամանակ Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը տրամադրվում է 17 մլն 202 հազար դոլարի մարդասիրական օգնություն և 11 մլն դոլար արժողությամբ արտոնյալ վարկ¹⁶:

Վահան Քարտաշյանի հայանպաստ գործունեության թերևս ամենամեծ նվաճումը կարելի է համարել այն, որ նա կարողանում է կանխել 1923 թ. Օգոստոսի 6-ին Միացյալ Նահանգների և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի¹⁷ ընդունումը և հաստատումը Սենատում: Նշված պայմանագիրը մտնում է Սենատ 1924 թ. մայիսի 3-ին և ահա հենց այդ ժամանակ էլ Քարտաշյանը ձևավորում է «Ընդդեմ Լոզանի պայմանագրի հանձնախումբ»-ը («American Committee

¹³ **Aftandilian G.**, Armenia, Vision of a Republic: The independence lobby in America (1918-1927), Boston, 1981. p. 26.

¹⁴ Տե՛ս **Waldstreicher D.**, The Armenian Americans, New York, Philadelphia, 1989, p. 77.

¹⁵ **Aftandilian G.**, նշվ. աշխ., էջ 46:

¹⁶ **Պապյան Ա.**, Հայրենաստիքության միակ խաչակիրը, «Հայրենաստիքություն. հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր» հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 123:

¹⁷ **Cardashian V.**, A Brief: In support of an application for a hearing by the Senate upon the Lausanne Treaty: The Lausanne Treaty-Mosul oil and Armenia, New York, 1928, p. 21.

opposed to the Lausanne Treaty»), որի ջանքերով էլ 1927 թ. հունվարի 18-ին Սենատը մերժում է հավանություն տալ նշված պայմանագրին:

Այս շրջանում է, որ Քարտաշյանը ամերիկյան սենատորներին, պետական ու քաղաքական գործիչներին ուղղված հարյուրավոր նամակներով, գրություններով, ելույթներով ու հրապարակումներով փորձում է հայկական խնդիրները պահել ամերիկյան քաղաքական ուշադրության կենտրոնում:

Քարտաշյանի ծավալած հայրենասովեր գործունեության վերջին դրսևորումը եղավ այն, որ 1933 թ. ամերիկյան պետքարտուղարությանը է ներկայացնում 39 էջից կազմված մի Հուշագիր, որտեղ անդրադառնում է հայ ժողովրդի դրությանը, հայկական հարցին՝ սկսած Առաջին աշխարհամարտից մինչև 1933 թ. և արձանագրում, որ քանի որ ԱՄՆ-ն ճանաչել է Հայաստանի հանրապետությունը, նախագահ Վիլսոնը հանդես է եկել իր իրավարար վճռով՝ զճելով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները, ուստի Միացյալ Նահանգները պետք է պաշտպանեն հայության իրավունքները և շահերը Թուրքիայի և Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններում¹⁸:

Վահան Քարտաշյանը շարունակում է պայքարը հայկական շահախնդրությունների համար մինչև իր մահը՝ 1934 թվականը: Նա իր ողջ կյանքը և անձնական հարստությունը նվիրում է Հայկական հարցի լուծմանը: Նրա մահվան կապակցությամբ Ջեյմս Ջերարդը գրում էր. «Վահան Քարտաշյան...Հայկական հարցի կազմակերպման հզոր գործիչ էր: Ամերիկահայերը պետք է նրան հիշեն երախտագիտությամբ»¹⁹:

«Հայաստանի անկախության ամերիկայի կոմիտե»-ի իրավահաջորդն է «Ամերիկայի հայ ազգային կոմիտե»ն («Armenian National Committee of America») կամ Հայ դատի ամերիկյան հանձնախումբը, որը Դաշնակցության կուսակցության հասարակական աշխատանքների և կառավարական հարաբերությունների ազգային հանձնախումբն է և հիմնվել է 1941 թ. Նյու Յորքում:

«Հետապնդելու համար հայոց պատմական իրավունքները, մենք անհրաժեշտ գտանք կազմել Հայ դատի ամերիկահայ հանձնախումբը: Մենք հավատում ենք, որ Հայ դատի լուծման հարցում կարևոր է Միացյալ Նահանգների համակիր վերաբերմունքը, կամ գոնե նրա բարյացակամ չեզոքությունը: Այս իմաստով, կարևոր է նաև Միացյալ ազգերի կազմակերպությունը, որը ևս գտնվում է ամերիկյան հողի վրա...»²⁰:

Իր առաջին իսկ նիստում հանձնախումբը հետևյալ կերպ է ձևակերպում իր նպատակը և գործունեության ուղղվածությունը.

«Հայ դատի հանձնախմբի նպատակն է կազմակերպել և իրականացնել Հայ դատի պաշտպանության գործը Ամերիկայում: Այս խնդիրը իրականացնելու համար անհրաժեշտ է.

1. Ունենալ գրասենյակ Նյու Յորքում,
2. ԱՄՆ կարևոր վայրերում հիմնել հանձնախմբեր,
3. Հրատարակել Հայ դատը հիմնավորող և հայկական քարոզչությանը ծառայող գրականություն,

¹⁸ Տե՛ս **Yeghiayan V.**, Vahan Cardashian: Advocate Extraordinary for the Armenian Cause, Glendale, 2008, p. 10.

¹⁹ Տե՛ս **Aftandilian G.**, նշվ.աշխ., էջ 63:

²⁰ Տե՛ս **Սհարսնյան Գ.**, Խոհեր յիսնամեակի աւարտին (1915-1965), Պէյրուք, 1966, էջ 123:

4. Հայանպաստ քարոզչություն իրականացնել նաև այլ միջոցներով՝ դասախոսություններ, ռադիո, մամուլ և այլն»²¹:

Ամերիկայի հայ համայնքը Հայ Դատի հետապնդման համար ուներ այլ մարմին ևս՝ «Ազգային Խորհուրդ» անունով, որի գործունեության ծրագիրը ձևակերպված էր այսպես.

1. Օգնել Ամերիկայի պատերազմական ջանքերին:

2. Կազմակերպել ձեռնարկներ և օգնել ի նպաստ Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի կատարվող ձեռնարկներին:

3. Պաշտպանել տարագիր հայերի իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով, և օժանդակել հայրենի հողի վրա նրանց վերաբնակեցմանը²²:

Միաժամանակ նշենք, որ Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական իրավունքների տեր էր ճանաչում Խորհրդային Հայաստանի կառավարությանը:

Ամերիկահայ ազգային խորհուրդը հիմնադրվել է 1944 թ. մարտի 19-ին, Նյու Յորքի Փենսիլվանիա հյուրանոցում գումարված ժողովում²³: Խորհրդի մեջ մտնում են Ամերիկայի հայ առաջադիմական միությունը, Ռամկավար ազատական, Մոցիալ դեմոկրատական հնչակյան կուսակցությունները²⁴ և 20 հայրենակցական միություններ. ատենապետն էր ռամկավար գործիչ Պետրոս Թերզյանը: Այն իր մասնաճյուղերն է հիմնում Միացյալ Նահանգների՝ ստվարաթիվ հայ բնակչություն ունեցող գրեթե բոլոր քաղաքներում:

Ազգային խորհրդի հիմնական նպատակն էր՝ օժանդակել Միացյալ Նահանգների պատերազմական ջանքերին, կազմակերպել ու հովանավորել ձեռնարկներ ի նպաստ Հայաստանի և Խորհրդային Միության, պաշտպան կանգնել Սփյուռքի հայության իրավունքներին և հետապնդել հայ ժողովրդի հողային պահանջները: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջին երկու նպատակները դուրս են գալիս օրակարգից²⁵:

Շուտով Ամերիկահայ ազգային խորհուրդը սկսում է իր ակտիվ աշխատանքները և կարճ ժամանակում դառնում համայնքի առաջադիմական, գործունյա և հեղինակավոր ղեկավար մարմինը: Այն սկսում է իրականացնել քարոզչության և քաղաքական շփումների լայնածավալ գործունեություն:

Խորհուրդը կազմակերպում է մի շարք ձեռնարկումներ՝ հօգուտ Հայաստանի, նյութական աջակցություն է ցույց տալիս Հայրենիք մեկնող, բայց տարատեսակ խնդիրներ ունեցող հայերին և այլն:

Խորհրդի նախաձեռնությամբ 1945 թ. ստեղծվում է Խորհրդային Հայաստանի հետ մշտական կապեր պահպանող ամերիկահայ կոմիտեն, որն իր շուրջն է համախմբում մոտ 100 հոգի ամերիկահայ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ և հասարակական աչքի ընկնող գործիչներ: Խորհուրդը ստեղծում է նաև մի մարմին, որը հայտնի է «Հայության իրավունքների պաշտպանության ամերիկյան հանձնախումբ» անունով²⁶:

²¹ Տե՛ս Հաղորդագրություն Հայ դատի յանձնախումբի, Նիւ Յորք, թիվ 1, օգոստոս, 1945, էջ 7-8:

²² Տե՛ս **Մարրիեան Ջ.**, Համաշխարհային Երկրորդ պատերազմին վախճանը և հայերը, «Հայկազյան հայագիտական հանդես», հատ. ԺԳ, Պեյրոն, 1993, էջ 183:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 5, թերթ 1:

²⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 7, թերթ 1-2:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 5, թերթ 1:

²⁶ **Ահարոնյան Գ.**, Մեծ երազի ճամբուն վրայ, Լոս Անձելես, 1986, էջ 196:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո աշխարհի ժողովուրդները հույսեր էին փայփայում, թե վրա է հասել կայունություն և խաղաղություն հաստատելու ժամանակաշրջանը²⁷: Ամերիկահայությունը, ևս ոգևորված պատերազմի հաղթական ավարտով, կրկին բարձրացնում է Հայ դատի և պահանջատիրության հիմնահարցերը:

1945 թ. ապրիլի 25-ից հուլիսի 26-ը Սան Ֆրանցիսկոյում ընթանում էին Ազգերի լիգային փոխարինած նորաստեղծ Միավորված ազգերի կազմակերպության առաջին վեհաժողովի աշխատանքները, որին մասնակցում էին 50 ազգերի պատվիրակություններ: Վեհաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով ամերիկահայ ազգային խորհուրդը ուղարկում է մի պատվիրակություն²⁸: Մյստեղ Ամերիկահայ ազգային խորհուրդը ճանաչվում է որպես «ամերիկյան ազգային կազմակերպություն» և կարողանում է դիտորդի կարգավիճակով մասնակցել վեհաժողովի շրջանակներում կայացած հանդիպումներին:

Ամերիկահայ ազգային խորհուրդը, միաժամանակ, Միացյալ Նահանգների հայ համայնքի անունից Միավորված ազգերի կազմակերպությանն է ներկայացնում «Հայ ժողովրդի գործը» («The Case of the Armenian People») վերնագրով մի հուշագիր²⁹: Հուշագրում Ամերիկահայ ազգային խորհուրդը ներկայացնում էր հայ ժողովրդի պատմական անցյալը, անդրադառնում թուրքական իշխանությունների իրականացրած հալածանքներին և կոտորածներին, Մեծ տերությունների խոստումներին, մասնավորապես Սևրի դաշնագրին և Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին: Միաժամանակ նշվում էր, որ թեև գոյություն ունի Խորհրդային Հայաստան, սակայն հայությունը սփռված է աշխարհի տարբեր երկրներում և իր հայրենքի մեծ մասի տերը չէ³⁰:

Հուշագրով Ամերիկահայ ազգային խորհուրդը պահանջում էր Թուրքահայաստանի հողերի կցումը Խորհրդային Հայաստանին և մեկուկես միլիոն հայերի ներգաղթը դեպի իրենց հայրենիք³¹: Խորհուրդը, միաժամանակ, ստեղծում է «Հայկական պահանջների իրագործման ֆոնդ» առաջարկելով գոյացնել 100 հազար դոլար՝ Հայ դատի աշխատանքների իրականացման համար³²:

Հայ դատի հանձնախումբը ևս հերթին մի պատվիրակություն է ուղարկում Սան Ֆրանցիսկո, որը 1945 թ. մայիսի 7-ին, ներկայացնում է մի հուշագիր՝ «Հայկական հարցի առթիվ» («A Memorandum Relating to the Armenian Question 1945») վերտառությամբ, որը ստորագրված էր Սիմոն Վրացյանի կողմից: Նշենք, որ Դաշնակցությունը այս հուշագիրը ներկայացնում է Հայ դատի հանձնախումբ (Armenian National Committee) անունով³³:

²⁷ Տե՛ս **Միմոնյան Հր.**, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968, էջ 39:

²⁸ Տե՛ս **Մելքոնյան Ք.**, Սփյուռքահայությունը և հայկական հարցի լուծման խնդիրը (1945-1947 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», № 2, Երևան, 2010, էջ 44:

²⁹ **Vertanes Ch.**, The Armenian Question Today: In its historical perspective, New York, 1946, p. 21:

³⁰ Տե՛ս The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, submitted by the Armenian National Council of America, New York, 1945.

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 49, թերթ 52:

³³ Տե՛ս **Մամոնյան Կ.**, Հայ դատի Կենտրոնական գրասենյակի զեկոյց, Հայ դատն այսօր, հոդվածների ժողովածու, Թեհրան, 2012, էջ 21:

Այս երկու հուշագրերի բովանդակությունը գրեթե նույն էր, բացառությամբ այն հարցի, որ Հայ ազգային կոմիտեն առաջարկում էր հայկական տարածքներից ստեղծել նոր «Հայկական հանրապետություն»³⁴: Ավելի ուշ, վերջինս փոխում է իր մտտեցումը՝ առաջարկելով Արևմտյան Հայաստանի հողերը միացնել Խորհրդային Հայաստանին:

Ամերիկահայ ազգային խորհրդի գործունեության կարևոր նվաճումներից մեկը, թերևս 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում Համաշխարհային հայկական կոնգրեսի կամ համագումարի հրավիրումն էր: Կոնգրեսի կազմակերպիչ հանձնախումբը ղեկավարում էր Պետրոս Թերզյանը, որին հաջողվել էր կոնգրեսի նկատմամբ մեծ հետաքրքրություն և ոգևորություն առաջացնել ամերիկահայ համայնքի ներսում:

Ամերիկահայ ազգային խորհրդի 1947 թ. փետրվարի 10-ի շրջաբերականից իմանում ենք, որ Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումը պայմանավորված էր գաղութահայության խնդիրներով ու պահանջներով: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար Խորհուրդը հրավեր էր ուղարկել 26 տարբեր երկրներում գտնվող Ազգային Խորհուրդների և այլևայլ կազմակերպությունների:

Կոնգրեսի նպատակները շրջաբերականի մեջ ներկայացվում էին հետևյալ կերպ.

1. Միություն և համագործակցություն ստեղծել բոլոր հայ գաղութների մեջ ներգաղթի և վերաշինության շուրջ:
2. Հայ պահանջների շուրջ ստեղծել հասարակական նպաստավոր կարծիք և դրանց լուծումը հետապնդել Միացյալ ազգերի կազմակերպության միջոցով:
3. Հզորացնել մշակութային և կրոնական կապերը գաղութների և մայր հայրենիքի միջև:
4. Վերազնահատել հայ գաղութների ծառայությունները և նվիրումը իրենց բնակեցրած երկրների կառավարություններին:

5. Միջոցներ ստեղծել Կոնգրեսի որոշումները գործադրության դնելու համար³⁵:

Համաշխարհային հայկական կոնգրեսը (համագումար) տեղի է ունենում Ուոլդորֆ Աստորիա պանդոկի սրահներում, որին մասնակցում են 22 երկրներից 715 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին 70 կենտրոնական կազմակերպություններ, 275 մասնաճյուղեր և 31 եկեղեցիներ³⁶: Համագումարին մասնակցում էին Հ.Բ.Ը. Միության և հայրենակցական բոլոր միությունների ղեկավար ներկայացուցիչները. միակ կառույցը, որ չէր մասնակցում համագումարին, Դաշնակցություն կուսակցությունն էր: Կոնգրեսին ուղղված ողջույնի հեռագրով է հանդես գալիս Ամենայն հայոց հայրապետ Գևորգ Զ կաթողիկոսը:

Համաշխարհային հայկական կոնգրեսը (համագումար), հաշվի առնելով հայ հասարակական ու քաղաքական տարբեր շրջանակների և ընդհանրապես հայության բոլոր շրջանակների ցանկությունները, հայկական հողային պահանջների նկատմամբ որդեգրում է համապատասխան որոշում կամ բանաձև, որտեղ մասնավորապես ասվում էր. «Աշխարհի շատ երկրներից և Միացյալ Նահանգների բոլոր մասերից հայ ժողովրդի շուրջ 700 ներկայացուցիչներ, Նյու Յորքի Ուոլդորֆ Աստորիա պանդոկում 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը, հրավիրում են

³⁴ St' u A Memorandum Relating to the Armenian Question, issued by Armenian National Committee, New York, 1945, p. 12.

³⁵ St' u ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 39, թերթ 1:

³⁶ **Ահաբոնյան Գ.**, Մեծ երազի ճամբուն վրայ, էջ 197:

Համաշխարհային հայկական համագումար, որտեղ միաձայն որոշում են դիմել Միացյալ Ազգերի դատարանին՝ հայկական հողային պահանջների վերջնական և արդար լուծման համար. պահանջներ, որոնք հիմնավորված են պատմական իրավունքներով և համապատասխան դաշնագրերով»³⁷:

Այս որոշումը կամ բանաձևը պետք է հաձնվեր Միացյալ ազգերի կազմակերպության Ընդհանուր քարտուղարությանը, սակայն, մինչ այդ հատուկ հուշագրի հետ մեկտեղ այն ներկայացվում է ԱՄՆ պետքարտուղարությանը:

Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ էր, որ 1942-1947 թթ. Հայկական սփյուռքի տարբեր շրջաններում հայոց ցեղասպանությանը, հայկական դատին միջազգային հանրությանը ծանոթացնելու նպատակով ստեղծվում են տարբեր կառույցներ: Սփյուռքահայ բոլոր կուսակցությունները, կազմակերպությունները և միությունները նույն նպատակին, այն է՝ Արևմտյան Հայաստանը հայ ժողովրդին վերադարձնելու և Խորհրդային Հայաստանին միացնելու միջոցով հայ ժողովրդի պատմական հայրենիքի կերտմանը հասնելու համար ստեղծում են սերտ միասնականություն:

Բավական է միայն նշել, որ այս կառույցների գործունեության շնորհիվ, շուրջ 20 հազար ամերիկացի եկեղեցականներ պատրաստակամություն են հայտնում Միացյալ Նահանգների Սենատին ներկայացնելու հայկական հողային իրավունքների հատուցման վերաբերյալ հավաքական դիմումագիր³⁸:

Անշուշտ, համաշխարհային հայկական կոնգրեսի (համագումար) հրավիրումը կարևոր իրադարձություն էր բովանդակ հայության կայնքում՝ թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում: Այն ամերիկահայ համայնքի և ընդհանրապես հայկական Սփյուռքի կարևորագույն հաջողություններից ու համախմբման լավագույն դրսևորումներից մեկն էր:

Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումը պատմական և եզակի դեպք էր. առաջին անգամ էր, որ այսքան մեծ և ներկայացուցչական ժողով էր տեղի ունենում հայության շրջանում: Եթե հաշվի առնենք արտասահմանի հայ գաղութների տնտեսական աննպաստ պայմանները, ապա իսկապես իիզակն գործ էր ձեռնարկել Ամերիկայի ազգային խորհուրդը³⁹:

Այս ամենով հանդերձ, սակայն, այն չի կարողանում հասնել իր առջև դրված խնդիրների իրականացմանը՝ հանդիպելով «Թրումենյան Վարդապետության» պատվարին, որը թուրք-խորհրդային սահմանագիծը համարում էր ամերիկյան-խորհրդային սահմանագիծ⁴⁰:

Նշենք, որ 1947 թ. գարնանը ստեղծվում է «Հայաստանի օգտին ամերիկյան եկեղեցական հանձնախումբ»-ը, որի առաջնորդներն էին Հենրի Ջորջը (ատենապետ), Հարբր Միպլին, Հենրի Սմիթ Լիբբը և ուրիշներ Այս մարմինը Ամերիկայի մեջ հանդիսանում էր կրոնական առումով ամենաներկայացուցչականը, որի անդամների թիվը հասնում էր 333 եկեղեցական առաջնորդի⁴¹:

Հանձնախումբը ամերիկյան պետքարտուղարի հետ հանդիպման ժամանակ ներկայացնում է մի դիմումագիր և մասնավորապես անդրադառնում երկու հար-

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 198:

³⁸ Տե՛ս **Անդրեասյան Ա.**, Հայկական դատին նոր հանգրուանը, Պեյրուս, 1967, էջ 17:

³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 38, թերթ 1:

⁴⁰ Տե՛ս «Վասն Համասփիռքահայ Քոնկրեսի» յայտարարություն-կոչին առիթով, Պեյրուս, 1996, էջ 6:

⁴¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 41, թերթ 10:

ցերի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին և «Համառոտ գրություն Հայկական հարցի մասին» դրույթին: Հանձնախմբի քարտուղար Ազնակյանը նշում է, որ դեռևս ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հանդես է եկել արդարության պաշտպանությամբ, իսկ Հայկական հարցի հետ կապված համառոտագրությունում ներկայացվում էր հայ ժողովրդի անցյալ, ներկա դրությունը, նշվում էր, որ հայությունն ապրում է իր հայրենիքի սահմաններից դուրս, տարիներ շարունակ նրանք դիմել են աշխարհի կառավարություններին՝ իրենց նկատմամբ կատարված անարդարությունների համար:

Շարունակելով Ազնակյանը նշում էր, որ ՄԱԿ-ի ստեղծումը կրկին հույս է արթնացնում հայության մեջ, քանզի ձևավորվել էր արդարության սկզբունքներին նվիրված համաշխարհային մի աստյան, որտեղ հայությունը կարող էր պաշտպանել իր դատը: Հայկական հարցի լուծումը դարձել է նաև քր Նշենք, թեև Ամերիկայի հայկական համայնքում նոր ժամանակներում գործել են մի շարք քաղաքական, հասարակական, մշակութային, մարզական, եկեղեցական, բարեգործական և այլ միություններ, սակայն, նրանք գործել են իրարից անջատ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք դեռևս մինչև Եղեռնի 50-ամյակը, որից հետո սկսվում է զարթոնք ոչ միայն ԱՄՆ, այլ նաև հայկական սփյուռքի տարբեր համայնքներում՝ ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար, Միացյալ Նահանգներում ձևավորվել էին առաջին լոբբիստական կազմակերպությունները, որոնք փորձում էին ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր շրջանակներին ներկայացնել հայկական պահանջները՝ փորձելով հասնել դրանց իրականացմանը:

Քանայի բաեր-Ամերիկահայ համայնք, Հայոց ցեղասպանություն, լոբբիստական կազմակերպություն, Ամերիկայի հայ ազգային միություն, Միհրան Սվազի, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե, Վահան Քարտաշյան, Ամերիկայի հայ դատի հանձնախումբ, Ամերիկահայ ազգային խորհուրդ, Համաշխարհային հայկական կոնգրես, հուշագիր, Հայկական սփյուռք, Միավորված ազգերի կազմակերպություն:

Լիանա Մամյան, ԱՄՆ-ի հայ համայնքի ձևավորումը և ամերիկահայ առաջին լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը- Հոդվածի նպատակն է ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքի ձևավորման նախադրյալները, պատճառները, դեպի Նոր աշխարհ հայության ներգաղթի հիմնական փուլերը, ինչպես նաև ամերիկահայ առաջին լոբբիստական կազմակերպությունների ստեղծումը և ծավալված գործունեությունը՝ ամերիկյան գործադիր և օրենսդիր իշխանության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման, Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերի վերադարձի, նորաստեղծ Հայաստանի առաջին հանրապետության և ընդհանրապես հայության շահերի և իրավունքների ներկայացման և պաշտպանության տեսանկյունից:

Лиана Мамян, Формирование Армянской диаспоры в США и деятельность Американско-Армянских лоббистских организаций-Цель данной статьи представить предпосылки и причины формирования армянской диаспоры в Соединенных Штатах Америки: основные этапы миграции армян в Новый свет, а также создание армянских лоббистских организаций и их деятельность в Америке в свете признания исполнительными и законодательными органами Америки Геноцида Армян,

проблемы возврата Турцией оккупированных армянских территории, а также вопросы представления и защиты интересов Первой Республики Армения и всего Армянства.

Liana Mamyan, The formation of the Armenian community in the USA and the activity of the first American-Armenian lobbying organizations-The goal of the article is to introduce the preconditions and reasons of the formation of the Armenian community in the United States of America, the main phases of the Armenians' immigration to the New World, also the creation and the activity of the American-Armenian first lobbying organizations from the perspective of the recognition of the Armenian Genocide by the American executive and legislative authorities, return of the Armenian lands that are occupied by Turkey, and representation and protection of the interests and rights of the newly created the First Republic of Armenia and generally Armenians.

ԼԻԲԱՆԱՆԱԽՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (2006թ.). ՄԻ ՇԱՐՔ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լիբանանախորհրդայնական 2006թ. պատերազմը տարբերվում էր նախորդ (1982թ.) պատերազմից հիմնականում Իրանի մասնակցության հանգամանքով: Իսրայելական կողմը պարբերաբար հայտարարում էր, որ դա պատերազմ է ոչ թե Լիբանանի, այլ Հեզբոլլահի ու վերջինիս հովանավորող Իրանի դեմ:

1990-ականներին լիբանանախորհրդայնական հարաբերությունների վրա մեծ ազդեցություն ունեցավ Հեզբոլլահի գործունը: Մեծ էր նաև այդ կազմակերպությանը հովանավորող երկրների դերը¹:

Եգիպտախորհրդայնական խաղաղության պայմանագրից հետո արաբ-իսրայելական հակամարտության բնույթը վերջնականապես փոխվեց: Արաբական երկրները սկսեցին գիտակցել, որ առանց Եգիպտոսի այլևս անհնար է լայնամասշտաբ պատերազմ սկսել Իսրայելի դեմ²: Մյուս կողմից Սիրիան, Իրաքն ու Իրանը սկսեցին ավելի ակտիվ ֆինանսավորել ոչ պետական կազմավորումներին՝ Հեզբոլլահ, Համաս, Իսլամական Ջիհադ և այլն, ընդդեմ Իսրայելի³: 1984թ. Լիբանանում իրանամետ Հեզբոլլահի հայտնությունը սկզբնական շրջանում հակասում էր սիրիական շահերին⁴, սակայն հետագայում Լիբանանում դիրքերի կորուստը ստիպում էր Դամասկոսին նոր ռազմավարություն մշակել: Դրա արդյունքում սերտանում են հարաբերությունները Թեհրանի հետ (հովանավորվող Հեզբոլլահի միջոցով)⁵: Հեզբոլլահը 1992թ. մեծ դեր է ստանձնում Լիբանանի քաղաքական կյանքում՝ խորհրդարանում ձեռք բերելով 8 տեղ⁶:

1992-2000թթ. լիբանանախորհրդայնական հակամարտությունում նկատվեց լարվածության որոշակի անկում: Դա հիմնականում պայմանավորվեց մերձավորարևելյան խաղաղության գործընթացով: Չնայած լարվածության անկմանը՝ լիբանանախորհրդայնական հակամարտության հիմնական (սահմանային) խնդիրները շարունակեցին մնալ չլուծված: Լիբանանի ու Իսրայելի միջև շարունակեցին մնալ միջպետական սահմանների ու «Շեբաս ազարակների» խնդիրները: Վերջինիս հետ կապված լիբանանցիները ներկայացրեցին 1946թ. սիրիական նոտան, որով տարածքը ճանաչվում էր Լիբանանի տարածք: Լիբանանյան կողմը նաև ներկայացրեց սեփականության մասին վկայող կադաստրի փաստաթղթեր: Մյուս կողմից Իսրայելը «Շեբաս ազարակները» ճանաչում էր որպես Գոլանի

¹ **Салех Малек Мохамед**, Ливано-израильские отношения в контексте Арабо-Израильского противостояния в 1990-е – начале 2000-х гг. УДК 324(569.3:569.4)(091)«19/20» <http://elib.bsu.by/bitstream/123456789/104268/1/43-49.pdf> (26/12/2016)

² **Храйзат М.А.** Ливано-израильские отношения / Международные отношения на Ближнем и Среднем Востоке и политика России на рубеже XXI века. М., 2000. С. 158.

³ **Steve Smith, Amelia Hadfield, Tim Dunne.** Foreign policy: Theories, Actors, Cases. Oxford, 2012, էջ 415:

⁴ **Ռուբեն Կարապետյան**, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003թ, էջ 235:

⁵ **Ռուբեն Կարապետյան**, Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում / 1946-2000թթ/, Կահիրե, 2008թ, էջ 213:

⁶ https://en.wikipedia.org/wiki/Lebanese_general_election,_1992 (01/02/2017)

բարձունքների մի մաս՝ հղում անելով ՄԱԿ-ի մասնագետների մոտ առկա քարտեզներին⁷:

Իսրայելական զորքերի՝ Լիբանանի հարավը լքելուց հետո, սկսած 2000թ. կրկին լարվածությունն առաջացավ միջպետական սահմանին: Իսրայելը տեղյակ էր Սիրիայի ու Իրանի կողմից Հեզբոլլահին զինելու մասին: Սիրիան ու Իրանը նույնիսկ մասնագետներ էին ուղարկել՝ Լիբանան Հեզբոլլահի զինյալներին վերապատրաստելու նպատակով⁸:

Միջազգային ուժերը փորձեցին թույլ չտալ լիբանանաիսրայելական հակամարտության ծավալումը: ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը 2002թ. հուլիսին ընդունեց թիվ 1428, իսկ 2004թ. հունվարին՝ թիվ 1525 բանաձևերը: Դրանք վերաբերում էին Լիբանանում տեղակայված ՄԱԿ-ի Ժամանակավոր ուժերի մանդատի ժամկետի երկարաձգմանը⁹:

Դեռևս 2001թ.՝ իսրայելական ռազմական գործողություններից հետո¹⁰, Իսրայելի Արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսը հայտարարեց. «Իսրայելական հակահարվածը՝ ուղերձ է սիրիացիներին, սակայն ոչ թե Սիրիայում գտնվող սիրիացիներին, այլ՝ Լիբանանում, ովքեր թույլ չեն տալիս լիբանանյան զինված ուժերին վերահսկել սահմանն ու կանխել Հեզբոլլահի գործողությունները»¹¹:

Միջազգային ուժերի ջանքերն, ի վերջո, ապարդյուն անցան: 2006թ. հուլիսի 20-ին Լիբանանի վարչապետ Սիմոն Պերեսը հայտարարեց, որ իր երկիրը չի կարող պասսիվ մնալ իսրայելական ցամաքային զորքերի հարձակման դեպքում: Նա նաև նշեց Հեզբոլլահի զինաթափելու անհրաժեշտությունը: Սակայն, քանի որ լիբանանյան բանակը ի գործու չէ դա անել ինքնուրույն, Սիմոն միջազգային օգնություն խնդրեց¹²:

2006թ. սկսվեցին ռազմական գործողությունները, որոնք, ըստ Իսրայելի, նպատակ էին հետապնդում Հեզբոլլահ խմբավորման հեռացումը սահմանից, կապրալ¹³ Շալիթի ազատագրումն ու սահմանի շուրջ 600 կմ² տարածքի մաքրումը: Իսրայելի փոխվարչապետ Շիմոն Պերեսը հայտարարեց, որ ռազմական գործողությունները ուղղված են ոչ թե Լիբանան պետության, այլ Հեզբոլլահ ահաբեկչական խմբավորման դեմ: Սակայն պատերազմի հենց առաջին օրվանից Լիբանանի գրեթե ողջ տարածքը ենթարկվեց ռմբակոծությունների¹⁴:

⁷ **Е. М. Ктигорова**, Ливано-израильская война 2006г. Ее истоки и последствия, 2009г, ст 157.

⁸ **А. Д. Цыганок**, Русский Взгляд на Израильские Войны: Вторая Ливанская-2006, в Секторе Газа-2009. Москва. 2011г., стр. 167

Прозорова Г.В. Ливано-израильский конфликт: основные фазы эволюции /Страны Ближнего, Среднего Востока и Африки в начале нового века. М., 2005.С. 114-115.

⁹ Резолюция Совета Безопасности ООН № 1428 от 30 июля 2002 г. [Электрон-ный ресурс] Сайт Организации Объединенных Наций, русская версия.[New York, 2002]. URL: <http://www.un.org/russian/document/scresol/res2002/res1428.htm> (дата обращения: 23.10.08).

Резолюция Совета Безопасности ООН № 1525 от 30 января 2004 г. [Элек-тронный ресурс] Сайт Организации Объединенных Наций, русская версия. [New York, 2004]. URL: <http://www.un.org/russian/document/scresol/res2004/res1525.htm> (дата обращения: 23.10.08).

¹⁰ որոնք անցկացվեցին ի պատասխան Հեզբոլլահի հարձակումների:

¹¹ **Скореход Ю.С.** Проблема юга Ливана // Ближний Восток и современность. 2002. № 13. С. 133:

¹² **А.Д.Цыганок**, նշվ. աշխ., стр. 110.

¹³ Ամենացածր սպայական կոչում (սերժանտ):

¹⁴ Նույն տեղում, стр. 69.

Պատերազմն ուներ նաև անձնական նպատակներ: Իսրայելի՝ երբեք չպատերազմած նախագահն ու պաշտպանության նախարարը «կարճատև հաղթանակած պատերազմով» հույս ունեին բարձրացնել իրենց ու իրենց կառավարության հեղինակությունը երկրում ու դրա սահմաններից դուրս¹⁵:

Իսրայելական բանակի գեներալ Գիոր Ռոմը առաջ քաշեց պատերազմում Իսրայելի վեց նպատակները

1. Իսրայելի սահմաններից Հեզբոլլահի հեռացումը,
2. Հեզբոլլահի վարկանիշի անկումը Լիբանանում,
3. Լիբանանի ու հարևան արաբական երկրների նկատմամբ հսկողության ուժեղացումը,
4. Միջազգային հանրության օգնությամբ Լիբանանում խաղաղության հաստատումը¹⁶,
5. Իսրայելի Պաշտպանության Բանակի առևանգված զինվորների վերադարձը,
6. Միրիային ողջ գործընթացից հեռու պահելը:

Հետագայում ավելացավ նաև մի նպատակ՝ «Լիբանանում Իրանի ազդեցության վերականգնման դեմ պայքարելը»¹⁷:

Պատերազմում Հեզբոլլահի հաջող գործողությունները հիմնականում պայմանավորվեցին արտաքին աջակցությամբ՝ մասնավորապես իրանական ու սիրիական (ավելի քիչ մասշտաբի): Չնայած Հեզբոլլահն զինամթերք էր ձեռք բերում նաև զենքի սև շուկաներում¹⁸: 2006թ. հուլիսի 23-ին Միրիայի Տեղեկատվության նախարար Մոհսեն Բեյլալը սպառնաց Իսրայելին սիրիական միջամտությամբ, եթե իսրայելական ուժերը շարունակեն խորանալ դեպի հյուսիսային Լիբանան¹⁹: Նույն թվականի հուլիսի 24-ին ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիսա Ռայսը հանդիպեց Լիբանանի վարչապետ Միսիորային ու խորհրդարանի խոսնակ (շիա մահմեդական)՝ Նաբիհ Բերիին: Դրան նախորդել էր ԱՄՆ պետքարտուղարի հանդիպումը Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Սաուդ ալ-Ֆեյսալի հետ՝ Վաշինգտոնում: ԱՄՆ իր քայլերը համաձայնեցրեց Սաուդյան Արաբիայի հետ: Քոնդոլիսա Ռայսը հակամարտող կողմերին ռազմական գործողությունների դադարեցման կոչ արեց: Նա նաև հայտարարեց, որ ԱՄՆ չի պատրաստվում խզել դիվանագիտական կապերը Դամասկոսի հետ՝ չնայած Հեզբոլլահին վերջինիս կողմից ցուցաբերվող աջակցությանը: Ընդհակառակը՝ հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով ԱՄՆ պատրաստվում էր համագործակցել Միրիայի հետ²⁰:

Հռոմում՝ 2006թ. հուլիսին, անցկացվեց լիբանանաիսրայելական պատերազմի կարգավորման վերաբերյալ միջազգային համաժողով: Համաժողովին մասնակցեցին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ երկրները (բացի Չի-

¹⁵ Նույն տեղում, սրբ. 70.

¹⁶ Հետագայում այս կետը վերափոխվեց՝ «Լիբանանի ողջ տարածքում լիբանանյան կառավարության իշխանության տարարածմանը օժանդակել»-ով:

¹⁷ **Ա. Դ. Բյանոկ**, նշվ. աշխ., սրբ. 71.

Րոմ Գ. Краткая история Второй Ливанской войны. Центр стратегических исследований им. Йаффе.-Тель-Авив. URL: <http://www.waronline.org/IDF/Articles/short-history-of-2nd-lebanon-war/index.html/>.

¹⁸ **Ա. Դ. Բյանոկ**, նշվ. աշխ., սրբ. 178

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Ա. Դ. Բյանոկ**, նշվ. աշխ., սրբ. 111.

նաստանից), ինչպես նաև Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ²¹: Հատկանշական է, որ Սիրիան, Իսրայելն ու Իրանը համաժողովին չմասնակցեցին: Այսինքն հակամարտող կողմերից մասնակցեց միայն Լիբանանը: Հավանաբար դա պայմանավորված էր նրանով, որ բոլոր հակամարտող կողմերից միայն Լիբանանին էր ձեռնտու հակամարտության շուտափույթ լուծումը, քանի որ պատերազմն ընթանում էր հենց իր հողում:

Համաժողովում ԱՄՆ-ը մեղադրեց Սիրիային ու Իրանին հակամարտության սանձազերծման մեջ: Ֆրանսիայի նախագահ Փակ Շիրակը համաձայնեց, որ հակամարտության բռնկման մեջ Իրանը պատասխանատվություն է կրում, սակայն այդպես էլ ուղղակիորեն չմեղադրեց վերջինիս: Ռուսաստանը ևս կիսեց Ֆրանսիայի դիրքորոշումն ու փորձեց Սիրիային ու Իրանին ետ պահել հակամարտությունից: Մեղադրանքներ հնչեցին ԱՄՆ-ի հասցեին՝ լիբանանախորհրդակցական հակամարտությունը Իրանի դեմ օգտագործելու համար: Ռուսաստանը, Ֆրանսիան ու արաբական երկրները համաձայնեցին Լիբանանում միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայմանը, սակայն ոչ թե ՆԱՏՈ-ի, այլ ՄԱԿ-ի հովանու ներքո²²:

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը՝ 2006թ. օգոստոսի 11-ին, Լիբանանի վերաբերյալ ընդունեց թիվ 1701 բանաձևը²³: Դրանում ճանաչվեց Լիբանանի տարածքային ամբողջականությունն ու ինքնավարությունը: Իսրայելական կողմից պահանջվեց գորքերի միակողմանի դուրսբերում Լիբանանի հարավից: Դրան պետք է հաջորդեր Լիբանանի կառավարության ու ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի տեղակայումը այնտեղ: Նշվեց նաև ՄԱԿ-ի Ժամանակավոր ուժերի թվաքանակն (մինչև 15.000) ու ժամկետի ավելացումը: ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը կոչ արեց Հեզբոլլահին ու Իսրայելին դադարեցնել ռազմական գործողությունները:

Հեզբոլլահի առաջնորդ շեյխ Հասսան Նասրալլան, օգոստոսի 12-ին CNN-ին տված հարցազրույցում հայտարարեց, որ իր կազմակերպությունը կենթարկվի ՄԱԿ-ի ընդունած բանաձևին²⁴: Սակայն բանաձևը չէր նախատեսում իսրայելական ուժերի դուրսբերում տարածքից, ինչն առաջ բերեց Արաբական Պետությունների Լիգայի դժգոհությունը: Արաբական երկրների կողմն ընդունեցին նաև Ռուսաստանն ու Չինաստանը²⁵:

Օգոստոսի 13-ին, հետևելով Լիբանանի կառավարության օրինակին, Իսրայելը ընդունեց Անվտանգության Խորհրդի բանաձևը, իսկ հաջորդ օրը իսրայելական զորքերը պաշտոնապես դադարեցրեցին ռազմական գործողությունները Լիբանանում²⁶:

²¹ Եգիպտոսը, Հորդանանը, Սաուդյան Արաբիան ու Լիբանանը:

²² Նույն տեղում, սրբ. 114-115.

²³ [http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/1701\(2006\) \(01/02/2017\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/1701(2006) (01/02/2017)

²⁴ UN: Hezbollah and Israel agree on Monday cease-fire (CNN) [http://www.chinadaily.com.cn/world/2006-08/13/content_663603.htm \(01/02/2017\)](http://www.chinadaily.com.cn/world/2006-08/13/content_663603.htm (01/02/2017)).

²⁵ **Салех Малек Мохамед**, Ливано-израильские отношения в контексте Арабо-Израильского противостояния в 1990-е-начале 2000-х гг. УДК 324(569.3:569.4) (091) «19/20»/.

²⁶ **Салех Малек Мохамед**, նշվ. աշխ.:

Резолюция Совета Безопасности ООН № 1701 от 11 августа 2006 г. [Электронный ресурс] Сайт Организации Объединенных Наций, русская версия.[New York, 2006]. URL: [http://www.un.org/russian/document/scresol/res2006/res1701.htm \(дата обращения: 23.10.08\)](http://www.un.org/russian/document/scresol/res2006/res1701.htm (дата обращения: 23.10.08)

Պատերազմից հետո արաբական երկրներից Սաուդյան Արաբիան, Հորդանանն ու Եգիպտոսը ակտիվ մասնակցությունն ունեցան Լիբանանի պետականության ամրապնդման գործընթացին: Դա արվեց ելնելով Հեզբոլլահից եկող սպառնալիքներից: Նրանց համար անընդունելի է Իրանի կողմից հովանավորվող ու դաշնակից Հեզբոլլահը, որի միջոցով Իրանը ամրապնդում է իր դիրքերը Լիբանանում և փորձում ներագրել ու վերահսկել իսրայելալիբանանյան ճակատում տեղի ունեցող գործընթացները: Ըստ մի շարք հեղինակների՝ «Արաբական այս երկրները հասկանում էին Հեզբոլլահի ապակայունացնող ազդեցությունը տարածաշրջանի վրա՝ Իրանի հետ համագործակցության արդյունքում: Դրա արդյունքը հանդիսացավ պատերազմի ընթացքում Իսրայելի նկատմամբ հանդուրժողական դիրքորոշումը, ինչպես նաև ՄԱԿ-ի թիվ 1701 բանաձևի կիրառմանն աջակցություն ցուցաբերելը»²⁹:

Իսրայելը պարտվեց Հեզբոլլահի դեմ պատերազմում³⁰: Լիբանանախիսրայելական պատերազմում Իսրայելի հիմնական նպատակներից էր Սիրիային ներքաշել պատերազմի մեջ: Այդ էր ցանկանում նաև ԱՄՆ-ը: Վերջինս մտահոգված էր Սիրիա-Իրան առանցքի ստեղծման գաղափարով³¹:

Լիբանանախիսրայելական պատերազմի ժամանակ Հորդանանը միացավ Իսրայելի դեմ ուղղված սիրիական քննադատություններին: Սակայն իր 35 օդանավակայաններից 5-ը տրամադրեց ամերիկյան օդային ուժերին³²:

Մի շարք քաղաքագետներ և վերլուծաբաններ փորձեցին վերլուծել ապագա հնարավոր հակամարտությունները Մերձավոր Արևելքում: Ըստ նրանց՝ Սիրիայի դեմ իսրայելական հնարավոր հարձակման դեպքում Հորդանանը չեզոք դիրք կգրավի ու կփակի իր օդային տարածքը թե՛ Իսրայելի և թե՛ Սիրիայի համար: Իսկ ահա Իրանի դեմ ամերիկյան կամ իսրայելական հնարավոր հարձակման դեպքում իրավիճակն այլ կլինի: Հորդանանը կաջակցի Իրանի դեմ հնարավոր հարձակումը: Չեզոք կմնան Սաուդյան Արաբիան և ԱՄԷ³³:

Համաձայն մեկ այլ տեսակետի՝ իսրայելալիբանանյան հակամարտության լուծման նախադրյալ կարող էր հանդիսանալ առաջին հերթին պաղեստինցի փախստականների հարցի լուծումը³⁴:

Իրաքը, հանդիսանալով Սիրիան ու Իրանը ֆիզիկապես միմյանց կապող առավել հարմար երկիրը, լիբանանյան ճգնաժամում ակտիվ դերակատարություն չունեցավ: Դա հիմնականում պայմանավորված էր ամերիկյան ռազմական ներկայությամբ:

Լիբանանախիսրայելական պատերազմի ավարտից հետո միջազգային հանրությունը փորձեց վերականգնել Լիբանանի տնտեսությունը³⁵: Դրանում մեծ դեր խաղացին նաև արաբական երկրները: Ամենամեծ ֆինանսական աջակցությունը Լիբանանին տրամադրեցին Օոցի արաբական պետությունները՝ Սաուդյան

²⁹ А.Д.Цыганок, նշվ. աշխ., стр. 185.

Bart R. The Second Lebanon War: The Plus Column. Strategic assessment. Vol. 9. No 3 – JCSS.

³⁰ Примаков Е., Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами, Москва. 2016г. стр. 217.

³¹ А.Д.Цыганок, նշվ. աշխ., стр. 205.

³² Նույն տեղում. стр. 209.

³³ А.Д.Цыганок, նշվ. աշխ. стр. 209-214.

³⁴ Салех Малек Мохамед, նշվ. աշխ.:

³⁵ International Aids to Lebanon, <http://gsdrc.org/docs/open/hdq979.pdf> (01/02/2017)

Արաբիան³⁶ (500 մլն ամերիկյան դոլլար օգնություն և 1 մլրդ ամերիկյան դոլլար վարկի տեսքով՝ Լիբանանի Կենտրոնական բանկին), Քուվեյթը³⁷ (300մլն ամերիկյան դոլլար օգնություն և 500մլն ամերիկյան դոլլար՝ վարկի տեսքով Լիբանանի Կենտրոնական բանկին), Կատարը³⁸ (300մլն ամերիկյան դոլլար օգնություն) և ԱՄԷ (50մլն ամերիկյան դոլլար օգնություն): Մի շարք հեղինակներ արանում տեսնում են Լիբանանում Իրանի ազդեցության թուլացման փորձեր³⁹:

Կարևոր են Սիրիայի նախագահ Բաշար Ասադի, Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդուլլահի, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեջադի այցերը Լիբանան, որոնց հաջորդեց նաև Թուրքիայի վարչապետ Էրդողանի այցը⁴⁰:

Լիբանանից Սիրիայի գորքերի դուրսբերումը որոշակիորեն թուլացրեց Դամասկոսի դիրքերը Լիբանանում՝ ռազմական առումով: Սակայն մի շարք պարբերականների պնդմամբ⁴¹ Սիրիայի գաղտնի ծառայությունները շարունակեցին վերահսկել ներքաղաքական իրավիճակը Լիբանանում: Բացի այդ՝ Լիբանանում շեզբոլլահի քաղաքական մեծամասնություն ունենալու հանգամանքը երկիրը դարձրեց Սիրիայի առավել հավատարիմ հարևանը:

Իսրայելի ռազմական ձախողման հետևանքով Սիրիան սկսեց վերգտնել իր ազդեցությունը տարածաշրջանում: Իրանը ևս ամրապնդեց իր դիրքերը⁴²: Իսրայելը պատերազմի արդյունքում կորցրեց արաբական երկրների նկատմամբ նախկինում ունեցած ռազմական առավելությունը: Օրինակ՝ Հորդանանը, իր սահմաններին մոտ իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով, ԱՄՆ-ից ձեռք բերեց 50 հատ «օդ-օդ» տեսակի հրթիռ ու մարտական պատրաստության բերեց իր զինված ուժերը⁴³:

Բանալի բառեր–Լիբանանախորայելական պատերազմ, արաբական աշխարհ, Իսրայել, շեզբոլլահ, Իրան, Սիրիա:

³⁶ [http://mepc.org/articles-commentary/commentary/targeting-hezbollah-saudi-arabia-suspends-military-aid?print\(01/02/2017\)](http://mepc.org/articles-commentary/commentary/targeting-hezbollah-saudi-arabia-suspends-military-aid?print(01/02/2017)).

³⁷ [https://en.wikipedia.org/wiki/Humanitarian_aid_during_the_2006_Lebanon_War#.C2.A0Kuwait\(01/02/2017\)](https://en.wikipedia.org/wiki/Humanitarian_aid_during_the_2006_Lebanon_War#.C2.A0Kuwait(01/02/2017)).

³⁸ [http://www.spiegel.de/international/qatar-s-reconstruction-aid-in-lebanon-envy-cons-piracy-and-a-lebanese-motor-city-a-471382.html\(01/02/2017\)](http://www.spiegel.de/international/qatar-s-reconstruction-aid-in-lebanon-envy-cons-piracy-and-a-lebanese-motor-city-a-471382.html(01/02/2017)).

³⁹ **Jeremy M. Sharp**, Coordinator. Foreign Affairs, Defense, and Trade Division. Lebanon: The Israel-Hamas-Hezbollah Conflict. CRS Report for Congress. Congressional Research Service. Updated September 15, 2006.

⁴⁰ **Demirelli F.**, Turkey Seeks Stability in Lebanon amid Hariri Probe, Today's Zaman, November. 28, 2010, [http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detail&newsId=228129\(26/12/2016\)](http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detail&newsId=228129(26/12/2016)).

⁴¹ Middle East Research and Information Project, Syria and Lebanon: A Brotherhood Transformed, by Bassel Salloukh, [http://www.merip.org/mer/mer236/syria-lebanon-brotherhood-transformed\(01/02/2017\)](http://www.merip.org/mer/mer236/syria-lebanon-brotherhood-transformed(01/02/2017)).

[http://www.aljazeera.com/indepth/features/2011/11/201111295498547664.html\(12/01/2017\)](http://www.aljazeera.com/indepth/features/2011/11/201111295498547664.html(12/01/2017))
Fred H. Lawson, Demystifying Syria, The London Middle East Institute, 2010, p. 211.

⁴² Khoury J., Ahmadinejad Tells Lebanese at Rally Near Israel Border: The Zionists will disappear, [http://www.haaretz.com/news/diplomacy-defense/ahmadinejad-tells-lebanese-at-rally-near-israel-border-the-zionists-will-disappear-1.319092\(26/12/2016\)](http://www.haaretz.com/news/diplomacy-defense/ahmadinejad-tells-lebanese-at-rally-near-israel-border-the-zionists-will-disappear-1.319092(26/12/2016)).

⁴³ **А. Д. Цыганок.** նշվ. աշխ., սրբ. 177

Անդրանիկ Առաքելյան, Լիբանանահիսրայելական պատերազմը (2006թ). Մի շարք մոտեցումներ և դիրքորոշումներ-հոդվածում անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել ինչպես ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների դիրքորոշումները պատերազմի վերաբերյալ: Հոդվածում հատուկ ուշադրության են արժանացել տարածաշրջանի արաբական պետությունների միջև հարաբերությունները պատերազմի նախօրեին, ընթացքում և ավարտից հետո: Այդպիսով հնարավորություն է ընձեռնվել պարզելու տարածաշրջանի արաբական երկրների դիրքորոշումները պատերազմի շուրջ, ինչպես նաև վերջիններիս մասնակցությունը դրանում:

Андралик Аракелян, Ливано-Израильская война (2006г.)–некоторые подходы и позиции-В статье были изучены позиции США, России и Франции, а также некоторых международных организации по Ливано-Израильской войне. Особое внимание было уделено отношениям между арабскими странами в регионе - до, во время и после войны. Это дало нам возможность прояснить позиции некоторых арабских стран в войне и их участие в ней.

Andranik Arakelyan, Lebanon-Israeli war (2006) –some views and positions-In this article were explored the positions of The United States, Russia and France, as well as some of the international organisations on the war. Special attention was given to the relations between the Arab countries in the region-before, during and after the war. That gave us an opportunity to clarify the positions of some Arab countries on the war and their participation in it.

**ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԼՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԿՈՂ
ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(1965-1991 ԹԹ.)**

ԼԻՍԱ ՄԱՍՅԱՆ

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի ընդունումը Միավորված ազգերի կազմակերպությունում:

Դեռևս 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունում է «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիան, որը ուժի մեջ է մտնում 1961 թ. հունվարի 12-ից¹: Այս կոնվենցիայով հստակ սահմանվում էին այն հինգ կետերը, որոնցից անգամ մեկը բավարար էր, որպեսզի տվյալ երևույթը որակվեր որպես ցեղասպանություն: Հայոց ցեղասպանությունը այն եզակիներից է, որ համապատասխանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի բոլոր հինգ կետերին:

Հիշյալ կոնվենցիայի հետ կապված՝ 1951 թ. մայիսի 28-ին ԱՄՆ-ն Արդարադատության միջազգային ատյան է ներկայացնում մի հայտարարություն, որտեղ նշվում էր, որ ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիան արդյունք էր անմարդկային և դաժան վերաբերմունքի, որը իրականացվել է դարեր շարունակ, այդ թվում Երկրորդ աշխարհամարտի և դրան նախորդած տարիների ընթացքում: Հայտարարության մեջ ընդգծվում էր, որ ցեղասպանություններ իրականացվել են մարդկության պատմության ողջ ընթացքում. հայերի կոտորածները թուրքերի կողմից, միլիոնավոր հրեաների և լեհերի բռնի տեղահանությունը նացիստական վարչակարգի կողմից ցեղասպանություն հանցագործության խոշորագույն օրինակներն են²:

Նշենք, որ Միացյալ Նահանգները այս բանաձևը վավերացնում է 40 տարի անց՝ 1988 թ., նախագահ Ռ. Ռեյգանի օրոք՝ դառնալով 98-րդ երկիրը, որը ճանաչում էր ՄԱԿ-ի կողմից տրված «ցեղասպանություն» եզրույթի սահմանումը:

Նախագահ Ռոնալդ Ռեյգանը իր խոսքում նշում էր. «Ուրախ եմ, որ գոհունակություն է տրվում աշխարհի բոլոր ժողովուրդներին, մանավանդ հրեաներին: Ավելի ուրախ կլինեի, եթե ցեղասպանական ոճիրների հեղինակները ԱՄՆ-ում մահապատիժ ստանային: Կարծում եմ, որ այս օրինագիծը բավականին ուժեղ է և հստակորեն ամրագրում է, որ ցեղասպանություն իրագործած ոճրագործները Ամերիկայի տարածքում խստորեն պետք է պատժվեն»³:

Հայոց ցեղասպանության հիսունամյա տարելիցին իրականացվող միջոցառումները, ցույցերը չէին կարող տեսադաշտից դուրս թողնել մարդու իրա-

¹ Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, ред. и сост. Ю. Г. Барсегов, т. 1, Москва, 2002, стр. 29.

² St' u International Court of Justice, Written Statement of the Government of the United States of America, http://www.armenian-genocide.org/Affirmation.388/current_category.6/affirmation_detail.html, նաև՝ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 80, փաստաթուղթ 26:

³ St' u «Ասպարեզ» օրաթերթ, 8 նոյեմբերի, 1988:

վունքների ու ժողովրդավարության կառույց հանդիսացող Միավորված ազգերի կազմակերպությունը: 1965 թ. ապրիլի 24-ին Հայ դատի հանձնախումբը ձևավորում է «Նյու Յորքի հիսունամյակի հանձնախումբ», որը իբրև վշտի և բողոքի արտահայտություն, ցույց է կազմակերպում ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի առջև: Հանձնախումբն իր հայտարարության մեջ նշում էր. «ՄԱԿ-ի մեջ է, որ աշխարհի մեծերու կողքին վերջին տարիներին նստած են մոտ յիսուն երկրների ներկայացուցիչներ, երկրներ, որոնք մեզ նման գտնվում էին օտար տիրապետութեան տակ, իսկ այսօր վայելում են իրենց հպարտ անկախութիւնը: Ամենից շատ հենց ՄԱԿ-ի մեջ ենք սեսնում, որ վերացական երազ չէ անհամեմատ փոքր ուժերով ազատագրական պայքարի լծուելը, քանի որ չկա ավելի անպարտելի ուժ, քան արդարութիւնը: Նիւ Եորքի յիսունամեակի յանձնախումբը ապրիլեան այս օրերին իր կազմակերպած ցույցերով ներկայացնում է ողջ հայութեան զգացումները՝ ցանկանալով միջազգային այս ատեանի մեջ հիշեցնել մեր մեկուկես միլիոնից ավելի զոհերի նահատակութեան մասին, թուրքերի գործած աննկարագրելի ոճիրի մասին»⁴:

1967 թ. հունվարին գումարվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի նիստը, որի օրակարգը Յեղասպանության դեմ արգելք սահմանող միջազգային համաձայնագրի քննարկումն էր: Միաժամանակ նախատեսվում էր ստեղծել հատուկ Դատական ատյան, որպեսզի նմանատիպ գործողությունները դառնան քննարկման առարկա և անհրաժեշտ միջոցառումներ իրականացվեն մեղավորներին պատժելու համար:

Դաշնակցություն կուսակցության կողմից ստեղծված «Հայաստանի հանրապետության պատվիրակություն»-ը կոչ է հղում ՄԱԿ-ի ենթահանձնաժողովին, որտեղ ասվում էր. «1965 թ., աշխարհի բոլոր շրջաններում ապրող հայերը նշեցին Հայոց ցեղասպանութեան 50-ամեակը. ցեղասպանութիւն, որ իրագործվեց 1915 թ. Թուրքիայում: Անկասկած է, որ այս արարքը կազմում է մարդկութեան պատմութեան ամենից սև էջը և մեր ժամանակների առաջին ցեղասպանութիւնը»⁵:

Այս կոչ-հայտարարությունը լայն արձագանք է ստանում ՄԱԿ-ի շրջանակներում և առիթ տալիս ամերիկյան և օտար թերթերի բազմաթիվ մեկնաբանությունների: Բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ միանում են հայության պահանջին՝ անհրաժեշտ համարելով ցեղասպանության դեմ արգելքի միջազգային համաձայնագրի ստորագրումը և ՄԱԿ-ի հովանու ներքո Միջազգային դատական ատյանի ստեղծումը:

Վերոնշյալ պատվիրակությունը 1967 թվականի հունվարի 16-ին Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովին է ներկայացնում մի հուշագիր, որտեղ նշվում էր, որ XX դարի առաջին ցեղասպանության զոհը եղել է հայ ժողովուրդը, ինչի հետևանքով մեծաթիվ հայեր ապրում են աշխարհի տարբեր երկրներում: Աշխարհասփյուռ հայությունը ենթակա է ձուլման, ինչը ցեղասպան արարքի շարունակությունն է: Հուշագրի վերջում նշվում էր, որ հայ ժողովուրդը ենթահանձնաժողովից պահանջում է ավելի վճռական և արմատական քայլեր իրականացնել՝ համաձայնագրի ստորագրման և միջազգային ատյանի իրագործման համար:

⁴ Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 15 ապրիլի, 1965:

⁵ Հայ դատի աշխատանքներ եւ անոնց արձագանքը Թուրքիոյ մէջ, Պոստըն, 1967, էջ 2:

Հուշագրի օրինակներ են հանձնվում ենթահանձնաժողովի անդամ երկրների՝ Միացյալ Նահանգների, Լեհաստանի, Սուդանի, Իսրայելի, Քենիայի, Մեքսիկայի, Անգլիայի, Իտալիայի, Միացյալ Արաբական Էմիրությունների, Կանադայի, Հնդկաստանի, Ֆինլանդիայի, Չիլիի, Ավստրիայի, պատվիրակներին: Հուշագիրը հանձնելուց բացի, Հայ դատի հանձնախմբի նախաձեռնությամբ հունվարի 18-22-ը ցույցեր են իրականացվում Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակի առջև: Հայության պահանջը հետևյալն էր. «Պատժել ցեղասպանութեան հեղինակներին, վավերացնել համաձայնագիրը եւ ստեղծել դատական ատեանը, գոհացում տալ հայերի պահանջներին» և այլն⁶:

ՄԱԿ-ի ենթահանձնաժողովին Հուշագրի հանձնումը, ցույցերի անցկացումը և Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողի կառուցման վերաբերյալ Մոնթբերլյոյի (Կալիֆորնիա) հայության նախաձեռնությունը, բնական է, որ իրենց արձագանքը պետք է ստանային թուրքական մամուլում և պետական շրջանակներում: Թուրքական թերթերը նշում էին, որ այս գործողություններով հայկական լոբբին ատելություն է սերմանում կամ հայերը համաշխարհային մասշտաբով պայքար են սկսել Թուրքիայի դեմ և այլն⁷:

1967 թ. ապրիլին ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը, իր հերթին, Հուշագիր է ներկայացնում ՄԱԿ-ի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովին, հրատարակում բաց նամակ «Նյու Յորք Թայմս» թերթի ապրիլի 3-ի հերթական համարում և խաղաղ ցույց կազմակերպում Նյու Յորքում՝ պահանջելով արագացնել ցեղասպանությունը դատապարտող միջազգային համաձայնագրի ստորագրումը:

Նույն թվականին ՄԱԿ-ի Տնտեսական և ընկերային խորհուրդը՝ իր ենթակայությամբ գործող Մարդու իրավունքների հանձնաժողովից պահանջում է ցեղասպանության հիմնախնդրի հետ կապված իրականացնել նոր ուսումնասիրություններ՝ նշելով, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված կոնվենցիայի որոշ դրույթներ վերափոխելու կարիք ունեն:

Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ 1967 թ. հոկտեմբերի 10-ին գումարված նիստը քննարկում է ցեղասպանություն հանցագործությունը պատժելու և արգելելու հարցը, որոշում Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի անդամներից ընտրել այս հարցի շուրջ հատուկ զեկուցող, որը կներկայացնէր խնդիրը: ՄԱԿ-ի այս ենթահանձնաժողովի բոլոր անդամները փորձագետներ էին և չէին ներկայացնում իրենց երկրները, ուստի զեկուցը պետք է քննվեր Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից, որի անդամները փորձագետներ չէին և ներգրավված չէին ուսումնասիրության մեջ:

1971 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատում է Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի առաջարկը՝ իրականացնելու նոր ուսումնասիրություն ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի վերաբերյալ⁸: Որպես զեկուցող է ընտրվում Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուհաշիան-

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:

⁸ **Théo Van Boven**, Paragraph 30: Note on the Deleted Reference to the Massacre of the Armenians in the Study on the Question of the Prevention and the Punishment of the Crime of Genocide, // «A crime of silence: The Armenian Genocide (Permanent People's Tribunal)», London, 1985, p. 168.

կիկոն, որը 1972 թ. մայիսի 23-ին ներկայացրած նախնական տեղեկագրում չէր հիշատակում չէր տալիս 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունը: Դա այն դեպքում, երբ տեղեկագիրը կազմված էր 27 էջից և մի ամբողջ գլուխ վերաբերում էր Ցեղասպանություն երևույթին⁹:

Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի Հայկական համագումարը խստորեն քննադատում են այս թերի ուսումնասիրությունը և բողոքներ ներկայացնում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմին՝ հայ ժողովրդի զգացումները վիրավորելու հարցադրմամբ:

Հայկական լրբբհստական կազմակերպությունների և հայ համայնքի ջանքերի շնորհիվ, Ռուսնոյայի ներկայացուցչին հանձնարարվում է ներկայացնել նոր տեղեկագիր, որը վերջինս իրականացնում է 1973 թ. հունիսի 25-ին: Տեղեկագիրն ունի «Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին» խորագիրը: Դրա 30-րդ պարբերությունը վերաբերում էր Հայոց ցեղասպանությանը, վերնագրված էր որպես «XX դարի առաջին ցեղասպանություն» և ուներ հետևյալ ձևակերպումը. «Գալով ներկա ժամանակաշրջանին՝ մենք տեսնում ենք հայկական ջարդերի վերաբերել ամբողջական փաստերի մի թղթածրար, որոնք նկարագրվում են որպես XX դարի առաջին ցեղասպանություն»¹⁰:

1973 թ. սեպտեմբերի 19-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովը վավերացնում է այս նոր տեղեկագիրը:

1974 թ. մարտի 6-ին գեկույցը ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանի քննարկմանը, որտեղ Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը 30-րդ պարագրաֆը որակում է որպես «միֆ» և «պատմության աղավաղում»՝ առաջարկելով այն հանել գեկույցի վերջնական տարբերակից¹¹:

Քաղաքական նկատառումներից ելնելով՝ հանձնաժողովի անդամ մի շարք երկրների ներկայացուցիչներ պաշտպանում են Օլչայի առաջարկը և բանաձևը հետ է ուղարկվում խմբագրման:

ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակցին՝ Թուրքիային, պաշտպանող ամերիկյան այս դիրքորոշումը առաջացնում է ամերիկահայության բուռն դժգոհությունը: 1974 թ. հունիսի 5-ին Դաշնակցության ԱՄՆ-ի 81-րդ պատգամավորական ժողովի անունից 50 հոգուց կազմված պատվիրակությունը Վաշինգտոնում հանդիպում է ԱՄՆ-ի պետքարտուղարության ներկայացուցիչների հետ և բարձրացնում Հայոց ցեղասպանության հետ կապված հիմնահարցեր: Նրանք, մասնավորապես, բարձրացնում են այն հարցը, թե ինչպես է ստացվում, որ ցեղասպանությունների վերաբերյալ տեղեկագրից ջնջվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ 30-րդ պարբերությունը:

Ամերիկյան պաշտոնյաների պատասխանները խուսափողական և անորոշ էին: Նրանք պարզապես նշում էին, որ տվյալ պահին ամերիկյան շահերը չեն ներդաշնակում հայկական շահերի հետ և իրենք չեն ցանկանում խառնվել այլ երկրների ներքին գործերին:

⁹ Տե՛ս **Մարդեան Զ.**, ՄԱԿ-ի 30-րդ պարբերության ծննդոցը, //«Հայկազեան հայագիտական հանդես», հատ. ԺԱ, Պեյրուս, 1991, էջ 11-12:

¹⁰ Նույն տեղում, էջ 23:

¹¹ Տե՛ս The truth about the massacres and deportations of the Armenian population of the Ottoman Empire (1915-1922), edited by Tarkmanian H., Beirut, 1975, p. 18.

1975 թ. սեպտեմբերին ենթահանձնաժողովի 28-րդ նստաշրջանում կրկին քննարկվում է ցեղասպանություն հանցագործության և պատժի հարցը: Մի քանի ներկայացուցիչներ արտահայտում են այն տեսակետը, որ տեղեկագրում պատմական հատվածը պետք է պահպանվի՝ միաժամանակ նշելով, որ իրենք ՄԱԿ-ի անկախ փորձագետներ են, այլ ոչ թե տարբեր կառավարությունների ներկայացուցիչներ:

1978 թ. սեպտեմբերին իր 31-րդ նստաշրջանում ՄԱԿ-ի ենթահանձնաժողովը որոշում է տեղեկագրից ամբողջությամբ հանել Հայոց ցեղասպանության վերաբերյալ հիշատակող հատվածը:

1979 թ. մարտին նույն բանաձևը քննարկվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 35-րդ նստաշրջանում, որտեղ որոշվում է վերականգնել 30-րդ ենթակետը¹²:

1968 թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունում է «Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ գործած աճիրների անժամանցելիության» վերաբերյալ կոնվենցիան¹³: Ըստ դրա՝ պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները չունեն վաղեմության ժամկետ և անընդունելի է, որ ոճիր իրականացվի միջազգային հանրության անդամ ազգերից մեկի նկատմամբ և առավել անընդունելի, որ այն ուրացվի¹⁴:

1985 թ. օգոստոսի 5-30-ը Ժնևում կայացած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի 38-րդ նստաշրջանը, որին մասնակցում էին 26 երկրների ներկայացուցիչներ, քննարկման է դնում ցեղասպանության վերաբերյալ Բենջամին Վիթաքերի պատրաստած տեղեկագիրը: Բուռն քննարկումները և տեղեկագիրն ընդունել կամ մերժելը կապված էին Հայոց ցեղասպանությունն արտացոլող 9-րդ գլխի 24-րդ պարագրաֆի հետ¹⁵: Չնայած թուրքական կողմի գործադրած ջանքերին՝ օգոստոսի 29-ին ՄԱԿ-ի ենթահանձնաժողովի կողմից Վիթաքերի տեղեկագիրը ընդունվում է: Դրանում արձանագրվում է Հայոց ցեղասպանության փաստը և XX դարի սկզբին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրությունում իրականացված կոտորածները համարվում են ցեղասպանության օրինակ:

Դիվանագիտական և քարոզչական ճակատում տարած այս հաղթանակը արդյունք էր ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի երկարատև ու հարատև աշխատանքի: Նույն օրերին, հայագրի պրոֆեսոր Շավարշ Թորիկյանը ՄԱԿ-ում Թուրքիայի դեսպան Յավուզալփի հետ ունեցած գրույցի ժամանակ նշել է, որ 1974 թվականից ի վեր Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում քննարկվում է Հայոց ցեղասպանության փաստը արձանագրելու հարցը: Դրան խոչընդոտելու համար Թուրքիան գործի էր դրել իր ողջ պետական ու քարոզչական մեքենան: Ինչպես վկայում է Շավարշ Թորիկյանը, թուրքական այս հակազդեցությա-

¹² Տե՛ս **Բարսեղյան Լ.**, Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը, Եր., 1998, էջ 6:

¹³ Տե՛ս A crime of silence, The Armenian Genocide (Permanent People's Tribunal), p. 234, նաև՝ ՉՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 1, փաստաթուղթ 4:

¹⁴ Տե՛ս Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987), փաստաթղթեր, կազմ.՝ **Լ. Բարսեղյան**, Եր., 1999, էջ 42:

¹⁵ Տե՛ս «Հայ դատ» ամսագիր, Լոնդոն, 1985, սեպտեմբեր, էջ 1-2:

նը հաջորդել էր հայկական հակազդեցությունը, որ իրականացվել էր հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերով¹⁶:

Մասնավորապես արձանագրենք, որ ենթահանձնաժողովի նիստերին ներկա է եղել և ելույթով հանդես եկել նաև «Կալիֆորնիա-Կուրիեր» թերթի խմբագիր, ամերիկահայ հասարակական-քաղաքական գործիչ Հարութ Սասունյանը: Իր ելույթում Հ. Սասունյանը ամերիկահայության անունից գոհունակություն էր հայտնել, որ ընդունվում է հենց հատուկ զեկուցող Բենջամին Վիթաքերի պատրաստած զեկույցը, որի շնորհիվ պատմական փաստերը և արդարությունը վերջապես վեր են դասվում քաղաքական շահերից: Նա հակիրճ անդրադարձել է մինչ այդ ՄԱԿ-ի ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ իրականացված քննարկումներին և ընդունված որոշումներին, մատնանշել երիտթուրքական իշխանությունների կողմից գործադրված Հայոց ցեղասպանության փաստի անհերքելի լինելը: Եզրափակելով իր ելույթը՝ Հարութ Սասունյանը հայտարարել է. «Պատմական ճշմարտությունը երբեք հնարավոր չէ թաղել, անգամ շատ կառավարությունների վերաբերմունք է փոխվել և Միացեալ ազգերի կազմակերպությունում այժմ բացվում են նոր ուղիներ, որոնք միշտ կենդանի կպահեն ճշմարտությունն ու արդարությունը: Ես կցանկանայի եզրափակել իմ ելույթը պնդելով, որ ճշմարտությունը ցեղասպանութեան վերջին գոհն է: Եկեք պաշտպանենք այս թանկագին ճշմարտությունը գոնե՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կառույցներում»¹⁷:

1985 թ. օգոստոսի 30-ի երեկոյան ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի արևմտյան բաժանմունքը Լոս Անջելեսում կազմակերպում է մամուլի ասուլիս, որի ընթացքում լրագրողներին բաժանվում են թղթածրարներ, ինչպես նաև մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ Հայ դատի հանձնախումբը իր գոհունակությունն է հայտնում, որ ՄԱԿ-ը հայերի կոտորածները որակեց, որպես ցեղասպանություն և ապարդյուն անցան հայկական ցեղասպանության վերաբերյալ ենթակետը տեղեկագրից ջնջելու թուրքական կառավարության ջանքերը: Միաժամանակ, Հայ դատի հանձնախումբը հայտարարության մեջ հույս էր հայտնում, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը ևս կհաղթահարի ճշմարտությունը թաղելու թուրքական փորձերը¹⁸:

Այսպիսով, ԱՄՆ-ում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեության առանցքում էր գտնվում Միավորված ազգերի կազմակերպության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Այս նպատակին հասնելու համար նրանք բազմաթիվ հուշագրեր և աշխատասիրություններ են ներկայացնում՝ հիմնավորելով հայ ժողովրդի ցեղասպանության փաստը՝ ձգտելով հասնել մարդու իրավունքների և ժողովրդավարության խորհրդանիշ հանդիսացող միջազգային այդ կառույցի կողմից ցեղասպանության փաստի ճանաչմանը:

Քանալի բառեր-Ամերիկահայ լոբբիստական կազմակերպություններ, Միավորված ազգերի կազմակերպություն, Ամերիկայի Հայ դատի հանձնախումբ, 30-րդ պարբերություն, Հայոց ցեղասպանություն:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 2:

¹⁷ Նույն տեղում, էջ 3-4:

¹⁸ Տե՛ս «Հայ դատ», ամսագիր, 1985, նոյեմբեր, էջ 13:

Լիանա Մամյան, Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար տարվող պայքարը Միավորված Ազգերի Կազմակերպությունում (1965-1991 թթ.)–Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունները հսկայական աշխատանք են ծավալել նաև Միավորված Ազգերի կազմակերպությունում Հայոց ցեղասպանության ճանաչման համար: Դեռևս 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունել էր «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիան, որի հինգ կետերը հստակ բնորոշում էին «ցեղասպանություն» տերմինը: Հայոց ցեղասպանության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն համապատասխանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի բոլոր հինգ դրույթներին:

1965 թ.՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակին, ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը կազմակերպում և իրականացնում է մեծ թվով ցույցեր և նախաձեռնություններ՝ ձգտելով ՄԱԿ-ի ուշադրությունը հրավիրել Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի վրա: Այս համատեքստում ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների լուրջ ձեռքբերումներից է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնախմբի Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնախմբի կողմից 30-րդ պարբերության ընդունումը:

Лиана Мамян, Борьба Американско-Армянского лобби за признание Организацией Объединенных Наций Геноцида Армян (1965-1991 гг.)–Американо-армянские лоббистские организации осуществили огромную деятельность по признанию Организацией Объединенных Наций Геноцида Армян. Еще 9 декабря 1948 года Генеральная Ассамблея ООН приняла «Конвенцию о предупреждении и наказании за преступление Геноцида», которая определила 5 пунктов, характеризующих термин «Геноцид». Суть Геноцида Армян заключается в том, что он соответствует всем 5-и пунктам этой Конвенции.

В 1965 году, в год 50-летия Геноцида Армян, Армянский Национальный Комитет Америки организовал многочисленные демонстрации и инициативы, стремясь привлечь внимание ООН по признания ею Геноцида Армян. В этом контексте можно считать одним из серьезных достижений Американско-армянских лоббистских организаций–принятие 30-го Пункта подкомитетом «По предупреждению и защите меньшинств, а также дискриминации» Комиссии по правам человека ООН.

Liana Mamyan-The struggle of American-Armenian lobbying organizations for the recognition of Armenian Genocide in the United Nations Organization (1965-1991)–The American-Armenian lobbying organizations carried out great activity in the United Nations Organization to achieve the Armenian Genocide recognition.

UNO in December 9 of 1948 adopted the «Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide» yet, which clearly defines the five main points about the crime of Genocide. The Armenian Genocide is specific because it corresponds all the points of this Convention.

In 1965 in the 50-th anniversary of the Armenian Genocide, the Armenian National Committee of America organized several demonstrations and initiatives desiring to attract the attention of UNO and to reach to the recognition of the Genocide.

One of the main achievements of American-Armenian lobbying organizations was the adoption of the 30-th Paragraph by the Subcommittee of Minorities Protection and Discrimination Prevention of the Committee of Human Rights of UN.

**ՀԻՍՏ-ՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՆԻ ՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆԿԱՏՄԱՄԲ 1920-ԱԿԱՆ ԹԹ.**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բոլշևիկյան իշխանությունն իր մենատիրության հաստատման գործընթացում, բացի քաղաքական կուսակցություններից հալածանքի ենթարկեց նաև հասարակական մի շարք այլ կառույցների: Նրա հարվածների թիրախ դարձավ հատկապես Հայոց առաքելական եկեղեցին: Խորհրդային իշխանության առաջին հրովարտականերից մեկով եկեղեցին անջատվել էր պետությունից: Աթեիստական մոլեռանդությամբ առաջնորդվող բոլշևիկներն առանձնապես մտահոգված չէին թաքցնելու իրենց խիստ բացասական վերաբերմունքը կրոնի ու եկեղեցու նկատմամբ: Ճիշտ է՝ հռչակված էր խղճի ազատություն, սակայն պահպանելով արտաքին, ցուցադրական հանդուրժողականություն, իրականում իշխանություններն անում էին ամեն ինչ՝ եկեղեցուն և նրա սպասավորներին վարկաբեկելու համար:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 17-ին հրապարակվեց հրովարտակ «Հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով նշված հիմնարկություններն անցան Լուսժողկոմատի տնօրինության տակ¹: Նույն թվականի դեկտեմբերի 31-ին ՀԻՍՏ Լուսժողկոմատի հրամանով արգելվեցին կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը դպրոցներում, ավելին՝ երկու օր անց բռնագրավեցին Էջմիածնի վանքին պատկանող շենքերի և ունեցվածքի մի մասը, որոնց թվում՝ Ճեմարանի, Մ. Շոիփսիմեի, Ս. Գայանեի շենքերը և այլն²:

Եկեղեցու դեմ քարոզի լավագույն հարթակ էին օգտագործում «Խորհրդային Հայաստան» թերթը: Թերթը գրում էր, որ բոլշևիկները կրոնական և եկեղեցական հարցին մոտենում են պատմական մատերիալիզմի դրույթներից ելնելով, որոնց համաձայն կրոնը մեզ ավելի շատ քարացած վիճակի մեջ է պահել: «...Կգա մի ժամանակ, որ նա կանհետանա մարդկության միջից»³: Դեռևս հնուց, եկեղեցին եղել է բուրժուազիայի ամենաառաջին և ամենակայուն հենարանը: Նրա օգնությամբ ու սրբազորությամբ են կատարվել ազգամիջյան պատերազմները, ազգամիջյան կոտորածները⁴:

Բոլշևիկյան հալածանքները հասնում էին նաև եկեղեցու սպասավորներին: Եկեղեցական գույքի բռնագրավումները ուղեկցվում էին հոգևորականների նկատմամբ գործադրված բռնություններով ու ձերբակալություններով: 1921 թվականի մարտի 19-ին բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինը ՌԿ(բ)Կ-ի կենտկոմի քաղբյուրոյի անդամներին խիստ գաղտնի մի նամակ է ուղարկում, որում ասվում է «...Մենք պետք է հատկապես այժմ, անողորք ու վճռական մենամարտի ելնենք սևհարյուրակային հոգևորականության դեմ և ճնշենք նրա դիմադրությունը այնպիսի դաժանությամբ, որպեսզի նա մի քանի տասնամյակների ընթացքում չմոռանա այդ»⁵: Նույն փաստաթղթում Կենտգործկոմի անդամների առջև դրվում

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 22 դեկտեմբերի, N 352, 1922:

² Տե՛ս **Մանուկյան Ար.**, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., 2002, էջ 68:

³ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 5 հունվարի, N 5, 1923:

⁴ Տե՛ս նույն տեղում, 7 փետրվարի, N 36, 1923:

⁵ **Ստեփանյանց Ս.**, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1994., էջ 22:

է հետևյալ խնդիրը. «...որքան շատ մեզ հաջողվի գնդակահարել հետադիմական բուրժուազիայի և հետադիմական հոգևորականության ներկայացուցիչների, այնքան լավ: Հարկավոր է հատկապես այժմ դաս տալ այդ ժողովրդին, որպեսզի մի քանի տասնյակ տարիներ նրանք չհանդգնեն մտածել անգամ որևէ դիմադրության մասին»⁶:

Փաստորեն, Խորհրդային Միությունն ստեղծեց այնպիսի պայմաններ, որ հեշտությամբ կարող էր վերացվել Հայոց եկեղեցին: Այս քաղաքականությունը շարունակվեց մի քանի տասնամյակ՝ անընդհատ իրականացնելով ոտնձգություններ ու բռնություններ: Հայտնի է Լ. Բերիայի և Խ. Մուդրուսու գաղտնի զեկույցը Հայոց եկեղեցու պատմության, նրա դերի մասին: Այս զեկույցում Բերիայի կողմից առաջադրվում են միջոցներ, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ հայոց եկեղեցու դեկլարացնել կոմունիստների ձեռքը⁷:

1920-ական թվականների սկզբներին եկեղեցու հանդեպ Խորհրդային իշխանությունների վերաբերմունքը առավել ցայտուն էր դրսևորվում Ռուսաստանում, որտեղ ուղղափառ եկեղեցին գտնվում էր անտանելի ճնշման և հալածանքների տակ: Միայն 1922 թ. հունվարի 6-ին ՀամԿԳԿ-ի «Եկեղեցական արժեքների առգրավման մասին» դեկրետի հիման վրա, եկեղեցիներից վերցրվել էր 18 փթից ավել ոսկի, 24,7 հազար փութ արծաթ, 4 փութ մարգարիտ, 1 փթից ավելի ադամանդ և ուրիշ թանկարժեք քարեր: Իսկ 1923 թ. մայիսին համառուսաստանյան եկեղեցական ժողովում ստիպեցին Տիխոնին զրկել պատրիարքի աստիճանից, այնուհետև՝ ձերբակալեցին⁸:

Նշված տարիներին, բնականաբար, Հայաստանում ևս փակվում էին եկեղեցիները, կողոպտվում էր նրանց գույքը, իսկ շենքերը օգտագործում էին որպես կուսակցությանն անհրաժեշտ շենքեր: Օրինակ Ջալալ-Օղլի համաքաղաքային ընդհանուր ժողովում քաղաքացիների կողմից առաջարկություն եղավ Ջալալ-Օղլիի եկեղեցիներից մեկը հատկացնել պատկոմներին (պիոներներին) իբրև պատկոմական ակումբ⁹:

ՀԿ(բ)Կ Երկումի կազմ. բաժնի 1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. Հոկտեմբերի 31-ը աշխատանքային ծրագրերի քննարկման ժամանակ մեծ ուշադրություն էր դարձրվում կրոնական հարցին: Հատկապես ուշադրության կենտրոնում էր Հովհաննես քահանա Մելյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նոր եկեղեցի» շաբաթաթերթը: Ապա որոշում ընդունեցին պայքար սկսել շաբաթաթերթի դեմ ու կարողացան հասնել 1926 թվականին թերթի փակմանը¹⁰:

1925 թ. սկզբին նկատելի է նաև «պրիզունների» աղանդի աշխուժացում գյուղերում: Նրանք բնակչության մեջ քարոզում էին հակախորհրդային տրամադրություններ, մատնանշելով խորհրդային իշխանությունների հակակրոնական և հակաժողովրդական քաղաքականություն: Նույն երևույթի մասին են վկայում նաև 1925 թ. աշնանը «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակված տեղեկատվությունը, թե հոգևորականությունը գյուղում ունենալով որոշակի հեղինակություն՝ կեղծ լուրեր է տարածում խորհրդային իշխանության, նրա վա-

⁶ Նույն տեղում, էջ 22-23:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

⁸ Տե՛ս **Մանուկյան Ար.**, նշվ. աշխ., էջ 70:

⁹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7 ապրիլ, N 97, 1923:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 4, 61, թ. 68:

րած ներքին և արտաքին քաղաքականության մասին և պնդում, որ տնտեսական դժվարություններն անհաղթահարելի են և այլն¹¹:

Միայն 1923-1924 թթ. վարչական կարգով Հայաստանում փակվել էր 20, իսկ Վրաստանում 56 եկեղեցի: Նույն վիճակն էր Արցախում: Ստեղծված ծանր դրության առիթով 1925 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն դիմեց ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ա. Ռիկովին: Հայկական եկեղեցիները վերաբացելու խնդրանքի հետ մեկտեղ կաթողիկոսը բարձրացրել է նաև Էջմիածնի վանքի ու կաթողիկոսարանի իրավունքների ճանաչումը՝ որպես իրավաբանական անձերի: Էջմիածնի վանքը, գրել է Գևորգ Ե կաթողիկոսը, «հատուկ կրոնական-ազգային նշանակություն ունի և բացառիկ վարկ հավատացյալ հայ ժողովրդի շրջանում», ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում: «Մեր հայրենիքի շահերն են թելադրում Էջմիածնի վանքն ու կաթողիկոսարանը ճանաչել իրավաբանական անձեր»,- շարունակում է հիմնավորել իր դիմումը Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նամակի պատճենը ներկայացվել էր ԽՍՀՄ արտգործոժողկոմ Գ. Չիչերինին: Մոսկվայում դիմումը, ճիշտ է, ընթացք է ստացել (այն դրված է եղել ՀամԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1925 թ. նոյեմբերի 26-ի նիստի օրակարգում՝ «Հայկական եկեղեցու արտոնությունների մասին» ձևակերպումով), սակայն դրական լուծում չի տրվել: Պատճառաբանվել է, որ ԽՍՀՄ-ում որևէ եկեղեցի նման իրավունք չի ունեցել¹²:

Եկեղեցու ու նրա սպասավորների նկատմամբ բռնությունը դարձավ սովորական երևույթ: Վարչական կարգով եկեղեցիների փակումը կրեց զանգվածային բնույթ: Մի շարք թեմերում, ինչպես նշված է ՀՄԽԶ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին ուղղված Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի 1929 թ. մարտի 4-ի դիմումում՝ «շրջգործկոմները շրջում են գյուղերը և հրապարակով հրավիրելով տեղական քահանաներին և կրոնական համայնքների լիազորներին՝ պահանջում են հանձնել եկեղեցու բանալիները: Չհանձնելու դեպքում բանտարկում ու ձայնագուրկ են հրապարակում, իր բոլոր հարակից հետևանքներով և, ապա, բացելով կամ կոտրելով եկեղեցու դռները, գրավում»¹³:

Այն, որ կրոնական հարցերը մշտապես գտնվում էին հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում նկատելի է նաև 1926 թ. փետրվարի 1-ին ՀԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմատի գրությունից, որտեղ նշվում է, որ մի շարք գավառներում՝ Ն. Բայազետ, Դարալագյազ, Լենինական և այլն, լուրջ սխալներ են թույլ տրվել կրոնական համայնքների տոմարագրության հետ կապված աշխատանքներում, որի հետևանքով «որոշ վայրերում» չքավոր և միջակ գյուղացիները մեծ մասամբ ցուցակագրվել են համայնքների մեջ: Նշվում էր, որ տեղական իշխանությունների որոշմամբ պետք է փակել այն վանքերը և ուխտատեղիները, որոնք կրոնական համայնքների կողմից չեն օգտագործվում և գտնվում են հոգևորականների տրամադրության տակ՝ օգտագործվելով որպես եկամտի աղբյուր: Անխնա պայքարի կոչ է արվում այն կոմերիտականների ու կուսակցականների դեմ, ովքեր ցուցակագրվել էին կրոնական համայնքների մեջ: Մասնավորապես նշվում էր, թե նման դեպքեր եղել են Դարալագյազի գավառում:

¹¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 8 սեպտեմբերի, N 251, 1925:

¹² Տե՛ս **Ղազարխեցյան Վ.**, Քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ, Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հատոր IV, գիրք առաջին, Եր., 2010, էջ 448:

¹³ Նույն տեղում, էջ 449:

Փաստաթղթերում նաև առաջարկվում էր պատասխանատվության ենթարկել Շիրակի թեմի առաջնորդը՝ Արտակ եպիսկոպոս Սմբատյանին, Դիլիջանի գործակալ Գևորգ քահանա Տեր-Գևորգյանին և Նոր Բայազետի վարդապետին, որոնք ապօրինի կարգադրություններ են արել կրոնական համայնքներ կազմակերպելու մասին, ինչպես նաև այն բոլոր քահանաներին, որոնք շրջում են գյուղերում ու համայնքներ կազմակերպում, քանի որ նման գործունեությունը և այդ ուղղությամբ քարոզչությունն արգելված է: Այնուհետև հիշեցվում է, որ ինչպես Ռուսաստանում, Հայաստանում ևս, բոլոր հոգևորականներն ու հոգևոր մարմինները չպետք է համարվեն որպես կենտրոնական կազմակերպություն, որոնք գլխավորում են ու համախմբում բոլոր կրոնական համայնքները, հավատացյալների խմբերին կամ առանձին հավատացյալներին¹⁴:

Մարդկանց մեղադրում էին հավատքի համար, կազմակերպում էին դատեր, որոնց ժամանակ մարդիկ մեղադրվում էին նրանում, որ մատաղ են արել, հավատում են Աստծուն, սրբերին և խաչերի հրաշքներին: Արխիվային փաստաթղթերում կարելի է հանդիպել ծայրահեղության, երբեմն աբսուրդի հասցված դատերի: Օրինակ՝ Քարահունջ գյուղից 85 տարեկան Գրիգոր Բաբայանի դատավարությունը, որը մեղադրվում էր մատաղ անելու համար: Նրան ճանաչում են խիստ հանցավոր, սակայն, ի նկատի ունենալով, որ նա անգիտակցաբար է այդ ամենը արել, որոշում են պատժի փոխարեն նրան պարտավորեցնել անմիջապես գրագիտություն սովորել և հաճախել խրճիթ-ընթերցարան, որպեսզի գիտակցության գա: Մեղադրական են ներկայացնում նաև քահանային, որն ընդունել է մատաղը¹⁵:

Հայաստանում ևս փորձում էին օգտագործել ԽՍՀՄ-ում լայնորեն տարածվող անաստվածների շարժումը: Այն ձևականորեն լինելով հասարակական շարժում, իրականում պետական կազմակերպություն էր, որը ստեղծվել էր 1925 թ. «Բեզբոժնիկ» («Անաստված») թերթի ակտիվի շուրջը և կոչվում էր «Մարտնչող անաստվածների միություն»: Ինչպես տեղեկանում ենք, Հայաստանում այդ միության խորհրդի հաշվետվությունից, 1929 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1930 թ. հունվարի 1-ը հանրապետությունում գործող նրա 20 հազար անդամներին գումարվել է ևս 23 հազարը, հրապարակվել է բրոշյուր և այլն¹⁶:

1920-ական թվականներին Հայաստանում գործում էին մի քանի կրոնական ուղղություններ: Այնուամենայնիվ, հիմնականը մնում էր հայ առաքելական եկեղեցին և իշխանություն-կրոն հարաբերությունները առավել ցայտուն երևում էին հենց այդ եկեղեցու նկատմամբ վարվող քաղաքականության մեջ:

Պետությունը միջամտում էր եկեղեցու, Էջմիածնի կաթողիկոսության բոլոր գործերին, նրա տպագրական գործունեությանը, 1926 թ. առանձին որոշմամբ նույնիսկ արգելվեց եկեղեցու կողմից Հայոց եղեռնի՝ ապրիլի 24-ի օրվա նշումը: Արգելվել էր հոգևոր գործիչների պատրաստման օջախ համարվող ճեմարանի վերաբացումը: Թույլատրվել էր միայն հոգևոր դպրոցի գործունեությունը՝ ուսումնական ծրագրերից հանելով աշխարհիկ ու ընդհանուր հանրակրթական առարկաների դասավանդումը¹⁷:

¹⁴ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1, ց. 8, գ. 46, թ. 4:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 128, թ. 43-48:

¹⁶ Տե՛ս **Մանուկյան Ար.**, նշվ. աշխ., էջ 74:

¹⁷ Տե՛ս **Ղազարխեցյան Վ.**, նշվ. աշխ., Քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ, Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հատոր IV, գիրք առաջին, Եր., 2010, էջ 448:

Եկեղեցու հանդեպ վարած մերժողական քաղաքականության դրսևորում էր նաև 1926 թ. ՀԿԿ կենտկոմի նախագահության ընդունված «Հայաստանի պետական քաղաքական վարչության իրավունքների, վարչական արտաքսման, համակենտրոնացման ճամբարների մասին» որոշումը, որով սկիզբ առան հայ հոգևորականների արտաքսման ու ոչնչացման գործողությունները: 10-15 տարիների ընթացքում բազում հայ հոգևորականներ կա՛մ սպանվեցին, կա՛մ արտաքսվեցին Միբիր: Ե՛վ Երևանում, և՛ շրջաններում փակվեցին ու քանդվեցին մեծ թվով եկեղեցիներ¹⁸: Մայր Աթոռում միայն մի քանի ծեր հոգևորականներ էին մնացել, որոնց մահից հետո եկեղեցին ինքնըստինքյան կփակվեր:

Հայոց եկեղեցու դեմ պայքարում իշխանության մարմինները փորձեցին օգտագործել նաև այսպես կոչված «Ազատ եկեղեցական եղբայրությունը» կամ «Նոր եկեղեցին» (Նորոզականներ), որն, ըստ էության, աղանդավորական շարժում էր և առաջ էր եկել 1920-ական թթ. կեսերին՝ ասես հետևելով ռուսական եկեղեցու ներսում առաջացած նորոզական շարժմանը: Այն սպառնում էր պառակտել Հայ առաքելական եկեղեցին: Շարժումը հովանավորվում և խրախուսվում էր խորհրդային իշխանության կողմից: Շարժման կազմակերպիչներն էին Աշոտ Եպիսկոպոս Շիպյանը, Բենիկ վարդապետ Եղիազարյանը և Մեսրոպ քահանա Մելյանը: Ըստ այդ աղանդի՝ «եկեղեցիները պետք է ինքնուրույն լինեին, չենթարկվեին հոգևոր կենտրոնին, կրճատվելու էին ծիսական արարողությունները, իսկ կուսակրոնությունը՝ վերացվեր»¹⁹:

Պետությունը «Նոր եկեղեցուն» տրամադրել էր գենք (Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին), օգնում էր նրա հրատարակություններին («Ազատ եկեղեցի» ամսագիր, գրքեր և այլն): Իսկ ՀԿ(Բ)Կ կենտկոմի մամուլի բաժինը 1927թ. դեկտեմբերի 14-ին հատուկ քննարկել էր «Ազատ եկեղեցի» ամսագրի հարցը՝ լուծելու նրա տպագրության խնդիրը:

Բազմաթիվ վավերագրեր համակողմանի ներկայացնում են Բենիկ վարդապետ Եղիազարյանի ինչպես ընդհանուր գործունեությունը, այնպես էլ ծառայությունը՝ պետական պատվերով ընդդեմ Էջմիածնի: Այսպես, 1924 թ. Ալեքսանդրապոլում կուսգավկոմի կողմից կազմակերպվել էր Բենիկ վարդապետի դասախոսությունը և ընդունվել բանաձև, որը պահանջում էր համաժողովրդական դատաստան «հայ հոգևորականության և Էջմիածնի դավաճանների նկատմամբ»: Ըստ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի տվյալների (1925 թ.) Բենիկ վարդապետի համար սահմանված է եղել «պետական ամսավճար»²⁰:

1929 թ. հոկտեմբերի 2-ի նամակում, հասցեագրված լուսժողկոմ և ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասքանազ Մռավյանին, Բենիկ վարդապետը խնդրում էր ցույց տալ նյութական օգնություն, հիշեցնելով, որ օգնություն խորհրդային դեկավարների պահանջով դասախոսություններով ու զբոսայգիներով պայքարել է «հակահեղափոխական հոգևորականների դեմ», որ իր «զարկերի» շնորհիվ «ահագին ալեկոծություն առաջ եկավ ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում»²¹: Այսպիսով, Բենիկ վարդապետը պետության համար եղել է «հատուկ» մարդ, որի թոշակավորման օգտին արվել է «հատուկ կարգադրություն», իհարկե, հատուկ մարմինների կողմից:

¹⁸ Տե՛ս **Ստեփանյանց Ս.**, նշվ. աշխ., էջ 23:

¹⁹ Տե՛ս **Ղազարյանց Վ.**, նշվ. աշխ., էջ 449:

²⁰ Նույնի, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 341:

²¹ Նույն տեղում:

Բոլոր Գավկումների Ազիտ բաժինների կուսակցական աշխատանքների կարևորագույն խնդիրներից մեկը համարվում էր, հակակրոնական ագիտացիայի, մամուլի հետ կապի ամրապնդումը: Վերջինս պետք է կարողանար հասարակության մեջ հավատ մտցնել բոլշևիկյան կուսակցության հանդեպ: Ազիտ բաժնի գլխավոր խնդիրներից մեկը համարվում էր կրոնական ծիսակատարությունների վերացումը: Հյուդական խրճիթ ընթերցարանները լինելու էին այն միակ միջոցը, որոնք պետք է ծառայեին, մոռացնել տալու եկեղեցի հաճախելը²²:

Այսպիսով, բոլշևիկյան իշխանությունն իր մենատիրության հաստատման գործընթացում, ասպարեզից հանեց այն բոլոր կազմակերպություններին, որոնք իրենց մեջ կարող էին կրել ժողովրդավարության տարրեր: Այդ թվում նաև ուշադրության կենտրոնում էին գտնվում մամուլը, թատրոնն ու կինոն:

Բանալի բառեր-Եկեղեցի, սպասավորներ, ՀԿ(Բ)Կ, Ամենայն Հայոց կաթողիկոս, պայքար, կուսակցական աշխատանք, «Խորհրդային Հայաստան» թերթ, կրոնական համայնքներ:

Հովհաննես Հարությունյան, ՀԽՍՀ-ում քաղաքականությունը կրոնի ու եկեղեցու նկատմամբ 1920-ական թթ.-Բոլշևիկյան իշխանությունն իր մենատիրության հաստատման գործընթացում, բացի քաղաքական կուսակցություններից հալածանքի ենթարկեց նաև հասարակական մի շարք այլ կառույցների: Նրա հարվածների թիրախ դարձավ հատկապես Հայոց առաքելական եկեղեցին: Ստեղծվել էր մի այնպիսի իրադրություն, երբ, ի տարբերություն քաղաքական հակառակորդների, որոնց համեմատաբար հեշտությամբ էին հաղթում, իշխանությունները ստիպված էին մրցակցել մի գաղափարախոսության հետ, որը խոր արմատներ ուներ ժողովրդի մեջ, և, որը, անգամ կտրուկ միջոցներով, չէին կարող արմատախիլ անել: Այսպիսով, սկսվում է մի երկարատև պայքար եկեղեցու դեմ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանում, այնուհետև խորհրդային կարգեր հաստատած մյուս հանրապետություններում:

Оганнес Арутюнян, Политика над религией и церковью в АССР в 1920-х года-Большевистская партия, после монополизации политической структуры, начала политические преследования не только над другими политическими партиями, но и над многими общественными организациями. Особенно пострадала Армянская апостольская церковь. Была создана такая ситуация, когда методы борьбы применяемые над политическими противниками не проходили, потому что в этом случае идеология армянской церкви тянулась на многие века.

Таким образом, в России, а затем и в других советских республиках, после Октябрьской революции начинается долгая борьба против Церкви.

Hovhannes Harutyunyan, Politics on the religion and the church in the ASSR in 1920's-After the monopolization of the political structure, the Bolshevik Party began political persecution not only over other political parties, but also over many public organizations. Especially suffered The Armenian Apostolic Church. A situation was

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 126, թ. 49:

created where the methods of struggle that were caught on political opponents did not pass, because in this case the ideology of the Armenian church lasted for many centuries.

Thus, in Russia, and then in other Soviet republics, after the October Revolution, a long struggle begins against the Church.

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔՆԵՐԸ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ
ՉԱՓԱԾՈՅԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ՔԻԼԱՐՁՅԱԼ

Գրողի ստեղծագործական լաբորատորիան երկերի ստեղծագործության պատմությունն է, որ ցույց է տալիս, թե յուրաքանչյուր ձեռագիր, մեքենագիր և տպագիր աղբյուր իր ստեղծման, վերամշակման կամ խմբագրումների ընթացքում ստեղծագործական ինչպիսի ճանապարհ է անցել: Լաբորատորիան «վարպետության դպրոց է, որն անցել է հեղինակը և ուր պիտի «հաճախեն» ու սովորեն երիտասարդ գրողները»¹:

Հեղինակը, դեկավարվելով գեղագիտական, գաղափարական, փիլիսոփայական հայացքներով, գրական երկի մեջ է մարմնավորում իր մտահղացումները երկի կառուցվածքային հնարանքների, առանձին հատվածների, բառերի կրճատման ու հավելման, ինչպես նաև լեզվական միջոցների ընտրության ու լեզվաոճական փոփոխությունների միջոցով: Մշակման ընթացքը բազմաթիվ դժվարություններ է առաջացնում: Անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել գրողի ներաշխարհի փոփոխությունները, կռահել երկի վերամշակման պատճառները, տարբերակել կարևոր հատվածները՝ նկատի ունենալով նրանց կապող օղակները. դրանք հնարավորություն են տալիս վերամշակումներ կատարել²:

Ուսումնասիրողի առաջ մի ամբողջ աշխարհ են բացում ձեռագրի վրա հեղինակի կատարած ջնջումները, վերականգնումները, տարբեր բնույթի փոփոխությունները, որոնք գիտական ընդհանրացման կարիք ունեն: Գեղարվեստական պատկերները բյուրեղացնելու համար հեղինակը պետք է լեզվամիջոցների ընտրություն կատարի³: Զուգահեռաբար քննության առարկա է դառնում երկի գեղարվեստական համակարգը այնքանով, որքանով առնչվում է լեզվաոճական կառուցվածքին՝ որպես շարադրանքի ընդհանուր բաղադրատարր⁴:

«Գրողի ստեղծագործական աշխատանոցի ուսումնասիրությունը օգնում է բացահայտելու գրողի գեղարվեստական մտածողության յուրահատկությունները, ճշգրտելու այս կամ այն երկի ստեղծագործական պատմությունը: Բացահայտվում են աշխարհընկալման նոր որակներ ու սկզբունքներ, հաստատվում և ամրապնդվում են գրողի նկարագրին բնորոշ գույներ ու նրբերանգներ»⁵: Ուսումնասիրության օբյեկտը ուղղակի տեքստն է (կամ երկու տեքստերն են, որոնք լրացնում են մեկը մյուսին) կամ սևագիրն է, որը ժամանակի ընթացքում հնարավոր է ենթարկված լինի որոշ փոփոխությունների: Անհրաժեշտ է գտնել նախնա-

¹ Մելքոնյան Ս., Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Եր., 1986թ., էջ 56:

² Տե՛ս Ժ. Ս. Լիչաչև. Текстология (главы из книги). Задачи текстологии, СПб., 2001г., с.40.

³ Տե՛ս Զավեն Ավետիսյան, Տեքստաբանություն, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2008թ., էջ 148-149:

⁴ Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ, Եր. 2012թ., էջ 3-4:

⁵ Նույն տեղում, էջ 4:

կան տեքստը, որի վրա հիմնված է հեղինակի տվյալ ստեղծագործությունը⁶: Ուսումնասիրության ընթացքում պետք է հետևել հեղինակի քայլերին՝ հաջորդաբար ներկայացնելով բոլոր տարբերակները: Այդպիսով պարզ են դառնում սխալների բոլոր հետևանքները⁷:

Թեքեյանի՝ Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող ստեղծագործությունների ձեռագրերում հեղինակային բազմաթիվ ուղղումների, լեզվական, ոճական, արտահայտչական բազմաթիվ փոփոխությունների, նաև տպագրված ժողովածուների համակողմանի քննությունից հետո միայն պարզ է դառնում նրա ոճը, գեղարվեստական մտածելակերպը:

Նրա մի շարք ձեռագրեր անընթեռնելի են. ձեռագիրն անհասկանալի է, չեն հասկացվում գրած-ջնջածները, և շատ դեպքերում անհնար է վերականգնել որոշ բառերի նախատարբերակները: Այդպիսիք առկա են հատկապես փոքրիկ ծոցատետրերում, որոնց խունացած, հնամաշ էջերի բանաստեղծություններից կարողացել ենք քննության առնել հատուկենտ բառեր կամ առանձին տողեր միայն: Իհարկե, մեծ թիվ են կազմում նաև այնպիսիները, որտեղ բանաստեղծը խնամքով գրված կամ հենց իր մեքենագրած ստեղծագործությունը քիչ փոփոխության է ենթարկել. մատիտով զգուշությամբ ուղղել է այս կամ այն բառը: Իզուր չէ, որ Թեքեյանի բանաստեղծությունը նմանեցվել է «խնամված պարտեզի»⁸: «Ձևը Թեքեյանին հատորին մեջ շատ խնամված է, երբեմն նույնիսկ չափազանց նրբամու...»⁹:

Նա նույնիսկ հսկել է իր երկերի տպագրությունը. «Թեքեյանը մասնաւորապէս 1901-ին Փարիզ քիչ մը երկար կը մնայ, հսկելու համար իր անդրանիկ հատորին՝ «Հոգերուն» տպագրութեան»¹⁰: Նաև «աննման սրբագրիչ մըն էր ան»¹¹, որ մշակման է ենթարկել իր գրվածքները, կատարելագործել, խմբագրել, սրբագրել է, մեքենագրելուց հետո նորից փոփոխել, ուղղել, հղկել է ամեն մի տող, ամեն մի բառ: «Իր ծայրահեղ բժախնդրութեամբ ծանօթ Թեքեյանը հաւանաբար վերահրատարակել է առաջ պիտի վերամշակէր կամ հպումներու ենթարկէր իր ստեղծագործութիւնները, ինչպէս վարուած էր «Հայերգութիւն» անունին տակ խըմբած բանաստեղծություններուն մէկ մասին հետ»¹²:

Շատ քիչ փոփոխություններ են կատարվել Թեքեյանի մահից հետո հրատարակված գրքերում: Դրանց մեծ մասը ուղղագրության հետ է կապված: Հատկապես Հայաստանում տպագրվածների մեջ խմբագիրները փորձել են արևելահայերեն ուղղագրությամբ հրատարակել, իսկ որոշ դեպքերում թարգմանել են արևմտահայերեն բառերը, երբեմն վրիպակով ներկայացրել, օրինակ՝ *անյուշ* = «անհուշ, կանդեղ» *կանթեղ*, *ծուլութիւն*¹³ ⇒ *թուլություն*¹⁴:

Այդպիսի դեպքեր հանդիպում են նաև իր սրբագրություններում՝

⁶ Տե՛ս **С. М. Бонди**, Черновики Пушкина, статьи 1930-1970 гг, изд. 2-е., М., 1978., с., 157.

⁷ Տե՛ս **С. М. Бонди**, О чтении рукописей Пушкина, Изв. АН СССР, ООИ, 1937, №2-3 с. 585.

⁸ Տե՛ս **Լևոն Սամարյան**, Վահան Թեքեյան. կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1971, էջ 205:

⁹ **Արշակ Չոպանյան**, Երկեր, Երևան, 1988թ., էջ 638:

¹⁰ **Արշակ Ալպոյաճեան**, Վահան Թեքեյան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր, Պէյրուք, 1988թ., էջ 68:

¹¹ Շիրակ ամսագիր, Պէյրուք, 1957թ., թիվ 1-2, էջ 22:

¹² Մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ Վահան Թեքեյանէն, (հավաքեց և ծանոթագրեց դոկտ. Վ. Ղազարյան), Պէյրուք, 1987թ, էջ 14:

¹³ **Վահան Թեքեյան**, Ամբողջական երկեր, հատոր 3, Ե. 1957թ., էջ 102:

¹⁴ **Վահան Թեքեյան**, Բանաստեղծություններ, Եր., Էդիթ պրինթ, 2014թ., էջ 14:

1. Միրեցինք քեզ նախ՝ տրոշակի՝ մը պէս = «Միրեցինք քեզ նախ՝ դրոշակի՝ մը պէս

2. Միրեցինք ըզքեզ, վրիժառու տանակ = «Միրեցինք ըզքեզ, վրիժառու դանակ (ՎԹ, Թիվ 2, էջ 1)¹⁵:

Թեքեյանի ստեղծագործական մշակումներում առկա ոճական բնույթի բազմաբովանդակ փոփոխությունները բացահայտում են բանաստեղծի ստեղծագործությանը, հուզաշխարհին բնորոշ իրողությունները: Ոճական փոփոխությունները համակարգելը, կարծում ենք, դժվար է, քանի որ երբեմն նույն բանաստեղծության մեջ, նույնիսկ նույն տողում կարող են հանդիպել տարբեր բնույթի փոփոխություններ, այսպես՝ «Կարծես հոգի մը կուլայ» բանաստեղծությունը մշակման երկար ճանապարհ է անցել, յուրաքանչյուր տողում բանաստեղծը ինչ-որ բան փոխել, շտկել, կրճատել է՝

Խոշոր հոգի մը կուլայ = «Կարծես հոգի մը կուլայ

Ու կը խնդայ նոյն հետայն = «Եւ կը խաղայ նոյն հետայն

Թաւջութակին փորին վրայ = «Թաւջութակին կուրծքին վրայ:

Ձայն կը ճանկէ շոյելով = «Եւ ճանկէլով կ'օրրէ գայն» = «Ձայն կը ճանկէ շոյելով» =

Ձայն կը ճանկէ խաղալով // «Կը լացընէ եւ լացին» = «Կը լացընէ ու լացին

Կրայ կը փըչէ շունչ մը գով = «Գալարումին անոր քով

Ու կը խաղայ միասին հեշտագին = «Բնքն ալ կուլայ վշտագին ...¹⁶ (ՎԹ, լր. 34, էջ 23)

Առաջին տողում հեղինակը հրաժարվել է *հոգի* բառի *խոշոր* որոշիչից և ռիթմը չխախտելու համար *կարծես* վերաբերականն է ընտրել, որն ավելի բանաստեղծական է դարձնում խոսքը: *Կը խնդայ* բայը փոխարինել է փոխաբերական իմաստ ունեցող *կը խաղայ* բայով, իսկ *փորին* բառի՝ *կուրծքին* բառով փոխարինումով ավելի հաջող ու նրբաճաշակ փոխաբերություն է ստացվել: Թեքեյանը փնտրտութեան մեջ է եղել երրորդ տողի հետ կապված. նախ փոխել է մտքի ընթացքը, հետո նորից վերադարձել առաջին տարբերակին, չորրորդ քայլում էլ փոխել է դերբայական դարձվածի դերբայը՝ *շոյելով* = «խաղալով»: Իր ոճին, մտքի ընթացքին բնորոշ ամենահետաքրքիր փոփոխությունը վերջին տողում է: Երբեմն հուսաբեկ վիճակին փոխարինելու է գալիս գայրույթը, որը բանաստեղծի «*սահար-կու ցավից*» է ծնվել: Երբեմն էլ հակառակը, հեշտագին խաղերին փոխարինում է վշտագին լացը, որ «*թաւջութակին կուրծքին վրայ*» խաղում է, լացում ու լացել տալիս: Այս տխրությունը հատուկ է Թեքեյանի հոգուն, նրա բանաստեղծության անբաժան մասնիկն է, ուղեկցում է նույնիսկ ուրախությանը: Այս առիթով ժամանակակիցներից մեկն իր հուշերում գրել է. «Այս պահուս աչքերիս առաջ ունիմ Թեքեյանի դեմքը գրասեղանի մը վրա հակած. վշտի արձանացումն է ան»¹⁷:

Մեր ժողովրդի հիշողության նվիրական անկյուններում հայ պատմիչների գրքերից ու հինավուրց ավանդություններից պահպանված չմոռացվող գրույցներ կան, որոնք նրա ազգային բնավորությունը ճանաչելու, անկոտրում ոգին հասկանալու, հավերժության խորհուրդը իմաստավորելու բացառիկ աղբյուրներ են: Մի դեպքում դա Արտավազդ թագավորի՝ հայրենի տան բուռն ու աննահանջ տենչանքն է, Կլեոպատրայի առաջ չխոնարհվելն ու և նրա կանացի հմայքներին անտարբեր ուժեղ ու հպարտ այրը, /«Ու ~տայր ինձ զծուխ ծխանի»/, մյուս դեպքում հայոց Անդովկ իշխանի դուստր Փառանձեմի ու Գնելի սիրո պատմությունը /«Ասք սիրո և սրի»/, մի այլ դեպքում Շապուհ արքայի գերված կանանցի վերաբերյալ գրույցը /«Ճերմակ ձիավորը»/, ապա Զվարթնոցի մասին պատմող ավանդությունը /«Զվարթնոց»/ և ուրիշ այլ գրույցներ ու պատումներ: Տարբեր ժամանակահատվածներ են ընդգրկում այս հոգեցունց երկերը, ու ամեն դար իր գույներն ունի, իր բնորոշ գծերն ու իր հերոսների հոգեբանությունը՝ արտահայտված միայն իրեն բնորոշ լեզվամտածողությամբ:

Ճոխ ու գունագեղ, հարուստ ու ճկուն է Վ. Դավթյանի ասքապատումների լեզուն, որ խոսում է և՛ բանաստեղծի բնատուր տաղանդի, և՛ այն խորունկ ներշնչանքի մասին, որ ներարկել են նրան մեր ժողովրդի պատմության ու նշանավոր պատմական անհատների մասին հետաքրքիր, հարուստ ու դրամատիկ դրվագներով լի հրաշալի վիպերգերը, որոնցում թարմորեն իմաստավորված ու արդարացված է գեղարվեստական հնարքներից հյուսված քերականական յուրաքանչյուր կառույց, պատկերավորման-արտահայտչական յուրաքանչյուր միջոց:

Մոզական մի կախարդանքով Վ. Դավթյանը ընթերցողին կտրում է ներկայից ու 4-րդ դարն է տանում՝ 1600 տարվա հնություն ունեցող դեպքերն ու կերպարները դարձնելով թարմ ու հոգեհարազատ...

¹ Էսսեն գրական բոլոր ժանրերի մեջ ամենաճկունն է, որ կառուցվում է իրականության մատուցած որևէ նյութի «յուժեռով», հանգամանքներով՝ դառնալով ներշնչանքի աղբյուր: Այն հեղինակին հնավորություն է տալիս նյութի շուրջ արտահայտվելու ազատ, սեփական տեսակետով, առանց կաշկանդումների, անմիջական իր խոսքով: Բարը ծագել է ֆրանսերենից /Essais/, որ նշանակում է փորձեր:

Ողբերգականորեն հետաքրքիր իրական-պատմական դրամատիկ մի իրադարձության գեղարվեստական արտապատկերումն է «**ԱՍՔ ՄԻՐՈՆ ԵՎ ՄՐԻ**»

ասքապատումը, որը թրթռում է սիրո խորունկ ու ցավոտ զգացումներով ...

Հայոց ամենագեղաշուք, հպարտ և ուժեղ թագուհին էր Փառանձեմը, որի անունը արդեն քանի՞ դար հռչակվում ու հնչում է գրական տարբեր ժանրերի էջերից, գեղանկարչական կտավներից, օպերայի և թատրոնի բեմերից... Վ. Դավթյանի նման սիրառատ քնարերգուն չէր կարող չարձագանքել Փառանձեմի կերպարին, Գնելի հանդեպ տաժած նրա սրածված մեծ սիրուն, Արշակի ու Փառանձեմի ամուսնությանը... Ու ստեղծվել է դրամատիկ մի ասք, գեղարվեստական մի հրաշալի ներբող՝ ներկայացված այնքան իրական գույներով, այնքան կենդանի, ասես տողերի միջից բարձրանում է հայոց հպարտ ու չքնաղ թագուհին՝ իր շլացնող գեղեցկությամբ, տեսնում ես նրանով դյուրված Գնելին՝ սիրուց վառվող աչքերով, լսում ես Արշակի զայրալից հրամանը, Ներսես կաթողիկոսի նախատինքը՝ ուղղված Արշակին, Փառանձեմի սուզը Գնելի վրա...

Լսվում է փանդիռով երգող գուսանի գովքը՝ այս անգամ հյուսված Արշակի, Փառանձեմի ու Գնելի մասին, զողթան երգ, որ հիշեցնում է «Արտաշես և Արտավազդ» վիպերգի բանահյուսական չափածո նշխարներից մեկը.

-Նախ քեզ ասեմ, ասեմ Արշա՛կ, հայո՛ց արքա...

Սյրդ կաղնեբազուկ ու մեծագործ,

Եվ ապա քեզ ասեմ, հայոց տիկի՛ն,

Փառանձեմդ չքնաղ ու գեղաչյա,

Եվ ապա քեզ ողբամ **պատանյակդ** Գնել,

Խարտիշագեղ, անձնյա և սիրառատ.../ԱՄՍ-34/

Գեղեցիկ էր Սյունյաց Անդովկ իշխանի դուստր Փառանձեմը, ու նրա հմայքը գերում էր շատերին.

...Եվ **շուրթերից նրա** լեցուն ու տաք

Կաթկթում էր լույս մի ծիրանագույն,

Եվ **դեղձենու ծաղիկ էր կաթկթում**: / 34/

Իսկ մեջքը նման էր մարմարյա սափորի վզին. նա չէր քայլում, սիգում էր սեզ ու սիգալով շուրջը սեր էր սփռում.

Եվ պարմանիք **հազար ու բյուր հազար,**

Պայազատներ հազար ու բյուր հազար,

Օ՛, կտային **արևն իրենց կանաչ՝**

Արձակելու նրա մեջքի գոտին.../35/

Նրան սիրելով սիրում ու տենչալով տենչում էր Գնելը՝ արծվաչյա, սուսեհասակ, զորեղ մի պատանյակ, որի արտաքինն ու սիրո ուժը պատկերում է բանաստեղծը: Իհարկե, պատմությունը նման մանրամասներ չի հաղորդում, հեղինակի երևակայությունը տրամաբանական է. Փառանձեմը կուրորեն չէր սիրում նրան...

Փառանձեմն էլ նրան սիրեց, ու Գնել պատանյակին ընծա բերեց, Ճկուն ու **ճոճ** մեջքի կանաչ գոտին...

Սիրեց Փառանձեմը Գնել պատանյակին, **սիրե՛ց, սիրե՛ց, սիրե՛ց...** /սիրե՛ց բառը կրկնվում է յոթ անգամ/... ու հարսանիք եղավ ...

Ու յոթ օր, յոթ գիշեր հարսանիք եղավ, ու ոսկի էր տեղում տեղատարափ, մարգարիտ էր տեղում որպես անձրև, որ Արտաշեսի ու Մաթենիկի պսակադրու-

թյան հայտնի պատկերն է՝ վերաթարմացված ձևով. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայությանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնությունն Սաթինկանն»²:

Նենգության օձը, սակայն, ծվարեց Արշակ թագավորի եղբորորդու՝ Տիրիթի սև սրտի մեջ, ու արքայի ականջին թույնի կաթիլներ ներարկեց... իբր այդ պատանյակին սիրում են **նախարարներն ու սեպուհները**, ժողովուրդը, և ամենքն ուզում են, որ իրենց վրա նա՛ թագավորի, ոչ թե Արշակ արքան: Զայրությունից դողաց Արշակը և թավամազ բռունցքը զարկեց գահին, ու երեքաց գահը ոսկեդրվագ, ու նրա ծանրաթաթ քայլերից

Լուռ տնքացին գորգերն արյունացով

Եվ հուր մորթիները հովազների...

Գնելին պետք էր վերացնել, ու հնչում է արյունոտ հրամանը արքայի...

Ավա՛ղ, սուր է առնվում սիրո դեմ, ու սերը մեռնում է... Անտառում ծվարած մութի ծոցից հանկարծ հայտնվում է **սրերով, նիզակներով, վաղրերով ու ասպարներով զինված** մի գունդ, գլորում ձիուց Գնելին ու տանում...

...Ճչաց Փառանձեմը ցավից, ու **նիզակի նման ճիչը սուրաց հեռու**, Խրվեց **արշալույսի տաք կրծքի մեջ**, Ու **արյունեց սիրտը արշալույսի**... Իսկ հանդիպակաց քամին քանդել էր Փառանձեմի ծանր հյուսը, որ օդում ծածանվում էր **սև բոցի պես** ...

Մնում է քարանալ այս **բառե քանդակապատկերի, բառե դիմանկարի, բառակերտ կտավի առջև...**

Գնելի թաղման արարողության նկարագրությանը իր ավանդական-ծիսական բառաշերտով հիշեցնում է հեթանոս արարողակարգերի ոճը.

...Հայոց հողի ճարտար **եղերամայրք**, Եվ **ձայնարկու** կանայք ամեն կողմից

հերարձակ ողբում են Գնել պատանյակին...

Գնելի դիակի վրա Փառանձեմի ողբը ունի ժողովրդական ողբի տարրերը, որոնք արտահայտվում էին ճարտասանական հորդորներով, բացականչական ու ըղձական նախադասություններով, գրաբարահունչ բառերով. սա նկարեն սգերգ է, բառեղեն ռեքվիեմ...

Տապարով են զարկել պարանոցին քո սեգ,

Այս ինչքա՛ն է խորունկ վերքդ, Գնե՛լ,

Ա՛խ , թող գնան մարդիկ, **հարալեզներ** բերեն,

Որ դու զարթնես քնից, Գնե՛լ:

Որսի էիր եկել, դե, ե՛լ, ժամն է որսի,

Բայց դու քնել, **եղու՛կ**, խորն ես քնել.../44/

Խորունկ դրամատիզմով են հագեցած Գնելի թաղման տեսարանը, խաբված Արշակի արցունքները, Տիրիթի նենգության հայտնաբերումը, ապա արքայի բուռն հիացումը ողբացող Փառանձեմով, որ չքնաղ էր անգամ վշտի մեջ. նրանից լույս էր ճառագում, և այդ լույսը նա առել էր արեգակից, և այդ լույսը նորեն նետել էր արեգակին, ու այդ լույսից առավել պայծառացել էր նավասարդյան առավոտը, ու այդ լույսից առավել քան արքայի արյունն էր ընդվզել... Բացառի՛կ պատկերավոր նկարագրություն՝ ակադձուն բուռն սքանչացումով... **Բառերը, թվում է, չես կարող պոկել հյուսվածքից, այնքան ամբողջական ու կուռ է ընթացքը / Ն. Թամրազյան/:**

Իսկ Փառանձեմ **անզույգ** գեղեցկուհուն

² Արտ. Պապոյան, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Ե., 1976, էջ 190:

Արշակը կին առավ:
Բայց չսիրեց սակայն չքնաղ Փառանձեմը Արշակ թագավորին,
Այլ **աստեց,աստեց,աստեց,**

Աստեց Փառանձեմը Արշակ թագավորին...

Պոեմն ավարտվում է հարցով, որը պատասխան ունեք.

Եվ ի՞նչ ... Սերը մեռավ, աստվածները թողին իրենց գահերն ամպածրար ու փակվեցին իրենց անձավներում, իսկ աստվածներից թափուր հայոց հողին

Արհավիրքներ իջան այնուհետև...

Ասքի գաղափարական բովանդակությունը, որ արտահայտվում ու բխում էր բնաբանից, կրկին շեշտվում է պոեմի վերջին հատվածում.

Հիմա լարեմ **փանդիոս** ու ոգելով **ասեմ,**

Ասեմ կրկին ու բյուր անգամ **ասեմ.**

Օ՛, սուր չառնեք մարդիկ, ընդդեմ սիրո...

Եվ բնության,

Մարդու բնության դեմ,

Օ, սուր չառնեք, մարդիկ, օ՛ սուր չառնեք ...

«ՃԵՐՄԱԿ ՁԻՎՈՐԸ» ասքը կարդալիս կրկին տեղափոխվում ես հայ ժողովրդի պատմության ողբերգական ու դաժան ժամանակները: Մյուսժեի առումով այստեղ ևս նորություն չկա, բայց հեղինակը քեզ կախարդած տանում է իր հետևից, դարձնում դեպքերի ականատես ու մասնակից, համոզիչ ու պատկերավոր ներկայացնում-ցուցադրում թշնամի Շապուհի արարքները, վերականգնում պատմական հիշողությունդ, որ թվում է՝ ամեն ինչ նոր է, անծանոթ, բայց...ախր... ոչինչ նորություն չէ, պարզապես հետաքրքիր, թարմ ու նորովի են հյուսվում դրվագները...

Պատկերավորման բազում միջոցներ, գեղարվեստական մի միաձույլ ամբողջություն կազմած, բանաստեղծի խոսքը դարձնում են մերթ **սև բոթ**. Շապուհն է գալիս, մերթ **ահասարատ** մի **պատկեր**՝ մոթթագերծ արված Վասակ ու Անհուշ բերդի գնդանում հեծող Արշակ, **մերթ սրբազան մի երկիր**՝ հրի ու սրի ճարակ դարձած, **մերթ Շապուհի կողմից կատարված հրեշավոր արարքների նկարագիր**. Նա ժողովեց երկրի մանուկներին ու նետեց իր հարբած փղերի ահեղ կճղակների տակ...Նա ժողովեց երկրի այրերին ըմբոստ և ցցերի հանեց...Նա ժողովեց երկրի կին ու կույսերին ու իր գորքին տվեց իբրև վայելում, ապա նա արշավեց Արտագերս ու պաշարեց Փառանձեմին...որ մի ամբողջ գիշեր իր սուր մագիլներով փորձում էր փորել ականախորշերը Շապուհ արքայի, սակայն

Շապուհը մոլուցքի մեջ իր ահագնացող պատառտեց, ծվատեց, ձևեց

Մետաքսը նրա հագի ու տիրացավ նրան

Ու երբ լիացավ, այդպես բաց ու մերկ

Իր գորքին նետեց իբրև վայելում...

Փառանձեմին լլկելու սարսոեցնող դրվագը հայտնի է պատմությունից, բայց Վ.Դավթյանի նկարագիրը ցնցում է իր չթաքցրած իրապատկերներով, որը հետո հայ զինվորները պիտի հիշեցնեին Մուշեղին՝ նրան հետ կանգնեցնելու Շապուհի կանանոցը վերադարձնելու զարմանահարույց մտքից...

Շետո ... Ազգի ազատատենչ ոգին անկոտրում է, հայրենիքի հանդեպ սերը՝ լեռնացող, բռնության հանդեպ աստելությունը՝ անափ, վրեժի զգացումը հախտուն...

Այժմ ահա հայոց մրրիկ քաջերը հալածում են Շապուհի բանակը, ու արնաթաթախ գորքերի միջով մրրիկի պես արշավում դեպի վրանը արքայի...

Իսկ արքան թռչում է ձիու թամբին ու փախչում՝ թողած ծիրանին, դրոշներն ամեն և կանանո՞ցը... կանանո՞ցը...

Վ. Դավթյանի ասքերում անթաքույց է հիացմունքը կնոջ մարմնական գեղեցության հանդեպ. բանաստեղծը ասես չի գրում, այլ հնչեցնում է երգեհոնային մեղեդիներ, որոնց ելևէջները դողանջում են բանաստեղծական տողերում՝ որպես գույնի, հնչյունի և բառի ներդաշնակություն՝ օծված կանանոցի գեղուհիների հմայքով... Չմոռանանք նաև հիասքանչ Կլեոպատրային ... Եվ որքան ավելի դյուրիչ են այս կանայք, այնքան նրանց հմայքի հանդեպ անտարբեր, ամուր ու աննահանջ են Արտավազդն ու Մուշեղը ...

Ասքում չկա մի տող ու հատված, որը չնմանվի գեղանկարչական կտավի՝ արժանի տաղանդավոր նկարչի վրձնին...

Ահա Շապուռի կանանոցի կանայք՝ մեկը մյուսից չքնաղ, մեկը մյուսից կախարդող, նազանի, արշալույսների նման լուսավայլ, աչքերում մեղկություն ու կիրք, արևային ցուլանք.

Եվ բոլորը՝ բա՞ց,
Եվ բոլորը՝ տա՞ք,
Բոլորը՝ գարուն։/70/

Կանանոցի նկարագրության ողջ ընթացքը կանացի շլացուցիչ գեղեցկության արտացոլանք է, արբեցում նրանց առեղծվածային թովչանքով...

Վ. Դավթյանը ասես կանացի դիմանկարների մի պատկերասրահ է բացում, որի պատերից ոսկեհուռ շրջանակների միջից լույս ու թովչանք են սփռում հոգեզմայլ գեղեցկությամբ կանայք...

Ահա տիկնանց տիկինը՝

**Ցուլ աղամանդը,
Հակինթը գահի...
Աչքերն անդունդ են՝ աստղերով լիքը,
Իսկ սև հոնքերը ուր որ է ահա
Թնին պիտի տան,
Սլանան պիտի...**

Ահա և Շապուռի սիրեցյալ կնոջ՝ սկյութուհու նկարագիրը.

**Ոսկե վարսերի հեղեղը թել-թել
Արշալույսի պես ուսերին նետել,
Արշալույսի պես գալիս է կանգնում
Արշալույսի դեմ:**

Հիասքանչ է և **եթովպուհին**, որի շուրթերում և թուխ մաշկի տակ արևներ կան գույգ, որ քայլք է անում թուխ նծույզի պես, ու ելևէջում են զիստերը գորեղ...

Վրացուհին այնքան նրբին է, թվում է՝ հիմա կփշրվի ու լույս ու ցող կդառնա, **քուշանուհին** անապատների կրակն ու տոթն է, **հելլենուհին** ասես տավիղ լինի... Կանանցից յուրաքանչյուրի համար Դավթյանը ընտրել է համապատասխան գունային հնչաբառեր՝ քաղցրանուն մեր լեզվի նրբերանգներով ստեղծելով վերածննդի վարպետներին արժանի դիմանկարներ...

Եվ բնական է կրակ կտրած զինվորների խենթացումը չքնաղագեղ այդ կանանցով.

**Հայոց գորքերի երակների մեջ
Զարթնել է արուն,
Խելագարվում է մի ծարավ արյուն,**

Եվ սպասում են սպարապետի խոսք – հրամանին...

Քայց հուսախաբ են լինում զինվորները հայոց, հնչում է հրամանը՝ բոլոր կանանց Շապուհի հետքով Տիգրոսի հասցնել...

– Մակայն վրեժը Փառանձեմ տիկնոջ... – խուլ մոլորում է ավագանին:

Վրեժի ու հատուցման ոչ մի մոնչոց չի փոխում հրամանը...

Սպարապետը բարբառում է.

– Ո՛չ...

Շապուհի դեմ եմ ես պատերազմում

Եվ ոչ իր կանանց...

Եվ կրկին անգամ որոտում է.

– Ո՛չ.../ՃՁ-71/

Այսպես նաև Արան չզնաց Շամիրամի դեմ՝ ասելով՝ **նա կին է...**

Քերթող մի իմաստուն այր իր վանքի մուփ խցում գրում է, որ այդ լսելով՝ ձգվում են անգույն շրթունքները արյաց արքայի, ու նա հրամայում է, որ իր ոսկեձուլլ գինու գավաթին նկարեն պատկերը սպարապետի, նկարեն ճերմակ նմույզի վրա...

...**Ու դրանից հետո սակավիկ**

Շատացավ բարին աշխարհի վրա... որպես պատասխան՝ հայ ազգին պատճառած անլուր ողբերգության և հայի քրիստոնեական մարդասիրության, վեհանձնության ու մեծահոգության...

Հայերի ազգային հատկանիշների՝ քրիստոնյային վայել անհիշաչարության, ասպետական կեցվածքի ու այրական վեհանձնության մասին պատմող այս գրույցը աշխարհին է հայտնի... Բանաստեղծի նպատակը հայ ժողովրդի հոգևոր հարստությունների բացահայտումն է եղել, որը շատ դիպուկ ու պատկերավոր է գնահատել անվանի բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանը. «Վ. Դավթյանը մեր լայնածավալ պատմության մի ահագին հատված արվեստի «գենք ու գրահով» ետ է նվաճում անցյալից, լցնում կյանքով ու կենդանությամբ և, վերամիավորելով մեր ներկային, ընդարձակում է մեր հոգու կենսատարածությունը և դրանով իսկ առավել գորացնում է այն ու նորացնում»/Հայրենիքի ձայն շաբաթաթերթ, սեպտեմբեր, 1970թ./

«Զվարթնոց» ասքի բնաբանը հայոց վեհաշուք տաճարի՝ արարման օրհնությունն է, բազմադարյան հայ ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոցի գյուտի օրհնությունը, որ ավեր վիճակում անգամ զարմանք ու հիացում է առաջացնում... Ասքը սկսվում է Մասիս ասքի պատկերով, որը դառնում է ճարտարապետ Հովնանի արարչագործության ներշնչարանը... Մի քանի վրձնահարվածներ, և ծնվում են բնանկարներ, սիրո նրբին ապրումներ, լուսե երազանքներ, ու այդ ֆոնի վրա դարձյալ օտարի չար շունչ, բռնություն, կարոտի անմարզացում, ավերված ու փլատակ դարձած ծրագրեր... Եվ ամենը գեղաքանդակ Զվարթնոցին արժանի գունաբառերով, քերականական անգուգական կառույցներով, մեր բարեհունչ լեզվի հնարավոր դրսևորումներով, որոնցով Վ. Դավթյանը բառե զվարթնոցներ է ճարտարել, բառե արծիվներ է քանդակել նրա որմերն ի վեր, բառե անուշահամ պտուղ ու ողկույզ է դրել նրա սյուներն ու կամարներն ի վեր, հավատի բառե խաչ է դրել նրա գմբեթին...

Հեղինակի ասքերից յուրաքանչյուրը լեզվական արվեստի մի շքեղ կոթող է՝ պատկերավոր, արտահայտիչ, հարուստ ու բազմառձ, իսկ նրանցում գործածված միջոցները՝ բանաստեղծական հզոր արարչագործություն...

Ճարտարապետ Հովնանի որոնումի տանջանքներն ավարտվում են, երբ հասկանում է, որ Մասիսն էլ վսեմ մի տաճար է, ու նրա ձևերի մեջ են պահված իր արարման երազներն ու տենչերը...

Ու Արարատյան դաշտում քար է դրվում քարի վրա, ու սյուներ են դրվում քարին, ու սայլերը ճոնչալով սեպով կտրած ժայռեր են բերում, սկիզբ են առնում արարչության սարսուռն ու արարչության աղոթքը, տոնը, զարթոնքի ծեսը, կառուցման ընթացքը, շարժումը, շինարարության թափը, դժվարությունը, ներշնչանքը...

Ամառ է, շեկ ամառ, որ ճարտարապետ Հովնանի սիրուց ավելի է ջերմանում. նա սպասում է, թե երբ ոլորանի վրա

Նագով ճոճվի պիտի մի բարալիկ իրան,

Պաղ ջրի կուժն ուսին:/76/

Եվ ամառային արևոտ օրը լցվում է կրակված սիրո թրթիռներով, մոտալուտ երջանկության երազանքներով.

-**Հոգեկ**, ա՛խ, օրը գա, տաճարն ավարտ առնի,

Ու հարսանիք անեմ, քեզ տանեմ տուն...

...Ու Հովնանի ձեռքը տաք փարվում ու աղջկա մեջքն է վառում: /77 /

Այս ի՞նչ լեզվակերտվածք ունի ասքը...

Անձնավորված է ողջ բնությունը. այգիները հագել են **հրակարմիր ձորձեր**, դեղձին **դեմքը պարզել** է լուսաբացի հովին և ուզում է **այրվող շիկնությունը** մարել, տանձենին իր **գանգրահեր գլուխն** է թաթախել **որդան կարմիրի** մեջ, իսկ աշնանային օրվա **կապույտ մաքրության** մեջ **Զվարթնոցն** է կանգնել վերապալաց՝ իբրև մի **սրբատաշ, բյուրեղ Մասիս, որպես ոգու մաքուր կրակ**, ոգու մաքուր **մրրիկ ու ներշնչում**, **Զվարթնոցը՝ որպես քարե արարչություն, ըմբոստություն քարե, որպես քարե մի պատարագ...**

Հայոց պատարա՞գը... քրիստոնյա աշխարհում միլիոնավոր հավատացյալների ու աստվածապաշտների մեջ ո՞վ է պատարագն այսպես բանաստեղծացրել, դարձրել **բառե սիմֆոնիա, բնապատկեր, մարդկային անբացատրելի հույզ ու զգացում...**

...Հայոց պատարա՞գը... Այն թախիծ է ու թավիշ, սոսափյուն է սոսյաց, մխանք է հոգու, անձրև է տաք, և անձրևից հետո ծավալումն է լույսի, թավալումն է շողի, խորհուրդն է ոգու, աղերս է բարձրության, այն լույսի սաստկացում է, ճառագայթման փառք, մրրկող ոգու ալեկոծված կապույտ է, ստուգված ու մաքուր գանգի գնգոց...

Օծումն է **Զվարթնոց** տաճարի, բայց աստված գիտի, թե գոռոզ հոռոմն ինչու՞ է շնորհ արել ներկա լինելու օծման ծեսին... Կոստանդիանոս կայսրը, որի դեմքը մարմար է պաղ, հանկարծ տաճարին ի տես՝ նրա հանգած աչքերում բռնկում է, շողում մի թաքուն կայծ և հանգչում իսկույն. հանճարամիտ Հովնանը իր վարպետներով հանդերձ պիտի իսկույն ճամփա ընկնի դեպի իր սուրբ քաղաքը...

Քանզի հանճարը յուր Բյուզանդիոնում պիտի առավել շողա...

Հլու բռնակալի կամքին՝ դեպի Բյուզանդիոն է ճանապարհվում Հովնանը: Հեռվում են մնում իր հողը, իր ջուրը, հեռվում է մնում և **նա՝** իր **հոգեկը**, որ դրոշմված էր այրող հիշողության մեջ.

Վարդավառ էր ...Ու **նա** վարսերը թաց,

Թաց զգեստը կրծքին ու կոնքերին կպած,

Հանկարծ ելավ իր դեմ...

Հեռվում մնաց և իր Մասիսը՝ նա՝ հող ու քար, նա՝ ժայռ ու ձյուն, սակայն հայրաց հայացքի դեմ՝ հրեղեն կատար ու հրե սյուն, նա, որ իրեն սվեց իր **պարզ վեհությունը**, հայրց **ոգու** հրաշքի պես հառնող **անմեկնելի խորհուրդը...Նա, որ Ջվարթնոց դարձավ...**

Չյուն ու ցեխոտ ճամփով գնում էր Հովնանը՝ հեռվում թողած իր ներշնչարան սարը, իր **հոգեկին** ու փլատակ երազները... Գառնո ձորի այն տաք քարածայրը, որի վրա մտքով սյուն ու խոյակի ձևերն էր դրել նոր տաճարի...

Դարեր հետո քո կերտած Ջվարթնոց տաճարը պիտի ավերվեր, Հովնա՛ն, բայց պիտի հառնեին նորերը՝ Գառնին, Գեղարդը, Էջմիածինը, Գրիգոր Լուսավորիչը, մյուսները... ու բոլորի համար որպես ներշնչարան՝ հավերժական Մասիսը ...

Բանալի բառեր-առք, պատմական անցյալ, ազգային բնավորություն, սիրո ներբող, ասպետական մեծահոգություն, ճերմակ ձիավոր, արարչագործություն, վեհաշուք տաճար:

Աիդա Սարհադյան, Վ.Դավթյանի առքերի ոգու և լեզվի գեղագիտությունը- Էսսեն նվիրված է Վահագն Դավթյանի “Օուխ ծխանի” ժողովածուում ամփոփված առքերին, որոնց հիմնական թեման պատմական անցյալն է, իրական-առասպելական մի շարք դրվագներ, որոնք հեղինակը դարձրել է հայրց ազգային բնավորության ու հատկանիշների, մարդկային հույզերի անկրկնելի գեղարվեստական խտացումներ, որոնք, պարուրված պատմականության շղարշով, միաժամանակ ներառում են մեր ճոխ ու ճկուն լեզվի բոլոր արտահայտչամիջոցները՝ ասելիքը դարձնելով բացառիկության աստիճան բարձրարվեստ, հագեցած խոր դրամատիզմով: Կերպարները բնութագրված են նուրբ քնարականությամբ, իրենց բնորոշ հոգեբանությամբ ու լեզվամտածողությամբ:

Aida Sarhatyan, The Aesthetics of Spirit and Language of V. Davtyan’s Tales (essay)-The following essay concerns tales included in Vahagn Davtyan’s “Tsukh Tskhani” (“Smoke of Home”) collection. The main theme of tales is the historical past, a number of real-legendary episodes which the author has made unique fictional condensations of human emotions and Armenian national character and qualities wrapped with the veil of history. At the same time they include expressive-emotional means of our rich and flexible language making the message highly and exclusively artistic equipped with deep drama. The characters are presented with gentle lyricism, psychology and linguistic mentality typical to them.

ՓՈՔՐ ՄԱՐԴՈՒ ԴՐԱՄԱՆ ԵՐՈՒԽԱՆԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

ՀԱՄՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ նովելագրության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Երուխանը: Նրա նախընտրած գրական հերոսները աշխատավոր, հասարակ մարդիկ են, որոնց հետ հեղինակը կապված է բյուրավոր թելերով և խորապես գիտի նրանց կյանքը, կենցաղը, զբաղմունքը:

Երուխանը համոզված էր, որ մարդու ամենավեհ գծերը բնորոշ են անխարդախ ու անշպար ամբոխին, որը հեղինակի համար «հևացող գիրք մ'է», որի էջերը կարդում է «անճառ հափշտակությամբ»՝ նրա մեջ տեսնելով բարոյական բարձր արժանիքներ ունեցող հերոսներ:

Այս տեսակետից հատկանշական է հատկապես նրա «Պապուկը» նովելը: Նովելը տպագրվեց «Արևելք»-ի 1891թ. մայիսի 29-ի համարում և մեծ ճանաչում բերեց երիտասարդ գրողին: Այս նովելով Երուխանն ի լուր աշխարհի հայտարարեց հատակի մարդկանց խոհերի ու ակնկալությունների համոզված երգիչ դառնալու իր պատրաստակամության մասին:

«Պապուկի» հերոսները աշխարհից արհամարված, նույնիսկ անուն չունեցող մարդիկ են: Նովելում հեղինակը նկատում է մեծ կյանքից մի փոքր կտոր, փոքր, աննշան մարդու մեջ: Երբեմն թվում է, թե հեղինակը տուրք է տալիս նատուրալիզմին, բայց ճշմարտացի լինելու համար պետք է նշել, որ Երուխանը չի խտացնում գույները, այլ պայծառեցնում է դրանք, դրանով իսկ կյանքը մոտեցնելով գեղարվեստին: Երուխանը ոչ միայն չէր խուսափում տգեղի դրսևորման նկարագրություններից, այլև խեղանդամության, նողկալիության որոշ արտահայտություններ առանձին ստեղծագործությունների նյութ դարձնելով դրանց կարևոր նշանակություն էր տալիս:

Խեղանդամված, նողկանք առաջացնող պատկերների ենք հանդիպում «Պապուկը» նովելում. «Ոտվրներն առանց գուլպայի, կանցնեին ծանր, լայն ու երկար ոտնամաններու մեջ, որք ծվիկ-ծվիկ եղած շրջագգեստին տակեն ամեն մեկ քայլափոխի հաջորդաբար կերևային, և որոնց վրա սևեռված էին հարածամ իր կլոր, հյուծված և անփայլ աչվրները՝ քալած ատեն: ...Քուրջերու մեջ պլլված փաթթված ողորմ զանգված մըն էր, գթություն և արգահատություն հրավիրող, որուն տեսքը այնքան կազդե վրադ, որ գիշերն երազիդ մեջ երբ տեսնես զայն՝ արհավարհալից ընդոստում մը կունենաս»¹:

Եկեղեցու խավար անկյունում միշտ մուրացող այդ էակից ոչ-ոք ստեղեկություն չունեք. «Ի՞նչ էր անունը, ոչ ոք գիտեր, «պապուկ» կհորջորջեին զայն (371): Բոլորի կողմից մոռացված, մերժված էակ էր նա: Միայն մեկը, որ նույնպես ընկղմված էր կյանքի հատակը, ամեն առավոտ, սովորական աղոթքներ մրմնջալուց հետո 10 դուրուշ էր դնում պապուկի ափի մեջ: Մի անբացատրելի հոգևոր կապ էր առաջացել սովորի և ստացողի միջև: Առանց անուններ տալու և գնահատականի Երուխանը ստեղծում է ողբերգական պատմությունը. «Կերևեր նա փողոցին ծայրեն, կուզը տնկած, խոտորնակ նայվածքը մեկ կետի վրա հառած և ծանր

¹ Երուխան, Երկեր, Ե., 1981, էջ 370: Այսուհետև նշված աշխատության հղումները կտրվեն փակագծում:

նունամաններով, սալարկին վրա անախորժ ժխոր մը ձեռքը ծոցը կխոթեր, և աշխուժով ներս մտնելով՝ կնոտենար մուրացիկին ու տասնոց մը կղներ անոր դողդողացող ձեռքին մեջ: Մրտաշարժ Բան էր տեսնել այդ երկու խղճուկ ու թառամած էակներու միմյանց հանդիպումեն առաջ եկած վայրկենական ոգևորությունն ու վաղանցիկ տագնապը. ի՞նչ ունեին, միթե կզգայի՞ն, միթե՞ հրապուրված էին իրարմե, միթե կսիրեին զիրար, սեր այդ տարիքին մեջ, ուր արյունը սառած, զգացումները չքացած, խանդ ու ավյուն հավետ կորած են, և սակայն ուրիշ ի՞նչ մեկնություն տալ վատացած կյանքի այդ անակնկալ հուրքին, այդ երիտասարդական բորբոքմանը» (372):

Չմոռան մի գիշեր ժամկոչը պատի մի անկյունում գտնում է պապուկի սառած դին: Թաղումը սովորականից կարճ է տևում, առանց ծիսակատարությունների, առանց մի կաթիլ արցունքի: «Տերտերն աղոթք մը լիբոտեց ու ժամկոչներն ալ ուսերուն վրա նետելով ճաղն, ուր նետած էին մարմինը, գերեզմանատուն վազցուցին» (373):

Կյանքը, որ ներկայացնում էր Երուխանը, չէր կարող երջանիկ վերջաբան ունենալ: Կյանքի շրջափուլից դուրս մնացած մարդը զրկվում է կյանքի հետ իրեն կապող միակ օղակից: Անցնում են օրեր: Թշվառ մարդը կրկին հաճախում է եկեղեցի: Մի օր հեղինակը հետևում է նրան և տեսնում, որ սմբած ծերունին գաղտագողի ակնարկ մը նետելով չորս բոլորը, ծնրադրեց, գլուխը երկնցուց և սկսեց տենդանքով պատը լզվոտել» (374):

Մեզ համար դժվար է հասկանալ, թե ինչ է թաքնված այս զգացմունքի մեջ, սեր, անցյալ մեղքերի վերհուշ, թե մեկ այլ երևույթ: Երուխանը միշտ մտածելու տեղիք է տալիս ընթերցողին:

Խեղանդամված տիպեր, նողկանք առաջացնող պատկերներ կան Երուխանի այլ նովելներում ևս («Ձանգակահարը», «Համրին վրեժը», «Կուզը», «Օդորություն մը»):

Գեղարվեստական դրսևորումները ինքնանպատակ չեն, թեև չի կարելի պնդել, որ ամեն դեպքում դառնում են սոցիալական չարիքի հստակ ու աներկբայելի մերկացումները: Այլանդակ իրականությունն իր կեղտոտ ու մութ անկյուններով ու խեղանդամված մարդկանցով չէր կարող չգրավել Երուխանի նման արվեստագետի ուշադրությունը: Մակայն իրականության մերկացումը երբեմն սպառվում էր արտաքին այլանդակության պատկերումով. «Բերանը բաց է, ցուցնելով ապուշե ծիծաղ մը լայնացած կաշեգույն շրթներուն մեջ լրդճուկ ակոռները, տեղտեղ կոտրտած, ու այդ նեխտ խռոչին մեջ միշտ կունտուկլոր կեցած է մսի, կարմիր կտոր մը՝ տզրուկի լպիրծ մորթին վետվետումներովը, թանձրացած լորձունքի ճերմակությամբ մը ծեփված, և որ մերթ, չկարծած աստեղ, դուրս կպոռթկա մինչև թուշը, գոր կլզե, կանցնի կդառնա, նորեն շուրջը, միջոցը կլզվոտե, Բան մը փնտրելու պես, գոր չի գտնար, ու կամաց մը կաքի, կմտնի իր խռոչին մեջ, քիչ ետքը նորեն դուրս երկննալու ու շարժումները կրկնելու համար: Կապիճներեն դուրս վիժած սաստիկ խաժ աչքերը ցավոտ արցունքով միշտ ճպոռտած, ամենեն տխուր ու գարշելի տպավորությունը կթողուն տեսնողին վրա, իրենց անասնական արտահայտությամբը սևեռուն են անոնք» (460):

Այսպիսին է համրի դիմանկարը, որին ավելացվում է նրա, դարձյալ տհաճություն պատճառող զբաղմունքը՝ ոչխարի աղիքների առևտուրը, քաղցից մլավող կատուները և վերջում կատվի ճզմված մարմինը. «Վազրի ոստումով, ցատկեց բռնեց աղջկան կատուին ծոծրակեն, սեղմեց անոր կակուղ վիզը իր ջղուտ մատներուն մեջ աչքերը թավալելով մոլեգնությամբ, լեզուն դուրս ցցած՝ օձի

լեզվի պես, խեղդեց կենդանին, որուն խաժ աչվները դուրս ցատկեցին կապիճներեն. հետո մոտեցավ դիմացի պատին, զարկավ, ջարդեց անոր բրդոտ գանգը, արյունը, ըղեղով խառը, դուրս պոռթկաց ու զարկավ, զարկավ անոր, խանչյուններ, կառաչներ արձակելով, մոլեգնելով այդ ափ մը միսին վրա, որ ա՛լ անճանանչ կույտ մը եղած էր արյունաշաղախ, խածավ, փրցուց անոր կակղիկ մանր թաթերը, ծամեց, դուրս նետեց, արյուն թքավ, ու երբ ա՛լ բան չմնաց խեղճ անասունը, ճզմեց, աճռեց, արյունոտ խմոր մը ձևացուց, և վայրագ ծիծաղով մը դարձավ խանութեն ներս նետեց գայն, հետո անձռնի քրքիջով մը անցավ, ճամփան շարունակեց» (465):

Այլանդակության նման դրսևորումներից ընթերցողն ինքն է եզրակացություն անում հասարակական կյանքի այլանդակության մասին, իսկ հեղինակը տալիս է միայն երևույթի արտաքին կողմի նկարագրությունը, չխորանալով, չվերլուծելով երևույթի արմատները, սոցիալական պայմանավորվածությունը:

Երուխանը իր նովելներում պատկերում է ահավոր թշվառության այդ աշխարհը: Նկարագրում աշխատավոր մարդու խեղճությունը, աղքատությունը և դրան ուղեկցող հիվանդությունները, մահը, քայքայումն ու փտումը: Նրա նկարագրած խրճիթները, ուր ապրում էին ձկնորսները, իրենց անհյուրնկալ, խարխուլ ու փվված վիճակով հիշեցնում են Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի նույնանման տնակներին. «Ծովին եզերքին քիչ մը ասդին կգտնվեր տնակներու դետուդեն կքած, ծոմոված շարքը, որուն մեջ կբնակեին ձկնորսի ընտանիքներ» (409): «Տունը, որուն դուռը կգարներ նավավար Պետիկը ցած, շատ ցած տուն մըն էր, այնքան ցածր, որ պիտի կարծվեր, կաթվածահար մարդու մը պես, որ կտապալի հանկարծ անշշուկ, անշունչ մխացող կանթեղ մը տարտամ, դողող լույս մը կտարածեր ցած ցողունին վրա, որուն սև մզլոտ հեծակները սարդի ոստայններով ծածկված էին, փլփլկած պատին վրա, որ անձրևին ջուրը առվակներ կազմած էին» (474-475):

Այս տնակներում տեղի է ունենում մարդկային մի ամբողջ ողբերգություն: Խրճիթներից մեկի մեջ վաղաժամ մեռնում է նավավար Պետիկի աղջիկը՝ թոքախտավոր Աննան: Ալիքսանը սիրած աղջկա մոտ բժիշկ հրավիրելու համար, հարկադրված, դիմում է գողության, ձերբակալվում է և ինքնասպանությամբ վերջ տալիս կյանքին:

Նման պայմանների մեջ մեռնում է Փիրուզը: Սիրած տղան՝ ձկնորս Թումիկը, որ շրջապատում քաջի համբավ էր ձեռք բերել, ազնիվ ու աշխատասեր տղա, դեղ գնելու համար նույնպես դիմում է գողության, բանտ նստում և հետո խելագարվում է՝ ներկա գտնվելով իր սիրելի Փիրուզի հուղարկավորությանը և վերջին անգամ ջուր կաթեցնելով սիրած աղջկա պապակ շուրթերին: «Անիկա անկե ետքը մեռելներուն ջուր կրող եղավ. Թումիկ աղբար կըսեին իրեն, ապուշցավ: Ամեն օր նշանածին գերեզմանին վրա սափոր մը ջուր կթափեր. «ծարավդ անցնի, անուշս»,-ըսելով» (527):

Երուխանը իր մի շարք նովելներում պատկերում է աշխատավոր մարդկանց մաքուր ու անբիծ սերը: Սոցիալական անապահով վիճակի մեջ տառապող նրա հերոսներին սերը երջանկություն չի բերում («Ծովափին աղջիկը», «Լվացարարուհին», «Թաշկինակը», «Պատիկ Մեփին պատմությունը»):

Երուխանի հերոսների մոտ պարզ ու հզոր, մաքուր ու բարձր, անմիջական ու հավատարիմ է սիրո ապրումը: Սիրածի անսպասելի կորուստը նրանք ընդունում են ինչպես տարերային աղետ, մահը գերադասելով մենությունից, քանզի

սերը նրանց միակ հարստությունն է, գոյության միակ ճշմարտությունը: «...Վարդուհին կար...հրեշտակի պես ախճիկ մը ...Ան ինծի կսիրեր ...ես անիկա խենթի պես կսիրեի ...իրար պիտի առնեինք ...Ասված չուզեց ...Վարդուհին հիվանդացավ ...Չապալանմիշ եղա ...օսկի խարճեցի ...հեքիմներ թափեցի ...պո՛շ...պա՛ն մը չկրցան ընել ...մեռա՛վ Վարդուկս, մեռա՛վ ճիյերիս քեռչեն ...ամա սիրոս քաշեց փրցուց, հետը տարավ Ես ալ պիտի մեռնեի ամա, ասված չուզեց ...ես ապրեցա, քի՛ էլեր Վարդուկիս սերը ծառքեն կնաց նե, հիչ տեյիլ իսե անոր ձգած տերտը դեսեյի մը ընեմ ինծի, անով չարչարվիմ ...անով սատկիմ» (419):

Հաճի Մանուելը դյուցազնական կերպար է: Մինչև խոր ծերություն սիրո և հավատարմության անշեղ հուրը սրտում, վշտահար ծերունին մնում է մարդկության բարեկամ ու բարերար՝ հաշտված լինելով իր ներսը կրծող սուսկալի ցավին: Ճակատագրի ողջ դառնությունը, վշտի ողջ ուժը խտացնում է մի տողի մեջ «...ալ վով կար աշխարհին մեջ ինծի համար»:

Երուխանը նահատակվեց 45 տարին չբոլորած: Նա մեծ հնարավորությունների տեր արվեստագետ էր՝ օժտված սուր դիտողականությամբ: Որքան էլ ծանրակշիռ է նրա թողած գրականությունը, այնուամենայնիվ, կասկած չկա, որ նրա նյութը դեռևս սպառված չէր ու նա կշարունակեր իր արգասաբեր աշխատանքը, եթե «մարդակեր գազան մարդը»՝ թուրքը, չլիեր նրա կյանքը՝ մի ողջ ժողովրդի գրկելով նման մեծ ստեղծագործողից:

Բանալի բառեր-Երուխան, Մեծ եղեռն, նովել, պատմվածք, հերոս, կերպար, դիմանկար, նկարագրություն, ողբերգություն:

Հասմիկ Գրիգորյան, Փոքր մարդու դրաման Երուխանի նովելներում-Հողվածում ներկայացվում է Երուխանի նովելներում պատկերված փոքր մարդկանց դրաման: Հայ նովելագրության պատմության մեջ կարևոր տեղ ունի Երուխանը: Նրա նախընտրած գրական հերոսները աշխատավոր, հասարակ մարդիկ են, որոնց հետ հեղինակը կապված է բյուրավոր թելերով և խորապես գիտի նրանց կյանքը, կենցաղը, զբաղմունքը:

Երուխանը նկարագրում է աշխատավոր մարդու խեղճությունը, աղքատությունը: Եվ, չնայած կյանքի դժվարություններին, նրա հերոսները չեն կորցնում մարդկային դիմագիծը, մնում են մաքուր ու պարզ, անմիջական ու հավատարիմ:

Асмик Григорян, Драма маленького человека в новеллах Ерухана-Ерухан занимает важное место в истории армянской новеллистики. Выбранные им литературные герои- это простые трудовые люди, с которыми автор связан бесчисленными нитями и глубоко знает их жизнь, быт и занятия.

Ерухан описывает забитость и нищету трудового народа. И несмотря на тяжелые условия жизни, его герои не теряют свое человеческое лицо, остаются чистыми, непосредственными и преданными.

Hasmik Grigoryan, «Little man's» Drama in Erukhan's Novels-Erukhan has an important role in Armenian novel-writing. His favorite literary characters are simple, laborious people. He had deep knowledge about their life, daily routine, activities and sympathized them.

Erukhan describes the misery and poverty of laborious people. And, despite the difficulties in life, his literary characters never lose their human features; they remain innocent and simple, frank and devoted.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՑԻ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՌՆԱԿ ՄԱՐԳՍՅԱՆ

Այս աշխատանքում մենք ուսումնասիրել ենք մի շարք եվրոպացի գիտնականների հետազոտական նախաձեռնությունների արդյունքները: Դրանք իրականացվել են մի շարք կազմակերպությունների և անհատների ֆինանսական աջակցության արդյունքում:

Ներկայացված հետազոտությունների մեծ մասը ձեռք է բերվել «Բազմամշակութային ժողովրդավարությունը և ներգաղթյալների սոցիալական կապիտալը Եվրոպայում. մասնակցություն, կազմակերպչական ցանցեր և հանրային քաղաքականությունը տեղական մակարդակում (LOCALMULTIDEM)» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպայի Խորհրդի «Քաղաքացիները և գիտելիքի վրա հիմնված հասարակության կառավարումը» վեցերորդ շրջանակային ծրագրի առաջնահերթության կողմից: LOCALMULTIDEM համաձայնագիրը համակարգվել է Մուրսիայի համալսարանի կողմից և լրացուցիչ ձևավորվել է Տրենտոյի, Ժնևի, Բրիսթոլի, Մանչեսթրի համալսարաններում¹:

Լաուրա Մորալեսը որոշ մանրամասներով քննարկում է քաղաքական ինտեգրման հայեցակարգը, որը վերաբերում է ներգաղթյալներին ու նրանց սերունդներին և գործ է ունենում բազմաթիվ էմպիրիկ մոտեցումների հետ: Նա քննադատաբար է վերաբերվում քաղաքական ինտեգրման վերաբերյալ բազմաթիվ հասկացությունների, քննարկում է բազմաթիվ խորքային երևույթներ միգրանտների քաղաքական ինտեգրացիոն ուսումնասիրության մեջ, և հետազոտության տվյալներով լուսաբանում է այս ծրագրի հետևանքները՝ ընտրելով միգրացիոն լարվածության լուծման տարբեր հայեցակարգեր և չափման միավորներ²:

Մանլիո Չինալլին և Մարկո Գիունին կենտրոնանում են քաղաքական ենթատեքստի ազդեցության վրա: Նրանք ներկայացնում են քաղաքական հնարավորությունների ինստիտուցիոնալ և հետևողական հավաքագրված ինֆորմացիան, թե ինչպես են միգրանտները ձևավորում անհատական քաղաքական մասնակցություն³: Ամպարո Գոնսալես Ֆերրերը կառուցում է իր եզրակացությունը՝ հետևելով Չինալլինի և Գիունինի: Նա ուսումնասիրում է, թե արդյոք քաղաքացիություն ստացած ներգաղթյալները ավելի քիչ են հակված քվեարկելու, քան տեղաբնիկները, և թե ինչպես է այդ բացը հսկվում, եթե հաշվի առնենք այն հնարավորությունները, որոնցով նրանք փորձում են ինտեգրվել:

¹ “Social Capital, political participation and migration in Europe”, edited by Morales L., Giugni M., London, Palgrave Macmillan Press, 2011.

² **Morales L.**, Joining political organizations. Institutions, mobilization and participation in Western Democracies, Colchester: ECPR Press, 2009.

³ **Cinalli M., Giugni M.**, Institutional opportunities, discursive opportunities and the political participation of migrants in European cities. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 43.

Լաուրա Մորալեսը և Կատյա Պիլատին վերլուծում են սոցիալական կապի-տալի «կամրջման» և «կապակցման» ազդեցությունը միգրանտների քաղաքա-կան գործողություններում և հետաքրքրություններում⁴:

Պեր Սթրոմբլեդը, Գունար Մայբերգը և Բենգտսոնը ուսումնասիրում են միգ-րանտների կամավոր ասոցիացիաների ինտեգրատիվ գործընթացները՝ համեմա-տելով էթնիկ կազմակերպության բարենպաստ ինստիտուցիոնալ հնարավորու-թյունը, տարբեր եվրոպական քաղաքների իրավիճակներում, որը լուսաբան-ված է այս շարադրանքում⁵:

Մի շարք եվրոպական քաղաքներում, ներգաղթյալները և իրենց երեխաները բնակության արագ աճի տեմպեր են արձանագրում: Չնայած բազմատարր մի շարք ասպեկտների, այս կատեգորիան բնութագրվում է մի քաղաքական առանձնահատկությամբ, այսինքն դրա ներկայացումը ժողովրդավարական կա-ռույցներում: Ակնհայտորեն, այս իրավիճակը ենթադրում է հնարավոր քաղաքա-կան խեղաթյուրում, որում էթնիկ փոքրամասնությունների ռիսկը փոքրացնում է ուշադրությունը իրենց խնդիրների և պահանջների հանդեպ, քան բնակչության ազգային փոքրամասնության հանդեպ: Այսպիսով, քաղաքական անհավասարու-թյունը ամբողջությամբ խնդրահարույց է դեմոկրատական հասարակության համար:

Այս առումով, հանրային քաղաքականության՝ միգրանտների ինտեգրացումը հեշտացնելու նպատակը, կարծես թե ձախողվել է:

Լաուրա Մորալեսը և Միրունա Մորարիուն իրենց ուշադրությունը կենտրո-նացրել են միգրանտների անդրազգային ներգրավվածության վրա, ուսումնասի-րել են, թե արդյոք միգրանտների կապը շարունակվում է իրենց ծագման երկրի հետ: Ուսումնասիրվել է անդրազգային փոփոխությունների տարբեր ձևերը, և հատուկ ուշադրություն է դարձվել դրանց ազդեցության էֆեկտներին⁶:

Մեր եզրահանգումները կապված միգրանտների քաղաքական ինտեգրաման անդրազգային գործելակերպների ճիշտ հետևանքների մասին, դեռ գտնվում են զգուշավոր մակարդակում: Մա այն դեպքում հատկապես, երբ հաճախ այցելելով ծագման երկիր, և նաև, ավելի քիչ չափով, մասնակցելով իրենց երկրի ընտրու-թյուններին, քանի որ վերջինս բացասական առումով մեծացնում է քաղաքա-կանության նկատմամբ հետաքրքրությունը իր նախկինում բնակված երկրի նկատմամբ: Մա նշանակում է, որ որոշ դեպքերում, հատկապես հայրենիքի հետ ինտենսիվ կապը, իսկապես խոչընդոտում է միգրանտներին՝ զարգացնելու քա-ղաքական հարցերով հետաքրքրությունն այն վայրերում, որտեղ նրանք ապրում են:

Գունար Մայբերգը և Ջոն Ռոգոթադը որոշ մասերով համեմատում են երկու դեպքեր (Օսլո և Ստոկհոլմ) որոնք մի շարք ասպեկտներով համեմատաբար

⁴ **Morales L.,** Pilati K., The role of social capital in migrants' engagement in local politics in European cities. See in "Social Capital, political participation and migration in Europe", p. 87.

⁵ **Myrberg G.,** "Political Integttation through associational affiliation?" *Journal of ethnic and mig-ration studies*, 37. 2011.

⁶ **Morales L.,** Morariu M., Is 'Home' a distraction? The role of migrants' transnational practices in their political integration into receiving-country politics. See in "Social Capital, political participation and migration in Europe", p. 140.

նմանատիպ են միգրանտների քաղաքական ինտեգրացիոն գործընթացներին, բայց ոչ իրենց ինտեգրացիոն «փիլիսոփայությամբ»⁷:

Հետազոտողների մի մասն էլ ուշադրությունը կենտրոնացրել է միգրանտների վերաբերմունքի, կողմնորոշման, համոզմունքների տարբեր ասպեկտներին: Մասնավորապես էվա Անդուիզան և Ժան Մարտին՝ վերլուծում են քաղաքական արդյունավետության բացերը, թե որքանով են միգրանտները վստահում քաղաքական ինստիտուտներին⁸:

Դիրքորոշումները միգրանտների քաղաքական համակարգի հետ հարաբերության հիմնական ասպեկտներն են: Արդյոք նրանք իրենց համարում են ունակ հասկանալու և ազդեցություն ունենալու քաղաքական որոշումների ընդունման մեջ: Միգրանտները կարծո՞ւմ են, որ քաղաքական համակարգը իրենց պահանջներին համապատասխան է գործում: Նրանք վստահո՞ւմ են այն պետության քաղաքական ինստիտուտներին, որտեղ նրանք ապրում են:

Դեռ, երբ խոսում ենք միգրանտների քաղաքական ներգրավվածության և միավորման մասին՝ ընդգրկելով քաղաքական համակարգի ուշադրությանը, շատ հաճախ կենտրոնանում ենք քաղաքական վարքագծի վրա, քան՝ քաղաքական դիրքորոշումների:

Այսպիսով մեր աշխատանքում վերլուծվել է քաղաքական ինստիտուտների արդյունավետության և վստահության մակարդակները Մադրիդ և Բարսելոնա քաղաքներում մարոկկացիների և էկվադորցիների միջև, մարոկկացիները՝ Լիոնում, էկվադորցիները՝ Միլանում: Մեր աշխատանքում ապացուցվել է, որ քաղաքական արդյունավետությունը և վստահությունը քաղաքական միավորման համապատասխան ցուցանիշներն են, և չափազանց կարևոր է իմանալ, թե ինչ պայմաններում են միգրանտները իրենց զգում առավել կոմպետենտ և վստահ, պետության այն ինստիտուտների նկատմամբ, որտեղ նրանք ապրում են: Որքանով միգրանտների մեծ քանակի ժամանումը Եվրոպական պետություններ կարող է ընկալվել որպես սոցիալական կապվածության սպառնալիք և գործոն, որը կարող է նվազեցնել տվյալ պետություններում ազգային-պետական ինստիտուտների պաշտպանության մակարդակը: Վերլուծելով միգրանտների խմբային քաղաքական կոմպետենտությունը և վստահությունը՝ համեմատելով այն տեղաբնիկ բնակչության հետ, նույնպես շատ կարևոր է:

Նինա Էջերթը և Մարկո Գիունին ուսումնասիրում են, թե ինչպիսի մեծ ուժ է ներկայացնում կրոնը միգրանտների քաղաքական մասնակցությունում⁹: Կրոնը դեռ մեծ դեր է խաղում միգրանտների քաղաքական մասնակցության ցուցանիշի վրա: Միննույն ժամանակ, մենք փաստում ենք, որ այսպիսի դերը ազդում է ինստիտուցիոնալ ենթատեքստի մի շարք ասպեկտների վրա, թե ինչպես են օրինակ քաղաքացիության մոդելները և քաղաքական հնարավորությունները դիմադրում դրանց: Պետք է նախանշել բոլոր այն հիպոթեզները, որոնցով տեղական իշխանությունները գործ կունենան մշակութային և կրոնական տարբերության հետ, և

⁷ Myrberg G., Rogstad J., Patterns of Participation: Engagement among ethnic minorities and the native population in Oslo and Stockholm. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 172.

⁸ Anduiza E., Josep San Martin, Political Efficacy and Confidence among migrants. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 198.

⁹ Eggert N., Giugni M., The impact of religion on the political participation of migrants. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 219.

հասարակության մեջ կրոնի ազդեցությունը միգրանտների քաղաքական մասնակցության միջամտության վրա: Պետք է փաստենք, որ իսկապես կրոնը մեծ դեր է խաղում մուսուլման միգրանտների քաղաքական մասնակցության վրա, այքանով, պայմանավորված, թե որքանով է անդամակցությունը կրոնական կազմակերպություններին մտահոգել:

Ռանջի Դեվադասոնը ուսումնասիրում է ներգաղթյալների և նրանց ժառանգների քաղաքական համայնքի նույնականացման օրինակները՝ շեշտադրելով տեղային կապվածությունը¹⁰:

Պետք է ուշադրություն դարձնել, որ նախապատերազմական և շրջափակված հասարակությունից ներգաղթյալների և նրանց ժառանգների բնականոն ինտեգրացումը շատ խնդրահարույց է:

Մեր նպատակն է քաղաքական ինտեգրացիան սահմանել համարժեք՝ քաղաքական ներգրավմանը: Ուստի մենք կարող ենք ասել, որ միգրանտները քաղաքականապես ինտեգրված են, եթե նրանք քաղաքական վերաբերմունքը և վարքագիծը լիովին բացառված չեն քաղաքական գործընթացից, և սա կարող է տալ նրանց՝ քաղաքական կյանքին մաս կազմելու էմպիրիկ գնահատականը¹¹:

Շեռնաբար միգրանտների քաղաքական ներառման էմպիրիկ մոտեցումը պետք է քննարկվի քաղաքական մասնակցային ձևերի, և միգրանտների դիրքորոշման երկկողմանի հավասարակշռված մակարդակներում: Սա նշանակում է, որ մեզ անհրաժեշտ է գնահատել այն մակարդակը, որում միգրանտները և իրենց երեխաները ներգրավվել են, և կիսում են խնդրի կարգավորման հիմնական արժեքները:

Պետք է նշել, որ միգրանտների քաղաքական մասնակցությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է շեշտադրում կատարել քաղաքական համատեքստի այն առանձանահատկություններին, որոնց հիման վրա նրանք բնակություն են հաստատել: Հատկապես ուշադրություն դարձնելով միգրանտների և էթնիկ քաղաքականության հարաբերություններն, բայց այնտեղ արդեն կենտրոնանալով վերլուծության անհատական մակարդակներին, մենք այն համոզմանն ենք հանգել, որ այս քաղաքական ենթատեքստը պարունակում է և՛ ինստիտուցիոնալ, և՛ հետևողական ամբողջություն:

1) Մեր փաստարկները ցույց տվեցին, որ երկու կողմերն էլ տարբեր կարևորություն ունեն տարբեր քաղաքներում, որոշ քաղաքներ առաջարկում են ավելի բարենպաստ պահանջներ, քան մյուսները:

2) Մենք ցույց տվեցինք, որ ընդհանուր առմամբ 9 քաղաքներում (Բարսելոն, Մադրիդ, Ժնև, Ցյուրիխ, Լոնդոն, Լիոն, Միլան, Ստոկհոլմ և Բուդապեշտ) միգրանտների մասնակցությունը նշանակալիորեն տարբեր է, և այն դրսևորվում է բողոքի ակցիաներում իրենց ներգրավմամբ:

3) Մենք ցույց ենք տվել, որ քաղաքական հնարավորությունների բոլոր տեսակները մեծ դեր են խաղում՝ մեկնաբանելու միգրանտների քաղաքական մասնակցությունը անհատական մակարդակում:

Շատ հաճախ միգրանտների վարքագիծը մեկնաբանվում է շատ քիչ՝ առանց վկայակոչելու քաղաքական միջավայրում իրենց մակրոմակարդակը: Գործնա-

¹⁰ **Devadason Ranji**, Place Attachment, Community cohesion and the politics of belonging in european cities. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 238.

¹¹ **Morales L.**, Conceptualizing and measuring migrants’ political inclusion. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 40.

կանում որոշվել է կարգավորել միգրանտների և իրենց ժառանգների կարևորությունը մասնակցային գործընթացում, որովհետև յուրաքանչյուր քաղաք ունի իր սահմանները՝ թույլատրելու մուտք գործել իրենց քաղաքականության իրականացման գործընթացներում, դիսկուրսներում, ընդհանուր համայնքային կյանք:

Պարզ քննարկելով տնտեսական հնարավորությունները, միգրանտները չպետք է բաց թողնեն հնարավորությունը ապրելու մի վայրում, որտեղ քաղաքացիությունը չի բացառվում՝ ներառյալ քաղաքականություն իրականացնելը, և քաղաքացիները ընդհանուր առմամբ պետք է ավելի շատ տեղյակ լինեն քաղաքականության իրենց սեփական շարժիչ ուժի վարման մասին¹²:

Իսկապես, որ քաղաքական ենթատեքստի ապառիչ գնահատականը հնարավոր է միայն լիարժեք ներգրավվածությամբ, որը ձևավորվում է հանրային տարածության մեջ՝ դերակատարների միջամտությամբ: Քաղաքական ենթատեքստի քննարկումները պետք է տանել ընտրական համակարգերի և կուսակցական ռազմավարության ինստիտուտների և ավանդական քաղաքականության ուսումնասիրությունից վեր: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ գոնե այս ինտերվենցիաների հիմնական բնութագրերից մեկը, այսինքն, արդյոք նրանք առաջադրվել են բարելավելու թե՛ զսպելու միգրանտների դիրքերը, կարող է հիմնականում լինել միգրանտների անհատական քաղաքական վարքագծի վրա ազդեցություն ունեցողը: Այս ուսումնասիրությամբ, մենք հարթակ ենք բացում քաղաքական հնարավորությունների տարբեր տեսակների հետագա ուսումնասիրության համար: Այսպիսի բազմամակարդակ դինամիկայի ճանաչելը անհրաժեշտ է, որպեսզի նպաստի գիտնականներին, քաղաքականություն իրականացնողներին, քաղաքացիներին և միգրանտներին:

Տվյալ երկրի քաղաքացիություն չունեցող անձանց տեղական իրավունքի հնարավորության մասին քննարկումը եվրոպական քաղաքներում և պետություններում պարբերաբար վկայակոչվում է: Մի կողմից էլ, բնակչության ընտրական գործընթացին մասնակցելու իրավունքի բացառումը, ենթադրում է ժամանակակից լիբերալ դեմոկրատիայի հակասությունը իր իսկ սեփական լեգիտիմությանը:

Մյուս կողմից էլ, «մեկ մարդ, մեկ ձայն» սկզբունքի անաչառությունը քննարկում է հնարավոր պատասխանատվությունը, որ պետությունները հանձն են առնում պաշտպանելու իրենց ներգաղթյալների ինտեգրումը:

Փաստորեն, քաղաքացիություն չունեցող անձանց ընտրական իրավունքի ճանաչումը կարող է հասկացվել որպես ինտեգրումը հեշտացնելու գործիք: Նախկինում այս ձևը գերիշխող է եղել հետևյալ պետություններում՝ Շվեդիա, Նորվեգիա, Դանիա կամ Նիդերլանդներում, որոնք երկարացրել էին քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ընտրական իրավունքը 1970-1980 թթ.¹³:

Որպես արդյունք՝ մի շարք եվրոպական քաղաքներում ԵՄ քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ընտրական իրավունք շնորհելու սահմանափակող մոտեցման, միակ էմպիրիկ մոտեցումը ներգաղթյալների ընտրական վարքագծի վերաբերյալ, որը մենք ունենք, ի հայտ է եկել կա՛մ ոչ քաղաքացիություն ստացած, վերոնշյալ Հյուսիսային Եվրոպայի պետություններում բնակվող ներգաղ-

¹² **Cinalli M., Giugni M.**, Institutional opportunities, discursive opportunities and the political participation of migrants in European cities. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 60-61.

¹³ **Gonzales-Ferrer A.**, The electoral participation of naturalized immigrants in Ten European Cities. See in “Social Capital, political participation and migration in Europe”, p. 63.

թյալների կողմից, կա՛մ էլ մարդկանց այն խմբի կողմից, ովքեր ձեռք են բերել քաղաքացիություն՝ բնակության միջոցով: Որքանով քաղաքացիություն ստացած (ազգայնացված) ներգաղթյալների ընտրական վարքագիծը կարող է ընկալվել ներգաղթյալ բնակչության ընտրական վարքագծի նորմ, մեծ հաշվով դժվար է գնահատել: Սակայն, սկսած հասարակական-քաղաքական տեսանկյունից, թվում է՝ կարևոր է իմանալ, որոնք են այն հիմնական գործոնները, որոնք ընտրություններով հակված ազդել են այս բացառիկ խմբի վրա, այն երկրներում, որտեղ նրանք ապրել են:

Մի շարք պատճառներ կամ, թե ինչու մենք պետք է սպասենք բարձր մասնակցային արդյունքների քաղաքացիություն ստացած քաղաքացիներից:

1. Քաղաքացիության ստացումը գիտակցված գործողություն է, որը հաճախ ենթադրում է մի շարք առավելություններ անհատի համար:

2. Քաղաքացիության ստացումը ինքնին մի գործընթաց է, որը կարող է ծառայել որպես հնարավորություն սովորելու պետության քաղաքականության և ժողովրդավարության մասին:

Ներգաղթյալները, ովքեր անցել են ազգայնացման գործընթացը, սովորել են ժողովրդավարությունից եկող գործնական և նորմատիվ խաղի կանոնները: Ի հավելումն, քաղաքացիություն ստացած ներգաղթյալների մեծ մասը մտնում են քաղաքական համակարգ, երբ իրենց և՛ քաղաքական հետաքրքրությունները, և՛ շահները համեմատած իրենց ժառանգների, մեծ են: Այս ամենը հաշվի առնելով, պետք է նշենք, որ ազգայնացված ներգաղթյալներից կարելի է սպասել բարձր մասնակցային ցուցանիշներ, քան տեղաբնիկ բնակչությունից և իրենց ժառանգներից:

Շատ կարևոր է այն հանգամանքը, որ ընտրական վարքագծի սկզբունքները ուսումնասիրվել են՝ օգտագործելով հետևյալ 10 եվրոպական քաղաքները՝ Բարսելոնա, Մադրիդ, Տնև, Յյուրիխ, Լոնդոն, Լիոն, Միլան, Օսլո, Ստոկհոլմ և Բուդապեշտ: Մեր աշխատանքում վերլուծել ենք քաղաքացիություն ստացած քաղաքացիների ընտրական մասնակցությունը ազգային ընտրություններում:

Մեր հետազոտության արդյունքում հաստատվեց, որ քաղաքացիություն ստացած ներգաղթյալների մասնակցությունն ազգային ընտրություններում փոքր է, քան տեղաբնիկ քաղաքացիներինը: Չնայած ընտրական մասնակցությունում քաղաքացիություն ստացած ներգաղթյալների ներառման ապացույցի առկայությանը, իրենց թվով ավելացումը բնակչության տարածքներում, թվում է, թե շարունակվում է շատ դանդաղ տեմպերով:

Այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել, որ քաղաքացիություն ստացած ներգաղթյալների անկախացման բնութագրերից է մեծացնել օրենսդիրների և քաղաքականություն մշակողների հնարավորությունները՝ աջակցելու ներգաղթյալների ընտրական մասնակցությունը, ժամանելուց հետո առաջարկելով նրանց ապահով բնակչության կարգավիճակ: Այս քաղաքականության նպատակն է աջակցել և ընդլայնել ներգաղթյալների օրինական ինտեգրմանը, ոչ միայն ազգայնացվելուց հետո, այլ՝ նաև հենց սկզբից քաղաքացիություն չունեցողների մուտք գործելուց: Ի հավելումն, որոշ կասկածներ կան ներգաղթյալ բնակչության քաղաքացիություն ձեռք բերելու պահանջների արդյունավետության հետ կապված: Փաստացի, մեր հետազոտության արդյունքում, չկա անհնայտ որևէ բաց համակարգ այդ բնակչության քաղաքացիություն ձեռք բերելու հետ կապված:

Այսպիսով, թվում է, որ հետագա ուսունասիրությունները կարող են ապահովել մեր սպասելիքները: Հետագա աշխատանքները պետք է քննարկեն հատուկ-խմբային էֆեկտներ, ներառյալ անհատների ծագման երկրների բնութագրերը, և ըստ նպատակատեղի, ներգաղթյալների համայնքների բնութագրերը, ինչպես նաև բնակության քաղաքների այլ ինստիտուցիոնալ բնութագրեր, ինչպես օրինակ մոբիլիզացման ենթատեքստում ընտրական համակարգի տեսակը, որը մեր հետազոտությունում արձարծված չէ:

Եվրոպացի հետազոտողները ուսունասիրելով միգրանտների քաղաքական մասնակցությունը մեծամասամբ առավելությունը տալիս են կառուցվածքային հնարավորությունների հիման վրա արված այն բացահայտումներին, որոնք կապում են քաղաքական մասնակցությունը՝ հնարավորությունների և հակադրությունների հետ:

Մյուս կողմից էլ, քաղաքական հնարավորությունների մոտեցումը, զարգանալով սոցիալական շարժման գործունեության ընթացքում, կենտրոնանում է, թե ինչպես է քաղաքացիության ռեժիմը սահմանում միգրանտների անհատական և կոլեկտիվ իրավունքների տարբեր կողմերը, ինչպես նաև՝ միգրանտների կոլեկտիվ գործողության տարբեր հնարավորություններ երևան գալիս:

Մյուս կողմից էլ, մեկ այլ աշխատանքում ավելի են կենտրոնանում կազմակերպչական կառույցների կողմից սահմանված հնարավորություններին և հակադրություններին, հարկապես էթնիկ կառույցներին, թե ինչպես են նրանք ընդլայնել միգրանտների քաղաքական մասնակցության մակարդակները:

Այս առումով, սակայն, վերջերս կատարած քննարկումը երևան հանեց, թե արդյոք կազմակերպչական կառույցների տարբեր տիպերը հանգեցնելով սոցիալական կապիտալի «կամրջման» և «կապակցման» ձևավորմանը, կարող են ունենալ տարբեր ազդեցություններ միգրանտների քաղաքական ինտեգրման վրա: Կարևոր է այն պնդումը, որ կազմակերպչական կառույցների տարբեր տիպերը և հնարավորությունների ձևավորման կապող օղակները, հակադրությունները և ոչ միասնական ճանապարհներով ռեսուրսները, այդ ժամանակներից ի վեր կարող են ունենալ միգրանտների քաղաքական ինտեգրման բազմազան պոտենցիալ ազդեցություններ¹⁴:

Մինչ մի շարք հետազոտողներ պնդում էին, որ կապակցված սոցիալական կապիտալը կարող է խթանել միգրանտների ինտեգրմանը, որովհետև այն ընդհանուր առմամբ, նշանակում է ոչ հմուտ խմբերի համար լրացուցիչ ռեսուրս, մյուսները գտնում են, որ կապակցված սոցիալական կապիտալը կարող է միգրանտներին մեկուսացնել առավել լայն քաղաքական համագործակցությունից և կանխել դառնալու քաղաքականապես ինտեգրված:

Մեր ապացույցները հանգում են որոշ նախնական այնպիսի հիպոթեզների, որ կապակցման և կամրջման սոցիալական կապիտալը ունի տարբերակիչ ազդեցություններ՝ կենտրոնանալով միգրանտների քաղաքական կեցվածքի ու վարքագծի գործողությունների վրա:

Անխուսափելիորեն, սոցիալական փոխազդեցության էթնիկապես առանձնացված խմբերը հանդես են գալիս նվազեցնելով իրենց հետաքրքրությունը և ակ-

¹⁴ **Morales L., Pilati K.**, The role of social capital in migrants' engagement in local politics in European cities. See in "Social Capital, political participation and migration in Europe", p. 87.

տիվությունը բնակության երկրի քաղաքական գործընթացների նկատմամբ: Սա հատկապես ճիշտ է էթնիկ-կապակցման ներգրավվածության և էթնիկապես սեգմենտավորված մտերիմ սոցիալական հարաբերությունների համար, որոնք ցույց են տալիս էական և բացասական ազդեցությունը բնակության երկրի քաղաքական հետաքրքրության և մասնակցության բոլոր ձևերի հանդեպ. Կազմակերպությունների միջոցով համընդհանուր համախմբումը, որը հատկապես հետապնդում է էթնիկ փոքրամասնությունների շահերի և հետաքրքրությունների պաշտպանությունը, ի վիճակի է բարձրացնել միգրանտների հետքքրությունը քաղաքական գործընթացներում և՛ «հայրենիքում», և՛ բնակության երկրում:

Կարելի է եզրակացնել, որ կապակցման սոցիալական կապիտալը, թե՛ ֆորմալ միավորումներում, թե՛ ոչ ֆորմալ սոցիալական հարաբերություններում, նվազեցնում է հետաքրքրությունը և ներգրավվածությունը կարևոր քաղաքական գործընթացներում և չունի դրական ազդեցություն էթնիկ հարցերի և շահերի ակտիվ մասնակցության մեջ:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական ենթատեքստը բավականին կարևոր է միգրանտների քաղաքական ներգրավվածության ցանկացած գնահատականի համար: Էթնիկ սոցիալական կապիտալը ունի տարբեր նշանակություններ և տարբեր մոբիլիզացիոն արժեք քաղաքական և ինստիտուցիոնալ ենթատեքստերում: Այն իմաստով, որտեղ միգրանտների իրավունքները իրապես շատ են, էթնիկ սոցիալական կապիտալն ունի ավելի շատ ինտեգրացիոն ազդեցություն: Մեկ այլ աներկբա բացահայտում այս հարցի շուրջ. էթնիկապես կամրջման սոցիալական կապիտալը, անխուսափելիորեն նպաստում է միգրանտների քաղաքական ներգրավվածությանը:

Բանալի բառեր-Ներգաղթյալ, տեղաբնիկ, քաղաքական մասնակցություն, քաղաքական ներգրավվածություն, ինտեգրում, քաղաքական ենթատեքստ, էթնիկ կազմակերպություն, սոցիալական կապիտալ:

Առնակ Սարգսյան, Միգրանտների քաղաքական ներգրավվածության գնահատման ցուցիչները եվրոպացի հետազոտողների կողմից-Ներգաղթյալների քաղաքական մասնակցությունը անհրաժեշտ է ուսումնասիրել՝ մեծ ուշադրություն դարձնելով քաղաքական ենթատեքստի բնութագրերին, որոնց շրջանակներում տեղի է ունենում քաղաքական մասնակցությունը: Մեր նպատակն է քաղաքական ինտեգրացիան սահմանել քաղաքական ներգրավմանը համարժեքորեն: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միգրանտների և նրանց ժառանգների քաղաքական ներգրավվածության գնահատումը հեշտ չէ և պետք է տարբեր տեսանկյուններից քննել: Մեր բազմաբնույթ մոտեցումը կենտրոնանում է միգրանտների անհատական հատկանիշների, կամավոր միավորումների և քաղաքական հնարավորությունների վրա:

Арнак Саргсян, Индикаторы оценки политического участия мигрантов европейскими исследователями-Политическое участие мигрантов необходимо изучать, уделяя большое внимание характеристикам политического контекста, в котором они устраиваются. Наше предложение заключается в том, чтобы определить политическую интеграцию, как эквивалентную политической интеграции. Наше исследование показывает, что учет политического участия мигрантов и их

потомков в Европе не является простой задачей и требует, чтобы мы рассматривали эту проблему с разных сторон. Наш многоуровневый подход фокусируется на индивидуальных характеристиках, добровольных ассоциациях и политических возможностях мигрантов.

Arnak Sargsyan, The indicators of migrants' political participation assessment by the european researches-The political participation of migrants needs to be studied by putting more emphasis on the characteristics of the political context within which they settle. Our goal is to define political integration as equivalent to the political inclusion. Our research shows that accounting for the political engagement of migrants and their descendants in Europe is not a simple task and requires to be examined from different opinions. Our multilevel approach focuses on the individual characteristics, voluntary associations and political opportunities of migrants.

ПОЛИТИКО-ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ КОНЦЕПЦИИ ЕВРАЗИЙСКОГО СОЮЗА В СОВРЕМЕННЫХ РЕАЛИЯХ

ГАЯНЕ СОЛАХЯН

В первой половине 90-ых гг., наряду с концепцией Евразийства Н. Назарбаева, один за другим образовались околоевразийские направления, каждое из которых вобрало в себя ряд положений и доктрин, объединило ряд достойных ученых и аналитиков, которые имели целью сохранить евразийскую идеологию и найти ее наиболее подходящее для современности воплощение.

Во время предвыборной кампании в 2000г. лидер лево-демократического общественного движения «Россия» Г. Селезнев вместе с известным представителем Ноевразийства А. Дугиным разработали предвыборную программу.

Г. Селезнев неоднократно ссылался на разные утверждения евразийцев и считал, что Евразийство как идейное течение, отражающее общность судеб народов Содружества Независимых Государств, ведет их к новому объединению. Будь то Евразийский союз, Евразийская федерация или Евразийская конфедерация, этот союз просто обречен на то, чтобы завоевать поддержку широких слоев населения и стать мировоззренческим компонентом будущего воссоединения. Усиление сотрудничества в военно-стратегической сфере и выход в перспективе на создание евразийской системы коллективной безопасности укрепят наши общие рубежи, усилят позиции на международном уровне¹.

Г. Селезнев приветствовал идею Н. Назарбаева о создании Евразийского союза, особенно отдавал должную оценку тому, что Назарбаев не переставал вновь и вновь обращаться к данной теме, несмотря на то, что в предлагаемый период не добился реального успеха. По мнению Г. Селезнева, эта идея не осуществилась из-за того, что новообразованные независимые государства на данном этапе вообще отрицали идею о каком-либо подобном союзе.

Но сегодня в силу грядущих исторических, политических и экономических вызовов на Евразийском пространстве существуют все предпосылки для кооперирования, для чего Г. Селезнев предлагал свою схему Евразийского проекта, которая состоит из нескольких уровней: первый предполагает интеграцию в рамках СНГ (славяно-тюркская линия).

Второй уровень предполагает придание проекту многополярной основы. Для этого нужно создать союз с азиатскими государствами, которые схожи с Россией в экономических, политических, социальных и др. аспектах (например, Иран, Китай, Индия и т.д.).

Третьим, наиболее важным, шагом Г. Селезнев считает привлечение стран Европы, которые, тем или иным, образом связаны с США (либо входят в союз с ним, зависимы в политической экономической и др. сферах) и Японией, что и является основным отличием теории Селезнева.

Четвертым заключительным уровнем должно быть включение стран третьего мира (развивающиеся страны Азии, Африки, Латинской Америки и др.).

¹ См: **Селезнев Г.** Международные аспекты Евразийства //Евразия. Народы. Культуры. Религии. 2001. № 2. СС. 8–16.

Одновременно, Г. Селезнев допускает реализацию всех уровней параллельно и считает евразийский проект «гарантом свободы, развития и процветания» для всех².

Наряду с другими общественно-политическими движениями, созданными в 90-ых гг. XXв., было организовано движение «Духовное наследие», по сути связанное с Евразийской идеологией. Лидер движения А. Подберезкин видел будущее России в создании «демократической Федерации демократических федеративных государств», которое, несомненно, приведет к «торжеству идеи всенародности, возрождению и расцвету всех наций и народностей, веками добрососедствовавших на евразийском пространстве»³.

После отставки правительства В. Черномырдина в 1998г. наметился резкий разрыв с коммунистами, после чего движение призвало поддержать новообразованное правительство С. Кириенко.

Оппозицией (КПРФ) Евразийская идеология отождествлялась с возрождением СССР. Г. Зюганов, часто ссылаясь на концепции и мысли евразийцев (несмотря на их антикоммунистические настроения), говорил о необходимости либо воссоединения бывших республик Советского Союза, либо хотя бы создания на постсоветском пространстве мощного союза евразийских стран. Обращение современных коммунистов к геополитике, к Евразийству (часто в геополитическом и географическом контексте) связано со стремлением найти решение современным политическим вызовам и проблемам.

Таким образом, Евразийство вновь потеряло актуальность уже в конце 90-ых гг., т.к. на том историческом этапе большинством постсоветских стран евразийский проект отождествлялся с реставрацией СССР, но они только что обрели независимость и не были готовы к воссоединению. Однако даже на данном этапе Евразийская идеология не переставала существовать. Многие политические партии, и общественные движения многократно ссылались на теории евразийцев и цитировали их.

Например, общественно-политическое движение «Рефах» (Благоденствие), образованное в 1998г. было серьезным политическим движением, которое имело религиозную (исламскую) основу. Это движение сыграло важную роль в развитии евразийской идеологии на современном этапе. В дальнейшем движение получило новое название «Евразийская партия-Союз патриотов России» (лидером был Абдул-Вахед Ниязов, он же Вадим Медведев – русский мусульманин).

«Евразийская партия-Союз патриотов России» преследовала цель быть своеобразным мостом между российским руководством и мусульманами России. Ниязов предлагал стратегический союз России, Белоруссии, Казахстана, Средней Азии, Монголии и Закавказья.

Будучи сторонником проекта создания Евразийского союза, Ниязов призывал, в первую очередь, к духовному возрождению, которое, по его мнению, является основным критерием Евразийства и должно быть основано на многовековых традициях, религиозных ценностях, патриотизме и др., а не на принципах либерализма, которые, по словам Ниязова, дробят общество. Вместе с тем, он возвышает челове-

² См: Там же СС. 8–16.

³ Подберезкин А. Русский путь. М., 1996. 167 с., С. 64.

ка, поднимает его на наивысшую ступень, выше политических, экономических, геополитических, военных и др. интересов.

В программе партии, на ряду с четырьмя принципами, на которых должно основываться евразийское сообщество (принцип гуманизма, принцип сильной государственности, принцип обращенности к семье, принцип единения), изложены также концепции о будущем государства, которое видится «...не в расширении государственно-бюрократического аппарата, а в неуклонном продвижении к главенству демократических принципов деятельности государства, всемерной демократизации институтов власти и государства»⁴.

Для экономического процветания общества с государственным регулированием и развитой социальной сферой предлагается совершить обмен части демократии на реальный экономический либерализм, т.к. предыдущий опыт с Европой и Юго-Восточной Азией доказывает его действенность.

Таким образом, Ниязов является сторонником либеральной демократии внутри государства, а в экономической сфере призывает к полному либерализму.

Евразийство Ниязова во многом схоже с евразийской идеологией Н. Назарбаева. В основу обеих идеологий поставлена необходимость тесного сотрудничества на Евразийском пространстве, и на первое место выдвигается проект создания Евразийского союза, что является общим не только с концепцией Н. Назарбаева, но и для всех евразийцев. Однако, в теории Ниязова во многом утрачивается связь с концепциями евразийцев, особенно «классического» периода, и многие положения и доктрины представителей того периода со временем утрачиваются, и лишь некоторые сохраняются (хотя и те подверглись трансформации и модернизации).

Кроме вышеперечисленных «околоевразийских» направлений, существует еще целый ряд «псевдоевразийских» ветвей, среди которых следует упомянуть ярких лидеров этих течений - А. Горяева, Э. Баграмова и др.

Главный редактор журнала «Евразия» Э. Баграмов выступает сторонником Евразийского проекта, считая его мостом примирения в многовековом соперничестве Восток-Запад. Э. Баграмов посвятил изучению и анализу Евразийского проекта множество работ и статей, например, «Россия и проект евразийского союза», «От евразийской идеи к евразийскому сообществу», «Евразийство-национальная идея России?» и др.

Э. Баграмов считает себя сторонником и последователем «классического» Евразийства, однако, утверждает, что сегодня, в силу современных требований и политических процессов, к идеям евразийцев нужно добавить политическую и экономическую составляющую, чтобы она была наиболее целостной.

Вслед за Э. Баграмовым-сторонником Евразийского проекта-выступает также А. Горяев, который в известной работе «Патология русского ума. Картография дословности»⁵ также анализирует Евразийскую идеологию, и, хотя критикует некоторые из ее положений (например, слишком подчеркнутый акцент на православную самобытность), в целом, заявляет о необходимости и положительности объединения народов Евразии.

⁴ **Раздел II.** Цели, задачи и направления деятельности ЕП -СПР. // Новая редакция программы ЕП-СПР.-URL: <http://eurasia.ru/main/index.php?ni=86&d=296>.-С.4. [Электронный ресурс] // (дата обращения: 19.07.2013).

⁵ **Горяев А.Т.** «Патология русского ума. Картография дословности, М.: Аграф, 1998, 416 с.

Одним из наиболее важных звеньев среди современных евразийских направлений являются «левые» евразийцы, которые считают себя последователями «классического» Евразийства и продолжателями его деятельности (хотя между ними существует заметная разница).

Основные концепции современных «левых» евразийцев изложены в манифесте «Утверждения левых евразийцев», автором и разработчиком которого является Р. Вахитов. В работе изложены программы «левых», которая включает все сферы, начиная с политической, экономической, заканчивая церковью (они выступают за перемирие православной церкви и коммунистов) и подчеркнутым антизападничеством.

«Левые» евразийцы считают себя яркими противниками глобализации во всех ее формах и проявлениях, считая, что на Западе пытаются построить вавилонскую башню, смешав народы, которые созданы Богом, и не учитывая, что это может обернуться хаосом и общечеловеческой катастрофой.

Р. Вахитов считает современных «левых» евразийцев не только наследниками «классической» волны Евразийства, но во многом ссылается на положения С.Г. Кара-Мурзы. Левые евразийцы выступают за реальный социализм, «... за собственный, самобытный путь развития российской, евразийской цивилизации, за интеграцию всех бывших республик Советского Союза на основе нового федеративного договора, за беспощадную борьбу с попытками Запада укрепиться на исконно российских евразийских территориях, за самостоятельную и могучую новую Евразийскую Федерацию»⁶.

Таким образом, подводя итоги анализа современных околоевразийских направлений, можно разделить их на направления: Неоевразийство А. Дугина и его последователей, Л. Гумилева и его сторонников, псевдоевразийство Абдул-Вахеда Ниязова, Э. Баграмова и А. Горяева, современное «левое» евразийство Р. Вахитова и т.д. Всех их объединяет одна, общая для всех идеология-Евразийство, наиболее проявленными особенностями которого являются глубокий патриотизм и идея воссоединения великой Евразии в новый Евразийский союз, предложенный Н. Назарбаевым.

Сегодня объединение евразийских народов возможно, но уже на новом уровне, уже на основе свободного, равноправного, демократического сотрудничества суверенных государств. И каковы будут ее масштабы, в каких сферах и на каком уровне, будут решать сами интегрирующиеся государства. Но, несомненно, такой союз должен быть основан на балансировании взаимных интересах.

Проект создания такого союза на постсоветском пространстве, предлагаемый президентом Казахстана Н. Назарбаевым, был обречен на неудачу, в силу неготовности новообразованных независимых государств к какому-либо объединению. Уже некоторое время спустя евразийская идея стала активно использоваться в предвыборных марафонах. Появляются самые разнообразные интерпретации Евразийства самыми разными кругами. Данному этапу характерна значительная

⁶ См: **Вахитов Р.** Утверждения левых евразийцев//Красная Евразия 2003г.// [Электронный ресурс]//URL: http://redeurasia.narod.ru/krasnaya_evrazia/index.html#4 (дата обращения: 19.07.2013).

либерализация идеологии в рамках прежних «консервативных» доктрин идейного ядра.

Призывы к «экономической либерализации» и к созданию «либеральной империи» (А. Чубайс) положили начало новому этапу в построении синкретической идеологии. Начиная с этого времени, власти России начали использование отдельных положений Евразийства, а это послужило новым импульсом актуализации идейно-политического течения. Хотя это не означает, что бывшие представители и идеологи общественно-политического движения отошли на второй план, наоборот, они не утратили интерес и вновь заговорили о Евразийстве как об идее номер один в XXI^в.⁷

Использование Евразийской идеи сегодня продолжается. Она приобретает все большую актуальность. Евразийская идея, которая имеет более чем 90-летний опыт, сегодня становится более актуальной, чем в процессе ее становления.

Сегодня обеспечение безопасности, объединение государств Евразийского континента стало необходимостью, которую понимают все, т.к. идея создания Евразийского Союза сегодня не только актуальна, но и перспективна, «...это тот путь, который позволит его участникам занять достойное место в сложном мире XXI^в., добиться успеха и процветания»⁸.

Сегодня сотрудничество выходит за эти рамки и встает на другую ступень, которая предполагает совершенно иного рода сотрудничество в разных сферах: в политической, культурной, военной, экологической, правовой и т.д., не ограничиваясь лишь рамками рыночно-экономического взаимоотношения.

Тесная интеграция, обеспечение безопасности, укрепление связей Востока и Запада является не только актуальным и перспективным, но и необходимым.

Литература

1. Селезнев Г. Международные аспекты Евразийства//Евразия. Народы. Культуры. Религии. 2001. № 2.
2. Подберезкин А. Русский путь. М., 1996. 167 с.
3. Радел П. Цели, задачи и направления деятельности ЕП-СПП.//Новая редакция программы ЕП-СПП.-URL: <http://eurasia.ru/main/index.php?ni=86&d=296>.-С. 4. [Электронный ресурс]// (дата обращения: 19.07.2013).
4. Горяев А.Т. «Патология русского ума. Картография дословности, М.: Аграф, 1998, 416 с.
5. Вахитов Р. Утверждения левых евразийцев//Красная Евразия 2003г.//[Электронный ресурс]//URL: http://redeurasia.narod.ru/krasnaya_evrazia/index.html#4 (дата обращения: 19.07.2013).
6. Назарбаев Н.А. К экономике знаний через инновации и образование//«Казахстанская правда», 27.05.2006г.

⁷ Назарбаев Н.А. К экономике знаний через инновации и образование//«Казахстанская правда», 27.05.2006г.

⁸ Путин В.В. Новый интеграционный проект для Евразии – будущее, которое рождается сегодня//[Электронный ресурс]//Известия. 3 октября 2011г//URL: <http://izvestia.ru/news/502761> (дата обращения: 12.04.2013).

7. Путин В.В. Новый интеграционный проект для Евразии-будущее, которое рождается сегодня//[Электронный ресурс]//Известия. 3 октября 2011г//URL: <http://izvestia.ru/news/502761> (дата обращения: 12.04.2013).

Ключевые слова-Армения интеграционные процессы, СНГ, проблемы, проекты, концепции, взаимное сотрудничество.

Гайане Солахян, Политикио - идеологические основы концепции Евразийского союза в современных реалиях-Распад СССР открыл новую веху исторического развития бывших союзных республик, которые отныне оказались свободны в выборе объединений. Постсоветское Неоевразийство, призванное сплотить народы Евразии вокруг одной объединяющей идеологии, тогда представлялось как воссоздание СССР. Однако ошибки и просчеты, приведшие к ее ликвидации, должны быть учтены в процессе построения любого сотрудничества на национальном уровне. Евразийское видение такого уровня объединения предполагало именно равенство всех народов и культур, а также равное взаимодействие и ответственность, совместно выработанную стратегию и политику. Это и есть один из главнейших приоритетов евразийской модели интеграции.

Գայանե Սոլախյան, Եվրասիական միության հայեցակարգի քաղաքական-գաղափարական հիմքերը ժամանակակից իրողություններում-Խորհրդային Միության փլուզումը բացեց նախկին խորհրդային հանրապետությունների պատմական զարգացման մի նոր փուլ, որն այժմ թույլ էր տալիս ազատ ընտրել միավորման տարբերակներ: Հետխորհրդային եվրասիականությունը միտված է միավորել հետխորհրդային երկրների ժողովուրդներին Եվրասիայի շուրջ, որն այն ժամանակ ընկալվում էր որպես Խորհրդային Միությունը վերստեղծելու փորձ: Սակայն, սխալներն ու բացթողումները, որոնք հանգեցրել են Խորհրդային Միության փլուզմանը, պետք է հաշվի առնվեն ցանկացած տեսակի համագործակցություն կառուցելիս: Եվրասիական տեսլականը ենթադրում է ժողովուրդների եւ մշակույթների հավասարություն, ինչպես նաեւ հավասար փոխգործակցություն եւ պատասխանատվություն, միասին աշխատելու ռազմավարություն եւ քաղաքականություն: Սա Եվրասիական ինտեգրացիոն մոդելի հիմնական գրավականներն են:

Gayane Solaxyan, The political-ideological foundations of the concept of the Eurasian Union in today's realities-The collapse of the Soviet Union opened a new milestone of historical development of the former Soviet republics, which are now proved to be free to choose the association. The post-Soviet Neo- Eurasism came to unite the peoples of Eurasia around a unifying ideology, then, it was understood as an attempt to recreate the Soviet Union. However, errors and miscalculations that led to its liquidation, have to be taken into account in the process of building any kind of cooperation at the national level. Eurasian vision of this level of association should be based on equality of all peoples and cultures, as well as equal interaction and responsibility, work together to develop strategies and policies. This is one of the main priorities of the Eurasian integration model.

Հավատի նշանակությունը մարդու գործունեության մեջ դժվար է գերազնահատել: Ի՞նչ է հավատը, և արդյո՞ք այն կեցության իրական ճանաչողություն է, թե՞ մարդկային երևակայության զուտ որոշակի մտակառուցվածք: Ամբողջությամբ այս թեման շատ լայն է, սակայն հարկ է ուշադրություն դարձնել հավատի բովանդակային որոշ հարցադրումների և գիտության մեջ նրա դրսևորման յուրահատկությունների վրա:

Հավատը կարելի է դիտարկել որպես պրակտիկ բանականության գործունեություն, ուստի այս առումով այն կարելի է ընկալել երբեմն որպես զգայական գիտակցություն, երբեմն էլ՝ մարդկային հոգեբանության ոլորտ: Իհարկե, հավատը թափանցում է մարդկային հոգու բոլոր ծայրերը՝ հաճախ զգայությունից և կամքից անկախ, սակայն զուտ որպես տեսական մտածողություն այն նրանցից բացարձակ անկախ գոյություն չունի: Վաղուց ի վեր մարդկությունը արձանագրել է, որ աշխարհի նկատմամբ մարդու ունեցած վերաբերմունքում գոյություն ունեն բազմաթիվ հարցեր, որոնք չեն կարող ունենալ այլ պատասխաններ, քան հավատն է:

Հավատի ձևավորման գործընթացը ենթադրում է հավատի սուբյեկտի մոտ ինքնառեֆլեքսիայի առկայություն: Ուստի, հազիվ թե արդար լինի հավատը համարել օբյեկտիվ ճշմարտություն. այն ավելի շուտ սուբյեկտիվ ճշմարտություն է, քան օբյեկտիվ, որովհետև չի որոշվում առարկայով, այլ ընդհակառակը՝ սուբյեկտով:

Խոսելով հավատի ու ճշմարտության փոխհարաբերությունների մասին չպետք է մոռանալ, որ հավատը արտահայտում է օբյեկտի ու սուբյեկտի բազմապիսի փոխազդեցություններ և դրանում է ամբողջ դժվարությունը, որի հետ մարդը առնչվում է հավատի իմաստավորման ընթացքում: Հավատի հարաբերության հաստատումը ենթադրում է ինքնառեֆլեքսիայի փոփոխություն: Քննարկելով այս երևույթը էկզիստենցիալիստ Կ. Յասպերսը փորձում է հիմնավորել առանձին հավատի՝ փիլիսոփայական հավատի գոյությունը, հավատ, որը միավորում է գիտության նկատմամբ հավատը աստծու նկատմամբ գոյություն ունեցող հավատի հետ: Կ. Յասպերսն նշում է. «... ես չեմ կարող ասել, որ հավատը օբյեկտիվ ճշմարտություն է, որը չի սահմանվում հավատով...և ոչ էլ պնդել, որ սուբյեկտիվ ճշմարտություն է, որը չի սահմանվում առարկայով: Հավատը ... օբյեկտի ու սուբյեկտի միասնություն է որից ելնելով մենք հավատում ենք» (Ясперс К. Смысл и назначение истории. М., 1991, с. 155):

«Հավատ» հասկացությունը ստանում է այլ իմաստ հատկապես այն դեպքում, երբ հավատը նույնացվում է «վստահություն» հասկացության հետ: Մինչդեռ, չպետք է մոռանալ, որ վստահությունը ընդամենը հարաբերության տեսակ է օբյեկտի և սուբյեկտի միջև և այն կարող է ձևավորվել այդ հարաբերությունների կողմերից որևէ մեկի դրսևորած վստահության վրա: Վստահությանը կարելի է վերագրել այն նույն հատկանիշները, որոնք վերագրվում են համոզմունքին, սակայն չպետք է մոռանալ, որ վստահությունը ավելի շուտ բազմաթիվ գործունեորով պայմանավորված երևույթ է, քան ազատ արտահայտած կարծիք: Վստահությունն այն է, որը ինքնըստինքյան ենթադրում է տարբեր մարդկանց միջև գոյություն ունեցող հարաբերություններ և վստահության հարցը դրվում է միայն այն ժամանակ, երբ այն կասկածի է ենթարկվում:

Վստահություն ասելով հաճախ հասկանում ենք զանազան սոցիալ-մշակութային և հոգեբանական երևույթներ, որոնց շարքին են դասվում մարդկանց համոզմունքները, մտադրությունները, հաշվարկները և անգամ կանխագագումները: Ս. Ֆրանկն, օրինակ, տարբերակում է հավատ-վստահություն, հավատ-ճշմարտություն կատեգորիաները, ենթադրելով, որ մեկը վերաբերում է մեր կեցության ոչ կրոնական, իսկ երկրորդը՝ նրա կրոնական-պաշտամունքային ոլորտին: Ս. Ֆրանկը գրում է. «մարդկային համակեցության ամբողջ մեխանիզմը կրայքայվեր, կամ ավելի ճիշտ անհնար կդառնար, եթե մենք համոզված չլինեինք, որ մարդիկ, որոնց հետ գործ ունենք, հայտնի իրադարձություններում կվարվեն հենց այդպես, այլ ոչ այլ կերպ: Ինչպե՞ս կարող է կյանքը գոյություն ունենալ, եթե մենք վստահ չլինենք, որ մարդիկ, որոնց հետ մենք կապված ենք, կամ հանդիպում ենք իրենց վարքագծով ապահովում են մեզ համար կյանքի խաղաղ պայմաններ՝ ինչպես, օրինակ վաճառողն ու գնողը գործարք կնքելիս չեն կողոպտում միմյանց, որ հավատարիմ ընկերը չի խաբում ու դավաճանում մեզ և այլն: Նման բնույթի հավաստի ճշմարտությունների վրա է հիմնված մեր ամբողջ կյանքը, բայց այդ ամենը չի կարող լինել ապացուցված և առանձին դեպքերում իրականությունը երբեմն հերքում է մեր սպասելիքները և հաշվարկները, որոնք այն բանի վկայություններն են, որ մենք այստեղ գործ ունենք ոչ թե բառի տրամաբանական իմաստի, ոչ թե ակնհայտության, այլ միայն «բարոյական» հավաստիության, այսինքն՝ միայն ինչ-որ «հավանականի» և ոչ անպայման անհրաժեշտի հետ: Այդ իմաստով, մեր ամբողջ կյանքը հիմնված է հավատի վրա, որի ճշմարտացիությունը չի կարող ապացուցված լինել անժխտելի համոզվածությամբ» (Франк С., С нами бог. М.: АСТ 2003, с. 443-444):

Հավատի մասին Ֆրանկի դատողությունները հիմնականում առնչվում են հարցի առավելապես կրոնական ասպեկտին, որն ըստ Ֆրանկի, տրամաբանական հիմնավորում չի պահանջում և դրա համար էլ նման հավատը սեփական ճշմարտության հիմնավորման անհրաժեշտության կարիք չունի: Մինչդեռ կյանքը հաճախ մեր համոզմունքներն ու ենթադրությունները հերքում է, այն դեպքում, երբ կրոնում՝ Աստված մարդուն չի խաբում: Մակայն դա չի նշանակում, որ Աստծուն հավատացող մարդը չի խաբվում: Հայտնի է, որ կրոնական հավատը հաճախ հակասության մեջ է հայտնվում օբյեկտիվ իրականության հետ: Փաստ է, որ իրական աշխարհում մարդկային հարաբերությունները շատ ավելի բարդ ու հակասական են, ուստի և մարդկանց միջև դրանցից ածանցված վստահությունը ոչ քիչ արժեքավոր և հավաստի է, քան կրոնական հավատը:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ վստահությունը հիմնվում է հաշվարկի վրա, ապա կրոնական հավատի դեպքում հաշվարկի առկայությամբ այն բացատրելը գրեթե համոզիչ չէ: Այստեղ առավել մեծ դերակատարություն է ստանում մարդու սուբյեկտիվ աշխարհընկալումը, ապրումները, հույզերն ու տրամադրությունները, ճշմարտության մասին սուբյեկտիվ պատկերացումները: Այս կապակցությամբ Ֆրանկը պնդում է, որ «հավատը իր սկզբնական հիմքով կամ էությամբ, ի վերջո ոչ թե կույր վստահություն է, այլ անմիջական ճշմարտություն»: Франк С., с. 449

Այսպիսով, կրոնական հավատով ձևավորված վստահությունը սոցիալական տրանսֆորմացիայի ենթարկվելով վերածվում է միջնորդավորված ճշմարտության՝ հավատին տալով վստահության հատկանիշներով օժտված բովանդակություն: Որքանով, որ հոգևորը արտահայտում է վստահության էությունը, ապա

վերջինիս նկատմամբ եղած հավատը այն նույն ձևերով է դրսևորվում, ինչպես ամբողջի և մասի միջև գոյություն ունեցող կապերի դեպքում է: Որպես սկզբնական հիմք վստահության և հավատի միջև գոյություն ունեցող կապերի դրսևորման ձևերը չեն սպառում վստահության հասարակական-գոյաբանական հիմքերը՝ և ամենից առաջ այն բանի պատճառով, որ չեն արտացոլում վերջինիս տարածաժամանակային կոորդինատները: Եվ ընդհակառակը՝ ինչ վերաբերում է հավատին, ապա վերջինս կապված է աստվածայինի հետ, այն դեպքում, երբ վստահությունը պայմանավորված է տեղի ու ժամանակի կոնկրետ կոորդինատներով և ծավալվում ու զարգանում է բացառապես նրանց կոնկրետ կոնտեքստում: Ճիշտ նույն կերպ չի կարելի վստահել բոլորին և չի կարելի չվստահել ոչ մեկին: Այսպիսով, վստահությունը սոցիալական գոյաբանության կարևոր պրեդիկատ է և ըստ էության ներառում է մարդկային կեցության բոլոր մակարդակներն ու ոլորտները:

Անվիճելի է, որ վստահության խնդիրը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է հստակ տարանջատել հավատը վստահությունից, չնայած այն բանին, որ նրանց միջև գոյություն ունեն շատ ընդհանրություններ և չնայած այն բանին, որ վստահությունը ծնվում է հավատից, իսկ հավատը նախորդում է վստահությանը: Հավատը որպես կրոնական համոզմունք և հավատը որպես աշխարհիկ վստահություն՝ հավատի երկու ըմբռնումներ են: Սակայն վստահությունը արդեն գործողություն է, մարդու կայացման գործընթացն է մարդ-աշխարհի փոխհարաբերություններում: Հազիվ թե հնարավոր լինի լրջորեն դատել վստահության մասին ոչ մի բան և ոչինչ չվստահելով ուրիշներին: Եթե կրոնական հավատը ելնում է հոգու ընդունակություններից՝ հասնելով հոգևոր էության զգացմանը և ընկալմանը, ապա աշխարհիկ հավատը ելնում է ուրիշ մարդկանց նկատմամբ վստահության, մեր բանականության վրա:

Աշխարհիկ հավատն առանց վստահության անհետանում է: Եթե կրոնական հավատը ուղղակիորեն կախված չէ մարդու բանականությունից ու կամքից, ապա վստահությունը և նրա վրա կառուցված հավատը ընդհակառակը՝ բանական համոզմունքի և կամքի դրսևորման արդյունք է: Մարդը հավատում է ուրիշներին այն չափով, որքանով որ նրանց հասկանում և ընկալում է: Ի տարբերություն հավատի վստահությունը կարող է լինել ապացուցված և չապացուցված, արդարացված և չարդարացված, իմաստավորված և չիմաստավորված, մասնակի և ամբողջական, ժամանակավոր, մշտական և այլն: Վստահության ձևերի դիալեկտիկան պայմանավորված է սոցիալական բազմաթիվ գործոններով, այն դեպքում, երբ հավատի պարագայում կրոնը խիստ քարացած է և չի հանդուրժում կրեատիվ մտածողություն կամ կասկածի գոյություն: Վստահությունը որպես սոցիալական երևույթ միշտ արտաքին օժանդակության կարիք ունի, մինչդեռ, կրոնական հավատում այն գրեթե տեղ չունի: Ուրեմն, կարելի է տարբերակել ոչ միայն կույր և գիտակից հավատ, այլև կույր և գիտակից վստահություն: Առանց վստահության և հավատի չեն կարող լինել մարդկային նորմալ հարաբերություններ: Մենք հավատում ենք մեր կյանքի վախճանականությանը, բայց և երբեք չենք թերագնահատում վստահության հարցը, քանի որ մարդու համար միննույն չի, թե կյանքն ում հետ է անցնում: Հավատը և վստահությունը միմյանց լրացնում են: Մենք վստահում ենք մեր զգայություններին և հավատում ենք, որ դրանք տալիս են օբյեկտիվորեն ճիշտ ինֆորմացիա, մենք հավատում ենք մեր շրջապատի

մարդկանց և վստահում ենք նրանց մեր մտքերը, ապրումները, իրերը և ամենակարևորը՝ երբեմն առողջությունը:

Կարելի է կարծել, թե կույր հավատը կամ կույր վստահությունը մեր գիտակցության մոլորության արդյունք է: Նման վստահության կամ հավատի ինքնին գոյության իրավունքը կասկածի տակ չի կարելի դնել, քանի որ դա մեզ կարող է հեռացնել իրականությունից: Այսպես՝ երբ մայրն արդարացնում է իր երեխային, ինչ էլ որ նրա հետ պատահած լինի, ապա այդ դեպքում նրա մոտ խոսում է ոչ թե հավատը, այլ կույր սերը և այսինքն՝ վստահությունը, որը հիմնվում է ոչ թե բնագոյի, այլ կույր հավատի վրա: Գուցե չկա կենդանի բնության մեջ վստահության բնագոյային ծագման և որևէ ապացույց: Ինչ վերաբերում է նշված օրինակում սիրո զգացմանը, ապա այն հոգևոր բովանդակությամբ հագեցած մարդկային հոգու հատուկ վիճակ է և վստահության հարցն այստեղ առաջին պլան չի մղվում:

Հենց այդ բովանդակային-իմաստային կողմը, այլ ոչ թե գլխուղեղի ռեցեպտորները կամ վերջույթների նյարդային բջիջներն են ստիպում մեզ վստահել մարդկանց: Առավել ևս աններելի սխալ կլինի ենթադրել, որ վստահությունը հիպոֆիզի կամ մակերիկամի հատուկ գործառնությունով է պայմանավորված:

Օրինաչափ հարց է առաջանում, թե ինչպե՞ս է, որ մեր օրերում մարդկանց գիտակցության մեջ համատեղվում կրոնական հավատը աշխարհիկ, ժամանակակից պատկերացումների, իրականության ռացիոնալ իմաստավորման անընդհատ ընդարձակվող ձգտումների ու գիտական մտածողության հետ: Հարկ է այստեղ էլ առանձնացնել հետևյալ հանգամանքները. նախ՝ բազմաթիվ մարդիկ, հատկապես առօրեական մտածողության մեջ չեն փորձում տառացիորեն իմաստավորել կրոնական նորմերի փաստական էությունը: Նման տիպի հավատ ունեցողները բավարարվում են զանազան աստիճանի մուլթ, բայց իշխող ինչ-որ բարձր հոգևոր ուժի մասին պատկերացումների համակարգ ստեղծելով: Քանի որ աստվածայինի՝ բարձրագույն, ամենագոր ուժի ռեալության մասին գոյություն ունի լայն պատկերացումների դաշտ, ուստի մարդկային տարբեր մղումները իրենց զանազան պատկերացումներով փորձում են բավարարել սեփական երևակայությանը: Երկրորդ՝ իրենց հավատացյալ համարող մարդկանց մեծ մասն ընդունում է հենց Աստծու նկատմամբ հավատը: Այդ կրոնական դիրքորոշման դեպքում հավատն ավելին է, քան դրական գիտելիքը և ուղղամիտ տրամաբանությունը: Մինչդեռ, գիտական գիտելիքների շրջանակներում պատկերը փոքր-ինչ այլ է:

Այսպես՝ պատմությանը հայտնի է, որ Նապոլեոնը ընթերցելով Լապլասի «Աշխարհի համակարգի նկարագիրը» ստեղծագործությունը, նկատում է, որ Նյուտոնն իր գրքում խոսում է Աստծու մասին, այն դեպքում, երբ Լապլասի մոտ ոչ մի անգամ չի հիշատակվում նրա մասին: Լապլասը Նապոլեոնի հարցադրմանը պատասխանում է, որ ինքը այդ վարկածի կարիքը չի ունեցել: Մենք այսօր գիտենք, որ Լապլասի նկարագրած «աշխարհին» բնորոշ է հենց մեխանիկական շարժումը, ուստի կարող է և չունենալ աստվածային սկիզբ և վերջ: Այլ օրինակի համար բերենք Ա. Մախարովի դիրքորոշումը նշված հարցի նրկատմամբ: Նա իր հուշերում գրում է. «Ես չգիտեմ հոգու խորքում ինչպիսի՞ն է իմ դիրքորոշումն իրականում, ես չեմ հավատում ոչ մի դոգմայի, ինձ դուր չեն գալիս պաշտոնական եկեղեցիները...: Միևնույն ժամանակ չեմ կարող պատկերացնել մարդկային կյանքը առանց այն իմաստավորող նախասկզբի, առանց մատերիայից ու նրա օրենքներից դուրս գործող հոգևոր «ջերմության»: Հավանաբար նման զգացումը կարելի է անվանել կրոնական» (Сахаров А.Д. Тревоги и надежды. М., 1990, с. 323):

Այսպիսով, հավատն ունի իր առարկան: Չէ՞ որ մարդիկ հավատում են (գիտական, կրոնական, առօրեական գիտակցության մակարդակներում) ոչ թե ինչ-որ բանին ընդհանրապես, այլ կոնկրետ հավատի առարկային: Այն դեպքում, երբ հավատի առարկան որոշված է, ապա ինքը՝ հավատն է որոշակի, իսկ եթե հավատը չի տարանջատում իր առարկան ուրիշ այլ առարկաներից, ապա նշանակում է, որ այն չունի հստակ առարկա, հավատ է ոչնչի նկատմամբ՝ այսինքն հավատ չէ: «Մական ի՞նչ է նշանակում հավատի առարկայացում և արդյո՞ք այն հստակ տարբերվում է ուրիշ այլ առարկաներից: Դա նշանակում է, որ տվյալ առարկան օժտված է այնպիսի որակական հատկանիշներով, որոնցով հստակորեն տարբերվում է ուրիշ այլ առարկաներից: Մյուս կողմից՝ արդյո՞ք դա չի նշանակում, որ եթե ճանաչվում է առարկայի էական հատկանիշները, ապա դրանով իսկ ճանաչում ենք առարկան: Իհարկե այո, մենք ճանաչում ենք առարկան հենց այն ժամանակ, երբ նրա հատկանիշները տարբերակում ենք առարկայական աշխարհի ուրիշ այլառարկաներից» (Лосев А. Ф. Диалектика мифа//Философия, Мифология, Культура. М., 1991, с, 104): Այսպիսով, այդ իմաստով հավատն իր էությունը գիտելիք է և հավատի առարկայի հարաբերությունները տարբեր կարող են լինել:

Բանալի բաներ - Համոզմունք, հավատ, գիտություն, ճշմարտություն, հավատի առարկայացում, պրակտիկ բանականություն, ինքնատեֆլեքսիա:

Ռազմիկ Տիգրանյան, Հավատի իմացաբանությունը գիտության մեջ-Հավատը և համոզմունքը մարդկային կեցության ռացիոնալ ճանաչողության արդյունք են: Գիտության մեջ հավատը և համոզմունքը թափանցում են մարդկային բանականության բոլոր ոլորտները՝ հաճախ զգացմունքներից ու կամքից անկախ, սակայն զուտ որպես տեսական մտածողություն, հավատը և համոզմունքը նրանցից անկախ գոյություն չունեն: Համոզմունք-վստահություն-հավատ հարաբերակցության շղթան գիտակա գիտելիքի կառուցվածքում, իր ուրույն տեղն ունենալով, հաճախ գիտական հետազոտությանը տալիս է որոշակի ուղիվածություն: Այդ շղթայում առաջին պլանի վրա է մղվում ոչ այնքան հավատի կամ համոզմունքի հանգամանքը, որքան վստահության:

Размик Тигранян, Гносеология веры в науке-Вера и убеждение являются результатом рационального познания человеческого бытия. В науке вера и убеждение, зачастую независимо от воли и чувств, проникают в глубины (извилины) человеческого разума, но как чисто теоретическое размышление они не существуют отдельно от воли и чувств. Соотношение звеньев цепи «убеждение-доверие-вера» занимает особое место в структуре научных знаний и нередко придает научному исследованию определенную направленность.

Razmik Tigranyan, Epistemology of belief in Science-and conviction are result of rational cognition of human being. Belief and conviction penetrate all the spheres of human reason often independent on his senses and will, but as a pure theoretical thinking belief and conviction do not exist without them, independent of them. The chain of relations of conviction-trust-belief, having his special place in construction of scientific knowledge often directs the scientific research in certain way. In that chain in the first plan is not the belief and conviction but mostly the factor of trust.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կոռուպցիան (*corruptio*) լատիներեն բառ է, որը նշանակում է այլասերում, քայքայում, կաշառում, փչացում՝ բարբերի, սովորույթների վատացում, մարդկային լավագույն հատկանիշների արժեզրկում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրականության մեջ կոռուպցիայի համար գոյություն չունի միասնական կանոնական սահմանում: Այդ կատեգորիան կարող է ունենալ ֆիզիկական իմաստ, ինչպես «որևէ բանի քայքայում կամ փչացում, հատկապես մասնատման կամ տարրերի քայքայման ճանապարհով, որն ուղեկցվում է փտումով...»¹, կամ բարոյական իմաստ, ինչպես «փչացում կամ բարոյական անկում... հանրային պարտականությունների կատարման հանցավոր խեղաթյուրում՝ կաշառառության կամ լավ վերաբերմունքի միջոցով»²:

Կոռուպցիան, ունի պատճառների ու հետևանքների լայն շրջանակ, ուստի և պահանջում է բազմակողմանի մոտեցում: Այս առումով, կոռուպցիայի սահմանումները կամ շատ նեղ են, կամ շատ լայն: Ըստ Օքսֆորդի ընդարձակ բառարանի՝ կոռուպցիա նշանակում «պետական պարտականությունների կատարման ժամանակ կաշառքի և հովանավորչության միջոցով ամբողջականության ազնվության խեղաթյուրում և քայքայում»³: «Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից կոռուպցիան սահմանվում է այսպես. «Կոռուպցիան վստահված իշխանության չարաշահումն է՝ անձնական շահ ստանալու նպատակով»⁴: Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրում կոռուպցիան սահմանվում է որպես. «անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում»⁵:

Կոռուպցիայի հիմնական պատճառը մարդկային եսասիրությունն է և ազահությունը, և հետևաբար այն չի համարվում վարքի բացառիկ կամ հիվանդագին ձև, քանի որ մեզանից յուրաքանչյուրն էլ ունի դրան հակվածության ռիսկ: Կոռումպացված վարքագծի գայթակղությունը մեծանում է սպառողական պահանջների աճի հետ, երբ սեփական բարեկեցության ձգտումն ավելի է կարևորվում, քան հասարակության բարեկեցությունը, որը գրեթե մոռացության է մատնվում: Դրա հետևանքով քաղաքական գործիչներն ու քաղաքացիական ծառայողներն անձնական բարեկեցության համար սկսում են չարաշահել սեփական պաշտոնը:

Կոռուպցիան, որպես կանոն փոխկապակցում են պետական ապարատում

¹ www.ahdictionary.com.

² www.onelook.com.

³ www.oxforddictionaries.com.

⁴ Transparency international, [///www.transparency.org/glossary](http://www.transparency.org/glossary).

⁵ Anti-Corruption strategy of the Republic of Armenia, Yervan, 2015.

աշխատող չինովնիկների անբարեխիղճ գործունեության հետ: Կոռուպցիան հանցագործություն է, որով պետական կառավարման գործառույթներով օժտված պաշտոնատար անձը պաշտոնական դիրքը, իրավունքներն ու հնարավորություններն օգտագործում է շահադիտական նպատակներով՝ առաջնորդվելով անձնական կամ խմբային շահերով: Դա հասարակական իշխանության չարաշահումն է, որը վնասում է անհատի, հասարակության, պետության շահերին և ի վերջո կազմալուծում իշխանությունը:

Մակայն կոռուպցիոն երևույթներ կարող են արձանագրվել ոչ միայն պետական, այլև սեփական ձեռնարկատիրական ոլորտում: Այսպես, եթե մասնավոր հիվանդանացում գործավար ադմինիստրատորը կաշառք է վերցնում հիվանդից, վիրահատության հերթը առաջ գցելու համար, կամ մասնավոր բուհում դասախոսը ուսանողից նվեր է պահանջում բարձր գնահատականի համար, ապա այս դեպքերում միանշանակ կոռուպցիա է արձանագրվում:

«Պետական կոռուպցիայի» պարագայում կողմերից մեկը արդեն պետական ծառայության աշխատակից է, կամ կատարում է իշխանության կողմից որոշակի պատվիրակված լիազորություններ, կամ որեւէ այլ կերպ: «Պետական կոռուպցիան» գոյություն է ունենում, քանի որ չինովնիկը անարդար ճանապարհով տնօրինում է իրեն չպատկանող ռեսուրսներ՝ որոշակի որոշումների կայացման կամ մերժման միջոցով: Որոշ ռեսուրսներ կարող են ներառել բյուջետային միջոցներ, պետական կամ համայնքային սեփականություն, պետպատվերներ կամ նպաստներ, և այլն:

Երկրի սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված նպատակների հիման պետական ապարատում վարչական աշխատողը պարտավոր է որոշումներ կայացնել ոչ միայն օրինականության դաշտում, այլև հասարակության կողմից հավանության արժանացող մշակութային եւ բարոյական նորմերի հիման վրա:


Մարդկանց վարքագիծը, ինչպես հայտնի է, կարգավորվում է ինչպես իրավական, այնպես էլ բարոյական նորմերով: Բարոյականությունը կարգավորում է մարդկանց հարաբերությունները համոզմունքների, արժեքների միջոցով և հիմնվում է հասարակական կարծիքի վրա: Իրավական նորմերը արտահայտվում են օրենքներում և պարտադիր են բոլորի համար: Եթե իրավական նորմերը հենվում են ուժի հեղինակության վրա, ապա բարոյական կանոնները հենվում են հեղինակության ուժի վրա:

Կոռուպցիան սկսվում է այն ժամանակ, երբ վերոնշյալ նպատակները փոխարինվում են պաշտոնատար անձի շահադիտական հետաքրքրություններով, որն ամրագրված է կոնկրետ գործողություններով: Այս պայմանը բավարար է, որպեսզի երեւոյթը բնութագրել՝ շահադիտական նպատակներով ծառայողական դիրքի չարաշահում: Բացի այդ, շատ հազվադեպ է, որ պաշտոնյան կարող է ապօրինի օգտվել իր պաշտոնական դիրքից, գործելով մեկուսացման մեջ, առանց ուրիշների ընդգրկելու իր ապօրինի գործունեության մեջ:

Գծապատկեր 1.1-ով ներկայացնենք, կոռուպցիայի դրսևորման առաջարկվող խնրավորումները:

Կոռուպցիոն հանցագործությունները բացահայտելիս հաճախ պարզ է դառնում, որ մի ամբողջ խումբ պաշտոնատար անձինք, կոլեկտիվ շահ են հետապնդել օրենքների կանոնակարգերի խախտումներով: Երբ պաշտոնյան պարտավոր է օրենքով որոշակի որոշում կայացնել որեւէ անձի համար (օրինակ, որեւէ տե-

սակի բիզնեսի լիցենզիայի տրամադրում) ստեղծում է դրա համար արհեստական անօրինական խոչընդոտներ է, նա դրանով իր հաճախորդին դրդում է կաշառք տալ, որը հաճախ է տեղի է ունենում: Այս իրավիճակը նույնպես մոտ է կոռուպցիայի ավանդական հասկացությանը, քանի որ այն փողկապակցված է կաշառք տալու եւ վերցնելու հետ:



Գծապատկեր 1. Կոռուպցիայի դրսևորումների առաջարկվող խմբավորումները՝ ըստ բնույթի և ուղղությունների⁶

Հիմնականում ընդունված է համարել, որ կոռուպցիան թաքնված երևույթ է և նրա շուրջ գործարքները գաղտնի են արվում հասարակությունից: Մակայն մենք այդ կարծիքին չենք, քանի որ համարում ենք, որ մեր աչքի առաջ տեղի են ունենում գործարքներ, որոնք առաջին հայացքից կոռուպցիոն տարրեր չեն պարունակում, սակայն ի վերջո համարվում են կոռուպցիա: Այսպես, հանրահրչակ մի շարք գվարչանքի այգիներում, որտեղ աստրակցիոններից օգտվելիս հսկայական հերթեր են գոյանում (երբեմն մինչև 2 ժամ տևողությամբ), բացահայտ, այգու տնօրինության կողմից վաչառվում են «արագ մուտքի» տոմսեր: Այս պարագայում, այգու վճարունակ այցելուները հավելավճարով գնելով այդ տոմսերը,

⁶ Կազմված է հեղինակի կողմից:

շրջանցում են հերթը և անարգել օգտվում ատրակցիոնի ծառայություններից: Այս երևույթը մենք համարում ենք բացահայտ կոռուպցիա, քանի որ հավելավճարի ճանապարհով ոտնահարվում են հանրային շահերը և խախտվում է այգու այցելուների իրավահավասարությունը:

Ներկայացնենք բացահայտ կոռուպցիայի մեկ այլ օրինակ, երբ արդեն իրավահավասարություն է խախտվում ոչ թե հասարակության լայն շրջանակներում, այլ ընտանիքի անդամների միջև: Այսպես, ընտանիքն ուներ երեք անդամ՝ հայրը, մայրը և որդին: Նրանք առաջնորդվում էին որոշակի պայմանավորվածությամբ: Օրինակ՝ հերթով լվանում էին ափսեները, իսկ տղային երեկոյան չէր թույլատրվում հեռուստացույց դիտել: Իհարկե, ոչ ոք չէր սիրում լվանալ ափսեները, և ամենից շատ՝ հայրը: Մի անգամ, երբ մայրը տանը չէր, և հոր՝ ափսեները լվանալու հերթն էր, տղան ասում է. «Եթե ես քո փոխարեն լվանամ ափսեները, թույլ կտա՞ս ֆիլմ դիտել»: Հայրը համաձայնում է⁷:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվում է կոռուպցիային սահմանել որպես «արատավոր երևույթ, որի արդյունքում անձնական կամ խմբային նյութական, ունան ոչ նյութական շահ ստանալու նպատակով բարոյական և իրավական նորմերի շրջանցմամբ խախտվում է ազգաբնակչության իրավահավասարությունը և լուրջ խոչընդոտներ են առաջանում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման համար»:

Չնայած որ կոռուպցիոն ռիսկերի առկայությունը տարբեր երկրներում և տարբեր ժամանակաշրջաններում ունեն ձևավորման տարաբնույթ պատճառներ, սակայն հիմնականում այդ ռիսկերի ընդլայնմանը նպաստում են.

1. իրավագիտակցության և բարոյագիտակցության ցածր մակարդակը,
2. քաղաքացիների պասիվ մասնակցությունը հակակոռուպցիոն գործունեությանը,
3. ոչ հստակ և անընդհատ փոփոխվող օրենսդրությունը
4. անվստահությունը իրավապահների նկատմամբ
5. անպատժելիության մթնոլորտը,
6. ցածր աշխատավարձը և սոցիալական լարվածությունը,
7. գործազրկությունը
8. հանրային կառավարման և բիզնեսի սերտաձուլը,
9. երկարատև պաշտոնավարումը և այլն:

Թեև կոռուպցիայի դեմ պայքարը տարիներ շարունակ եղել է Հայաստանի իշխանությունների առաջնահերթություններից մեկը, այդուամենայնիվ այն մնում է դեռ կարևոր խնդիր, և խիստ անհրաժեշտ է, որ այս ուղղությամբ բարեփոխումներն իրականացվեն առանց հապաղելու և վճռականությամբ: Եվրոպացի փորձագետները ուսումնասիրել են կոռուպցիոն ռիսկերը ՀՀ Ազգային ժողովում, դատարաններում ու դատախազությունում: Ներկայումս նրանք մտահոգություն էին հայտնում ՀՀ նախագահի ու իշխող կուսակցության գերիշխող դիրքի, իշխանության գերկենտրոնացվածության, քաղաքական ու տնտեսական մենաշնորհների և օրենքը ընտրողաբար կիրառելու վերաբերյալ⁸:

⁷ **Գյուրբուղայան Ա.**, Հասարակագիտություն: //Ա. Գյուրբուղայան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան, Երևան, Զանգակ հրատ., 2013, 144 էջ:

⁸ Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors. Evaluation report, Armenia, //GRECO Group, 2016.

Ազգային ժողովի մասով զեկույցը փաստում է. -«Տարիներ առաջ խորհրդարանում ընդունվեցին էթիկայի կանոններ, սակայն, դրանք դեռևս մշուշոտ են և անարդյունավետ, թեև ԳՐԵԿՈ խումբը շարունակաբար ընդգծել է, որ անհրաժեշտ է հստակ մեխանիզմ սահմանել խորհրդարանում շահերի բախումից խուսափելու, բիզնեսն ու օրենսդիր աշխատանքը տարանջատելու, նվիրատվություններն ու արտոնությունները կանխելու համար»:

Բանալի բառեր-կոռուպցիոն ռիսկերի կանխարգելում, թաքնված և բացահայտ կոռուպցիա, կոռուպցիայի դրդապատճառներ:

Նոնա Խաչատրյան, Կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման սոցիալ տնտեսական հիմնախնդիրները-Կոռուպցիան ձևավորվում է սոցիալ տնտեսական տարբեր դրդապատճառներով, ուստի և պահանջում է կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տարբեր մոտեցումներ: Հատկապես արդյունավետ է դառնում կոռուպցիոն ռիսկերի ձևավորման կանխարգելման հանրային և մասնավոր գործիքակազմի համակցված տարբերակը:

Нонна Хачатрян, Социально экономические проблемы предотвращения коррупционных рисков-В статье рассматривается сущность коррупции и на этой основе анализируются социально-экономические мотивации коррупционных явлений. В частности, приводятся факторы проявления коррупционных рисков и способы их предотвращения. Представляется также авторское определение коррупции и группировка коррупционных рисков по разным направлениям.

Nonna Khachatryan, Socio-economic problems of prevention corruption risks-The article deals with the essence of corruption and on this basis the socio-economic motivations of corruption phenomena are analyzed. In particular, is presented the factors of corruption risks and ways of their prevention are given. There is also an author's definition of corruption and a grouping of corruption risks in different directions.

ԱՐՓԻՆԵ ԵԳԱՆՑԱՆ

Հարկերը, պայմանավորված իրենց գործառույթներով, նշանակալի ազդեցությամբ ներգործում են երկրի տնտեսական հնարավորությունների օպտիմալ օգտագործման, տնտեսության և նրա առանձին ճյուղերի զարգացման, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա: Հարկային եկամուտների աճը, ավելացնելով պետության բյուջետային եկամուտները և հնարավորություններ ստեղծելով սոցիալ-տնտեսական ծավալուն ծրագրերի իրականացման համար, միաժամանակ կարող է նվազեցնել պահանջարկը և կրճատել ներդրումների ծավալները, ինչն էլ իր հերթին նախադրյալներ կստեղծի բյուջեի հարկային եկամուտների կրճատման համար: Ուստի և բարձր հարկերը նախադրյալներ են ստեղծում տնտեսական արդյունավետության նվազման, տնտեսվարող սուբյեկտների վարքագծի և, ընդհանուր առմամբ, ողջ մասնավոր հատվածի սպառման, խնայողությունների և ներդրումների մակարդակի փոփոխության համար, հարկային քաղաքականության անուղղակի ազդեցությունը կարող է առաջացնել հարկային հավելյալ բեռ, որ բացասաբար է անդրադառնում բնակչության կենսամակարդակի վրա: Այսպիսով՝ հարկման արդյունավետությունն ունի երկակի մեկնաբանություն, և թեպետ ակնհայտ է հարկման արդյունավետության բարձրացման և հարկատեսակների օպտիմալ համակցման անհրաժեշտությունը, այսինքն՝ այնպիսի համակցություն, որը նվազագույնի կհասցնի հարկային քաղաքականությամբ պայմանավորված տնտեսական կորուստները, այդ օպտիմումը չի կարող միանման լինել տարբեր երկրների և ժամանակաշրջանների համար՝ կախված տվյալ երկրի ժողովրդագրական, տնտեսական, պատմական, մշակութային և մի շարք այլ առանձնահատկություններից: Միաժամանակ հարկային բեռի մակարդակի գնահատումը հնարավորություն է տալիս կատարել հարկային քաղաքականության արդյունավետության համեմատական վերլուծություններ և հստակեցնել տնտեսության այս կամ այն ոլորտի և, ընդհանուր առմամբ, ողջ տնտեսության խթանմանն ահրաժեշտ պետական ծրագրերը:

Ինչպես հայտնի է, հարկային բեռը որոշվում է մակրո- և միկրոմակարդակներում: Մակրոմակարդակում այն ներկայացվում է որպես երկրում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, աշխատելու և այլ օրինական ճանապարհով եկամուտ ստանալու, ինչպես նաև սեփականության իրավունքի դիմաց վճար¹:

Հարկային բեռի հաշվարկը ողջ տնտեսության մակարդակով քննարկումներ չի առաջացնում. այստեղ դիտարկվում է այս տեսության դեռևս էմպիրիկ հետազոտությունների շրջանակներում կիրառվող մոտեցումը. հարկային բեռը հավասար է հարկային եկամուտների մեծության հարաբերությանը ազգային եկամտի ցուցանիշի մեծությանը: Այսպիսի մոտեցումը կիրառելի է մինչ օրս, սակայն ազգային եկամտի ցուցանիշի փոխարեն հաշվի է առնվում պետության ՀՆԱ-ի ցուցանիշը: Այսպիսով՝ տնտեսության հարկային բեռը բոլոր իրավաբանական և

¹ Տե՛ս **Նարեկ Քարդումյան**, «Հարկային բեռը և դրա մակրոտնտեսական գնահատման մոտեցումները», «Այլընտրանք» գիտական հանդես, 2016 #4, Հոկտեմբեր-Դեկտեմբեր:

Ֆիզիկական անձանցից փաստացի գանձված հարկային եկամուտների հարաբերությունն է համախառն ներքին արդյունքին: Այս ցուցանիշն արտացոլում է ՀՆԱ-ի այն մասը, որ վերաբաշխվում է հարկերի միջոցով.

$$\text{ՀԲ} = \text{ՀԲՖ} / \text{ՀՆԱ},$$

որտեղ՝ ՀԲ-ն հարկային բեռի մակարդակն է, ՀԲՖ-ն իրավաբանական և ֆիզիկական անձանց վճարած հարկերն են, ՀՆԱ-ն համախառն ներքին արդյունքն է՝ արժեքային արտահայտությամբ: Այն հնարավորություն է տալիս համադրելու տարբեր երկրների տնտեսությունների համապատասխան ցուցանիշները և կատարել համեմատական վերլուծություններ: Ըստ աղյուսակ 1-ում բերված տվյալների՝ ՀՀ հարկային բեռը վերջին տարիներին աճել է մինչև 21-22%՝ գերազանցելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշը: Համեմատության համար անդրադառնանք հարևան երկրների վիճակագրական տվյալներին: Այսպես՝ եթե Վրաստանում հարկային բեռը վերջին 3 տարիներին 24-25% է, Թուրքիայում՝ 27-29 %, ապա Ադրբեջանում և Իրանում այն բավականին ցածր է. Կազմում է համապատասխանաբար՝ 12-14% և 5-6%:

Սակայն հարկ է նշել, որ հարկային բեռի հաշվարկման այս եղանակը հաշվի չի առնում մի շարք գործոններ: Մասնավորապես, այն արտահայտում է միայն միջին վիճակագրական հարկատուի հարկային բեռի ծանրությունն՝ առանց հաշվի առնելու կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի առանձնահատկությունները, միաժամանակ բանաձևում ներառված են միայն փաստացի վճարված հարկային եկամուտներն՝ առանց արտացոլելու հարկատուների պարտավորությունների ամբողջությունը՝ հարկային ապառքները և գերավճարները, ինչպես նաև սոցիալական աջակցման և տնտեսության խթանման նպատակով իրականացվող պետական ծախսերը, որոնք հատկացվում են պետական բյուջեից և փաստացի թեթևացնում են հարկային բեռի ծանրությունը:

Աղյուսակ 1. 2007-2016թթ. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում²

Տարեթիվ	Հարկային եկամուտներ, մլրդ դրամ	Հավելածի տեմպը	ՀՆԱ, մլրդ դրամ	Հավելածի տեմպը	Հ/ՀՆԱ, %
2007	505.5	31.3	3149.3	18.2	16.1
2008	621.1	22.9	3568.2 ³	13.3	17.4
2009	522.4	-15.9	3141.7	-12.0	16.6
2010	594.1	13.7	3460.2	19.2	17.2
2011	654	10.1	3776.4	9.1	17.3
2012	749.3	14.6	3981.5	5.4	18.8
2013	1000.9	33.6	4555.6	20.2	22.0
2014	1064.1	6.3	4828.6	6.0	22.0
2015	1067.9	0.4	5032.1	4.2	21.2
2016	1079.7	1.1	5067.9	21.2	21.3

² Տվյալներն՝ ըստ 2007-2016թթ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունների:

³ Վերոնշյալ հաշվետվություններում առկա անհամապատասխանությունների դեպքում օգտագործվել են վերջին հաշվետվության տվյալները:

Այստեղ հարկ է անդրադառնալ զարգացած տնտեսությամբ մի շարք պետություններում առկա բավականին բարձր՝ մինչև 50%-ի հասնող հարկային բեռի փաստին (2016թ. Բելգիայում հարկային բեռը կազմել է 44.7%, Դանիայում՝ 50,9%, Ֆրանսիայում՝ 45,2%): Միաժամանակ նշենք, որ ցածր հարկային բեռն իր հերթին կարող է առաջանալ ստվերային տնտեսության և հարկային թերգանձումների հետևանքով, ինչը թյուր պատկերացում կտա տվյալ տնտեսության հարկային քաղաքականության վերաբերյալ:

Հարկային բեռի մակարդակի գնահատման վերաբերյալ կիրառվում են նաև այլ մոտեցումներ, այսպես, ըստ Սելիգմանի՝ բնակչության հարկային բեռը մեկ բնակչին բաժին ընկնող վճարված բոլոր հարկերի հարաբերությունն է բնակչության միջին եկամտին: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀԲ=(Հ_{բ}/\Theta_{բ}) / (Ե/\Theta_{բ}),$$

որտեղ՝ $Z_{բ}$ -ն բնակչության վճարած հարկերի ամբողջությունն է, $\Theta_{բ}$ -ն՝ բնակչության թվաքանակը, E -ն բնակչության եկամուտների ամբողջությունը: Սելիգմանի գաղափարը զարգացրել է Գ.Գ. Սոլովյեյը, ով 1928թ. առաջարկել է հաշվարկել հարկային բեռի արժեքը՝ մեկ շնչին բաժին ընկնող ազգային եկամտից հանելով մեկ շնչին բաժին ընկնող հարկերի չափը, քանի որ համեմատական տվյալները բավարար չեն. հարկային բեռն ավելի ծանր է այն երկրների բնակչության համար, որոնք ունեն ավելի փոքր ազգային եկամուտ:

Աղյուսակ 2. Հարկային բեռի ցուցանիշն ըստ հաշվարկման տարբեր եղանակների⁴

Պետությունը	Տարեթիվը	Հարկեր/ԱԵ, %	Մեկ շնչին բաժին ընկնող նորման, ռուբ.		1 շնչին բաժին ընկնող ԱԵ-ն՝ հանած հարկերը, ռուբ.	Հարկեր/տն օրինվող եկամուտ, %
			ԱԵ	Հարկեր		
Անգլիա	1913	11.3	471	53	417	20.0
	1926	24.3	506	123	383	36.3
Ֆրանսիա	1913	13.8	355	49	306	-
	1927	20.7	357	74	283	-
Գերմանիա	1913	11.4	307	35	272	22.7
	1927	23.0	319	74	245	48.8
Իտալիա	1913	12.9	219	28	191	-
	1925	18.3	164	30	134	-
ԱՄՆ	1912	6.4	718	46	672	11.7
	1924	8.7	833	73	760	20.5
Ռուսաստան ԽՍՀՄ	1913	11.5	98	11	87	-
	1927	13.8	96	13	83	-

Աղյուսակ 2-ի վերջին սյունակի հաշվարկում ներառված է պետության կողմից մատուցվող ծառայությունների արժեքը, այն է՝ բնակչության մեկ շնչի կենսա-

⁴ Գ. Գ. Соловей, Налоговое бремя в СССР и иностранных государствах (очерки по теории и методологии вопроса)М.; Финиздат, 1928, С. 9-10.

ապահովման նվազագույն բյուջեն: Այս ցուցանիշները արտացոլելով աղյուսակի 3-րդ սյունակի տվյալների դինամիկան, ավելի բարձր մակարդակ ունեն: Ընդ որում՝ որքան հարուստ էր տվյալ երկրի բնակչությունը, բարձր էր մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը, այնքան ավելի բարձր էին տվյալ երկրի հարկային եկամուտները և ավելի արդյունավետ էր հարկային վարչարարությունը: Հետևաբար, հաշվի առնելով երկրի տնտեսության զարգացվածության մակարդակը, աճող հասարակական պահանջունքները, Ա. Վագները գտնում էր, որ հարկային բեռի ցուցանիշը պետք է աճի ավելի արագ, քան ՀՆԱ-ի աճի տեմպն է:

Միկրոմակարդակում հարկային բեռի գնահատումը թույլ է տալիս համեմատել տարբեր ոլորտների նկատմամբ կիրառվող հարկային բեռի ծանրությունը, որոշել նպատակաուղղված պետական հարկային քաղաքականության արդյունավետությունը, կատարել այդ քաղաքականության քայլերի անհրաժեշտ ճշգրտումներ: Առանձին տնտեսվարող սուբյեկտի հարկային բեռի հաշվարկման եղանակներն առավել բազմազան են, և այստեղ միասնական մոտեցում գոյություն չունի ինչպես տարբեր տեսաբանների մոտ, այնպես էլ անգամ միևնույն երկրի ներսում: Ընդհանուր առմամբ հարկային բեռի գնահատման միջոցով կարելի է պատկերացում կազմել ինչպես կազմակերպության գործունեության ընթացքում վճարած հարկային գումարների բաժնի վերաբերյալ և կատարել համամետական վերլուծություններ՝ գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով, այնպես էլ միջին ցուցանիշից շեղումը կարող է զգուշացնել կազմակերպության հարկային թերվճարումների կամ ոչ նպատակային գործունեության և հարկային սխալ պլանավորման մասին: Միաժամանակ անհրաժեշտ է վերլուծել հարկային վճարումների կառուցվածքը՝ հաշվի առնելով կազմակերպության գործունեության առանձնահատկությունները: Բարձր հարկային բեռը կարող է պայմանավորված լինել նաև առանձին հարկատեսակների գծով կատարվող կանխավճարներով (մասնավորապես, ներկայումս ՀՀ-ում՝ շահութահարկի գծով):

Կազմակերպության հարկային բեռը հաշվարկելու համար առանձնացնենք հետևյալ ցուցանիշը.

$$ՀԲ = Z_4 / Z,$$

որտեղ՝ ՀԲ-ն հարկային բեռն է, Z_4 -ն՝ կազմակերպության վճարած հարկերը, Z -ն՝ կազմակերպության հասույթը: Այս ցուցանիշը բնութագրում է կազմակերպության հասույթի այն մասը, որ ուղղվում է հարկային պարտավորությունների մարմանը: Էական թերությունը կայանում է նրանում, որ կազմակերպության հասույթն ավելի ընդգրկում ցուցանիշ է, քան շահույթը, որից իրականում գանձվում են կազմակերպության հարկերը, ինչպես նաև այն չի բացառում ամորտիզացիոն մասհանումների ազդեցությունը: Այս նպատակով կիրառվում է մեկ այլ բանաձև, որտեղ ֆիսկալ գանձումները համեմատվում են նոր ստեղծված արժեքի հետ:

$$ՀԲ = Z_4 / U_4,$$

որտեղ՝ U_4 -ն նոր ստեղծված արժեքն է: Ընդ որում՝

$$U_4 = Z_r + U_1 Z + U_2 + E_2 - O_2 - O_3 - U_5,$$

որտեղ՝ Z_r -ն իրացումից հասույթն է, $U_1 Z$ -ն ավելացված արժեքի հարկը, U_2 -ն ակցիզային հարկը, E_2 -ն չիրացված եկամուտը, O_2 -ն չիրացված ծախսերը, O_3 -ն նյութական ծախսումներն են, U_5 -ն ամորտիզացիոն մասհանումները: Հարկային բեռը այս դեպքում որոշվում է կազմակերպության իրական եկամտի նկատմամբ, ինչն անշուշտ, առավելություն է մնացած ցուցանիշների նկատմամբ:

Թեպետ վերը նշված ցուցանիշներից որևէ մեկն ունիվերսալ չէ, այնուամենայնիվ նրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել պետության կողմից հարկային համակարգում կատարվող փոփոխությունների դեպքում հնարավոր ֆինանսական հետևանքների վերլուծության նպատակով⁵: Հարկային բեռի ծանրությունը թե՞ միկրո- և թե՞ մակրոմակարդակում որոշվում է ոչ միայն հարկման բարձր դրույթաչափերերով այլև հարկային վարչարարությամբ, հարկային համակարգի և հարկային օրենսդրության անկայունությամբ, ուստի միջազգային համեմատությունների դաշտ հարկ է տեղափոխել նաև փաստացի գանձված հարկերի ու հարկային ողջ պոտենցիալի տոկոսային հարաբերակցության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնելու տարբեր հարկատեսակների հաշվարկման և վարչարարական առանձնահատկությունները, որոնք կարող են իրենց կարևոր ազդեցությունն ունենալ ըստ առանձին հարկատեսակների հարկման արդյունավետության վրա:

Բանալի բառեր- հարկային բեռ, հարկային քաղաքականություն, օպտիմալ հարկում, հարկային հավելյալ բեռ, հարկային բեռի գնահատում:

Արփինե Եգանյան, Հարկային բեռի գնահատման եղանակների հարցի շուրջ- Հոդվածը վերաբերում է հարկման հիմնարար սկզբունքներից արդարության և հավասարաչափության, հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշներից մեկի՝ հարկային բեռի հաշվարկման եղանակներին: Անդրադարձ է կատարվել տնտեսության մակրո- և միկրոմակարդակներում այս ցուցանիշի օպտիմալ մակարդակի որոշման մակարդակի հաշվարկման խնդրին, ինչի շնորհիվ հնարավոր է որոշել տնտեսության վրա առկա հարկային ճնշման մակարդակը, համեմատություններ անցկացնել տարբեր երկրների միջև, բացահայտել հարկատուների տարբեր խմբերի վրա հարկերի ունեցած ազդեցությունը:

Арпине Егаян, О вопросе методов исчисления налогового бремени- Данная статья рассматривает методы исчисления налогового бремени, как способа измерения основных принципов налогообложения, в плане справедливости и равномерности, и с точки зрения эффективности налоговой политики, так как оценивая налоговое бремя, становится возможным выявление воздействия налогов на доходы налогоплательщиков, определить уровень налогового давления на экономику, провести сравнительный анализ уровня экономик разных стран.

Arpine Yeganyan, About the question of the tax burden measuring methods- This article goes through the methods of calculating the tax burden as a way of measuring the basic principles of taxation- fairness and uniformity, and the effectivity of tax policy; so it becomes possible to identify the impact of taxes on taxpayers, determine the level of tax pressure on the economy, compare the economies of different countries.

⁵ St' u Н.И. Куликов, М.А. Куликова, Н.П. Назарчук *Налоги и налогообложение*, Тамбов, 2013. стр. 34

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԳՍՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՎԵՀԱՆՈՒՇ ՄԱՐԴԱՆՅԱՆ

Ֆինանսական հաշվառումը կարգավորող միջազգային ստանդարտների պահանջները եկամուտների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների ճանաչման, դրանց դասակարգման, գնահատման, տարբեր ժամանակաշրջաններին վերագրելու առումով զգալիորեն տարբերվում են հարկային օրենսդրության պահանջներից: Սրանից էլնելով՝ ֆինանսական հաշվառման համակարգում որոշված հաշվապահական շահույթը կարող է տարբերվել հարկվող շահույթից:

Իհարկե, մեր երկրում մի շարք մասնագետների կողմից կատարվել են հետազոտություններ առկա տարբերությունների բացահայտման և դրանց վերացման ուղղությամբ, բայց խնդիրը դեռ առկա է, որի լուծումը կարող է հիմք դառնալ կազմակերպություններում հաշվառման ավելի արդյունավետ վարման համար: Վերջինս չափազանց կարևոր է, որովհետև ճգնաժամային պայմաններում ֆինանսական մասնագետների ձեռքին կազմակերպության ֆինանսական արդյունքի կառավարման համար այն կարող է դառնալ իրական գործիք:

Ստորև ներկայացնենք հաշվառման առավել ընդհանուր նմանություններն ու տարբերությունները՝

<i>Տեղեկատվական համակարգ</i>	<i>հաշվապահական հաշվառում</i>	
<i>Բաղադրիչներ</i>	<i>ֆինանսական հաշվառում</i>	<i>հարկային հաշվառում</i>
<i>Հաշվառման իրականացումը</i>	Պարտադիր է	Պարտադիր է
<i>Նպատակը</i>	Կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին տեղեկատվության տրամադրումը	Կազմակերպության գործունեության բնույթից էլնելով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով վճարման ենթակա հարկատեսակների գծով գումարների հաշվարկը և բյուջե փոխանցումը, ինչպես նաև հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվարկը
<i>Օգտագործողների խմբեր</i>	Ներդրողներ, վարկատուներ, մատակարարներ, այլ կրեդիտորներ, աշխատակիցներ, կառավարչական անձնակազմ, հարկային մարմիններ	Կառավարչական անձնակազմ, հարկային մարմիններ
<i>Տեղեկատվության օգտագործման անհրաժեշտությունը</i>	Օգտագործողներին օգտակար է ծպտիմալ տնտեսական որոշումներ կայացնելու համար	Օգտագործվում են հարկային մարմինների կողմից կազմակերպության ներկայացրած հաշվարկների համապատասխանությունը հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը ստուգելու նպատակով, ինչպես նաև ձեռնարկությանը գերծ է պահում հարկվող գումարների հաշվարման անձշտություններից

Հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը	Եռամսյակային, տարեկան	Ամսական, եռամսյակային, տարեկան
Հաշվետվությունների ներկայացման ժամկետը	Տեղեկատվությունն օգտագործողների պահանջով կամ օրենսդրության սահմանված ժամկետներում	Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում
Մեթոդաբանական սկզբունքների կարգավորումը	ՖՀՄՄ-ներով, ՀՀՄՄ-ներով, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով	Հարկային օրենսդրությամբ
Օգտագործվող չափման միավորները	Դրամական	Դրամական
Ժամանակային ասպեկտ, ուղղվածություն	Ուղղված է դեպի անցյալ (ռետրոսպեկտիվ(հետադարձ) գնահատական)	Ուղղված է դեպի անցյալ (ռետրոսպեկտիվ(հետադարձ) գնահատական)
Տեղեկատվության բնույթը	Առևտրային գաղտնիք չի պարունակում	Առևտրային գաղտնիք չի պարունակում

Այն դեպքում, երբ հարկային հաշվառումն իրականացվում է ֆինանսական հաշվառման հետ համակցման միջոցով, ապա փաստաթղթավորման ճանապարհով տեղեկատվության հավաքագրումն ու գրանցումը իրականացվում է ֆինանսական հաշվառման համակարգում: Հենց այս փուլում էլ հարկային և ֆինանսական հաշվառման համակարգում առաջանում են տարբերություններ, քանի որ տեղեկատվության ընդհանրացման սկզբունքները նրանցում տարբեր են:

Հարկ է նաև նշել, որ ֆինանսական և հարկային հաշվառումների տարբերությունները լինում են ժամանակավոր և մշտական: Ժամանակավոր տարբերություններ առաջանում են՝

1. երբ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին հաշվեկշռային արժեքների և հարկային բազաների միջև առկա է տարբերություն, կամ այն հողվածների հարկային բազայի առաջացման պահին, որոնք ունեն հարկային բազա, սակայն չեն ճանաչվել որպես ակտիվներ և պարտավորություններ,

2. երբ հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի միջև տարբերությունն առաջանում է սկզբնական ճանաչման պահից հետո, քանի որ եկամուտը կամ ծախսը համապարփակ ֆինանսական արդյունքում կամ սեփական կապիտալում ճանաչվել է մեկ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն հարկվող շահույթում ճանաչվել է մեկ այլ ժամանակաշրջանում,

3. երբ ակտիվի կամ պարտավորության հարկային բազան փոփոխվել է և այդ փոփոխությունը չի ճանաչվելու ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում որևէ ժամանակաշրջանում¹:

Ժամանակավոր տարբերություններն իրենց հերթին կարող են լինել հարկվող կամ նվազեցվող:

¹ Տես՝ **Թաթուլ Մովսիսյան** «Հաշվապահական հաշվառում», Երևան 2015թ., էջ 426:

Իսկ մշտական տարբերություններն այն տարբերություններն են, որոնք հետագա հաշվետու ժամանակաշրջաններում հարկային հետևանքներ, հետևաբար նաև հետաձգված հարկեր չեն առաջացնում:

Հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի միջև տարբերությունների առկայության պարագայում տեղի ունի հետևյալը՝

<i>Ստեղծված իրավիճակը</i>	<i>Ժամանակավոր տարբերության հետևանքը</i>	
Ակտիվի հաշվեկշռային արժեքը <i>մեծ է</i> հարկային բազայից	-	<i>Հետաձգված հարկային պարտավորում</i>
Ակտիվի հաշվեկշռային արժեքը <i>փոքր է</i> հարկային բազայից	<i>Հետաձգված հարկային ակտիվ</i>	-
Պարտավորության հաշվեկշռային արժեքը <i>մեծ է</i> հարկային բազայից	<i>Հետաձգված հարկային ակտիվ</i>	-
Պարտավորության հաշվեկշռային արժեքը <i>փոքր է</i> հարկային բազայից	-	<i>Հետաձգված հարկային պարտավորում²</i>

Հետաձգված հարկային պարտավորությունները ապագա ժամանակաշրջանում վճարման ենթակա շահութահարկի գումարներն են՝ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ:

Հետաձգված հարկային ակտիվները ապագա ժամանակաշրջանում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են՝ կապված՝

- նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ,
- չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ,
- չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ³:

Անդրադառնանք միջազգային ստանդարտների և հարկային օրենսդրության դրույթներով պայմանավորված տարբերություններին: Վերջիններս կարող են առաջանալ հետևյալ դեպքերում՝

• ձեռքբերման պահից հետո ընկած ժամանակաշրջաններում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքները ֆինանսական և հարկային հաշվառումներում կարող են էականորեն տարբերվել՝ պայմանավորված արժեզրկման և վերագնահատման հետևանքներով, քանի որ վերջիններս հարկային հաշվառման մեջ չեն ընդունվում, իսկ ֆինանսական հաշվառման դեպքում վերագնահատման հետևանքով հաշվեկշռային արժեքի նվազումը ճանաչվում է որպես ծախս այն չափով, որով գերազանցում է նախորդ վերագնահատումների հետևանքով առաջացած արժեքի աճը, իսկ հաշվեկշռային արժեքի աճը վերագրվում է սեփական կապիտալին:

• Հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի տարբերություններ կառաջանան նաև հիմնական միջոցների արժեզրկման արդյունքում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ հարկվող շահույթը որոշելիս ակտիվների արժեզրկումից կորուստները հաշվի չեն առնվում: Շահութահարկով հարկվող որոշելիս համախառն եկամուտը նվա-

² Տես՝ **Ա. Հ. Մարգարյան, Ա. Մ. Մարջանյան, Ն. Ս. Օզանեզովա** «Հաշվապահական հաշվառում», Երևան 2014թ., էջ 285:

³ Տես՝ ՀՀՄՍ 12, պարագրաֆ 5, 2010 թ.:

զեցվում է սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ ելնելով օրենքով սահմանված նվազագույն ժամկետներից, բացի այդ հարկատուն կարող է ընտրել նաև այլ ժամկետ, բայց ոչ պակաս, քան հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված նվազագույն ժամկետը⁴:

- հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկելիս տվյալ հիմնական միջոցի մնացորդային արժեքը հաշվի չի առնվում, այնինչ ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի համաձայն՝ ակտիվի մաշվածությունը որոշվում է դրա մնացորդային արժեքը հանելուց հետո: Վերը նշված ինդիքին կարելի է հանդիպել նաև ոչ նյութական ակտիվների դեպքում, բացառությամբ այն դեպքի, որ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է հարկատուն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

- ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ»-ին համաձայն՝ ակտիվների մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է դեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Իսկ հարկային նպատակներով ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են միայն գործունեության մեջ օգտագործվող ոչ ընթացիկ ակտիվների համար, մինչդեռ ոչ ընթացիկ ակտիվները հաճախ մաշվում են ոչ միայն շահագործման, այլ նաև շահագործման մեջ չգտնվելու դեպքում:

- ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի համաձայն պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով, մինչդեռ հարկվող շահույթը որոշելիս պաշարները հաշվի են առնվում իրենց սկզբնական արժեքով

- Արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի, ինչպես նաև առևտրային գործունեությունն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացմանը համապատասխան⁵, մինչդեռ ֆինանսական հաշվառմամբ կատարված ծախսերը, ընկերության կրած վնասները, կորուստները հաշվառման մեջ արտացոլվում են որպես ծախս դրանց կատարման պահին:

- Միջազգային ստանդարտների համաձայն կառուցվող հիմնական միջոցի ինքնարժեքում կատարվում են ապամոնտաժման ծախսեր, այն չափով, որքանով դրանք ճանաչվում են պահուստ: Այսպիսով, եթե պահուստաֆոնդը ստեղծվում և մտնում է կառուցվող հիմնական միջոցի ինքնարժեքի մեջ, այս դեպքում ևս առաջանում են տարբերություններ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի միջև, քանի որ հարկման դեպքում այդ պահուստի հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները հաշվի չեն առնվում: Նույն իրավիճակը առաջանում է նաև հետերաշխիքային սպասարկման համար ստեղծվող պահուստաֆոնդերին կատարվող մասհանումների գծով:

- Ֆինանսական հաշվառման նպատակով ընկերություններն իրենք են գնահատում դեբիտորական պարտքի ստացման հավանականությունը, կորուստների

⁴ Տես՝ ՀՀ օրենք «Շահութահարկի մասին», 12-րդ հոդված, 1997թ.:

⁵ Տես՝ ՀՀ օրենք «Շահութահարկի մասին», 32-րդ հոդված, 1-ին և 2-րդ կետեր, 1997թ.:

պահուստների ստեղծման անհրաժեշտությունը, ելնելով իրենց նախկին վիճակագրությունից, մինչդեռ հարկային հաշվառման դեպքում կրեդիտորական և դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրս գրման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 2002թ. N2052 որոշմամբ:

- Արտարժույթի և դրանով արտահայտված այլ ակտիվների ու պարտավորությունների վերագնահատման դրական և բացասական արդյունքները ևս առաջացնում են տարբերություններ: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն վերջիններս հարկվող եկամուտ և ծախս չեն համարվում:

- Ֆինանսական հաշվառման տեսանկյունից ստացված շահաբաժինների գումարը վերագրվում է ժամանակաշրջանի եկամուտներին, բացառությամբ բաժնեմասնակցության մեթոդով ներդրումները հաշվառելիս ստացված շահաբաժիններին: Մակայն հարկվող շահույթը որոշելիս ստացված շահաբաժինների գումարը, որպես նվազեցվող եկամուտ համախառն եկամտից հանվում է:

- Ֆինանսական հաշվառմամբ բարեգործական հատկացումները ամբողջությամբ համարվում են ծախս, իսկ հարկվող շահույթի որոշման ժամանակ համախառն եկամտից չեն նվազեցվում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում համախառն եկամտից ոչ ավելի, քան 0.25 տոկոսի չափով նվազեցման: Բացի այդ հարկվող շահույթի որոշման ժամանակ համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի հաշմանդամ աշխատակիցների տարեկան աշխատավարձի 150 տոկոսի չափով լրացուցիչ նվազեցմամբ, որը սակայն չի կատարվում ֆինանսական հաշվառմամբ:

Այս ամենից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ եթե խնդիր ենք դրել հասնելու ՀՀ առևտրային ընկերություններում հարկային հաշվառման կազմակերպման կարևորագույն հիմնախնդիր համարվող ֆինանսական և հարկային հաշվառման տարբերությունների վերացմանը, ապա նման իրավիճակում, մեր կարծիքով, հարցի կարգավորումը հնարավոր է միայն ՀՀ հարկային օրենսդրության, մասնավորապես՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում հնարավոր փոփոխությունների ճանապարհով:

Ներկայացնենք կազմակերպությունում հարկային հաշվառման վարման ժամանակ ֆինանսական հաշվառման տվյալները հիմք ընդունելու մոդելի ուժեղ և թույլ կողմերը, վերջինիս սպառնալիքներն ու հնարավորությունները SWOT վերլուծության միջոցով՝

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
<ol style="list-style-type: none"> 1. Ֆինանսական և հարկային հաշվառումը կարգավորող համապատասխան օրենքների, ստանդարտների առկայությունը, 2. Ֆինանսական և հարկային հաշվետվություններում ներկայացվող ինֆորմացիայի հստակությունը, 3. հարկային օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի շարժի և վճարվելիք հարկերի համար հստակ ժամանակացույցի առկայությունը, 4. ֆինանսական հաշվառման տվյալների հիման վրա հարկային հաշվառման մոդելի կիրառման դեպքում ոչ մեծ 	<ol style="list-style-type: none"> 1. Հարկային օրենսդրության որոշ պահանջների և դրույթների անհամապատասխանությունը ֆինանսական հաշվառումը կարգավորող միջազգային ստանդարտների դրույթների հետ, 2. ֆինանսական և հարկային հաշվառման քաղաքականության որոշ դրույթների անհամապատասխանություն և դրանց հնարավորինս մոտեցման խնդրի առկայություն (դրանով պայմանավորված հաշվառման բարդություն) 3. հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի միջև ժամանակավոր տարբերությունների առաջացում, 4. հաշվապահական և հարկվող շահույթների միջև մշտական տարբերությունների առաջացում, 5. ոչ բոլոր կազմակերպություններին ֆինանսական

աշխատատարություն, 5. ֆինանսական հաշվառման տվյալների հիման վրա հարկային հաշվառման մոդելի կիրառման դեպքում ոչ մեծ ծախսատարություն (չեն պահանջվում մեծ քանակությամբ ռեսուրսներ՝ աշխատուժ, ժամանակ, դրամական միջոցներ),	հաշվետվությունների ներկայացման սահմանված պահանջ, 6. ֆինանսական հաշվետվություններում կանխատեսվող գնահատականների բացակայությունը, (հնարավոր ներդրողների համար այն կարող է լինել մեծ հետքերություն ներկայացնող ինֆորմացիա)
<i>Հնարավորություններ</i>	<i>Սպառնալիքներ</i>
1. Նոր և ավելի կատարելագործված հաշվապահական ծրագրերի մշակում և ներդրում, 2. աշխատակիցների վերապատրաստում այլ երկրներում, փորձի փոխանակում ոլորտի մասնագետների միջև, 3. հարկային հաշվառման վարման նոր, ավելի օպտիմալ մոդելների մշակում, 4. հարկային օրենսդրության կատարելագործում	1. Հարկային օրենսդրության հաճախակի փոփոխություններ, 2. առևտրային գաղտնիք պարունակող ինֆորմացիայի արտահոսք, 3. կադրերի հոսունության բարձր մակարդակը 4. երկրի վատ սոցիալ-տնտեսական դրությունը 5. աշխատուժի միգրացիա

Բանալի բառեր-ֆինանսական հաշվառում, հարկային հաշվառում, հետաձգված հարկային ակտիվներ, հետաձգված հարկային պարտավորություններ, հաշվապահական շահույթ, հարկվող շահույթ, հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի միջև տարբերություններ, SWOT վերլուծություն:

Գայանե Ավետսիսյան, Վեհանուշ Մարդանյան, Ֆինանսական և հարկային հաշվառման համեմատական վերլուծություն-ֆինանսական հաշվառումը կարգավորող միջազգային ստանդարտների պահանջները զգալիորեն տարբերվում են հարկային օրենսդրության պահանջներից: Հետևաբար՝ ֆինանսական հաշվառման համակարգում որոշված հաշվապահական շահույթը կարող է տարբերվել հարկվող շահույթից: Այս տարբերությունների վերացումը, կամ հնարավորինս փոքրացումը համարվում է էական խնդիր: Հողվածում ներկայացված են ֆինանսական և հարկային հաշվառման առավել ընդհանուր նմանություններն ու տարբերությունները, ինչպես Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ և ՀՀՄՄ, ՖՀՄՄ-ներով պայմանավորված որոշ տարբերություններ: Կատարվել է SWOT վերլուծություն՝ բացահայտելու համար կազմակերպությունում հարկային հաշվառման վարման ժամանակ ֆինանսական հաշվառման տվյալները հիմք ընդունելու մոդելի ուժեղ և թույլ կողմերը, վերջինիս սպառնալիքներն ու հնարավորությունները:

Гайане Грачиковна Аветисян, Вегануш Марданян, Сравнительный анализ финансового и налогового учёта-Требования международных стандартов, регулирующих финансовый учёт, значительно отличаются от требований налогового законодательства. Следовательно, установленная в системе финансового учёта бухгалтерская прибыль может быть отличной от облагаемой прибыли. Искоренение или возможное уменьшение этих различий считается достаточно трудной задачей.

В статье представлены наиболее общие сходства и различия финансового и налогового учёта, а также некоторые различия, обусловленные налоговым законодательством Республики Армения и МСБУ, МСФО. Проведено исследование SWOT

для выявления слабых и сильных сторон, угроз и возможностей модели, которая в ходе проведения налогового расчёта в организации принимает за основу данные финансового учёта.

Gayane Avetsiyan, Vehanush Mardanyan, Comparative Analysis of Financial and Tax Accounting-The demands of the international standards regulating financial accounting differs significantly from those of tax legislation. Accordingly, the accounting profit defined in the system of financial accounting may be different from taxable profit. The elimination of these differences or their potential decrease is considered to be an essential problem. The article presents the more common similarities and differences of financial and tax accounting, differences owing to the tax legislation of the Republic of Armenia, as well as those as the result of IAS and IFRS. A SWOT analysis has been undertaken to reveal the strong and weak points, the threats and opportunities of the model as the basis for the data of financial accounting during the tax accounting process in the organization.

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԷԹԻՎԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

ՎԱՐՆՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լրագրության և տեղեկատվական պատերազմի սահմանագծում

Կոնֆլիկտային լրագրության նկատմամբ հետաքրքրությունն աշխարհաքաղաքական զարգացումների տարբեր փուլերում տարբեր դրսևորումներ է ունեցել: Համացանցը և նոր տեխնոլոգիաները փոխեցին ոչ միայն ավանդական լրագրության կառուցվածքային ու բովանդակային ձևաչափը, այլև ի հայտ եկան լրագրողական էթիկայի նոր մարտահրավերներ:

Մեր օրերում զանգվածային տեղեկատվամիջոցները լուրջ դերակատարություն ունեն զինված հակամարտությունների լուծման, դրանց լուսաբանման գործում: Պատահական չէ, որ այս համատեքստում կիրառելի են դառնում “տեղեկատվական պատերազմ”, “մեդիա-ագրեսիա”, “տեղեկատվական անվտանգություն” եզրույթները: Դրանց առկայությունը փաստում է, որ մեդիան ոչ միայն սերտ կապ ունի կոնֆլիկտային իրավիճակների հետ, այլև ոչ պակաս կարևոր է հենց տեղեկատվական դաշտում, քան ինքնին ռազմական գործողությունը: Այլ կերպ ասած՝ գրքալ տեղեկատվական դարաշրջանում հատկապես հակամարտությունները լուսաբանող լրագրողի առջև ծառայել են նոր մարտահրավերներ, որոնց գրագետ և համարժեք մատուցումը նախապայման է հակամարտության լուծման հնարավոր տարբերակների ի հայտ գալուն տարբեր հարթակներում՝ տեղեկատվական, քաղաքական, դիվանագիտական: Նկատենք, որ եթե Առաջին աշխարհամարտը խթանեց ամերիկյան վերլուծական ժուռնալիստիկայի ծնունդն ու զարգացումը, ապա զրբալիզացիայի դարաշրջանում հակառակ պատկերն է: Ռուս տեսաբան Գ. Պոչեպցովն իր “Հոգեբանական պատերազմներ” գրքում գրում է. “Այսօր զարգացած պետություններում ցանկացած գործողություն անհնար է առանց համապատասխան տեղեկատվական հոսքի: Ժամանակակից պատերազմները նախ և առաջ զինված քաղաքական բեմադրություններ են և բեմադրական հատվածը դրանցում ոչ պակաս կարևոր է, քան սոսկ զենքի կիրառման պահը: Իսկ լրագրողները վաղուց դարձել են երրորդ կողմ”¹:

Տեսաբանները, հետազոտելով տեղեկատվության ազդեցությունը ժամանակակից զինված հակամարտությունների վրա, նկատում են, որ մեդիան դառնում է հզոր, ինքնուրույն գործիք, որն ի գործու է խստագույնս ազդելու ազգերի պատմական ճակատագրերի վրա²: Կարևոր է այն, թե ինչպիսի դիրք կգրավեն լրատվամիջոցների ներկայացուցիչները հակամարտությունները լուսաբանելիս: Այստեղ կարող ենք առանձնացնել երեք հիմնական դիրքորոշում.

1. Անշահախնդիր և օբյեկտիվ լուսաբանում՝ բացառապես հումանիստական ու համամարդկային տեսանկյունից:

2. Իրադարձությունների մասին տեղեկատվության տարածում՝ ելնելով սեփական երկրի զինված ուժերի գործողություններից:

¹ Г. Почепцов, Психологические войны, М., 1999, стр.17.

² А. Дугин, Основы геополитики, М., 1999, стр.63.

3. Իրադարձությունների մասին տեղեկատվության տարածում՝ ելնելով հակառակորդի զինված ուժերի գործողություններից:

Համեմատական համատեքստում ուսումնասիրելով Հարավսլավիայում, Ավդանստանում, Իրաքում ռազմական գործողությունները՝ փաստենք, որ ամերիկյան և արևմտյան շատ զանգվածային տեղեկատվամիջոցներ /այսուհետ՝ ՋՏՄ-ներ/ սատարում էին իրենց երկրի զինվորներին՝ հանդես գալով իբրև տեղեկատվական և քարոզչական միջոց: Ավելին, սա ոչ միայն չի հակասում մասնագիտական էթիկայի պահանջներին, այլև բխում է **պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին** Ժնևյան կոնֆենցիայի³ պահանջներից:

Մյուս կողմից էթե համեմատենք 1990-ականների արցախյան պատերազմը 2016թ ապրիլյան քառօրյա պատերազմի հետ, պայմանավորված ժամանակային ու աշխարհաքաղաքական զարգացումներով, կարող ենք փաստել հետևյալը.

90-ականների նորանկախ Հայաստանի լրագրությունը ազատության շղարշի տակ ակամայից առաջնորդվում էր խորհրդային չափանիշներով, և լրագրողական բովանդակության հարցն ու չափանիշներն այն չէին, ինչ այժմ: Ապրիլյան քառօրյային մեդիայի անդրադաձը ցույց տվեց, որ մերօրյա լրագրությունը հակամարտություններ լուսաբանելիս կանգնած է նոր մարտահրավերների առջև. ստացված տեղեկությունը հաստատելու համար բավարար ռեսուրս չունենալը որոշ լրատվամիջոցների համար դարձավ պարզապես աղբրեջանական խայծը կուլ տալու միջոց: Այսպես, 2016թ. նոյեմբերի 30-ին hrparak.am կայքը, հղում տալով աղբրեջանական կայքերին, գրում է. “Ինչպես հաղորդում են աղբրեջանական լրատվամիջոցները (haqqin.az surf.az) մարտեր են տեղի ունեցել Ղարաբաղում՝ երրորդ պաշտպանական գծում՝ Մարտունու ուղղությամբ: Ըստ նույն հաղորդման, հայկական կողմն ունի ենթադրաբար մեկ զոհ և ինը վիրավոր: Երկուսի վիճակը ծանր է: Վիրավորները հոսպիտալացվել են: Աղբրեջանական կայքը նշում է նաև, որ հայկական լրատվամիջոցներն այս մասին չեն գրում: Ավելի վաղ մենք տեղեկացրել էինք, որ ՀՀ ՊՆ մամուլ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը հերքել է այդ լուրերը՝ դրանք համարելով ապատեղեկատվություն”⁴:

Հակամարտությունների լուսաբանումն ավելի շատ է առնչվում տարաբնույթ էթիկական հարցերի, քան լրագրության մեկ այլ տեսակ: Պատերազմը, ռազմական գործողություն լինելուց գատ, ունի նաև մի կարևոր կողմ. կատարում է նաև լակնուսի գործառույթ, ի հայտ բերում պատերազմող կողմերից յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերը, նրանց մարդկայնության մակարդակն ու արժեքային համակարգի բաղադրիչները: Ապրիլյան պատերազմի լուսաբանումը տեղեկատվական բազմազանության համատեքստում դրա վառ ապացույցն էր: Լրագրողական էթիկայի հիմնական տեսություններից այս ժամանակ կիրառվեց հենց իրավիճակային տեսությունը, երբ շատ հարցեր իրենց պատասխանները գտան իրավիճակից ելնելով՝ իրողության լրջությամբ ու թելադրանքով պայմանավորված:

Սոցիալական մեդիան և լրագրողական էթիկան

Պատերազմական իրավիճակների լուսաբանման հարցում կարևոր է նաև համապատասխան տերմինաբանության օգտագործումը: Այն, որպես մեդիա-

³ <<Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին>> Ժնևյան կոնվենցիա, Հոդված 4, 1949թ.:

⁴ <http://hrparak.am/?p=130968&l=am%2Fmarker%20martunuvo%D6%82xxutyamb>

բովանդակության հիմնական կրող, կարող է տարբեր տրամադրություն առաջացնել հասարակության շրջանում:

Օրինակ՝ այդ օրերին սոցիալական մեդիայում կիսովեցին “հակառակորդ”, “աղբբեջանական կողմ”, “թշնամի”, “ասկյար” եզրույթները, որոնք համապատասխան շեշտադրմամբ կարող են ստեղծել մի իրավիճակ, երբ լրագրողական էթիկայի տեսանկյունից վիճելի է դառնում ատելության խոսքի տարածման հարցը: “Գարդիանին” տված հարցազրույցում Հռոմի Ֆրանցիսկոս Պապն ասել է. “Ժուռնալիստիկան չպետք է որպես զենք օգտագործվի մարդկանց և ժողովուրդների ոչնչացման համար: Նորություններ հրապարակող հրատարակությունների աշխատակիցները պետք է ավելի զգույշ լինեն, քանի որ նրանց ձայնը կարող է լսել յուրաքանչյուր ոք, և դա շատ վտանգավոր է”⁵:

Խոսքից պակաս ազդեցիկ չէ նաև պատկերը: Հայաստանյան էլեկտոնային պարբերականներից “Հետքը”, լինելով էթիկական լրագրության ջատագովներից մեկը, առաջինն էր, որ խախտելով էթիկական լրագրության որոշ կանոններ, ազդեցիկ վայրագությունները Թալիշում ներկայացրեց ըստ եղելության: “Վայրագություններ՝ Թալիշում (ԶԳՈՒՇԱՅՈՒՄ. հրապարակված է գնդակահարված անձանց լուսանկար)” վերնագրով հոդվածում խմբագրությունը լուսանկարին կից տարածեց հետևյալ տեսակետը. “Ներողություն ենք խնդրում ընթերցողներից. “Հետքը” նման լուսանկարներ երբեք չի հրապարակել, սա մեր էթիկայի վարքականոնի խախտում է, բայց իրականությունը ներկայացնելու այլ միջոց այս պահին չունենք”⁶: Խմբագրության դիրքորոշումը հասկանալի է. անհրաժեշտ էր ապահովել կատարված վայրագությունը ներկայացնելու փաստական հիմք: Հետագայում հենց այս լուսանկարի շնորհիվ իրավաբաններից և լրագրողներից կազմված խումբը հաղես եկավ նախաձեռնությամբ՝ դիմելով Միջազգային քրեական դատարան և Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Սյդուհանդերձ, հոդվածին ուղեկցող մեկնաբանություններում քիչ չէին այնպիսի տեսակետները, որ խմբագրությունը չպետք է հրապարակեր ոչ միայն սպանված տարեցների լուսանկարը, այլև անուն-ազգանունները⁷:

Ի տարբերություն “Հետքի”՝ աղբբեջանական կայքերը հրապարակեցին և սոցիալական ցանցերում տարածեցին ազգությամբ եզդի զինվոր Քյարամ Սլոյանի գլխատված լուսանկարը, որը ոչ միայն մասնագիտական էթիկայի անընդունելի խախտում է, այլև ոտնձգություն մարդկային բարոյականության դեմ:

Ընդհանուր առմամբ հայաստանյան լրատվամիջոցների գործելաոճը ապրիլյան քառօրյայի համատեքստում վերլուծելիս կարող ենք որակել որպես օպերատիվ, գրագետ, հավասարակշռված: Դրան նպաստեցին մի քանի գործոններ.

- Որպես ինֆորմացիոն աղբյուր՝ ակտիվ ու օպերատիվ էր ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը,

- Մեդիափորձագետները, օգտագործելով հատկապես Facebook սոցիալական ցանցը, օգնում էին իրենց խորհուրդներով ու հորդորներով:

Բացթողումների մասին խոսելով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները հետագա նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար առաջարկում են հետևյալը.

⁵ www.lin.am/2012890.html

⁶ <http://hetq.am/arm/news/66976/vayragutyunner-talishum-zgushacum-hraparakvats-e-gndak-aharvats-andzanc-lusankar.html>

⁷ Նույն տեղը:

- առաջնագծում ապահովել լրագրողների անվտանգությունը,
- փոխել պետական գերատեսչությունների կողմից տրամադրվող տեղեկատվության ձևաչափը՝ մամուլի հաղորդագրություններից անցնելով բրիֆինգների,
- հղում չտալ աղբրեջանական և թուրքական աղբյուրիների չճշտված, ոչ հավաստի հրապարակումներին,
- հայ նյութները պետք է աշխատեն ոչ միայն ներքին շուկայի համար, այլև արտաքին աշխարհի⁸:

Վերջին կետը, կարծում ենք, մեր առջև ծառայած կարևոր մարտահրավերներից մեկն է, քանզի տեղեկատվական պատերազմում պակաս կարևոր չէ արտասահմանյան լրատվամիջոցների դերակատարությունը: Արցախյան վերջին զարգացումները ցույց տվեցին, որ ռուսական և ուկրաինական լրատվամիջոցները հակամարտությունը լուսաբանեցին ավելի չեզոք, մինչդեռ ռուսական լրատվամիջոցները նույն դիրքորոշումը չունեին “Էլեկտրիկ Երևան”-ը լուսաբանելիս:

Ինչպես նկատում է արևմտյան տեսաբան Ռոս Հովարդը, “Քչերն ունեն հակամարտության լուսաբանման մասին անհրաժեշտ գիտելիքներ: Մակայն հակամարտությունը վերլուծելու հմտություններ ունենալը հնարավորություն կտա լրագրողին դառնալ ավելի պրոֆեսիոնալ, կատարել առավել արդյունավետ աշխատանք”⁹:

Անփոփելով՝ նկատենք, որ հասարակական, քաղաքական տարբեր իրադարձությունների մասին տեղեկատվական գրագետ հոսք ապահովելը մերօրյա լրագրողի առջև ծառայած կարևոր մարտահրավեր է, և սոցիալական մեդիայի դարաշրջանում հենց լրագրողը պետք է դառնա հիմնական գոտի՝ ի նպաստ որակյալ լրագրության:

Բանալի բառեր-հակամարտություն, տեղեկատվական պատերազմ, մեդիա-ագրեսիա, ապրիլյան քառօրյա, լրագրողական էթիկա, տեղեկատվական անվտանգություն:

Վարդուհի Պետրոսյան, էթիկական մարտահրավերները ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին-«էթիկական մարտահրավերները ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին» վերնագրված հոդվածում մի կողմից քննության են առնված հակամարտության ժամանակ լրագրողի դերին առնչվող հարցերը, մյուս կողմից՝ այն մարտահրավերները, որոնք ոչ միայն վերափոխում են մեդիա բովանդակությունը, այլև թելադրում նոր պահանջներ: Այս կարևոր հարցերի անդրադարձն էլ ամբողջացվել է 2016թ. Ապրիլյան պատերազմի համատեքստում:

Вардуй Петросян, Журналистика во время конфликта: Вызовы и этические вопросы-В статье, оглавленной “Журналистика во время конфликта: Вызовы и этические вопросы”, с одной стороны рассматривается вопрос роли журналиста во время конфликтной ситуации, а с другой-те вызовы, которые ни только меняют контент меди, но и диктуют новые требования.

⁸ www.media.am/ Մամվել Մարտիրոսյան, Տիգրան Քոչարյան/

⁹ **Ross Howard**, Sensitive journalism, A handbook, Denmark, 2004, p. 23. Pub. Published in Denmark by Published in Denmark by DUS and IMPACS

Эти важные вопросы рассматривались в контексте Апрельской войны 2016-ого года.

Varduhi Petrosyan, Journalism during conflict: Challenges and ethical issues-The article, titled "Journalism during conflict: Challenges and ethical issues", on the one hand is discussed the import role of journalists during the conflict situation and the other hand it concentrated on the new challenges which not mainly change the media content but also suggest the new requirements. All these issues are presented and analyzed in the context of Armenian-Azerbaijan April war in 2016.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԿՈՆՏԵՆՏԻ ԻՆՏԵՐՆԵՏ ԱՐԽԻՎԱՑՈՒՄԸ ՅՈՒԹՈՒԲՈՒՄ (YOUTUBE.COM)

ՀԱՅԿ ՍՏԵՓՈՒՅԱՆ

Այսօր, որքան էլ խոսվի այն մասին, որ հեռուստատեսությունը զիջում է դիրքերը, որ երիտասարդ սերունդն ավելի քիչ է նայում հեռուստացույց, միևնույնն է՝ Հայաստանում հեռուստատեսությունը ամենալայն լսարանն ունեցող զանգվածային լրատվական միջոցն է: Ավելին՝ ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հեռուստատեսությանն ընդլայնել իր լսարանը՝ դուրս գալով հեռուստակրանների սահմաններից այն կողմ: «Հեռուստացույց դիտել» արտահայտությունը չի սահմանափակվում միայն հեռուստացույց սարքը դիտելով. այսօր կարելի է «հեռուստացույց դիտել» ինտերնետում ուղղիղ հեռարձակմամբ, տարատեսակ պլանշետների և սմարթֆոնների միջոցով՝ նրանց համար նախատեսված հավելվածների և ծառայությունների շնորհիվ, որոնք արդեն հասանելի են Հայաստանում: Օրեցօր աճում է հեռուստատեսության հետաքրքրությունն ինտերնետի հանդեպ, քանզի ձևավորվում է նոր թվային լսարան՝ իր պահանջներով և առանձնահատկություններով: Ըստ The State of Broadband-ի ուսումնասիրության՝ 2015թ-ին Հայաստանի բնակչության 58.25%-ը մուտք ուներ ինտերնետ¹: Այսօր՝ 2017թ-ին, այդ թիվն անկասկած աճել է:

Խոսելով ինտերնետ-հեռուստատեսություն կապի մասին՝ պետք է նշել, որ բացի ուղղիղ հեռարձակումից, կարևորագույն կետերից է կոնտենտի ինտերնետային արխիվացումը: Դա իրենից ներկայացնում է հեռուստատեսային արտադրանքի սեղադրում վեբ հարթակում, ինչը հնարավորություն է տալիս թվային լսարանին ցանկացած պահ, ցանկացած անգամ դիտել կոնկրետ հաղորդում/ֆիլմ, «կիսվել» սոցիալական ցանցերում կամ ընկերների հետ և այլն: Հեռուստատեսային արտադրանքի ինտերնետ արխիվացումը հնարավորություն է տալիս հեռուստադիտողին կառուցել իր անհատական ծրագիրը՝ բաղկացած սիրելի հաղորդումներից և ֆիլմերից: Նմանատիպ մոտեցումն այսօր ընդունված չափանիշ է պրոֆեսիոնալ հեռուստաընկերությունների համար, որոնք նախընտրում են օգտագործել ժամանակակից վիդեո-հոսթինգային տեսահարթակներ՝ ՅուԹուբի գլխավորությամբ (*YouTube.com*):

Հայկական թվային դաշտում ինտերնետ արխիվացումը հնարավորություն է տալիս հեռուստատեսային արտադրանքը հասանելի դարձնել ոչ միայն ինտերնետ լսարանին (*այն է՝ դպրոցականներ, երիտասարդներ, օֆիսային աշխատակիցներ, ովքեր չունենալով հեռուստացույց դիտելու ժամանակ՝ այս կամ այն նախագծին հետևում են ինտերնետով*), այլ նաև սփյուռքին, որի հետաքրքրությունն այսօր հայկական հեռուստատեսության նկատմամբ շատ կարևոր է և հրատապ:

ՅուԹուբն այսօր Հայաստանում ամենաշատ այցելվող կայքն է²: Դիտարկենք հայաստանյան հեռուստաընկերությունների յուԹուբյան առաջատար ալիքների

¹ The State of Broadband: Broadband catalyzing sustainable development, September 2016, <http://broadbandcommission.org/Documents/reports/bb-annualreport2016.pdf>.

² St u SimilarWeb, Top Websites Ranking Armenia, <https://www.similarweb.com/top-web-sites/armenia>

քառյակն իրենց քանակական, բովանդակային, լսարանի ակտիվության տեսանկյունից:

Աղյուսակ 1. (1/10/17թ. տվյալներ)

Հեռուստաընկ.	Գրանց. տարեթիվ	Բաժանորդ, քանակ	Տեսան. Քանակ	Շարքաթ. Ներքեռ. գործակից	Ընդհանուր Դիտումներ
Շանթ	09/09/10թ.	244,029	17,413	47,3	617,759,631
Արմենիա TV	17/07/12թ.	186,515	3,779	13,9	292,958,204
ՊանԱրմ. TV	24/02/15թ.	182,093	3,802	28	434,050,911
Հանր. հեռուստ.	18/12/13թ.	27,647	13,237	67	29,043,025

Հայկական հեռուստաընկ. առաջատար յուրօրյան ալիքների վիճակագրությունը

Աղյուսակ 1-ում պատկերված են հայկական յուրօրյան հարթակի առաջատար ալիքների՝ Շանթի, Արմենիա TV-ի, ՊանԱրմենիան TV-ի և Հանրային Հեռուստաընկերության վիճակագրությունը, որոնք իրենց ծավալով և աճի դինամիկայով բավական առաջ են մյուսներից: Բաժանորդների նման քանակը հայալեզու ինտերնետ լսարանի համար բավական շոշափելի է: Դրանում համոզվելու համար կարող ենք կատարել համեմատություն ռուսական Առաջին Ալիքի և հայկական Շանթ հեռուստաընկերության յուրօրյան էջերի միջև: Առաջին ալիքը, գրանցվելով ավելի վաղ՝ 2006թ-ի ապրիլի 3-ին, ունենալով տասնյակ անգամ ավելի մեծ վիճակագրական լսարան (*աշխարհում ռուսալեզու է համարվում մոտ 245 մլն մարդ*³) և գրանցված մեկ միլիոն բաժանորդ, իր ընդհանուր դիտումների թվով զիջում է Շանթին ավելի քան 48,1 մլն-ով (ըստ 1/10/17թ դրությամբ): Դա խոսում է այն մասին, որ աշխարհում հայալեզու փոքրիկ սեգմենտում հետաքրքրությունը հայկական յուրօրյան կոնտենտի հանդեպ բավական մեծ է:

Մինչ հայկական հեռուստաընկերությունների յուրօրյան ալիքների դիտարկմանն անցնելը, հետագա թերիսակացումներից խուսափելու համար, տանք որոշակի մեկնաբանություն ՊանԱրմենիան TV-ի յուրօրյան էջի վերաբերյալ: ՊանԱրմենիան TV-ի յուրօրյան ալիքն, ի տարբերություն մյուսների, գրանցված է ոչ թե AM (Հայաստան) այլ US (ԱՄՆ) սեգմենտում: Պատճառն այն է, որ ՊանԱրմենիանը մեդիա գրուպ է, որի կազմի մեջ են մտնում Արմենիա TV-ն, ԱԹՎ-ն, ՊանԱրմենիան TV-ն և Արմնյուզը: Այն իրենից ներկայացնում է հայաստանյան հեռուստատեսային կոնտենտի խաչմերուկ, որտեղ ներբեռնվում են նախագծեր և՛ Արմենիա, և՛ Արմենիա Պրեմիում և՛ ԱԹՎ հեռուստաալիքներից:

Անդրադառնալով հայկական հեռուստաընկերությունների առաջատար յուրօրյան ալիքների ուսումնասիրությանը՝ նշենք, որ քանակական հարթության մեջ կարևորում ենք հետևյալ բաղադրիչները՝ բաժանորդների թիվը (*լսարանը*), դիտումների և ներբեռնված տեսանյութերի քանակը: Բաժանորդների թվով առաջատարն այսօր Շանթն է, որը բավական առաջ է անցել իր մրցակիցներից: Նման առավելությունն ունի մի քանի պատճառ: Նախ նշենք, որ Շանթը յուրօրում առաջնեկներից էր, հետևաբար զարմանալի չէ լսարանի նման ծավալը: Կարևորագույն պատճառներից է նաև վարած ծրագրա-ձևաչափային և բովանդակային քաղաքականությունը:

³ <http://vesti-ukr.com/kultura/208215-rucckij-jazyk-terjaet-ctatic-mezhdunarodnoho>


Աղյուսակ 2. (1/10/17թ. տվյալներ)

Հեռուստա- ընկերություն	Բաժանորդագրություններ			Դիտումներ		
	Վերջին 30 օր 1/09 – 1/10	Օրակ. միջին	Տարեկան կանխ.	Վերջին 30 օր 1/09 – 1/10	Օրական Միջին	Տարեկա ն Կանխ.
Շանթ	5,643 (+7.4%)	+189	+67,7 հազ	9,969,870 (-7,8%)	332,329	119,6 մլն
Արմենիա TV	1,796 (+27,8%)	+60	+21,6 հազ	2,871,978(+7,9%)	95,733	34,5 մլն
ՊանԱրմ. TV	5,518(+65,5%)	+184	+66,2 հազ	12,832,770(+25,4%)	427,759	154 մլն
Հանր. Հեռուս.	2,197 (+28,6%)	+74	+26,4 հազ	1,862,061 (+2,7%)	62,069	22,3 մլն

Վիճակագրական տվյալներ յուրօրյան ալիքների բաժանորդագրությունների և դիտումների վերաբերյալ

Շանթն այսօր հաստատուն կերպ շարունակում է ընդլայնել իր լսարանը՝ օրական ունենալով միջինը 189 նոր բաժանորդ և 332հազ դիտում (*տե՛ս աղյուսակ 2*): Բաժանորդների թվով երկրորդ տեղում Արմենիա TV-ն է, որը մոտ ապագայում տեղը կզիջի ՊանԱրմենիան TV-ին՝ հաշվի առնելով վերջինիս աճի դինամիկան (*տե՛ս գծապատկեր 1*):

Գծապատկեր 1. Յուրօրյան ալիքների բաժանորդների թվի աճի դինամիկան 2010-2018⁴թթ.



ՊանԱրմենիան TV-ի յուրօրյան էջն ամենաարագ զարգացող ալիքներից է: Ստեղծվելով միայն 2015թ-ին՝ այն ընդհանուր դիտումներով արդեն իսկ առաջ է անցել Արմենիա TV-ից, իսկ 2018թ-ին ըստ SocialBlade պորտալի կանխատեսումների կգրանցի ավելի շատ դիտում, քան առաջատար Շանթը (*տե՛ս աղյուսակ 2*): Ինչ վերաբերում է Հանրային հեռուստաընկերության յուրօրյան էջին, ապա այն իր ծավալով միայն չորրորդն է, ընդ որում զիջելով առաջատար եռյակին ահռելի տարբերությամբ: Դա զարմանալի չէ, քանի որ Հանրային հեռուստաընկերությունը վերջին տարիներին եթերում ևս զիջել է իր դիրքերը: Ըստ «Ադմոսֆեր Արմենիա» միջազգային ընկերության 2016թ-ի տվյալների հայկական եթերում Հան-

⁴ 2018թ-ի կանխատեսումը ներկայացված է ըստ Socialblade պորտալի, *տե՛ս* Socialblade.com

րային հեռուստաընկերությունը վարկանիշով չորրորդն է՝ զիջելով Շանթին, Արմենիային և ԱԹՎ-ին⁵:

Հատկանշական է, որ ներբեռնված տեսանյութերի քանակով Հանրային հեռուստաընկերության յուրուրյան էջը զիջում է միայն Շանթին՝ ընդ որում գերազանցելով նրան տեսանյութերի ներբեռնման գործակցով՝ շաբաթական միջինը 65,5 տեսանյութ (տե՛ս աղյուսակ 2): Այս առումով, իհարկե, կարելի է առանձնացնել տեսանյութերի ներբեռնման քաղաքականության երկու մոտեցում՝ խիտ և նոսր: Շանթը և Հանրային հեռուստաընկերությունը վարում են ներբեռնման խիտ քաղաքականությունը՝ ունենալով շաբաթական միջինը 45-65 նոր տեսանյութ: Խտությունն այս դեպքում ապահովվում է հեռուստատեսային նախագծերի՝ առանձին տեսանյութերի բաժանմամբ: Օրինակ՝ Շանթի յուրուրյան էջում հեռուստատեսային «Իքս Ֆակտոր» երաժշտական նախագծի յուրաքանչյուր ելույթ ներբեռնվում է որպես առանձին տեսանյութ: Նման մոտեցումը բնորոշ է երաժշտական և տեղեկատվական-վերլուծական ձևաչափային նախագծերին, որն առավել պարզեցնում է որոնման գործընթացը: Սակայն շատ տեսանյութեր, նման մեծ հոսքի մեջ, պարզապես աննկատ են մնում: Ինչ վերաբերվում է Արմենիա TV և ՊանԱրմենիան TV յուրուրյան էջերին, ապա իրենք վարում են ներբեռնման նոսր քաղաքականություն՝ շաբաթական ունենալով միջինը 13-25 նոր տեսանյութ: Այս պարագայում նախատապվություն է տրվում երկար տևողությամբ, ընդհանուր հոսքում նկատվող տեսանյութերին:

Դիտարկելով հայկական վերոնշյալ հեռուստաընկերությունների յուրուրյան էջերը բովանդակային հարթության մեջ՝ պետք է կարևորենք նրանց վարած ծրագրային քաղաքականությունը: Իհարկե մի կողմից հեռուստաընկերության յուրուրյան էջն իր թեմատիկ և ձևաչափային առումով համապատասխանում է մայր ալիքին, քանզի հանդիսանում է վերջինիս ծրագրային քաղաքականության արտացոլումն ինտերնետում, մյուս կողմից՝ այն ունի սեփական ծրագիրն ու առանձնահատկությունները, քանի որ ոչ բոլոր հաղորդումներն են հեռուստաալիքից տեղափոխվում յուրուր: Հետևաբար կա յուրուրյան ալիքի բովանդակությունը հեռուստածրագրից զատ ուսումնասիրելու անհրաժեշտություն: Նշենք, որ վարկանիշային առումով առաջատար հայկական հեռուստաալիքները՝ Արմենիան, Շանթը, ԱԹՎ-ն և Հանրային հեռուստաընկերությունը, նախընտրում են լայնահաղորդ, բազմազան թեմատիկայով ձևաչափ⁶:

Հետագոտելով Շանթի յուրուրյան էջի բովանդակությունը, կարող ենք տեսնել, որ փորձ է արված բավարարել առավել լայն նախասիրություններով լսարանի պահանջները: Առկա են երաժշտական, կրթադաստիարակչական, երգիծական, առավոտյան, հասարակական-քաղաքական հաղորդումներ, հեռուստասերիալներ և այլն: Չնայած նման բազմազանության, դիտումների մեծ մասնաբաժինն ընկնում է երգիծական, երաժշտական հաղորդումների ու հեռուստասերիալների վրա: Դա պայմանավորված է նրանով, որ հեռուստադիտողի շառժառիթները յուրուր և հեռուստացույց դիտելիս տարբեր է. Յուրուրյան լսարանի 86%-ը նախ-

⁵ Հայաստանում ամենաբարձր դիտելիությունն ունեցել է «Շանթ» հեռուստաընկերությունը, slaq.am, <http://www.slaq.am/arm/news/1139186/>:

⁶ **Երիցյան Ս.Ս.**, Ժամանակակից հեռուստատեսություն. Բովանդակության և ձևի որոնումներ-Ե, 2010թ. էջ 122:

ընտրում է «զվարճանք և հանգիստ» կատեգորիայի հաղորդումներ⁷: Հավասարաչափ ունենալով վարկանիշային ծրագրեր, Շանթ հեռուստաընկերությունն իր յուրօրյան էջում փորձում է պահպանել ձևաչափային հավասարակշռություն: Որպես արդյունք՝ ամենադիտված տասը տեսանյութերը բաղկացած են երժշտական, երգիծական հաղորդումներից ու սերիալներից (*ամենադիտվածը՝ Արենա Live-Նարե Գևորգյանի կատարմամբ «մոր երգը զինվորին» կատարումն է՝ 5,5 մլն դիտում*):

Դառնալով Արմենիա հեռուստաընկերության յուրօրյան էջի բովանդակային առանձնահատկություններին, արժե ծրագրային քաղաքականությունը բաժանել երկու փուլի՝ սերիալային և հետսերիալային շրջանների: Որպես հայկական առաջատար յուրօրյան էջ՝ Արմենիա TV-ին ձևավորվեց սերիալային շրջանում ի շնորհիվ իր վարկանիշային սիթքոմների («Տնփեսա», «Ֆուլ Հաուս», «Դոմինո»): Դա է վկայում այն, որ ամենադիտված տեսանյութերի տասնյակում միայն «Ֆուլ Հաուս» սիթքոմի էպիզոդներն են (*ամենադիտվածը՝ Ֆուլ Հաուս 1 սերիա- 3,3 մլն դիտում*): 2017թ.-ի կեսերին որոշում կայացվեց սերիալային կոնտենտը տեղափոխել ՊանԱրմենիան TV-ի յուրօրյան էջ՝ ծրագրում թողնելով միայն առավոտյան, հեռուստախոհանոցային, հասարակական-քաղաքական հաղորդումներ և ինտելեկտուալ, երգիծական հեռուստախաղեր: Դա հանգեցրեց դիտումների և բաժանորդների թվի անկման: Վերջին 30 օրվա ընթացքում Արմենիա TV-ին բաժանորդագրվել է ավելի քիչ մարդ, քան լսարանով մի քանի անգամ պակաս Հանրային հեռուստաընկերությանը (*տե՛ս աղյուսակ 2*): Այս պարագայում, սակայն, ճիշտ չի լինի ասել, որ ծրագրային իր քաղաքականության պատճառով Արմենիա TV-ն կորցրեց ինտերնետ լսարանի մեծ մասը: Այստեղ տեղի ունեցավ ոչ թե լսարանի կորուստ, այլ փոխանցում զարգացման առումով ավելի հեռանկարային յուրօրյան ալիք՝ ՊանԱրմենիան TV:

ՊանԱրմենիան TV-ի յուրօրյան էջը, բովանդակային առումով, սերիալային է: Ծրագիրը բաղկացած է Արմենիա TV-ի, ԱԹՎ-ի և Արմենիա Պրեմիում հեռուստաալիքի սերիալներից: Հեռուստասերիալների նման խտությունն է, որ ապահովում է դիտելիության առումով առաջին ցուցանիշը՝ օրական մոտ 427 հազ. դիտում (*տե՛ս աղյուսակ 2*):

Ինչ վերաբերվում է Հանրային հեռուստաընկերության յուրօրյան ալիքին ու նրա բովանդակությանը՝ ապա այստեղ չկա համակարգված ուղղվածություն՝ այն առավել քան որևէ մեկն արտացոլում է մայր ալիքի ծրագրային քաղաքականությունը: Այստեղ ներբեռնվում են տարրատեսակ այնպիսի ձևաչափային հաղորդումներ, ինչպիսիք են տեղեկատվական-վերլուծական, հասարակական-քաղաքական, մշակութային, մանկական, երաժշտական, կրթադաստիարակչական, հեռուստասերիալ և այլն: Ծրագրային բազմաթեմատիկ նման մոտեցումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ թվային տիրույթում գործում են այլ սկզբունքներ, որտեղ լսարանի պահանջներն այլ են: Որքան էլ հետաքրքիր և ճանաչողական լինեն հաղորդումները, միևնույն է, նրանք յուրօրում համեմատաբար պակաս են դիտվում (*ամենադիտված տեսանյութն ունի 311 հազ. դիտում*): Հեռուստադիտողը մեծ մասամբ յուրօր է գալիս հստակ նպատակով՝ դիտելու իրեն հե-

⁷ theRunet-Инфографика: аудитория YouTube в мире, <https://therunet.com /infographics /2574>

տաքրքրող կոնկրետ նախագիծը: Հիմանակում նման նախագծերն են՝ սերիալները, երաժշտական տեսահոլովակները և երգիծական հաղորդումները:

Վերջին հարթությունը, որում առաջարկում ենք դիտարկել հայկական հեռուստաընկերությունների յուրօրյան էջերը լսարանի ակտիվության հարթությունն է՝ իր գնահատականի և արձագանքի տեսանկյունից: Յուրօրին, ի տարբերություն հեռուստատեսության, հնարավորություն է տալիս հեռուստադիտողին անմիջապես, առանց միջնորդի արտահայտել իր վերաբերմունքը՝ հավանելով (like), չհավանելով (dislike) ու մեկնաբանելով տեսանյութը: Նման վիճակագրությունը հեռուստաընկերությանը թույլ է տալիս ճանաչել իր լսարանին, իմանալ ո՞ր ձևաչափային ծրագրերն են առավել սիրված կամ քննադատվող, լսել իր հեռուստադիտողի առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքը: Որքան մեծ է դրական/բացասական գնահատականների թիվը, որքան շատ են մեկնաբանությունները՝ այնքան ավելի քննարկվող և վարկանիշային են դառնում նախագծերը և՛ հասարակությունում, և՛ թվային տիրույթում: Աղյուսակ 3-ում պատկերված են հայկական հեռուստաընկերությունների առաջատար յուրօրյան ալիքների լսարանի ակտիվության վիճակագրությունը: Ինչպես տեսնում ենք, լսարանի ակտիվության առումով առաջատարն է Պանարմենաին TV-ին: Պատճառը, թերևս, իր ծրագրում ամենավարկանիշային հեռուստասերիալներ ունենալն է: Սերիալն այսօր եթերում ամենավարկանիշային, ամենաքննարկվող և քննադատվող հեռուստատեսային ձևաչափն է: Հետևաբար այսօր յուրօրը քննարկումների ևս մեկ, անչափ կարևոր հարթակ է: Ինչ վերաբերվում է հանրային հեռուստաընկերությանը, ապա մեկնաբանություն թողնելու հնարավորությունն անջատված է:

Աղյուսակ 3. (1/10/17թ. տվյալներ)

Հեռուստաընկ.	Դրական արձագանք (Like)	Բացասական Արձագանք (Dislike)	Դրական արձագանքի %	Մեկնաբան. Ընդ. Թիվ
Շանթ	332,001	29,245	91,9%	9,250
Արմենիա TV	322,928	31,824	91 %	27,774
Պանարմ. TV	488,543	57,958	89,3%	50,718
Հանր. Հեռուստ.	32,850	4,081	88,9%	0

Յուրօրյան ալիքների լսարանի ակտիվության վիճակագրությունը

Այսպիսով՝ այսօր հայկական առաջատար հեռուստաընկերությունների կողմից իրականացվող քայլերը թվային տիրույթում իրենց լսարանն ընդլայնելու համար, ակնհայտ են դառնում: Օգտագործելով յուրօրին իբրև նախագծերի արխիվացման հարթակ՝ հեռուստաընկերություններն ունեն հայալեզու ինտերնետ սեզմենտում պրոֆեսիոնալ թվային ալիքներ, որոնք, ունենալով աճի դրական դինամիկա՝ հնարավորություն են տալիս. առաջին՝ Հայաստանի և սփյուռքի միջև կամրջի ստեղծման՝ հասանելի դարձնելով հեռուստատեսային երաժշտական, երգիծական հաղորդումներն ու ֆիլմարտադրությունն իր բոլոր դրսևորումներով (սերիալներ, հեռուստաֆիլմեր և այլն), երկրորդ՝ երիտասարդ և թվային լսարանին առաջարկում հեռուստացույց նայելու այլընտրանքային հարթակ:

Բանալի բառեր-Youtube, հեռուստատեսություն, Արմենիա TV, Շանթ, Պան-Արմենիան TV, Հանրային հեռուստարձկերություն, սերիալ, հեռուստածրագիր, վիճակագրություն, վարկանիշ:

Հայկ Ստեփանյան, Հայկական հեռուստատեսային կոնտենտի ինտերնետ արխիվացումը ՅուԹյուբում (YouTube.com)-Հոդվածում ուսումնասիրված են հայկական հեռուստարձկերությունների առաջատար յուԹյուբյան ալիքները (Շանթ, Արմենիա TV, ՊանԱրմենիան TV, Հանրային հեռուստարձկերություն): Հավաքագրված վիճակագրական տվյալները դիտարկված են՝ քանակական, բովանդակային և լսարանի ակտիվության հարթություններում:

Айк Степанян, Интернет архивирование армянского ТВ контента в Ютубе (YouTube.com)-В статье изучены ведущие ютубовские каналы армянских телекомпаний: (Шант, Армения ТВ, ПанАрмения ТВ, Общественное телевидение). Собранные статистические данные рассмотрены в плоскостях количественного, содержания и активности аудитории.

Hayk Stepanyan, Internet archiving of the Armenian TV product in YouTube-The overall objective of the article is to provide a comprehensive overview and statistics of the top leading Armenian YouTube channels (Shant TV, Armenia TV, PanArmenian TV, Public TV) based on the number of active users, content quality and audience relevant response.

ԶԼՄ-ՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Արդի աշխարհում տեղեկատվության զանգվածային միջոցները, հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված, դեռևս գտնվում են մեծ վերափոխումների փուլում, որը տեսաբանները կոչում են կոնվերգենցիայի փուլ: Դեռևս տեղի են ունենում գործընթացներ, որոնք փոխում են զանգվածային լրատվամիջոցների համամասնությունը, կառուցվածքը, բովանդակությունը, ինչը, բնականաբար, իր ազդեցությունն է թողնում նաև լրագրության ոճի, ձևի և ամենակարևորը՝ լեզվի վրա: Օրինակ՝ հայտնի է, որ աշխարհում այժմ տարբեր լրատվամիջոցներ տնօրինող ընկերություններ փորձում են վերափոխել իրենց կառուցվածքը՝ մասնավորապես տպագիր մամուլը դարձնելով համացանցային²: Հայաստանում ևս 2000-ականներից ի վեր սկսվեց մի գործընթաց, որով համացանցային լրատվամիջոցները սկսեցին ավելի լայն լսարան ունենալ, քան տպագիր մամուլը: Հեռուստատեսությունը ևս որոշակի վերափոխումների է ենթարկվում, մասնավորապես, Հայաստանի բոլոր առաջատար հեռուստաընկերություններն ունեն իրենց կայքերը, իսկ կայքերն ունեն աճման միտում ունեցող վիդեո-բովանդակություն, որը հակված է համացանցային հեռուստաընկերություն դառնալուն: Նույնպիսի վերափոխումներ առկա են նաև ռադիո-համացանց հարաբերություններում. ռադիոընկերություններն ունեն կայքեր, և կան առցանց հեռարձակվող ռադիոհաղորդումներ:

Հայաստանում լրագրության խնդիրներն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: ԶԼՄ-ների այս վերափոխումներն ավելի են ընդգծել խնդիրները գոյություն ունեցողներին ավելացնելով նորերը: Հայ իրականության մեջ կան բազմաթիվ անդրադարձներ այդ խնդիրներին: Օրինակ՝ Երևանի մամուլի ակումբի նախագահ Բ. Նավասարդյանը նշում է հայկական մամուլի խնդիրների շատ մեծ ընդգրկում՝ էթիկայից մինչև ձեռնարկատիրական գործունեություն¹: Ա. Ավետիսյանը, դասակարգելով համացանցային լրատվության առաջ բերած խնդիրները, գրում է, որ դրանք սկսվում են լրագրողի որակավորումից. «Համացանցային լրագրության առաջացումն ու առանձնացումը ավանդական լրագրությունից բազմաթիվ մարտահրավերներ առաջադրեցին մասնագետներին, որոնցից ամենակարևորները վերաբերում էին լրագրողների որակավորման համար անհրաժեշտ նոր պահանջներին»³:

Բնականաբար, սխալվելը բնորոշ է աշխարհի բոլոր լրատվամիջոցներին: Ա. Իսրայելյանն առանձին հոդվածով անդրադարձել է այն խնդրին, որ սխալվել կարող են նույնիսկ ամենից հռչակավոր լրատվամիջոցները, այն հայկական

² Տե՛ս **Պետրոսյան Մ.**, Միջազգային մեդիան լուրջ վերափոխումների շեմին, [https:// media.am/international-media-transformation](https://media.am/international-media-transformation) (15.09.2017)

¹ **Նավասարդյան Բ.**, Որակյալ ժուռնալիստիկա. պատվաստանյութ ինքնառնչացման դեմ, <http://www.lragir.am/index/arm/0/comments/view/28136> (15.09.2017)

³ **Ավետիսյան Ա.**, Համացանցային լրագրողի մասնագիտական վերափոխումների հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2016 № 3 (21), էջ 72:

առանձնահատկություն չէ⁴: Մակայն կան նաև «հայկական առանձնահատկություններ», որոնք ունեն օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ: Օրինակ՝ համացանցի և հատկապես սոցիալական ցանցերի կիրառության կտրուկ աճին գուգա-հեռ, ինչպես նաև համացանցային գովազդի տարածման շնորհիվ՝ եղան անհատներ, որոնք փորձեցին ու այժմ էլ փորձում են լրատվամիջոցի անվան տակ հեշտորեն գումար վաստակել: Բնական է, որ «թիթեռի կյանք» ունեցող այս կայքերը ոչ մի կերպ լրատվամիջոց չեն կարող դառնալ, թեև նրանց թեկուզև կարճ գոյությունն արդեն խոսում է հայկական լսարանի լրատվական ու համացանցային շատ ցածր մակարդակի պահանջմունքների և իմացության մասին: Մյուս կողմից՝ հայկական կայքերի մի մասում աշխատում են մասնագիտական կրթություն կամ նույնիսկ ընդհանրապես ոչ մի տեսակի բարձրագույն կրթություն չունեցող անձինք, ինչը հանգեցնում է, օրինակ, հայերենի գրագիտության մակարդակի կտրուկ անկմանը: Մակայն լեզվի խնդիրը միայն կրթության պակասից չէ:

Հայերենի ոճաբանության ուսումնասիրություններում հատուկ առանձնացվում է հրապարակախոսական ոճը՝ որպես հայերենի գործառական հինգ ոճերից մեկը: Ըստ լեզվաբան Լևոն Եզեկյանի՝ «Հրապարակախոսական ոճը նորմատիվ, կանոնակարգված բնույթ ունի, այստեղ խոսքի ատաղձը, լեզվական նյութը, բառապաշարը և քերականական իրողությունները գերազանցապես պատկանում են գրական լեզվի ոլորտին»⁵: Անգեն աչքով էլ երևում է, որ այս ձևակերպումը, մեղմ ասած, հնացել է: Ընդհանուր առմամբ, հայ լրագրության լեզուն բառապաշարի և քերականական կառույցների մակարդակներում ձեռք է բերել առօրյա-խոսակցական ոճի առանձնահատկություններ: Սա նախ և առաջ վերաբերում է համացանցային լրագրությանը: Իսկ պատճառներից մեկը կառուցվածքային բնույթն է. ի տարբերություն որոշակի ավանդույթ ունեցող լրատվամիջոցների՝ համացանցային լրագրության կազմակերպիչները, հնարավորինս կրճատելով իրենց ծախսերը, մեծ մասամբ չեն ունենում երկրորդ խմբագրի, թողարկիչ-խմբագրի և սրբագրիչի հաստիքները: Այս առումով շատ ավելի բարվոք է իրավիճակը տպագիր մամուլում և հեռուստատեսությունում: Ավելին՝ նկատելի է, որ վերջին երկուսին պատկանող համացանցային ռեսուրսներում ևս լեզվական սխալների շատ ավելի քիչ քանակի ենք հանդիպում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ եթերից ու տպագրությունից բացի խմբագիր-սրբագրիչների որոշակի համակարգ գործում է նաև համացանցի բաժիններում:

Մի կողմից ավանդույթի պակասը, մյուս կողմից սուր մրցակցությունը պատճառ են դառնում, որ լրատվամիջոցներն սկսում են խաբուսիկ վերնագրեր և հուզական բառապաշար օգտագործել: Ընդհանրապես, հայկական առցանց լրատվամիջոցներին բնորոշ է նյութի տեղադրումից հետո խմբագրելու, սրբագրելու, ինչպես նաև վերնագիրը և նույնիսկ տեղադրման ժամը փոխելու արատավոր պրակտիկան: Կոնկրետ մի իրադարձության օրինակով Ն. Հախվերդյանը բացահայտում է, թե ինչպես կարող են փոխվել հայկական առցանց լրատվամիջոցների վերնագրերը՝ հաստատումից դառնալով հարցական, ապա նաև ձեռք բերելով ժխտական բնույթ⁶: Մրա պատճառը նախ և առաջ մրցակցությունն է: Ի տարբերություն հատկապես տպագիր մամուլի, որտեղ մրցակցությունը շատ ավելի

⁴ **Իսրայելյան Ա.**, «Առանց սխալվելու իրավունքի» կարգախոսը ՋԼՄ-ների համա՞ր չէ, <https://media.am/World-media-misinformation-about-Armenia>

⁵ **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 56:

⁶ **Հախվերդյան Ն.**, Ցնցվող լրահոս, <https://media.am/suren-khachatryan-and-headlines>

մեղմ և ուշ դրսևորումներ է ունենում, համացանցային ռեսուրսներում մրցակցությունը ընդհանրապես նշանակություն ունի. մի քանի ընդհանուր հրապարակված նյութը հանգեցնում է ընթերցողների կորստին, ինչն էլ իր հերթին բերում է ֆինանսական հոսքերի փոքրացմանը: Հետևաբար, լեզվական ոչ պատշաճ մակարդակի մյուս պատճառը արագությունն է:

Tert.am կայքի խմբագիր Ս. Խաչատրյանը համացանցային լրատվամիջոցների բացասական կողմերից է համարում դրամատիզացիան, որը, բնականաբար, դրսևորվում է լեզվական իրողությամբ.

«Պատահարները լուսաբանելիս կարևոր է նաև բառերի ընտրությունը: Լրատվամիջոցները երբեմն օգտագործում են բառեր, որպեսզի ավելի դրամատիկ դարձնեն իրադրությունը կամ խղճահարություն առաջացնեն կոնկրետ դժբախտ պատահարի ենթարկված մարդու նկատմամբ, ինչը կարծում եմ, նույնպես ընդունելի չէ, և հարկավոր է օգտագործել հնարավորինս չեզոք բառեր, արտահայտություններ, որոնք չունեն բացասական, ծաղրական, հեզնական երանգ, այսինքն՝ պարզապես հաղորդել փաստերը»⁷:

Համացանցային լրատվամիջոցներում առկա լեզվական գրագիտության մակարդակին միակ անդրադարձը գտնում ենք մեդիափորձագետ Ս. Մարտիրոսյանի հոդվածում. հեղինակը փորձում է այլ մեկնաբանություն տալ ինդրին նշելով, որ տեխնոլոգիական նման զարգացվածության մակարդակում իրադարձության աղբյուրը մշտապես լինելու են պատահական մարդիկ, որոնք իրենց արագ արձագանքմամբ և տեղեկատվության հրապարակմամբ միշտ էլ առաջ են անցնելու լրատվամիջոցներից.

«Իսկապես խնդիր է առաջանում: Մի ենթադրական անգրագետ կարող է խփել գրագետ լրագրողների (ասեմ, որ կրկին ենթադրական) մի մեծ խմբի գործին: Եվ այդպես էլ լինում է և լինելու է, քանի որ իրականությունը փոխվել է: Արդեն ուշ է փորձել անցյալ դարի չափանիշներով պահանջել գնահատել լրատվական դաշտը: Ինտերնետը գոյություն ունի, այն էլ ոնց գոյություն ունի, բլոգերն էլ, սոցիալական ցանցերն էլ:

Խմբագիրներից ով հասկացել է դա, արդեն վաղուց ինքն էլ, իր լրատվամիջոցն էլ նաև բլոգ են դարձել: Ինչ էլ լինի, միեւնույն է, ՁԼՄ-ներն ավելի հզոր են: Բլոգերները հաղթում են միայն առաջին պահին՝ օպերատիվությամբ: Հետո զայիս են այն ՁԼՄ-ները, որոնք կարողանում են աշխատել այլընտրանքային լրատվամիջոցների հետ: Իսկ ամենավերջում «տաշտին» մոտենում են այն ՁԼՄ-ները, որոնք դեռ փորձում են միայն ավանդական մնալ: Եվ իրենց շատ ժամանակ արդեն չեն էլ նկատում»⁸:

Սակայն Ս. Մարտիրոսյանի տեսակետը դեռևս միանշանակ չի ընդունվում: Որպես դրա ապացույց՝ Մ. Հարությունյանը հանդես եկավ պատասխան հոդվածով, որով փորձեց հիմնավորել «երկրորդ աչքի» անհրաժեշտությունը, սակայն ակնհայտ է, որ այն հիմնավորումը, թե մարդը ինքն էլ կարող է դառնալ իր «երկրորդ աչքը», արդեն իսկ ապացուցում է, որ համացանցային լրատվամիջոցներում խմբագիր-սրբագրիչների համակարգը լուրջ ճգնաժամի առջև է կանգնած.

⁷ **Բարսեղյան Ա.**, Ինչպե՞ս լուսաբանել դժբախտ պատահարները, <https://media.am /no de/3544>

⁸ **Մարտիրոսյան Ս.**, Հալալն ու հարամը լրագրության մեջ. արդյո՞ք բլոգը ՁԼՄ է, <https://media.am/bloggers-vs-journalists>

«Ցանկացած տեքստ երկրորդ աչքի կարիք ունի: Աշխարհի բոլոր մեծ ու փոքր գրողների տեքստերը հետո անցել են պրոֆեսիոնալ խմբագիրների ձեռքի տակով, որովհետև աշխարհի անգամ մեծագույն գրողները «հետամնաց» են եղել՝ հասկացել են, որ կարող են նաև ուղղագրական, ոճական ու այլ տիպի սխալներ թույլ տալ: Իսկ մեր համացանցային հեղինակները... Դե նրանք առաջադեմ են, հետևաբար՝ անսխալական... Լավ, սարկազմը մի կողմ. համացանցային մեդիայում բացակայում է երկրորդ աչքը: Այն կարող է լինել հենց ինքը՝ հեղինակը, եթե որոշի գրելուց հետո գոնե մի անգամ իբրև ընթերցող կարդալ իր գրածը: Բայց նա դա չի անում: Համացանցային մեդիայի խմբագիրներն էլ շատ հաճախ աչք են փակում ուղղագրական, ոճական, շարահյուսական սխալների վրա. Մրցակցություն է, իբր, պիտի հասցնես ուրիշներից առաջ ընկնել»⁹:

Ամփոփելով ասվածը՝ պարզ է դառնում, որ հայ լրագրությունը, հատկապես համացանցային ոլորտում կարիք ունի լեզվական քաղաքականության և մեխանիզմների տեսական ուսումնասիրության և գործնական լուծումների:

Բանալի բառեր-ՁԼՄ, հեռուստատեսություն, ռադիո, կայք, մամուլ, կառուցվածքային փոփոխություն, լեզու, խմբագիր, գրագիտություն, համացանց, արագություն, պատահար:

Վահե Ղազարյան. ՁԼՄ-ների կառուցվածքային վերափոխումների ազդեցությունը լեզվական իրողության վրա-Տեխնոլոգիական աննախադեպ նվաճումները հանգեցրել են համաշխարհային մամուլի կառուցվածքային փոփոխությունների, ըստ որոնց՝ առցանց լրատվությունն օրեցօր ավելի մեծ դեր է ստանում: Լրատվության բովանդակության, ոճի, տեքստային կառուցվածքի և այլ փոփոխությունների հետ փոխվում է նաև ՁԼՄ-ների լեզուն: Հոդվածում քննվում են օրյեկտիվ ու սուբյեկտիվ այն հանգամանքները, որոնք ազդում են առցանց լրատվության լեզվական որակի վրա:

Vare Kazaryan: Влияние структурных изменений СМИ на языковую реальность-Беспрецедентные технологические достижения привели к глобальным изменениям мировой прессы, согласно которым роль онлайн-СМИ постепенно растет. С изменениями содержания, стиля, текстовой структуры меди меняется также язык СМИ. В статье рассматриваются те объективные и субъективные обстоятельства, которые влияют на лингвистическое качество онлайн-медиа.

Vahé Ghazaryan: The influence of structural changes of media on the lingual reality-Unprecedented technological achievements led to structural changes of the world press, with online media gradually getting a bigger role. By changing the media style, text, structure changes also press language. Current article presents the objective and subjective circumstances that affect the linguistic quality of online media.

⁹ **Հարությունյան Մ.**, Անգրագիտությունն իբրև ուղիղ ճանապարհ. «հետամնաց» գրողի արձագանք, <https://media.am/mesrop-harutyunyan-comment>

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ՄՅՈՒԶԱՆՆԱ ԱԶԱՐՅԱՆ

Ցանկացած պետություն ինչպիսի կառուցվածք էլ որ այն ունենա, ձգտում է իր գաղափարախոսությունը, այդ թվում և մշակույթին պարտադրել, դրանով իսկ ծառայեցնելով մշակույթն իր շահերին: Այստեղից էլ՝ դժվար չէ կռահել, որ երբ իշխանության է գալիս որևէ քաղաքական ուժ կամ կուսակցություն, անպայմանորեն ձգտում է մշակույթը հարմարեցնել իր և հասարակության որոշակի խավի շահերին:

Դրանով հանդերձ մեկ բան ակնհայտ է՝ առանց մշակութային աջակցության հնարավոր չէ իրականացնել իշխանության որևէ գործառույթ: Վերջինս իր հերթին հանգեցնում է որոշակի կապի պետության և մշակույթի համակարգերի միջև: Երբ պետական համակարգն որևէ պատճառով հրաժարվում է մշակութային համակարգի հետ հարաբերությունից, ճգնաժամն անխուսափելի է դառնում: Նույնպիսի ճգնաժամ է սպառնում նաև այն դեպքում, երբ իշխանությունները ընտրում են զարգացման ճանապարհ, առանց հաշվի նստելու մշակութային արժեհամակարգի հետ: Ի դեպ, խոսքը գնում է ոչ թե մշակութային, այլ հենց քաղաքական ճգնաժամի մասին:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ եթե քաղաքական իշխանությունը գոյատևում է որոշակիորեն երկար ժամանակ, ապա այդ ժամանակը նրան տալիս է հենց մշակույթը: Բացի այդ, մշակույթը նաև քաղաքական կայունության հիմքերից մեկն է: Ուստի միանգամայն իրավացի է Ա. Ափինյանը, երբ գրում է, որ «մշակութային քաղաքականությունը պետական իշխանության արգասիքն է և ծնունդը»¹:

Որպես կանոն քաղաքակրթության նոր ավելի առաջադիմական փուլի անցման ժամանակաշրջանում մարդկությունը կանգնում է նոր նպատակների ու մարտահրավերների առջև: Հետևաբար մշակութային բազմազանության պահպանման, մշակույթի զարգացման ու շարունակականության հարցը ձեռք է բերում արդիական նշանակություն:

Գաղտնիք չէ, որ հետխորհրդային շրջանում սկսվեց մի տեսակ քամահրական վերաբերմունք մեր ժողովրդի մշակութային անցյալի որոշ փուլերի նկատմամբ: Ներկայումս մենք արդեն հասցրել ենք «վայելել» նման վերաբերմունքի դառը պտուղները: Չպետք է մոռանալ, որ Խորհրդային Հայաստանի մշակութային փորձը մեր հոգևոր գանձարանի բաղկացուցիչ մասն է, առանց որի հետ հաշվի նստելու հնարավոր չէ ապահովել լուրջ առաջընթաց մշակույթի ասպարեզում:

Հայաստանի անկախացմանը հաջորդած ժամանակաշրջանում մշակութային ինքնության պահպանման խնդիրը դառնում է օրվա հրամայական, քանի որ խորհրդային միության փլուզումից հետո ի հայտ եկած նոր իրողությունները ստիպում էին մշակել նոր գիտականորեն հիմնավորված և ազգային շահերից ելնող մշակութային քաղաքականություն:

Գաղտնիք չէ, որ ազգային ինքնության հիմնախնդիրը պետության և հասարակության ինքնակազմակերպման առանցքային խնդիրներից է: Վերջինս իր կարևորությունն ու հիմնավորումը ստացավ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքում, համաձայն որի օգոստոսի 11-ը հայտարարվեց Ազգային ինքնության օր (ըստ հին հայկական տարեգրությունների, մ. թ. ա. 2492 թվականին Հայկ նահապետը, հաղթելով Բելին, հայության ինքնուրույն և անկախ գոյության հիմքը դրեց):

¹ Տե՛ս Ափինյան Ա., Մշակույթ և գրականություն, Երևան, 2012, էջ 68:

Ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Ջոյանը² Ազգի ինքնությունը ինքնին պայմանավորված է փաստության և համերաշխության գիտակցմամբ, ինչն իր հերթին արտահայտվում է ազգային ինքնության միջոցով: Ուստի ժամանակակից գիտությունները ազգային ինքնությունը դիտարկում են որպես տարատեսակ գործոնների ինքնազարգացող համակարգ: Վերջինս ապահովում է ազգի գոյատևումը և շարունակականությունը, կայունությունը, ինչպես նաև ազգի, որպես համասեռ և ներդաշնակ սոցիալական համակարգի, պատմական, քաղաքական և մշակութային գոյությունը: Փաստորեն ինքնությունը ոչ թե կենսաբանական, այլ քաղաքական, սոցիալական և մշակութային երևույթ է:

Անկախացումից հետո ողջ հայ ժողովուրդը բացառիկ հնարավորություն ստացավ, այլևս պետականորեն, արժարժելու իր ինքնության հետ առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները, այդ հարթությունում պաշտպանելով հայ ազգի կենսական շահերը: Այդ առումով, բնականաբար, նորանկախ հայկական պետականության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից էր հայ ժողովրդի ենթագիտակցության մեջ արմատավորված, նրա ազգային ինքնության անկապտելի մասը դարձած հայոց ցեղասպանության հիմնահարցը³:

Այստեղ ուզում ենք կարևորել այն հանգամանքը, որ անկախացումից հետո հայոց պետության ղեկին գտնվող քաղաքական ուժերի կողմից չգիտես ինչու շրջանառվում էր այն տեսակետը, թե իբր պետականաշինությունը ու ազգային շահերը իրար հետ անհամատեղելի են, և որ միջազգային մակարդակով վերջիններիս բարձրացումը կարող է լուրջ վնաս հասցնել անկախ պետականության հաստատման կայացման գործընթացին: Ուզում ենք նշել նաև, որ նման փաստորեն ապագային դիրքորոշումը հատկապես բնորոշ էր Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանն ընդհուպ մինչև 1998 թվականի իշխանափոխությունը, որից հետո փաստորեն մեր արտաքին քաղաքականության օրակարգում սկսում է իր արժանի տեղը զբաղեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը:

Խոսելով անկախացումից հետո թույլ տված բացթողումների մասին՝ կարող ենք նշել, որ այսօր առավել քան երբևէ հնարավոր է արագորեն հաղթահարել անվերջանալի թվացող աղքատությունն ու արոյունավետորեն վերակառուցել ազգային տնտեսությունը հենց կրթության ու մշակույթի առաջնահերթ զարգացման միջոցով, ինչպես նաև պահպանելով մշակութային ինքնությունը: Ուստի հենց այդ խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինի պետության մշակութային քաղաքականությունը:

Հայաստանի անկախացմանը հաջորդած ժամանակաշրջանում, մշակութային ինքնության պահպանման խնդիրը ձեռք է բերում առաջնային նշանակություն: Խորհրդային Միության փլուզումից հետո ի հայտ եկան նոր իրողությունները, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել այն մարտահրավերների մասին, որոնց առջև կանգնած է «ազգային մշակութային ինքնությունը»:

Անշուշտ, համաշխարհային զարգացումներին ձգտելը արդի իրողությունների պայմաններում առաջնային կարևորության խնդիր է, քանի որ հետ մնալ դրանցից՝ նշանակում է վտանգել ինքնիշխանությունը և դառնալ հետամնաց ու սոցիալապես անապահով երկիր:

Ուստի, մշակութային անաղարտության պահպանումը չի կարող լինել մշակութային ինքնության և դրա վերարտադրության առանցք: Ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Թադևոսյանը «Մեր խնդիրն է պահպանել ներկայիս զարգացող աշխարհին ինտեգրման համատեքստում մշակութային ինքնության պահպանման սկզբունքները. սկզբունքներ, որոնք թույլ կտան մի կողմից՝ ինտեգրվել այսօրվա զարգացող աշխարհին, յուրացնելով

² Տե՛ս Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, խմբ. **Սուվաբյան Յու., Ջոյան Ս.**, Ազգային ինքնության հիմնահարցը, իմաստաբանական և մշակութային վերլուծություն, Երևան, 2013, էջ 240:

³ Տե՛ս **Պողոսյան Է. Վ.** Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013, էջ 545:

նրանց կողմից ստեղծված համամարդկային արժեքները, մյուս կողմից պահպանել և վերարտադրել մեր ազգային ինքնատիպությունը պայմանավորող մշակութային համակարգը»⁴:

Այսպես, մշակութային ինքնության պահպանումը մեզ համար ոչ միայն մշակութային խնդիր է, այլև առաջին հերթին ազգային ինքնության պահպանման խնդիր, ուստի նվաճելով իր անկախությունը հայ ժողովուրդը պատմական հնարավորություն ստացավ պետականորեն արժարժելու ազգային ինքնությանը վերաբերող բազմաբնույթ հիմնախնդիրները՝ անկախ պետականության ողջ գործությամբ սատարելով դրանց:

Վերջին ժամանակներում մեր մշակութային իրականությունը փոխելու քայլեր արվում են հասարակության տարբեր հատվածների կողմից: Պետք է նշել, որ մեր մշակութային պատկերացումները խեղաթյուրողների դեմ պայքարողների բանակը գնալով մեծանում է: Մշակութային ինքնության պահպանության առաջին նախապայմանը, կարծում ենք, գրագետ մշակութային սերունդ կրթելն է: Այդ հարցում շատ կարևոր է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դերակատարումը: Ինստիտուտը պետք է մշակութասեր և մշակույթ իր մեջ կրող սերունդ կրթի, որի առկայության պարագայում կձևավորվի մշակութային այլ իրականություն⁵:

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի գնահատման և արժևորման ուղղությամբ զգալի քայլեր են կատարվում: Մասնավորապես ուսումնասիրվում է նրա դերն ազգային ինքնության, քաղաքացիական հասարակության և երկրում սոցիալական կապիտալի ձևավորման, խաղաղության, մշակութային բազմազանության պահպանության գործում: Պետական մշակութային քաղաքականությունն իրականացվում է ազգային ավանդական արժեքամակարգի, մշակութային միջավայրի, ժառանգված տարածքի բնության, պատմամշակութային արժեքների պահպանման սկզբունքներին համապատասխան: Ներդրված մեխանիզմները հնարավորություն են տալիս ապահովելու կայուն զարգացման գաղափարախոսության հետ ազգային մշակութային առաջնայնությունների արդյունավետ զուգակցումը:

Օտար երկրների մշակույթների մշտական և ուժեղ ազդեցության ներքո գտնվող արտերկրի հայության համար բոլոր ժամանակներում ամենաբարդ ու կարևորագույն խնդիրը պետք է լինի ազգային ինքնության պահպանումը: Այդ խնդրի լուծման նախապայմանները պետք է տեսնել ազգային կառույցների ձևավորման հավաքական ու միասնական ազգային-մշակութային գործունեության մեջ:

Մշակութային ինքնության պահպանման անհրաժեշտության կարևորությունը կայանում է սոցիալական համախմբվածության մեջ: Այն հանրության, ժողովուրդների և ազգերի կայուն զարգացման շարժիչ ուժ է: Հիշեցնենք, որ ժողովրդավարության, հանդուրժողականության, սոցիալական արդարության և ազգերի ու մշակույթների միջև փոխադարձ հարգանքի պայմաններում բարգավաճող մշակութային ինքնությունը անհրաժեշտ է տեղական, ազգային և միջազգային մակարդակներով խաղաղություն և անվտանգություն ապահովելու համար: Մշակութային ինքնության պահպանությունը հանդիսանալով մարդկության ընդհանուր ժառանգությունը անհրաժեշտ է պահել ու պահպանել այն ի շահ բոլորի:

Գրականություն

1. Ափինյան Ա., Մշակույթ և գրականություն, Երևան, 2012, էջ 264:
2. Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, խմբ. Սուվարյան Յու., Ջոյան Ս., Ազգային ինքնության հիմնահարցը, իմաստաբանական և մշակութային վերլուծություն, Երևան, 2013, էջ 240:

⁴ Տե՛ս Թադևոսյան Ա., Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Երևան, 2003, էջ 5:

⁵ Տե՛ս Մշակութային քաղաքականություն և քաղաքական մշակույթ/2013-06-13 12:39/, URL://http://www.df.am/news/1080/xmbagrakan_74.html

3. Պողոսյան Է. Վ. Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013, էջ 596:

4. Թադևոսյան Ա., Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Երևան, 2003, էջ 73:

5. Մշակութային քաղաքականություն և քաղաքական մշակույթ/ 2013-06-13 12:39/, URL://http://www.df.am/news/1080/xmbagrakan_74.html

Բանալի բառեր-Ինքնություն, մշակույթ, մշակութային քաղաքականություն, ազգային ինքնություն, անկախություն:

Սյուզաննա Ազարյան, Ազգային ինքնության հիմնախնդիրը մշակութի հարացույցում - Հայաստանի անկախացմանը հաջորդած ժամանակաշրջանում մշակութային ինքնության պահպանման խնդիրը դառնում է օրվա հրամայական, քանի որ խորհրդային միության փլուզումից հետո ի հայտ եկած նոր իրողությունները ստիպում էին մշակել նոր գիտականորեն հիմնավորված և ազգային շահերից ելնող մշակութային քաղաքականություն:

Անկախացումից հետո ողջ հայ ժողովուրդը բացառիկ հնարավորություն ստացավ, այլևս պետականորեն, արժարժելու իր ինքնության հետ առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները, այդ հարթությունում պաշտպանելով հայ ազգի կենսական շահերը:

Сюзанна Азарян, Национальная идентичность в парадигме культуры-Период времени последовавшей за независимостью Армении, вопросы сохранения национальной идентичности становятся актуальными, поскольку после развала Советского Союза обнаружили новые положения, которые заставляли разработать новую, научно обоснованную культурную политику, отвечающую национальными интересам.

После независимости Армянский народ получил исключительную возможность впредь, на государственном уровне обсуждать вопросы касающейся многотипных проблем собственности идентификации, в этой проскости защищал интересы армянского народа.

Suzanna Azaryan , National identity problems in the paradigm of culture -The maintenance of cultural identity after the independence of Armenia has become very urgent, as after the failure of the Soviet Union, new facts made us to develop new scientifically based cultural politics, arising from the national interests.

After the independence all Armenian nation had an opportunity to mention diverse on the national basis, and to protect vital interest of the nation.

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ՃԻՇՏ ԽՈՍԵՆՔ

ՀԱՄՄԻԿ ԱՐԱՉՅԱՆ

Բաց դաս

Դասի թեման՝ «Ճի՛շտ խոսենք» (9-րդ դասարան)
Տեսակը՝ համակցված դաս՝ նվիրված Մայրենիի օրվան
Նպատակը՝

1. աշակերտներին հիշեցնել քերականական տարբեր իրողություններ.
2. սովորեցնել և՛ բովանդակությամբ, և՛ ձևով գրավիչ խոսք կառուցել.
3. խուսափել քերականական, ուղղախոսական սխալներից, բառի ոչ տեղին գործածությունից, լեզվական վթարներից, որոնք չիմացության կամ թյուրիմացության հետևանք են.
4. բանավոր խոսքում միմյանց սխալները գտնելու և նրբանկատորեն ուղղելու կարողություն մշակել.
5. մայրենին անաղարտ պահելու խնդրում յուրաքանչյուր աշակերտի մեջ պատասխանատվություն ներարկել.
6. տարբեր հեռուստահաղորդումներում հնչող լեզվական աններելի բազմաթիվ սխալները չկրկնելու համար հանձնարարել աշակերտներին դրանց ուշադիր հետևել, գրի առնել և քննարկել բաց դասին:

Օգտագործվող նյութեր և դիտողական պարագաներ՝ լուսապատկերացույց, գրատախտակ, մայրենի լեզվին նվիրված վահանակներ, պատի թերթեր, դասագրքեր, բառատետրեր:

Ընթացքը՝

I փուլ

Դասը բացում է ուսուցչուհին.

- Մեր այսօրվա դասը նվիրված է Մայրենիի օրվան: Գաղտնիք չէ, որ ի սկզբանե եղել է բանավոր խոսքը, որն անհամեմատ ավելի կենդանի երևույթ է, քան գրավորը: Ձայնի, դիմախաղի, ժեստերի, աչքերի փայլի շնորհիվ բանավոր խոսքը դառնում է ավելի հուզական ու հարուստ կամ հակառակը: Գրավոր խոսքը ի հայտ է եկել ուշ՝ բանավորից շատ ու շատ դարեր հետո: Թվում է՝ բոլորիս համար էլ թանկ է մեր մայրենին, բոլորս ենք սիրում այն, բայց ինչպե՞ս ենք խոսում, չե՞նք աղավաղում այդ լեզուն, որքանո՞վ ենք անաղարտ պահում այն: Մեր այսօրվա դասը կպատասխանի հենց այս հարցերին: **Բանալի բառեր**՝ լեզվական վթարներ, ուղղախոսություն, քերականություն, գրագետ խոսք:

Մեր դասի հաջորդ փուլում ներկայացնում ենք մի հարցազրույց:

II փուլ

- Հրացագրույցին մասնակցում է 5 աշակերտ. մեկը հարցազրույցը վարողն է, մյուսները՝ հրավիրվածները:

Հարցազրույցը սկսելուց առաջ ուսուցչուհին հանձնարարում է դասարանի մյուս աշակերտներին ուշադիր հետևել յուրաքանչյուրի խոսքին և դուրս գրել նրանց խոսքում թույլ տրված սխալները:

Հարցազրույց

Վարող-Բարի՛ օր, հարգելի՛ ներկաներ, այսօր մեր հյուրերն են Իջևանի թիվ 5-րդ հիմնական դպրոցի աշխտհրդի նախագան և մի քանի անդամներ 9^ա դասարանից: Շնորհակալություն, որ ընդունեցիք մեր հրավերը. Ներկայացե՛ք, խնդրեմ. ինչպե՞ս է ձեր անունը:

Հրավիրվածները ներկայանում են:

Վարող-Առաջի հարցիս ուզում եմ, որ պատասխանի նախագան: Ի՞նչ է դպրոցը քո համար:

Աշխտհրդի նախագահ-Իմ համար դպրոցը դա մատաղ սերնդի կրթության ուղաստիքակության դարբնոց է, սրբության սրբոց, ինչպես մայրը, մայրենի լեզուն, հայրենիքը:

Վարող- Ինչպիսի՞ն է և աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները ձեր դպրոցում:

I անդամ-Ես գտնում եմ, որ այդ հարաբերությունները պիտի խաբսխված լինի փոխադարձ սիրո և հարգանքի վրա: Մեր դպրոցում հիմնականում այդպես է:

Վարող – Կարո՞ղ եք ասել, թե ի՞նչն է պատճառը, որ ձեր դպրոց շատ աշակերտներ են գալիս: Որքան գիտեմ, հենց այս ուսումնական տարում (2015-2016թթ.) ձեր դպրոցն ընդունել է 125 առաջին դասարանցի:

II անդամ-Համար առաջի պատճառն այն է, որ մեր դպրոցը գտ(ը)նվում է քաղաքի կենտրոնում: Երկրորդն էլ, անկասկած, այն է, որ մեզ ունենք հմուտ, գրագետ ուսուցչական կոլեկտիվ, նվիրյալ ուսուցիչներ:

Վարող-Ձեր դպրոցը ղեկավարում է նորանշանակ տնօրենը: Ի՞նչ կարծիքի եք նրա մասին:

III անդամ-Հանձինս տնօրենի մեր դպրոցն ունի բանիմաց, կրթական գործը լավ պատկերացնող մանկավարժ: Ի շնորհիվ նրա՝ մեր դպրոցում իշխում է կարգ ու կանոնը:

Վարող-Դուք այնպես եք խոսում, կարծես ձեր դպրոցում ամեն ինչ իդեալական է. չկա՞ն թերություններ:

I անդամ-Ինչ վերաբերվում է թերություններին, իհարկե, կան: Օրինակ, ուսուցիչները տարեկետում են վերցնում, ու չգիտես՝ երբ կվերադառնան: Ամենալավագույն ուսուցիչներն անգամ պատրաստակալություն չեն հայտնում լրացուցիչ աշխատել հետ մնացող աշակերտների հետ: Աշակերտների ընտանեական պայմանների հետ ծանոթ չեն: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներից հարցաշարերի պատճեի համար փող են հավաքում, դասերին ուսուցիչները շարունակ դիտողություն են անում աշակերտներին և հաճախ էլ բռն(ը)կվում. «Մի՛ք խոսի, մի՛ք շարժվի»:

Վարող-Դուք կարծես ավելի լավ գիտեք ուսուցիչների պարտականությունները, քան ձերը:

Աշխտհրդի նախագահ-Դե՛, իհարկե, այդպես չի, անպատասխանատու, անտարբեր աշակերտներ շատ կան: Օրինակ, 9-րդ դասարանցիները, ճիշտ է, չեն փախնում դասերից, բայց դասի գանգը հնչելուց հետո ու՛մեկ չի շտապում դասարան մտնել, հետո էլ ուսուցչի առաջ փորձում են մեղանջել, Աշակերտներ էլ կան, որ ավանդություն են դարձրել առաջին ժամից պարտադիր ուշանալը:

II անդամ-Մի բան էլ մեր դասարանում աշակերտներ կան, ովքեր օրեկան երկու-երեք անգամ բուժետ են վագում, որտեղ շատ հաճախ ան(վ)որակ ուտելիք են վաճառում: Աշակերտների մի մասն էլ դուրս են վագում, դպրոցին ոչ այնքան մոտիկ տաղավարներից օգտվելու: Բնականաբար, հայտ(ը)նվում են դասից 10-15 րոպե ուշացումով:

Վարդ-Լավ, օրինակելի աշակերտներ չկա՞ն ձեր դասարանում:

III անդամ-Իհա՛րկե, կան: Այդպիսիները հազվագյուտ են բացակայում, ուշանում դասերից կամ էլ անպատրաստ դպրոց ներկայանում:

Վարդ-Քանի որ մեր ժամանակը անսահմանափակ չի, այս լավատեսական նուտայով էլ ավարտենք մեր գրույցը: Կրկին անգամ շնորհակալ եմ ձեզանից հարցազրույցի համար: Տոնտություն ձեզ:

III փուլ

Խոսում է դարձյալ ուսուցիչը.

- Ինչպես նկատեցիք, սա մի խայտառակ հարցազրույց էր, իհարկե, ոչ բովանդակային, այլ լեզվական սխալների առումով:

Ապա դիմում է նստած աշակերտներին՝ պարզելու, թե ով քանի սխալ է կարողացել հարցազրույցից դուրս գրել:

Գրատախտակին գրվում են սխալները, ապա դրանց ճիշտ տարբերակը, համեմատվում, բացատրվում աշակերտների ուժերով:

Քննարկվում ու տարբերակվում են հրավեր (մի բանի մասնակից լինելու առաջարկ), հրավերք (հացկերույթ, կերուխում)¹, ավանդություն (զրույց, լեզենդ) ու ավանդույթ (սովորույթ)², պատրաստակամություն (մի բանի պատրաստ, տրամադիր) և պատրաստակամություն (ունակություն)³, հազվագյուտ (բացառիկ, արտակարգ) և հազվադեպ (ոչ հաճախ պատահող)⁴, վերաբերել (կապ, առնչություն ունենալ, վերագրել) և վերաբերվել (վերաբերմունք ցուցաբերել) բառազույգերը⁵: Ապա դրանցով կազմվում են նախադասություններ: Միտով ընդունում եմ Ձեր հրավերը և անպայման կմասնակցեմ Ձեր կազմակերպած հրավերքին: Ավանդությունը պատմում է, որ Գեղարդավանքը կառուցել են քույր ու եղբայր: Ավանդույթի համաձայն՝ Վարդավառի տոնին մեր մարզում ձիեր են խաղացնում: Ֆիզկուլտուրայի ուսուցիչը պատրաստակամություն հայտնեց էլ ավելի բարձրացնել տղաների ֆիզիկական պատրաստակամությունը: Պապա հազվագյուտ մարդ էր. այդպիսի մարդիկ հազվադեպ են հանդիպում կյանքում: Պատասխանատվությամբ վերաբերվենք մայրենի լեզվի պահպանման գործին: Խոսքը բոլորիս է վերաբերում:

Աշակերտները շարունակում են ներկայացնել իրենց գտած սխալները, ուղղել, բացատրել: Պատճեն բառի ն-ն ոչ թե որոշիչ հոդ է, այլ բառի վերջնահնչյունը: Որպես օրինակ՝ արտասանվում են Սևակի տողերը.

Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,

Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:

Մեղանչել բառը նշանակում է ոչ թե մեղքերը քավել, այլ մեղք, հանցանք գործել: Օրինակը բերվում է Աստվածաշնչից.

¹ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976թ. հ. 1, էջ 905:

² Նույն տեղում, էջ 119:

³ Նույն տեղում, հ. 2 էջ 1193:

⁴ Նույն տեղում, հ. 1 էջ 789:

⁵ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976թ. հ. 1, էջ 1373:

- Մեղանշեցի քո դեմ, հա՛յր:

Ոչ մեկը ժխտական դերանունը առանց որոշիչ հոդի չի գործածվում⁶: Ոչ մեկը անթերի չխոսեց;

Շնորհիվ կապը առաջացել է գոյականի գրաբարյան գործիական հոլովաձևից: Ճիշտ չէ արտասանել ի նախդիրի անհարկի հավելումով⁷:

Հանձին և հանձինս ձևերի տարբերությունն այն է, որ առաջինը եզակի թվով գոյականների հետ է դառնում գերադաս անդամի լրացում, իսկ երկրորդը (հանձինս)՝ հոգնակի թվով գոյականների (հանձին տնօրենի, հանձինս ուսուցիչների): Մ-ն գրաբարյան հոգնակերտ մասնիկ է⁸:

Դա ցուցական դերանունը հոլովվում է և նախադասության մեջ կարող է ենթակա լինել: Օրինակ՝ «Դա կտակ չէ, այլ խրատ՝ գրված մի ապուշ քահանայի ձեռքով» (Շ Ք): Բայց վերոհիշյալ նախադասության մեջ դա-ն ավելորդ է, քանի որ արդեն կա ենթակա(դպրոցը):

Հետ, նման, պես, համար, վրա, մոտ կապերի հետ գործածվելիս առաջին և երկրորդ դեմքի անձական դերանունները դրվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովով (օր.՝ ինձ հետ, քեզ նման, մեզ պես, ինձ համար, քեզ վրա, ձեզ մոտ)⁹:

Հարցազրույցում պետք է ասվեր ծանոթանալ ընտանեկան պայմաններին և ոչ՝ պայմանների հետ, որովհետև հետ կապը փոխադարձ ծանոթություն է ենթադրում:

Տարկետում բառը կրկնաձանցավոր բառ է(տար + կետ + ում) և նշանակում է որոշակի ժամանակով որևէ բանի հետաձգում: Այն ոչ մի կապ չունի տարի բառի հետ:

Հայերենում ենթական դրվում է ուղղական հոլովով, հազվադեպ՝ բացառականով, բայց ոչ երբեք՝ տրականով: Մենք(ուղղական հոլով) հրաշալի սերունդ ունենք: Կատարվեցին Կոմիտասի ստեղծագործություններից (բացառական հոլով):

Արգելական հրամայականը մի՛ք ձև չունի, օրական բառը չպետք է հնչեցնել օրեկան, որովհետև օր արմատին ընդամենը գումարվում է ական ածանցը:

Շնորհակալություն հայտնում են մեկին (տրական հոլով, հանգման խնդիր), ներողություն խնդրում՝ մեկից (բացառական հոլով, անջատման խնդիր):

Այսպես քննարկվում են դասին հնչած բոլոր խոսքային վթարները, առանձնացվում ճիշտը, դրանցով կազմվում նախադասություններ:

IV փուլ

Լուսապատկերացույցով ցուցադրվում են բոլոր այն սխալները, որոնք հնչում են հարցազրույցի ընթացքում: Աշակերտներն իրենց դուրս գրածները համեմատում են լուսատախտակին երևացող սխալների հետ, ստուգում իրենց:

Միայլ Ճիշտ

թիվ 5-րդ թիվ 5 կամ 5-րդ նախագան նախագահը

Ընդունեցիք մեր հրավերը: Ընդունեցիք մեր հրավերը:

Ինչպե՛ս է քո անունը: Ի՛նչ է քո անունը:

⁶ Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան, 1973թ. հ. 2 էջ 159:

⁷ Մայա Ավագյան, Խոհեր Մայրենի լեզվի մասին, Երևան, 1982թ. էջ 36:

⁸ Լույս տեղում, էջ 61:

⁹ Տե՛ս Վազգեն Գաբրիելյան, Գրավոր խոսք, ԵՊՀ հրատ. Երևան, 2004թ. էջ 181:

առաջի առաջին
քո համար քեզ համար
իմ համար ինձ համար

Դպրոցը դա դարբնոց է: Դպրոցը դարբնոց է:

դաստիարակության դաստիարակության
սրբության սրբոց սրբություն սրբոց

Ես գտնում եմ: Ես կարծում եմ կամ իմ կարծիքով

Հարաբերությունները խարսխված Հարաբերությունները խարսխված լինեն:
լինի:

համար առաջի համար 1, կամ առաջին

Գտ(ը)նվում է: Գտն(ը)վում է:

կոլեկծիվ կոլեկտիվ

Մեզ ունենք: Մենք ունենք:

հանձինս տնօրենի հանձին տնօրենի

ի շնորհիվ շնորհիվ

Ինչ վերաբերվում է թերութ- Ինչ վերաբերում է թերութ-
յուններին, իհարկե, կան: յուններին, իհարկե, կան:

տարկետում տարկետում

ամենալավագույն ամենալավ կամ լավագույն

Պատրաստականություն Պատրաստականություն

չեն հայտնում: չեն հայտնում:

ընտանեական ընտանեկան

Դրության հետ ծանոթ չեմ: Դրությանը ծանոթ չեմ:

պատճե պատճեն

բռն(ը)կվել բռ(ը)նկվել

Մի՛ք խոսի, մի՛ք շարժվի: Մի՛ խոսեք, մի՛ շարժվեք:

Այդպես չի: Այդպես չէ:

փախնել փախչել

ոչ մեկ ոչ մեկը

Մեղանչելը սխալ է գործածված: Մեղանչել՝ մեղք գործել:

Ավանդություն են դարձրել: Ավանդույթ են դարձրել:

օրեկան օրական

ան(վ)որակ անտ(օ)րակ

Մի մասն էլ դուրս են վագում: Մի մասն էլ դուրս է վագում:

հայտ(ը)նվել հայտն(ը)վել

Հազվագյուտ են բացակայում: Հազվադեպ են բացակայում:

Անսահմանափակ չի: Անսահմանափակ չէ:

կրկին անգամ կրկին

Շնորհակալ եմ ձեզանից: Շնորհակալ եմ ձեզ:

Ցտեսություն ձեզ: Ցտեսություն :

V փուլ

-Ասացե՛ք, խնդրեմ, գեղարվեստական գրականության մեջ կա՞ն օրինակներ, որոնց հեղինակներն իրենց թույլ են տալիս քերականական անճշտություններ, և ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Պատ. «Դրանք պայմանավորված են չափածո խոսքի թելադրած որոշակի կանոններով: Բանաստեղծներին ու գրողներին թույլատրվում է ... »

Օրինակներ՝

Վառ աստղերը երկնից ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՛խ, իմ կյանքս, անուշ կյանքս
Կտոր-կտոր փշրվեց...

Ավ. Բասահյան

Ա՛խ, իմանաս, ջա՛ն Ալազյազ,
Իմ դարդիս պես դարդ չկա...

Ավ. Բասահյան

Աշխատի՛ր, սակայն, որ մութ այդ ձորում
Քո պայծառ ուղին անդարձ չկորի:

Եղիշե Չարենց

Ու ապրում էր ծեր արքան Փարվանա
Իրեն էն քնքուշ ծաղկով բախտավոր...

Հովհ. Թումանյան

Գնա տե՛ս, ասավ, Թմկա տիրուհուն,
Երգի՛ իմ սերը նրա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն,
Խոստացի՛ նրան իմ ոսկու գահը...

Հովհ. Թումանյան

Դու անհոգ նայեցիր իմ վրա
Եվ անցար քո խաղով կանացի.

Վահան Տերյան

Ու՛ր է, Չարենց, գերեզմանդ...

Որ գամ գոնե համբուրեմ:

Ամենաքար Հայաստանում

Քար չճարվեց՝ վրադ դնեն:

Հովհ. Շիրազ

Եթե ուզեն, երկինքներից վար կբերեն արեգակներ:

Ե. Չարենց

VI փուլ

Դասի այս փուլում թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչը ներկայացնում են լեզվական անճշտություններ, որոնք հնչել են տարբեր հեռուստահաղորդումներում վերջին մեկ շաբաթվա ընթացքում:

Լեզվական վթարներ հեռուստահաղորդումներից

1.«Բարի առավոտ»-ի հյուրերից մեկի խոսքում ինձ համար-ը իմ համար է հնչում:

Կամ՝ «Իմ կինս (ճիշտ՝ իմ կինը կամ կինս) առավոտյան կարող է նյարդայնացնել ինձ»:Ս-ն ստացական հոդ է, այն իր նշանակությամբ փոխարինում է իմ անձնական դերանվանը: Օր.՝ «Սիրտս տանջում է ինչ-որ անուրախ անհանգստություն»¹⁰:

¹⁰ Տե՛ս Վազգեն Գաբրիելյան, Գրավոր խոսք, ԵՊՀ հրատ. Երևան, 2004թ. էջ 198:

2. Ժամանակն է, որպեսզի (ճիշտ՝ որ) ավելացնենք բրինձն ու չամիչը: «Հայաստանի համը» (1-ին ալիք): Որ և որպեսզի ստորադասական շաղկապները նպատակի հարաբերություն արտահայտող ստորադաս նախադասությունները կապակցում են գերադասին, բայց դրանք ունեն երանգային տարբերություն: Օր. «Եվ որպեսզի թուզը չփչանա, և հոնը համը չփոխի, հանեց խուրջինից և դասավորեց պատուհանի գոգին» (Ս Խ): «Իսկ դուրսը սպասում էին այդ ծանր վայրկյանին, որ աղի արտասվեն(Ա.Բ.)»:

3. Միշտ ուզեցել էմ (ճիշտ՝ ուզել էմ) տեսնել Պրահայի այդ հանրահայտ կամուրջը:

«Առավոտ լուսո» հաղորդաշարից

Կամ «Մենք այդ մասին արդեն խոսեցել ենք» (ճիշտ՝ խոսել ենք): «Կենտրոն»-ով Ե խոնարհման պարզ բայերի վաղակատարը ձևով նման է անորոշ դերբային (ուզել-ուզել է, խոսել-խոսել է)

4. 1-ին ալիքով խոսվում է հռոմեական կայսր Կալիգուլայի մասին.

«Կալիգուլայի դեմքի 1-ին պատկերը կորչել է (ճիշտ՝ կորել է):

Կորչել բայը սոսկ ածանցավոր բայ է. վաղակատարում հարկ է, որ չ ածանցը ընկնի (կորել)»¹¹:

5. Արա՛մ, ու՛ր ես (ճիշտ՝ որտե՞ղ ես),-(հնչում է հեռուստասերիալում)

Որտե՞ղ և ո՞ւր հարցական դերանունները ունեն երանգային տարբերություն

Որտե՞ղ դերանունը արտահայտում է հարցում գործողության տեղի մասին: Օր. «Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ, և զոհաբերում այնպես խնդագին (Վ Տ)»

Ու՛ր դերանունը տարածական ուղղության երանգ ունի: Օր. «Դեպի ու՛ր, ինձ ասա՛, թոչում ես այդպես արագ»:

6. Անակնկալ չի (ճիշտ՝ անակնկալ չէ):

Իրավասու չի (ճիշտ՝ իրավասու չէ):

Պարտադիր չի (ճիշտ՝ պարտադիր

«Կենտրոն» հեռուստաալիք

Ժխտական խոնարհման ձևերում օժանդակ բայը փոխվում է միայն ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքում (չի աշխատում, չի մոռանում): Բայց եթե օժանդակ բայը հանդես է գալիս որպես էական բայ, ժխտական խոնարհման դեպքում մնում է անփոփոխ (անակնկալ չէ, իրավասու չէ, պարտադիր չէ):

7. Արա՛, դե լավ, դուք գալացողը չեք, է՛ (ճիշտ՝ եկողը չ՛եք)

«Երանի» հեռուստասերիալից

Գալ բայը անկանոն բայ է, անկանոնությունը արտահայտվում է նաև ենթակալական դերբայում (եկող):

8. Լեզվական վթարներ էլ կան, որոնք կրում են ռուսերենի ազդեցությունը. ինչպե՞ս է քո անունը (ի՞նչ է քո անունը), խնդիրը նրանում է(խնդիրն այն է), մեզ ունենք (մենք ունենք), ակնոցներս կհագնեմ (ակնոցս կդնեմ):

Աշակերտները շարունակում են ներկայացնել իրենց գրածները, բացատրել, ճիշտը սխալից գատել:

Մի քիչ վիճվեցին (ճիշտ՝ վիճեցին)...

Հնչում է «0-2» հաղորդաշարում

«Խնդիրը նրանում է (ճիշտ՝ այն է...)»

¹¹ Տե՛ս Վազգեն Գաբրիելյան, Գրավոր խոսք, ԵՊՀ հրատ. Երևան, 2004թ. էջ 205:

Պետրոս Ղազարյանի հյուրերից մեկն է ասում:

9. Հարգելի՛ հեռուստադիտողներ, հանուն հայ զինվորի անվտանգության, բջջային հեռախոսով մի՛ քննարկեք ծառայությանը վերաբերվող (ճիշտ՝ վերաբերող)

1-ին ալիք

Ինչպես իմ գործընկերուհին ասեց (ճիշտ՝ ասաց):

Երբևէ չեմ առնչվել նման խնդրի հետ (ճիշտ՝ նման խնդրի):

Ի շնորհիվ (ճիշտ՝ Շնորհիվ) մշակույթի նախարարության՝ Ուջան գյուղը ստացավ երաժշտական գործիքներ:

1-ին ալիք

10. Զգացմունքը դա կնոպկա չի, որ սեղմես, գա (ճիշտ՝ Զգացմունքը կոճակ չէ):

1-ին ալիք

12. Դանիել՛, դու չես հասկանում. որ էդ սիրո համար եմ ես նրան ինձանից հեռվացրել (ճիշտ՝ հեռացրել):

(հեռուստասերիալից)

13. Ո՞վ կպատկերացներ, որ ես այսպես կսննկանամ: (ճիշտ՝ կսնանկանամ)

1-ին ալիք՝ «Գրանդ Հոթել» սերիալ

VII փուլ

– Վերոհիշյալ բոլոր սխալները ուղղելուց, բացատրելուց հետո ուսուցիչը դիմում է դասարանին.

- Օտարազգի հանրահայտ մարդիկ (ոչ մերոնք) ինչպե՞ս են գնահատել մեր հնամենի լեզուն:

Հնչում են Բայրոնի, Հյուգոյի, Ֆրեդերիկ Ֆեյդիի գնահատականները:

VIII փուլ

Ապա ուսուցչուհին ամփոփում է դասը.

- Բոլոր այն սխալները, որոնք հնչեցին այսօրվա մեր դասի ընթացքում, մենք լսում ենք ամեն օր տանը, փողոցում, դպրոցում, հեռուստահաղորդումներում, ամենուր:

Դրանք թյուրիմացության, չիմացության կամ անտարբերության հետևանք են:

Եթե բանավոր խոսքն ուղեկցվում է բառի ոչ տեղին գործածությամբ, խնդրանական, ուղղախոսական բազմաթիվ սխալներով, ապա նման խոսքն արժեզրկվում է, եթե անգամ այն ասելիք ունի:

Իսկ գաղտնիք չէ, որ եթե ասելիք չկա, միշտ էլ վատ ենք խոսում:

Մայրենի լեզվի պահպանման, տարածման գործում պատասխանատու ենք բոլորս, ամեն մեկս, յուրաքանչյուրս:

Անաղարտ պահենք մեր մայրենի լեզուն, որովհետև բանաստեղծի խոսքերով ասած՝ ի՞նչ ունենք աշխարհում, որ այսքան մերը լինի:

Ճիշտ խոսենք:

Գրականություն

1. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ. Երևան 1976թ.

2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, ԵՊՀ հրատ. Երևան, 1970թ. 1973թ.

3. Մայա Ավագյան, Խոհեր Մայրենի լեզվի մասին, «Լույս» հրատ. 1982թ. Երևան

4. Վազգեն Գաբրիելյան, Գրավոր խոսք, ԵՊՀ հրատ. Երևան, 2004թ.

Հասմիկ Աբազյան, Ճի՛շտ խոսենք-Մայրենի լեզվի պահպանման և տարածման գործում պատասխանատու ենք բոլորս, ամենքս, յուրաքանչյուրս: Այդ նպատակով դասերին կիրառում եմ տարբեր մեթոդներ: Այս աշխատանքում ես ներկայացրել եմ այդ մեթոդներից մեկը: Աշխատանքի մեջ փորձել եմ վեր հանել լեզվական այն վթարները, քերականական անճշտությունները, որոնք հաճախ հնչում են դպրոցում, փողոցում, անգամ հեռուստահաղորդումներում: Աշխատել եմ դրանք բացատրել, վերլուծել, ճիշտը սխալից զատել: Աշակերտներին ցանկացել եմ հիշեցնել հայոց լեզվի քերականական իրողությունները, ուղղախոսության կանոնները: Չէ՞ որ արժեք չունի այն խոսքը, որն ուղեկցվում է բազմաթիվ լեզվական սխալներով:

Асмик Абазян, Давайте говорить правильно!-За сохранение и распространение родного языка ответственны мы все, каждый из нас. С этой целью на уроках применяю различные методы. В этом труде я представила один из этих методов. Попыталась выявить те языковые промахи, грамматические неточности, которые часто звучат в школе, на улице и, даже, в телевизионных передачах.

Постаралась объяснить и разобрать их, отделить правильное от неправильного.

Захотела напоминать учащимся грамматические явления армянского языка, правила грамотной разговорной речи. Ведь ничего не стоит та речь, которая сопровождается множеством языковых ошибок!

Hasmik Abazyan, Let's Speak Correctly-We all are responsible for protecting and spreading our native language.

For that purpose I put in practice different methods at my lessons. In this work I have presented one of those methods. I have tried to raise linguistic falsities and incorrectnesses, which we often listen at schools, in streets, even during TV programs. I have tried to explain, analyze and detach the correct from the error.

I want to remind our pupils Armenian language's grammatical structure and orthoepic rules.

The speech accompanied by many linguistic errors is worth nothing, isn't it?

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԳԱԳԻԿ ԷՄԻՆՑԱՆ, ԴԱՎԻԹ ՅՈՒԶՅԱՆ

Դեռևս անհիշելի ժամանակներից մարդկությանը միշտ էլ մտահոգել է հասարակության կրթության (հատկապես որակյալ և մատչելի կրթության) կազմակերպման խնդիրը: Մարդկության պատմության հնագույն շրջանում կրթությունը՝ որպես այդպիսին, հասու էր միայն թագավորական ընտանիքին և բարձրաստիճան ազնվականությանը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում այդ ուսուցման գործընթացի հասարակայնացումը հիմնովին տեղափոխվեց դեպի կրոնական ուսմունք և ուսուցման ու դաստիարակության գործընթացը կազմակերպվում էր կրոնական հենքի վրա, յուրաքանչյուր պետական միավորում փորձում էր գտնել իր ազգի և պետության շահից բխող ուսուցման և դաստիարակության սեփական բանաձևը: Յուրաքանչյուր պետություն իր վրա կրում էր հարևան երկրների մշակութային, կրոնական, ռազմական և կրթական համակարգերի ազդեցությունը: Ժամանակի ընթացքում, ինչպես նաև ռազմական գործողությունների հետևանքով, շատ դեպքերում հիմնարար ազդեցությունն ու միաձուլումն ավելի արագ տեղի ունեցան, ինչպես օրինակ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո՝ հելլենիստական ժամանակաշրջանում: Հաճախ թագավորներն իրենց զավակներին՝ հատկապես ապագա թագաժառանգներին, ուղարկում էին իրենց ժամանակի մեծ հեղինակություն ունեցող ուսուցիչների մոտ՝ ուսանելու: Այդտեղ նրանք պարտավոր էին սովորել ոչ միայն բնական գիտությունները, ռազմական գործն ու ապագա կառավարչին բնորոշ հոռետորություն, այլև՝ երգեցողություն, ճարտասանություն և արվեստ առհասարակ: Այդ ամենն, անշուշտ, ենթադրում էր նաև դաստիարակության որոշակի ձևաչափ: Դեռևս հնագույն ժամանակներում կարևորվում էր ոչ միայն սովորողների իմացությունը, այլ նաև գործնական հմտությունը: Ժամանակի ընթացքում աստիճանաբար թանկարժեք կրթությունն ավելի հասանելի դարձավ հասարակությանը, անգամ ստեղծվեցին համայնքային, ծիսական և եկեղեցական (առհասարակ կրոնական) դպրոցներ և ճեմարաններ: Վերածննդի ժամանակաշրջանում եվրոպական հիմնական երկրներում ի հայտ եկան ժամանակի ամենամեծ փորձ և հեղինակություն ունեցող ուսումնական հաստատություններ: Պատմության նոր և նորագույն շրջանում էլ ավելի կարևորվեց մարդկության ուսուցման և դաստիարակության բարձր մակարդակ ապահովելու խնդիրը, ինչը միտված էր նաև տնտեսության և գիտության զարգացմանը: Այս առիթով տեղին է նշել անվանի մանկավարժ Գ. Ե. Ղուլումյանի հետևյալ միտքը. «Պետությունը պարտավոր է հասարակական միջավայրի բոլոր ազդեցությունները, մեր կյանքի յուրաքանչյուր դրրվագ, հասարակական միջավայրի յուրաքանչյուր քառակուսի մետր ձևավորել աճող սերնդի դաստիարակությանը նպաստելու տեսանկյունից»: [2, 108]

Այսօր էլ բոլոր պետությունները հսկայական գումարներ են ծախսում սեփական երկրի բնակչության կրթության և դաստիարակության խնդրի լուծման համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց կրթության կազմակերպումը առանց S2S-ների կիրառման կարծես թե անհնարին է դառնում: Այսօր պետական ոլորտի պատասխանատուները ոչ միայն հորդորում, այլ նաև

կրթության մատչելիության սկզբունքից ելնելով՝ հեռավար դասընթացների միջոցով փորձում են անկախ բնակավայրի գտնվելու վայրից ապահովել համընդհանուր հանրակրթություն բոլորի համար: Ինչ վերաբերվում է կրթության կազմակերպման գործընթացին, ապա հեռավար դասընթացները կարող են իրենց որոշակի ազդեցությունն ունենալ, բայց սովորողների դաստիարակության հարցը առանց անմիջական շփման պատկերացնելն անհնար է: Հենց այստեղ է, որ խնդիրը մնում է չլուծված, նամանավանդ ժամանակակից ուրբանիզացիայի պայմաններում: Առկա բացը լրացնելու համար խիստ անհրաժեշտ է կազմակերպել գյուղաբնակ և քաղաքաբնակ սովորողների պարբերական այցելությունն գյուղից քաղաք և հակառակը: Հաշվի առնելով, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության բաղկացուցիչ գործոններից է հայրենաճանաչողությունը և հայրենիքի վերաբերյալ համապարփակ ինֆորմացիա ունենալը, իսկ այդ ամենը միայն ՏՀՏ-ների կիրառմամբ հնարավոր չէ իրականացնել, որովհետև շատ գյուղական բնակավայրերի սովորողներ սոցիալապես ի վիճակի չեն կազմակերպել նմանատիպ ճանաչողական էքսկուրսիաներ, խնդիրն էլ ավելի արդիական է դառնում:

Այս դեպքում խոսքը գնում է բացառապես փոխադարձ ազդեցությունների և միջանձնային շփումների պահպանման մասին: Քանի որ մեր օրերում «էքսկուրսիա» բառի տակ շատ-շատերը պատկերացնում են ժամանցի կազմակերպում բնության գրկում, ուստի հարկավոր է, որ այն կրի ոչ թե «էքսկուրսիա բնության գրկում» անունը, այլ օրինակ՝ արտագնա ուսումնական պարապունք այս կամ այն դպրոցում:

Շատ կարևոր է, որ այդ պարագայում ուսումնական պարապունքների ժամանակ օգտագործվեն այնպիսի մեթոդներ, որոնք կմեծացնեն միջանձնային շփումը հասակակիցների հետ: Հատկապես մեծ ազդեցություն ունեն խմբային ուսուցումն ու զույգերով աշխատանքը: Խնդրի լուծումը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է հեռավար դասընթացներին զուգընթաց պլանավորել և իրականացնել փոխադարձ այցելությունների հիման վրա կազմակերպվող արտաուսումնական պարապունքներ: Առանձին դեպքերում կարող են իրականացվել նաև բնության գրկում կազմակերպվող համատեղ դասեր:

Սովորողների համատեղ ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակն է ստեղծել սովորողների լիարժեք ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ հիմնվելով սովորողների հավասար իրավունքների վրա, ապահովելով բովանդակային կրթական այնպիսի պայմաններ, որոնք իրենց հերթին հենված կլինեն սովորողների հայրենասիրական դաստիարակության և անձի՝ որպես ապագա լիիրավ քաղաքացու ձևավորմանը: Տեսակետ ՄԻԺԻ N21-ի. ամսագրում խնդրի վերաբերյալ առկա է հետևյալ միտքը. «Մերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է» (Տեսակետ, ՄԻԺԻ N21, Երևան դեկտեմբեր 2006, ընդ.: [4,27])

Մեր խնդիրն է ձևավորել վերլուծելու, համադրելու, համեմատելու կարողություններով օժտված քաղաքացի, ով կլինի հայրենաճանաչ, կունենա պատասխանատվության զգացում հայրենիքի յուրաքանչյուր հատվածի նկատմամբ, կունենա հոգատար վերաբերմունք բնության և շրջապատի հանդեպ, կլինի օրինակելի սովորող, կունենա տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն, նպաստել սովորողների միջանձնային հարաբերությունների ճիշտ կազմակերպմանը և տարբեր իրավիճակներում խնդրի լուծման այլընտ-

րանքային եղանակների օգտագործմանը: Որպես աշխատանքների հիմնական ուղղություն՝ կարող ենք առանձնացնել սովորողների առօրյայի ճիշտ կազմակերպումը, սոցիալական միջավայրում հայրենաճանաչողության, տարբեր համայնքների մշակույթների և ավանդույթների հետ շփումը և միջանձնային հարաբերությունների սոցիալականացումը: Մեջբերենք «Մանկավարժություն և հոգեբանություն» գիտական հանդեսից Աշոտ Ասլանյանի «Հայրենասիրությունը փոխակերպվող հասարակության գաղափարական հիմքերի համակարգում» հոդվածից մի հատված. «Հայրենասիրությունը բացատրելու համար պետք է անդրադառնալ Հայրենիքի ընկալմանը: Այն կարելի է բնորոշել որպես տվյալ երկրի հասարակության բնական միջավայրի և սոցիալական տարիների, այդ թվում՝ լեզվախմբի միավորում (համախմբում): «Հայրենիք» հասկացության մեջ երբեմն երկու բովանդակություն է դրվում՝ փոքր Հայրենիք և մեծ Հայրենիք: Փոքրի տակ հասկացվում է կոնկրետ աշխարհագրական վայրը, որտեղ մարդը ծնվել և մեծացել է, ձևավորել են նրա աշխարհայացքները սեփական ծննդավայրի և շրջապատող արտաքին միջավայրի վերաբերյալ: Մեծ հայրենիքի ասելով, որպես կանոն, հասկացվում է այն պետությունը, ուր ապրում և գործում է մարդը: [3, 147]

Շատ կարևոր է, որ աշխատանքների ճիշտ կազմակերպման համար առանձնացվեն հետևյալ սկզբունքները. հայրենաճանաչողություն, միջանձնային շփումների ճիշտ կազմակերպում, ուսման որակի ապահովում, հետևողականություն, պարբերականություն, միջանձնային շփումներում հարգանքի դրսևորում, սոցիալապես ակտիվ քաղաքացու ձևավորման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ուսման որակի և բարեխղճության պահպանում, շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում: [1, 8]

Նպատակ ունենալով բարձրացնել սովորողների ձգտումները ուսուցման և դաստիարակության նկատմամբ՝ անհրաժեշտ է, որ այդ աշխատանքներում ներգրավված լինեն ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցները: Սովորողների ուսուցմանը և դաստիարակությանը վերաբերող նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցողական աշխատանքներ տանել քաղաքային համայնքների և գյուղական համայնքների դպրոցների միջև, հեռավար դասընթացներին զուգընթաց կազմակերպել հանդիպումներ, անցկացնել մոնիտորինգներ, կազմել աշխատանքային պլան յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, ընդգծել այդ պլանի սկզբունքները, աշխատանքների իրականացման փուլերում պարբերաբար օգտագործել նաև սոցիալական կայքերի հնարավորությունները միջանձնային շփումների պահպանման համար, կազմակերպել համատեղ միջոցառումներ, ուսումնական տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ կազմակերպել մրցույթներ (անհնարինության դեպքում օգտվելով տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից): Աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային արձակուրդների ընթացքում կատարել համատեղ այցելություններ թանգարաններ, պատմամշակութային օջախներ և այլն: Քաղաքային և գյուղական դպրոցների համագործակցության բարելավումն ապահովելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դպրոց (քաղաքային, թե գյուղական) ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանում առանձնահատուկ տեղ հատկացնի միջդպրոցական կապի ձևավորման և համագործակցային աշխատանքների համար, համագործակցային աշխատանքներում առանձնացնի դասարանների միջև սերտ կապն ապահովող աշխատանքները (համատեղ միջոցառումներ, մրցումներ, մրցություններ և այլն), ֆինանսական միջոցների ճիշտ

կառավարման համար մշակի համատեղ գործունեության ծրագիր էքսկուրսիաների, արշավների և համատեղ պարապունքների համար կարևորի վերոհիշյալ աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը:

Վերոհիշյալ քայլերի կատարման հիմքում շեշտը պիտի դրված լինի բացառապես աշակերտակենտրոն ուսուցման վրա՝ ապահովելով սովորողների միջանձնային շփումների բարձր մակարդակն ու դրանց սոցիալականացումը:

Միջանձնային շփումների ավելացմանը և հայրենաճանաչողությանը զուգընթաց փոխադարձ այցելությունները հնարավորություն կտան կրթության սոցիալականացմանը, կիթանեն սովորողների վերլուծական մտածողության բարելավմանը, կստեղծեն նպաստավոր պայմաններ՝ տարբեր բնագավառներում առկա ազգային սովորությունների ճանաչման ու ազգային արժեքային համակարգի պահպանման համար: Էքսկուրսիաների, փոխադարձ այցելությունների, արտագնա դասերի և բնության գրկում դասերի կազմակերպումը սովորողների տեսական գիտելիքների գործնական կիրառության լայն հնարավորություն է ապահովում, ինչը մեր օրերում խիստ կարևոր բնույթ է կրում:

Գրականություն

1. «Կրթություն» շաբաթաթերթ, 20.04.17թ., չորեքշաբթի թիվ 18-19 (783-784) 24 էջ,
2. Ղույումյան Գ.Ե, «Մանկավարժություն», գիրք 2, Երևան «Զանգակ-97» 2005, 230 էջ,
3. «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», միջբուհական կոնսուրցիումի գիտական հանդես, Երևան «Զանգակ-97» 2013, 176 էջ:
4. «Տեսակետ», ՄԻԺԻ N21, Երևան դեկտեմբեր 2006, 65 էջ:

Բանալի բառեր-սովորող, դպրոց, ուսուցում, դաստիարակություն, փոխադարձ այցելություն, գյուղ, քաղաք:

Գագիկ Էմինյան, Դավիթ Յուլյան,Գյուղական և քաղաքային դպրոցների սովորողների ուսուցման և դաստիարակության կազմակերպման մի քանի առանձնահատկություններ-Հողվածում անդրադարձ է կատարվում գյուղական և քաղաքային համայնքների համագործակցային աշխատանքներին, կրթության հավասար հնարավորությունների պահպանման առանձնահատկություններին, սովորողների ուսուցման և դաստիարակության ներդաշնակության պահպանմանը, սովորողների միջև միջանձնային շփումների ձևավորմանն ու պահպանմանը: Առանձնացվում են հնարավոր դասընթացներին զուգահեռ փոխադարձ այցելությունների և արտագնա դասերի առանձնահատկություններ:

Гагик Эминян, Давид Ёлчан, Некоторые особенности организации обучения и воспитания учащихся сельских и городских школ-В статье рассматриваются работы сотрудничества между сельскими и городскими общинами, сохранение особенностей для равных возможностей в образовании, сохранение сочетания в учебе и воспитании, формирование и сохранение межличностных отношений между учащимся. Также выделяются параллельно с возможными курсами обучения особенности взаимных посещений и уроков на выезд.

Gagik Eminyan, David Yolchyan, Some Features of Managing the Upbringing and Teaching of the Country and Urban School Learners-The article reflects the connection and cooperation of city and country life, the current conditions of the learners and their opportunities to common touch. Practice exchange and outdoor classes are also offered.

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՏԵՂԵԿԱԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՆՈՐ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ, ՎԱԼՅԱ ԿՈԼՈԼՅԱՆ

21-րդ դարի առաջին 17 տարիներն ակնհայտորեն փաստում են, որ այս դարն առնվազն լինելու է տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների ժամանակաշրջան, առանց որոնց անհնար է պատկերացնել առաջադեմ երկրների տնտեսական ու հասարակական կյանքը: Ընդամենը տարիներ առաջ ինդիա կար հասարակության լայն շերտերին ներկայացնել դրանց հնարավորությունները և ներդնել այն ֆինանսական հաշվառման, կառավարման, հանրության հետ տարվող աշխատանքների, տեղեկության և գիտելիքի ստեղծման ու տարածման, ժամանցի, կրթության կամ ինքնակրթության կազմակերպման գործընթացներում՝ այն առավել համակարգված ու ամբողջական դարձնելու համար: Եթե այդ տեխնոլոգիաների տիրապետման հմտությունները տարիներ առաջ դիտարկվում էին որպես մասնագետի առավելություններ, ապա այսօր դրանք դարձել են ժամանակակից մարդու պարտադիր պահանջներից մեկը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները շատ կարճ ժամանակահատվածում այնպես դարձան անձի, մասնավորապես դեռահասների առօրյայի հիմնական մասը, որ նույնիսկ որոշ երկրներում անհրաժեշտություն է առաջացել համապատասխան բուժական ծրագրեր իրականացնել¹: Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում բազմաթիվ այլ կախվածությունների կողքին, առկա է ևս մեկը, որը կոչվում է ինտերնետային կախվածություն և հիմնականում սպառնում է դեռահասներին՝ ազդելով նրանց վարքագծի և հոգեկան առողջության վրա: Բժիշկներն ու հոգեբաններն իրենց ուսումնասիրություններում արդեն փորձել են ուրվագծել այդ կախվածության նկատմամբ հակումներ ունեցող դեռահասների հոգեբանական նկարագրի հիմնական առանձնահատկությունները:

“Ինտերնետային կախվածության հակված դեռահասի վարքն առանձնանում է զգացմունքային ընդհանուր անկայունությամբ, միաժամանակ բևեռային զգացմունքներ ունենալու հակվածությամբ, հեշտ դյուրագրգռությամբ. նույնիսկ թույլ արտաքին ազդեցությունն այդ դեռահասին հասցնում է գրգռված հոգեվիճակի²”: Կարևոր առանձնահատկություններից է դիտարկվում զգացմունքայնությունը և անհանգստությունը վտանգների նկատմամբ, որով և պայմանավորված է փախուստը “դաժան” իրականությունից:

Տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաները ձևավորում են այլընտրանքային մի նոր վիրտուալ իրականություն, որն առավել գրավիչ ու հարմարավետ է դառնում դեռահասի համար: Այստեղ նա հնարավորություն ունի ստանձնել առաջատարի ցանկալի կարգավիճակը, սեփական երազանքնե-

¹ Как печат интернет-зависимых в Китае: репортаж Нью-Йорк Таймс <http://megamozg.ru/post/2606/>

² В. Л. Малыгин, Ю. А. Меркурьева, Н. С. Хомерики, А. А. Антоненко, Е. А. Смирнова. Особенности личности подростков, склонных к интернет-зависимому поведению. Журнал неврологии и психиатрии им. С. С. Корсакова. 2011, 4, с. 105-108.

րին ու պատկերացումներին համապատասխան ձևավորել “շրջապատող աշխարհը”, կառավարել զարգացումների ընթացքն ու ընդամենը մեկ ձեռքի շարժումով չեզոքացնել ամեն տեսակի վտանգները:

Նոր վիրտուալ իրականությունը բնավ էլ մանկական տարիների հեքիաթային աշխարհի շարունակությունը չէ, որտեղ բարին միշտ հաղթում է՝ հավատ ներշնչելով վաղվա օրվա ու լուսավոր ապագայի նկատմամբ, միաժամանակ հիմքեր ստեղծելով աշխարհայացքի ու արժեքային համակարգի ձևավորման համար: Այն այլընտրանքային իրականություն է, միրաժ, որը ոչ միայն գայթակղում ու հրապուրում է անձին, այլև ազատում նրան իր առջև կանգնած առկա խնդիրներից լուծումներ գտնելու դժվարությունից:

Դեռահասների շրջանում տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների տարածվածությունը հիմք է տալիս ենթադրել, որ ինտերնետ կախվածության հակվածությունն առկա է գրեթե բոլորի մոտ՝ պայմանավորված տվյալ երկրում տեխնիկական առաջընթացի աստիճանով: ՌԻ-ստի կարող ենք փաստել, որ այս տեխնոլոգիաները նոր հնարավորություններ բացելով կրթության կազմակերպման համար, միաժամանակ լուրջ մարտահրավերներ են նետել մանկավարժությանը որպես գիտություն և որպես սոցիալ-մշակութային գործընթաց:

Դեռահասների կրթադաստիարակչական գործընթացը, լինելով բազմաշերտ և բազմակողմ, պահանջում է ներգրավված մի շարք սոցիալական ինստիտուտների նպատակային ու համակարգված մասնակցություն՝ նախանշված ցանկալի արդյունքի հասնելու համար: Հետևաբար, առաջացած յուրաքանչյուր մարտահրավերի դիմակայումը դառնում է բոլոր մասնակիցների առաջնահերթ խնդիրներից, այլապես վտանգվում է գործընթացի նպատակը, որը ոչ միայն շատ երկրներում օրենսդրորեն ամրագրված պահանջներ են, այլև լուրջ սպառնալիք պետության և հասարակության ապագայի նկատմամբ³:

Դեռահասների վրա տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների բացասական ազդեցության նվազեցման կամ չեզոքացման գործընթացի շրջանակում՝ առաջարկել էինք, ի թիվս այլ գործիքների, դպրոցներում ներդնել նաև մեդիակրթության պարզեցված դասընթացներ, որոնք հնարավորություն կտան նրանց խուսափել որոշակի վտանգներից⁴: Սակայն հարկ է նշել, որ տեխնիկական առաջընթացի տեմպերը և առաջարկվող “վտանգավոր” ծառայությունների բազմազանությունն այնպիսին է, որ արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ են ոչ միայն անընդհատ փոփոխություններ, այդ դասընթացներում, այլև համալիր մոտեցումներ: Ակնհայտ է, որ կրթադաստիարակչական գործընթացի իրականացման գլխավոր մասնակիցներն են ընտանիքն ու դպրոցը, որոնք նոր պայմաններում ունեն մշտական աջակցության և ուղղորդման կարիք: Տարիներ առաջ դեռահասի դաստիարակության գործընթացն առա-

³ Հանրակրթության մասին ՀՀ օրենք, հ-5, /ընդունվել է 10. 07. 2009/: Об образовании в Российской Федерации, ст.- 3. Федеральный закон Российской Федерации от 29 декабря 2012 г. N 273-ФЗ. Об общем среднем образовании, ст.- 5, Закон Республики Беларусь, 5 июля 2006 г. № 141-з и т. д.

⁴ **А. В. Багдасарян.** Информационные технологии в школах Армении. Гуманитарные исследования, журнал фундаментальных и прикладных исследований, министерство образования и науки Астраханской области. 2013, № 1 (45), с. 71-75.

վել կառավարելի ու արդյունավետ դարձնելու նպատակով, ծնողները փորձում էին դպրոցի հետ համագործակցությամբ, ուշադրության կենտրոնում պահել “փողոցի” հնարավոր բացասական ազդեցությունը: Որպես կանոն ծնողներից շատերը գիտեին իրենց երեխայի շրջապատում ապրող այն մարդկանց, որոնց հետ շփումը ցանկալի չէր ու փորձում էին հնարավորինս սահմանափակել դեռահասի տվյալ շրջապատում ֆիզիկական ներկայությունը: Մինչև դեռահասի որոշակի կայուն հոգեվիճակի հասնելը կամ նմանատիպ “հակասոցիալական” վարքով անձանց նկատմամբ հասարակական համապատասխան կարծիքի ձևավորումն ու դրանից բխող իրավական կամ բարոյական վերաբերմունքի դրսևորումը, ծնողների նման գործողությունները տալիս էին իրենց արդյունքը՝ նվազեցնելով աղդեցության հնարավորությունները: Սակայն այսօր դեռահասը, ֆիզիկապես գտնվելով առաջին հայացքից ապահով տարածքում, դարձել է առավել անպաշտպան, որովհետև “համաշխարհային փողոցը” դարձել է նրա մշտական ուղեկիցն ինչպես ողջ օրվա ընթացքում, այնպես էլ գիշերը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Իսկ այդ “փողոցում” երբեմնի ծանոթ, սոցիալական ոչ ընդունելի վարքով անձը չէ, այլ շատ հաճախ մասնագիտական բարձր պատրաստվածությամբ, հաղորդակցման և համողելու հմտություններին, հոգեբանական ազդեցության հնարքներին տիրապետող անձը կամ խումբը, որը հասակակից օգտատիրոջ կեղծ անվան տակ, բարեկամության ու շփման առաջարկի միջոցով, փորձում է մասնակցություն ունենալ դեռահասի աշխարհայացքի ու արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Գուցե ոմանք սա դիտարկեն վտանգի ուռճացում, սակայն աշխարհաքաղաքական նոր զարգացումներն ու դեռահասների մասնակցության խթանումը որոշ տարածաշրջանային էթնիկ, կրոնական և սոցիալական հակամարտություններում ապացուցում են այդ⁵:

Մերունդների միջև գաղափարական ու արժեհամակարգային տարբերությունները բնորոշ են եղել բոլոր ժամանակաշրջաններին, սակայն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն առավել տեսանելի ու երբեմն նույնիսկ բևեռային են դարձնում դրանք: Որպես օրինակ դիտարկենք հիմա աշխարհում խիստ մոդայիկ դարձած ինքնալուսանկարում երևույթը, որով այսօր համակված են ինչպես հանրային ճանաչում ունեցողները, այնպես էլ դեռահասները: Մեզանից յուրաքանչյուրը լավ կհիշի մեծ մասսայականություն ունեցող “Դեն, սպասիր” մուլտֆիլմի / ռեժ. Վ. Կոտյոնոչկին, սցենարիստներ. Ֆ. Կամով, Ա. Կուլյանդսկի, Ա. Խայտ /4 –րդ մասը, երբ “մարզիկ Գայլը”, մարզադաշտի աստիճաններին, վերցնելով լուսանկարչական ապարատը, ինքն իրեն է լուսանկարում տարբեր դիրքերից: Այս փոքրիկ դրվագը հերոսին բնութագրում էր որպես ինքնահավան, ինքնասիրահարված, մեծամիտ, փառասեր, անհամեստ, որն էլ, իր հերթին, նրա նկատմամբ համապատասխան վերաբերմունք էր դրսևորում: Այսօր արդեն նման գործողությունը դարձել է սովորական և նման վերաբերմունք չի առաջացնում: Նույնիսկ ավելին, բնավորության որոշակի գծեր, սոցիալական որակներ և շրջապատում վարքի դրսևորումներ, որոնք անցյալում ընկալվում էին որպես բացասական, այժմ ընկալվում են որպես անձի արժանիքներ:

Ժամանակակից դեռահասների շրջանում արդեն ձևավորվել է յուրօրինակ մի խումբ, որը, լինելով հասարակության մեջ, ապրում է մեկուսացված, նրանք կամավոր են հայտնվում այդ իրավիճակում՝ չունենալով անձնական ու հասարա-

⁵ <http://video-ner.ru/index.php?newsid=7624/hwasaneti> է 27. 07. 2015 թ./

կական հարաբերությունների փորձ: Վիրտուալ սոցիումն իր բազմաթիվ թելերով օր-օրի կլանում է նրանց, ոչ միայն հեռացնելով տվյալ տարիքային խմբին բնորոշ ակտիվ վարքագծից, այլև ամեն վայրկյան ապացուցում ինտերնետ կապի անհրաժեշտությունը՝ որպես “բնական կենսագործունեության” ապահովման պայման: Վերջինիս վառ օրինակը կարող է հանդիսանալ ընկերության գովազդային հոլովակը՝ Միասնական ինտերնետ/(2015), որը ներկայացնում է ամառային ճամբարում ժամանակակից դեռահասների ցանկություններն ու նախասիրությունները, որոնք միայն ինտերնետային կապ ունենալու շուրջ են: Բիարկե, պարզամտություն է ենթադրել, որ սահմանափակումների կամ արգելքների միջոցով հնարավոր է այս “նոր խմբին” կտրել տեղեկատվական տեխնոլոգիաներից և վիրտուալ իրականությունից, սակայն հակակշիռներ ներդնել ու հաշվեկշռի բերել նրանց առօրյան ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ⁶:

Հայաստանում ծնողները դաստիարակության գործընթացն իրականացնելու համար հիմնականում ունեն մի շարք խնդիրներ.

1. Նորագույն տեխնոլոգիաների նկատմամբ դեռահասների վերաբերմունքն ընկալվում է ընդամենը տարիքային, անցողիկ հրապուրանք:

2. Գերակշռող է այն կարծիքը, որ տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաները ժամանակակից դեռահասների սերնդի “գործիքներն” են և ավագների համար դրանց տիրապետման որևէ անհրաժեշտություն չկա:

3. Դաստիարակության վերաբերյալ գիտելիքները և մեթոդները հիմնված են իրենց մանկապատանեկան տարիներին ձևավորված հիշողության կամ հասարակության լայն շրջաններում ավանդաբար փոխանցվող փորձի վրա

4. Տեղեկացված չեն տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների ինչպես կարևորությանը, այնպես էլ հնարավոր վտանգներին ու սպառնալիքներին:

Նշենք, որ ժամանակակից պայմաններում հաժախ չեն գործում կամ արդյունավետ չեն մանկավարժական այն մեթոդներն ու մոտեցումները, որոնք ավանդաբար հասարակությունը փոխանցում է սերնդե-սերունդ: Կարծում ենք, որ ծնողներն այսօր ունեն մանկավարժության որոշակի դասընթացներ անցնելու և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտությունների ձեռքբերման կարիք, որովհետև դեռահասների դաստիարակության ներկայիս մարտահրավերները հիմնականում նոր են ու նախկին փորձից բխող մոտեցումները հաճախ հակառակ արդյունք են տալիս: Ուստի, դաստիարակության գործընթացն առավել ղեկավարելի դարձնելու և տեղեկատվական տեխնոլոգիաների ոչ ցանկալի ազդեցությունը նվազեցնելու համար, ծնողը պետք է կարողանա.

ա) լինել տվյալ վիրտուալ տարածքի օգտատեր, որը հնարավորություն կտա նրան ավելի ամբողջական ճանաչելու դեռահասի նախասիրությունները և անհրաժեշտության պարագայում միջամտել զարգացումների ընթացքին,

բ) սոցցանցերի և վիրտուալ տարածքի քննարկման թեմաները հաճախ դարձնել նաև ընտանիքի անդամների շրջանում համատեղ գրույցի նյութ, որը ոչ միայն կմիավորի ընտանիքի անդամներին, այլև հնարավորություն կտա ուղղորդել դեռահասի կարծիքը կամ ուղղորդվել դեռահասի կարծիքով,

⁶ <https://www.youtube.com/watch?v=wmC7wt1WjAs>:

գ) ունենալ հնարավորություն պարբերաբար ծանոթանալու այն բոլոր էլեկտրոնային ռեսուրսներին, որոնցից օգտվում է դեռահասը, որպեսզի կանխատեսի հնարավոր զարգացումները:

Վերը նշվածին զուգընթաց անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել դեռահասի մոտ ձևավորվող սոցիալական որակներն կյանքում, անմիջական շփումներում դրսևորելու համար: Անհրաժեշտ է պարբերաբար դեռահասների և նրանց ծնողների հետ վարել զրույցներ “Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան”, “Ապահով համացանց” թեմաներով, նրանց ներգրավել նմանատիպ մրցույթներին, հասնել նրան, որ դեռահասներն իրենք մարդկանց լուսաբանեն համացանցով հաղորդակցվելու էթիկայի և անվտանգության կանոնները:

Բանալի բառեր-տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաներ, դեռահասների դաստիարակություն, վիրտուալ տարածք, սոցցանցեր, ընտանիք և դպրոց, ինտերնետային կախվածություն

Մարինե Յարմալոյան, Վալյա Կոլոլյան, Ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնախնդիրները տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների տարածվածության պայմաններում-Հոդվածում ներկայացված է ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնախնդիրները տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների տարածվածության պայմաններում: Մանկավարժական մեթոդներն ու մոտեցումները, որոնք ավանդաբար հասարակությունը փոխանցում է սերնդեսերունդ, տեղեկատվական հաղորդակցության պարագայում հաճախ արդյունավետ չեն և դեռահասների դաստիարակության գործընթացի մասնակից կողմերից պահանջում են նոր գիտելիքներ և հմտություններ առկա մարտահրավերներին դիմակայելու համար:

Марине Ярмаляной, Валя Кололян, Учебновоспитательный процесс в условиях распространенности новейших информационных и коммуникационных технологий-В статье описано о проблемах учебновоспитательного процесса в условиях распространенности новейших информационных и коммуникационных технологий. Педагогические методы и подходы, которые общество традиционно передает из поколения в поколение, в условиях информационного общества часто малоэффективны, и от сторон-участников процесса воспитания подросткового поколения требуются новые знания и навыки для противостояния существующим вызовам.

Marine Yatmaloyan, Valya Kololyan, The education and upbringing issues in the context of widely used high information and communication technology-The article deals with the education and upbringing issues in the context of widely used high information and communication technology. Pedagogical methods and approaches the society traditionally passes on from generation to generation, are often ineffective in the informative society, and the parties responsible for educating teenagers are required to get new knowledge and skills to cope with the current challenges.

ԸՆՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԵՐԵՄԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ

ԼԻԱՆՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից: Այդ ամբողջությունն էլ ընտանիքի կառուցվածքն է, որը կարող է աստիճանակարգային (հիերարխիկ) լինել: Այստեղ կա լիդեր (երբեմն, մեծ ընտանիքներում, մեկից ավելի), կան ենթականեր (կատարողներ), յուրաքանչյուր անդամ ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր կարգավիճակը և համապատասխան դերերը: Որոշ ընտանիքներում լինում է միայն մեկ լիդեր, որը կարող է լինել ավտորիտար կամ ժողովրդավար անձնավորություն:

Բայց այժմ մեծաթիվ են կոչվում այսպես կոչված է գալիտար (հավասարության վրա հիմնված) ընտանիքները, որի անդամները (առնվազն ամուսինները) հավասար կամ գրեթե հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեն:

Սա արդեն ժողովրդավարական կամ ազատական-ժողովրդավարական ընտանիք է: Որոշ երկրներում (ԱՄՆ, Ռուսաստան և այլն) կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկայումս մարդկանց մեծամասնությունը գերդասում է ունենալ էգալար, ժողովրդավարական սկզբունքներով կառավարվող ընտանիք:^[1] Երբ ընտանիքի կառուցվածքում լուրջ և այն էլ ախտաբանական փոփոխություններ են կատարվում, ապա այդպիսի ախտահարված խումբը այլևս չի կարող արդյունավետ կերպով կատարել իր հիմնական գործառույթները: Օրինակ, եթե ընտանիքի հայրը հարբեցող է կամ թմրամոլ է, ապա խաթարվում է ընտանիքի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալականացման և այլ կարևոր գործառույթները: Ընտանիքի կառուցվածքային փոփոխություններ առաջ են գալիս նրա զարգացման ընթացքում, նրա կենսական ճանապարհի տարբեր հատվածներում՝ առաջադրելով նոր խնդիրներ, պահանջելով նոր մոտեցումներ և լուծումներ:

Ընտանեկան դերերը բոլոր այն սոցիալական դերերն են, որոնք անձի կատարում են՝ ի հետևանք այն բանի, որ ունեն ընտանիք և այնտեղ որոշակի դիրք են զբաղեցնում: Այդտեղ «ընտանեկան դեր» հասկացությունն ընդհանուր բնույթ ունի: Ընդհանրապես ընտանեկան դերերը կարելի է բաժանել երկու խմբի՝ ներընտանեկան դերեր միջընտանեկան դերեր ներընտանեկան են այն կարգավիճակներն ու դերերը, որ ընտանիքի անդամներն ստանձնում են միայն այդ ընտանիքի անդամների հետ փոխգործունեության մեջ մտնելիս:

Դրանք են ամուսնական դերերը (կին և տղամարդ), ծնողական դերերը (հայր և մայր), զավակների դերերը (տղա, աղջիկ, եղբայր, քույր): Ընտանիքի զավակների այդ դերերը միակն են, քանի դեռ նրանք սեփական ընտանիքներ չեն ստեղծել և նոր դերեր չեն ստանձնել: Այսինքն, դրանք այն կարգավիճակներն ու դերերն են, որ ունեն բջջային ընտանիքի անդամները: Այն դեպքում, երբ գործ ունենք ընդլայնված և նահապետական ընտանիքների հետ, պարզվում է, որ կան նաև պապի և տատի, մորաքրոջ, մորեղբոր և այլ դերեր, կախված այն բանից, թե ընտանիքն ինչ չափով է ընդլայնված բջջային ընտանիքի համեմատությամբ:

Հասարակության մեջ ընտանիքները հազվադեպ են լիովին մեկուսացված լինում ավելի լայն՝ այսպես կոչված սոցիետալ միջավայրից:

Մարդիկ ունեն ազգակցական կապեր, որոնց մի զգալի մասն ընտանիքի հոգեբանության սահմաններում կարելի է դիտել որպես այնպիսիք, որոնք ծնում են հատուկ տեսակի՝ միջընտանեկան դերեր: Օրինակ, որևէ անձի կողմից կատարվող հորաքրոջ դերը, եթե ինքն ունի իր առանձին ապրող բջջային ընտանիքը, միջընտանեկան դեր է:

Ժամանակակից բջջային և ընդլայնված ընտանիքների հիմնական գործառույթները բաժանվում են հետևյալ երեք խմբերի՝

1. ներքին (ներընտանեկան) գործառույթներ
2. արտաքին գործառույթներ
3. երկակի նշանակության գործառույթներ:

Ներքին գործառույթներն ընտանիքի այն գործառույթներն են, որոնք ծառայում են երկու հիմնական նպատակի՝

- ա) իր՝ որպես սոցիալական խմբի, պահպանմանն ու ամրապնդմանը,
- բ) իր անդամների պահանջմունքների բավարարմանը:

Ընտանիքի արտաքին գործառույթները ծագում են տվյալ ընտանիքի՝ այլ ընտանիքների և ավելի լայն հասարակության հետ ունեցած հարաբերություններում: Այս գործառույթի ծագման պատճառը այն է, որ յուրաքանչյուր ընտանիք ծառայում է ոչ միայն ինքն իրեն, այլև հասարակությանը, քանի որ այդ մեծ ամբողջության մի «բջիջն» է: Ընտանիքն ունի ներքին գործառույթներ, բայց միաժամանակ, որպես հասարակական ենթահամակարգ՝ ունի նաև արտաքին սոցիալական գործառույթներ:

Այս ամենի ընդհանրացումից ընտանիքի գործառույթներն փոխկապակցված են, դրանք միավորվում են ընտանիքի կարգավիճակի և այն դերերի մեջ, որոնք այդ խմբի կողմից կատարվում են հասարակության մեջ, յուրաքանչյուր գործառույթ յուրահատուկ դերային սպասում է, յուրաքանչյուր գործառույթ՝ որպես դերային սպասում, հնարավոր է և գոյություն ունի շնորհիվ այն բանի, որ խումբն ունի կառուցվածք և մի շարք այլ հատկություններ, որքան ավելի բարդ է ընտանիքը՝ որպես սոցիալական խումբ, (ունի մեծաթիվ անդամներ և ավելի շատ ու բազմազան միջդերային կապեր) այնքան ավելի մեծաթիվ են նրա սոցիալական դերերը և հետևաբար՝ նաև հասարակության մեջ նրա կատարած գործառույթները :

Ընտանիքի հիմնական ներքին գործառույթներ՝

Երեխա ունենալու (մանկածնության) և մոր ու հոր դերերը կատարելու ցանկության բավարարումը: Երեխաների սննդով ապահովելը, խնամքը, դաստիարակությունը և ներընտանեկան սոցիալականացումը: Այստեղ առանձնապես կարևոր է երեխայի դերային սոցիալականացումը, թեև իրենք՝ ծնողներն էլ են ապրում նոր դերայի սոցիալականացման գործընթաց: Մեծ հասարակության մեջ կատարելիք հասուն դերերին նախապատրաստումը: Սոցիալ-հոգեբանական հարմարավետ վիճակի և պաշտպանվածության ապահովումը, ընտանիքի յուրաքանչյուր անդամի զարգացման և հասունացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի դրական ինքնագիտակցության ձևավորումն ու պահպանումը: Շփվելու, հաղորդակցվելու պահանջմունքի բավարարումը (ծնողների և ընտանիքի/յուս անդամների հետ):

Ընտանիքի անդամների փոխադարձ սոցիալական վերահսկողությունն ու վարքի կարգավորումը:

Համատեղ հանգստի իրականացումը:

Ընտանիքի անդամների միջև ծագող բախումների լուծումը՝ նրա մյուս անդամների կողմից, նրանց միջամտությամբ և օգնությամբ: Համատեղ ապրելակերպի և կենցաղի կազմակերպումը:

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյական դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակության նախահիմքերի կառուցումը, որից հետագայում ձևավորվում և ամրապնդվում են անձի վարքի ձևերը:

Ընտանիքի հասարակական դերի աճը իր հերթին ենթադրում է բարոյական պատասխանատվության բարձրացում:

Ընտանիքը պետք է կարողանա դաստիարակել հոգեպես հարուստ, բարոյապես բարձր սկզբունքներով առաջնորդվող սերունդ, ապագա հասարակարգի արժանի ժառանգորդներ: Ընտանիքը պետք է դառնա հասարակական կարգի, բարոյական սկզբունքների ամենահուսալի հենարանը:

Այդ խնդրի իրականացումը պահանջում է ծնողների բարձր պատասխանատվություն, անհրաժեշտ պահանջկոտություն և ամենօրյա հսկողություն երեխաների արարքների նկատմամբ: Դաստիարակությունը անհրաժեշտ է տանել այնպիսի հունով, որ երեխաների մտքերն ու զգացմունքները հնարավոր լինի ուղղել դեպի բարոյական մաքուր սկզբունքները, դեպի հասարակայնորեն անհրաժեշտն ու օգտակարը:

Դաստիարակության արդյունավետության մեջ կարևոր է ծնողի բարոյական կերպարը, նրա անձնական օրինակը, խոսքի և վարվելակերպի միասնությունը: Ծնողի անձնական օրինակը հանդես է գալիս որպես բարոյական փորձի փոխանցման յուրահատուկ ձև:

Իհարկե, արատավորված ընտանիքում, հեղինակազրկված ծնողը չի կարող դրական ազդեցություն ունենալ իր երեխայի բարոյական դաստիարակության վրա: Անկասկած, ընտանիքում տիրող հարաբերությունները, հոգեբանական և բարոյական ընդհանուր մթնոլորտը իր անխուսափելի դրոշմն է թողնում երեխաների վարքի ու հոգեբանության ձևավորման վրա:

Ընտանիքն այն առաջնային խումբն է, որը վճռական դեր է խաղում իր կազմում զարգացող երեխաների ինքնագիտակցության ծագման ու ձևավորման գործում: Ծնող-երեխա հարաբերությունների վճռական դերը երեխայի անձի ձևավորման գործում հստակորեն ըմբռնվում է ժամանակակից հոգեբանների շրջանում և բազմաթիվ հետազոտությունների առարկա է դարձել: Հիմնական տեսակետն այն է, որ իրենց անձի մասին երեխաների տեսակետները արտացոլում են նրանց մասին ծնողների կարծիքները:

Երեխայի ես-կոնցեպցիայի համար նշանակություն ունի նա, թե նա արդյոք միակ երեխան է, թե ընտանիքում այլ երեխաներել են մեծանում: Մովորաբար միակ երեխաները ավելի բարձր ինքնագնահատական են ունենում, քան թե մի քանի քույրերից և եղբայրներից յուրաքանչյուրը: Դա հատկապես նկատելի է տղաների դեպքում:

Մինչդեռ ընտանիքի մեծությունը կամ ծնվելու հաջորդականությունը նույնպես, հավանորեն, նշանակություն ունեն, թեև լիովին պարզ չէ թե ինչպես:

Երեխայի ես-կոնցեպցիայի ձևավորման համար հատկապես խոր ազդեցություն է գործում ծնողի հետ հոգեբանական նույնացման առկայությունը, այդ գործընթացի խորությունն ու տևականությունը: Ենթադրվում է, որ նույն սեռի ծնողի հետ առողջ ու լիարժեք նույնացումը հանգեցնում է երեխայի դրական բարձր

ինքնագնահատականի ձևավորման: Ուսումնասիրություններից մեկի ժամանակ թեստի օգնությամբ համեմատեցին դեռահաս հանցագործների և ոչ հանցագործ դեռահասների ես-կոնցեպցիաները, նրանց ես-պատկերները և ծնողների հետ հոգեբանական նույնացման աստիճանները: Պարզվեց, որ նորմալ և օրինապահ երեխաների հետ համեմատած՝ դեռահաս հանցագործներն ավելի թույլ իդենտիֆիկացիա ունեն ծնողների, հատկապես հայրերի հետ:

Որքան ավելի է ընդունված երեխան իր ծնողների կողմից, այնքան ավելի բարձր է նրա ինքնագնահատականը: Այս ենթադրությունը ստուգվել է ուղղակի հետազոտությունների օգնությամբ:

Պարզվում է, որ բարձր ինքնագնահատակ ունեցող երեխաների ծնողները հստակ սահմաններ են գծել երեխաների վարքի համար և հսկում են, որպեսզի դրանք չխախտվեն, բայց այդ սահմանների ներսում երեխաներին լայն ազատություն են տվել: Երեխաները կարող են սեփական կարծիք ունենալ, մասնակցել ընտանեկան խնդիրների քննարկմանը, ինքնուրույն գնահատականներ տալ երևույթներին: Այսպիսի երեխաների ծնողները նույնպես արժամապատվության (ինքնահարգանքի) բարձր աստիճան են ունենում և հարգում են իրենց երեխաների անձը: Այսպիսով, բարձր ինքնագնահատական ունենալու համար երեխան պետք է ընդունված և սիրված լինի ծնողների կողմից և պետք է հաջողություն ունենա, հմուտ լինի որոշ գործերում:

Իսկ ինչ մեխանիզմով են ծնողներն ազդում երեխաների ես-կոնցեպցիայի ձևավորման վրա: Այդ մեխանիզմներից կարևոր դեր են խաղում հետևյալները.

ա) ծնողները սոցիալական մոդելներ են հանդիսանում երեխաների համար, բ) նրանք ձգտում են դրականորեն ամրապնդել երեխաների այն գործողությունները, որոնք ճիշտ են համարվում,

գ) հսկողության տակ են պահում ինֆորմացիայի այն հոսքը, որ երեխան ստանում է մանկության և դեռահասության տարիներին: Այս ամենը որոշակի ուղղություն է տալիս երեխաների ինքնագիտակցության զարգացմանը:

Ծնողները հաճախ են գանգատվում, թե երեխան ինքնամփոփ է, սեփական խնդիրների և անհանգստությունների մասին, երբեք չի խոսում: Կարճ ասած, դժվարությամբ են միմյանց հետ լեզու գտնում: Անգամ, եթե ծնողը մշտապես երեխայի կողքին է և զբաղվում է նրա հետ, միևնույն է, հաճախ այս խնդրից անհնար է խուսափել: Երեխան մեկուսանում է և վերջ: Այս դեպքում չափազանց դժվար է մտերմանալ նրա հետ:

Ջանք ու եռանդ չպետք է խնայել վաղ հասակից փոքրիկի ընկերը դառնալու համար: Ծնողները պետք է հիշեն, որ իրենք մեծ են, փորձառու և կարիք չկա մանկան արարքները դիտարկել հասուն մարդու տեսանկյունից: Երեխայի այս կամ այն արարքի շարժառիթներն այլ են, հաճախ մեզ համար անհասկանալի: Այսպիսով, փոքրիկի հետ ընկերանալու համար ծնողը պարտավոր է առաջին քայլը կատարել: Ծնող-երեխա փոխհարաբերություններն էապես կախված են «լավի և վատի» ճիշտ մատուցման ձևից: Ի վերջո, ծնողն է կազմավորում փոքրիկի աշխարհայացքը: Եթե վերջինս կարողանա նրբանկատորեն հրամցնել իր ունեցած գիտելիքները ու աշխարհկալման մասին իր պատկերացումները, ապա երեխան, մեծանալով, նրա համախոհը կդառնա (շատ հարցերում համաձայնվելով ծնողի հետ): Արդյունքում ծնողն ու երեխան ըկերներ կդառնան:

Ծնողը պետք է ճիշտ մոտեցում ցուցաբերի երեխայի հետաքրքրությունների հանդեպ խրախուսելով դրանք: Ոչ մի վատ բան չկա, երբ մանկիկը ցանկանում է

աղբի մեջ մտնել: Երբ մայրը գայրացած բղավում է. «Ի՞նչ ես անում, չէ որ քո հագին մաքուր վարտիք է», - երեխան նրան չի հասկանում: Նա դեռ չի պատկերացնում, թե որն է աղբը, և որը մաքուր վարտիքը: Նա ինքը պետք է հասկանա, թե ինչ նկատի ունի մայրը: Դրա համար նա պետք է վարտիքը կեղտոտի և աղբի մեջ մտնի: Վստահեցնում ենք, որոշ ժամանակ անց երեխան կհասկանա, որ աղբով խաղալն այնքան էլ հետաքրքիր զբաղմունք չէ, և թաց վարտիքը նախ իրեն կխանգարի: Միշտ պետք է հիշել, որ երեխան անհատականություն է և անձամբ պետք է ճանաչի աշխարհը, իսկ ծնողն այդ հարցում միայն կարող է նրան օգնել:

Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդոյթավորված: Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուններին և շներին: Գերադասում է խաղալ Տագրեսիվ! խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

Դաստիարակության հիմնական նպատակը նոր ծնված երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է:

Դաստիարակությունից է կախված երեխայի ընկալումը շրջապատող իրականության հանդեպ, նրա հարաբերությունները իր և շրջապատող մարդկանց հետ:

Դաստիարակության հարցն այսօր շատ լուրջ է, քանի որ ներկա սերունդն ավելի շատ տեղեկատվություն ունի, շուտ էզարգանում, ուստի հատուկ մոտեցում է պետք:

Մի բան պարզ է, որ երեխային պետք է դաստիարակել մանկուց, այլապես ուշ կլինի: Ինչպես մեր մեծերն էին ասում, «Երեխային բարուրի մեջ պետք է դաստիարակել», այսինքն՝ ծնված օրվանից: Երեխայի ճիշտ դաստիարակության համար շատ մեծնշանակություն ունի շրջապատը, սակայն ամեն դեպքում երեխան նախ դաստիարակվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում: Ծնողները՝ հայրն ու մայրը, պետք է լրջորեն զբաղվեն երեխայի դաստիարակությամբ: Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է: Եվ նրա նշանակությունը չի կարելի չզննահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին:

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայման-

ներում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը:

Դաստիարակությունը նպատակառոտորեն ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը: Շրջապատի մարդիկ այսպես թե այնպես ազդում են մարդու մտքերի և արարքների, նրա աշխարհընկալման և իր վրա՝ անկախ նրանից նա դա ուզում է, թե ոչ: Եվ իհարկե, շատ մեծ է այդ ազդեցությունը երեխաների վրա: Երեխաները սպունգի նման ներծծում են այն ամենը, ինչ կատարվում է նրանց շուրջը: Նրանք մեծ հաճույքով կրկնում են իրենց շրջապատող մարդկանց և ծնողների խոսքերը, միմիկան, ժեստերը, վարքի ձևերը: Կարևոր է, որ ծնողները գիտակցեն, որ հատկապես իրենցից է կախված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան: Կլինի նա երջանիկ և վստահ իր ուժերին, թե կլինի կոմպլեքսներով, չարացած աշխարհի վրա՝ չիմանալով իրեն ինչպես դրսևորի՝ չունենալով որոշակի գիտելիք, հմտություն և պաշար:

Երեխաների դաստիարակության ընթացքում կարելի է և հարկավոր է համաձայնեցնել այն բնավորության գծերը և երեխաների պահվածքը, որոնք հակասում են ծնողի սկզբունքներին:

Շատ ծնողներ հատկապես առաջին երեխայի ժամանակ հիմնականում շատ անվստահ են լինում՝ վախենալով սխալ դաստիարակել իրենց երեխային, որի արդյունքում անվճռականություն են ցուցաբերում, և ի հայտ են գալիս մի շարք բացթողումներ, և երբ երեխան արդեն սկսում է զգալ ծնողի անվստահությունը դաստիարակության գործում, սկսում է մանիպուլյացիայ ի ենթարկել սեփական ծնողին, որն էլ, բնականաբար, հիմք է ստեղծում համապատասխան բացասական վարքագծի ձևավորմանը:

Երեխաների դաստիարակության ժամանակ առաջին հերթին հարկավոր է առաջացնել երեխայի մոտ անհատականություն:

Բայց չի կարելի մոռանալ համընդանուր արժեքները – վարքի կանոններ, բարոյականություն և կոլեկտիվի և հասարակությունվրա ներգործելու բարեխիղճ մեթոդներ, որոնք ապագայում կօգնեն լինել ինքնուրույն և կարողանալ գործել որոշակի կերպով:

Ժամանակակից հոգեբանության մեջ այսօր դասակարգում են ծնողական դաստիարակության 3 հիմնական խմբեր՝

1. ավտորիտար
2. հանդուրժողական
3. ավտորիտատիվ

Այն ծնողները, որոնք հակված են ավտորիտար դաստիարակչական մեթոդին, սովորաբար ջղային են, դժգոհ, իշխող, կոպիտ, սահմանափակ են արտահայտում իրենց հույզերը: Նման ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովասանքի խոսքերասելը լրացուցիչ ճոխություն է և անընդունելի: Նման հարաբերություններում ծնողը միտ ճիշտ է, իսկ երեխան միշտ պետք է ենթարկվող լինի: Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սովորաբար լինում են ըմբոստ, վախկոտ, ջղային, դժբախտ և հեշտությամբ են հասակակիցների ազդեցության տակ ընկնում:

Դաստիարակչական երկրորդ ոճը հանդուրժողական է: Նման ծնողները ջերմ են և հուզական, բայց շատ սահմանափակ հսկողությամբ, քիչ են մասնակցում երեխայի կյանքին և հեշտությամբ տեղի տալիս երեխայի քմահաճույքներին: Այս ծնողը առավել շահագրգռված է, որ երեխայի հետ չհակադրվի և չվիճաբանի: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, կարծում են, թե ծնողները չեն մտածում իրենց մասին, թելադրում են ծնողներին իրենց կամքը կրթահավատությամբ են վերաբերվում նրանց:

«Ժամանակակից» ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում այս-երևույթին, երբ մայրը, կամ հայրը գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, ունենում էին քնավստահության պակաս, իսկ երբեմն էլ ցուցաբերում է հակասոցիալական վարք:

Երրորդ ոճը ավտորիտատիվն է: Նման ծնողները լինում են ջերմ, հանգիստ, չափավոր են հսկողության մեջ, քաջալերում են երեխային, հաճախ գրուցում են նրա հետ և կողմնակից են երեխայի անկախությանը: Այս ծնողները հակված են դրական ծնող-երեխա հարաբերություններ ստեղծելուն, նրանց հարաբերություններում իշխում է փոխադարձ հարգանքը: Այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաները լինում են ինքնավստահ, ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ են, անկեղծ:

Երեխաների դաստիարակության գործում կան մի շարք նրբություններ և կանոններ՝

- Հարկավոր է լինել սիրալիր երեխայի հանդեպ: Մերը, գուրգուրանքը փոքրիկին թույլ է տալիս զգալ իրեն պաշտպանված, վստահ իր անձի նկատմամբ:

- Ծնողների պահանջը պետք է լինի մշտական, տրամադրության հետ չփոխի և համապատասխան լինի երեխայի հնարավորությանը: Չի կարելի պահանջել նրանից կատարել իր ուժերից վեր խնդիր: Դա խեղաթյուրում է երեխայի կամքի ձևավորումը, նրա նպատակասլացությունը:

- Հարկավոր է թողնել, որ փոքրիկը ինքնուրույն գնահատի իր արարքը: Նույնիսկ եթե նա սխալ է գործում, մի շտապեք նրան կանգնեցնել, թողեք թող վերջացնի, հետո նոր բացատրեք, թե ինչը ճիշտ չի արել: Դա նպաստում է փորձի ձեռք բերմանը և բարձրացնում է նրա ինքնագնահատականը:

- Երեխայի դաստիարակությունը այնպես պետք է կառուցել, որ նրա մոտ գիտելիքի պահանջ ձևավորվի: Խոսքը ոչ միայն դպրոցական կարգապահության, այլ նաև շրջապատող աշխարհի մասին է: Երեխան պետք է իմանա, որ նա կարող է ճանաչել աշխարհը, ինչ որ նոր հետաքրքիր բան հայտնաբերել, կարևոր հայտնագործություններ անել: Երեխան պետք է դրանից հաճույք ստանա: Դրանով ձևավորվում է հետաքրքրությունը:

Ծնողները հաճախ գտնվում են վախի, սարսափի մեջ մտածելով, թե կկորցնեն իրենց երեխաներին, որը մեծ մասամբ կարող է պայմանավորված լինել երեխաների որոշ խրոնիկ հիվանդությունների, հաճախակի հիվանդանալու, սնտոիապաշտության (երագներ, աչք և այլն) հետ, որի արդյունքում երեխաներին թույլ են տալիս նույնիսկ անթույլատրելի, միայն թե նա իրեն լավ զգա, որն էլ երեխայի մոտ առաջացնում է եսասիրություն, կամակորություն և այլ բացասական որակների ձևավորում:

Դաստիարակության ոլորտում ամուսինների միջև կոնֆլիկտների առկայությունը նույնպես վնասում է երեխային: Այս դեպքում ծնողները երեխայի դաստիարակության հարցում չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, դրա հետևանքով անընդհատ բախումների առիթ է հանդիսանում, որի արդյունքում էլ երեխան չի դաստիարակվում, ուստի չի կողմնորոշվում, թե ծնողներից որն է ճիշտ և մնում է բարձիթողի վիճակում:

Երբ բացակայում է ծնողներից մեկը, ապա տեղի է ունենում ծնողական զգացմունքների ոլորտի ընդարձակում: Այն բոլոր զգացմունքներն ու էմոցիաները, որոնք նախատեսված էին բացակայող ամուսնու կամ կնոջ համար, ուղղվում են երեխային: Առաջին հայացքից կարող է թվալ, թե դա դրական երևույթ է, երեխան այս պարագայում առավել սիրված ու գնահատված կարող է լինել, սակայն դա այդպես չէ, ուստի այս պարագայում ի հայտ է գալիս ամեն կերպ երեխային պաշտպանելու ձգտում և երեխային զրկում են առավել ազատ, ինքնուրույն կյանք վարելու հնարավորությունից:

Շատ դեպքերում, երբ ծնողները տեսնում են, որ իրենց երեխան մեծանում է, վախենում են նրանից հեռանալուց, որի արդյունքում նրանք ամեն կերպ երեխաների մեջ սերմանում են մանկական որակներ, որն էլ հատկապես դեռահասության տարիքում կարող է հանգեցնել ծնող-երեխա հարաբերությունների խաթարմանը, քանի որ դեռահասները ավելի շատ ձգտում են մեծահասակին բնորոշ որակներ ձեռք բերել ու համապատասխան գործունեություն ծավալել:

Եթե յուրաքանչյուր ծնող ինքն անձամբ թեկուզ մեկ անգամ խորությամբ մտածի իր սեփական դաստիարակչական ներգործությունների մասին, վերլուծի, կշռադատի սեփական քայլերը, ապա անպայման կգտնի այն պատճառը, այն սկզբնաղբյուրը, որը հանգեցրել է սեփական երեխայի սխալ դաստիարակությանը և վարքի շեղումներին:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ երեխաները ծնվում են ոչ միայն նրա համար, որ մենք նրանց դաստիարակենք, այլ նաև նրա համար, որ նրանք մեզ դաստիարակեն: Որպեսզի երեխային դարձնի լավագույնը, լավ ծնողը պետք է ինքը դառնա ավելի լավը:

Բանալի բառեր- ընտանիք, դաստիարակություն, երեխա, ծնող, ձևավորում:

Լիանա Հարությունյան, Ընտանքի դերը երեխայի դաստիարակության գործընթացում- Դաստիարակության հիմնական նպատակը երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից են կախված երեխայի կողմից իրականության ընկալումը, նրա հարաբերությունները շրջապատի մարդկանց հետ:

Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղազիտական, տնտեսագիտական դաստիարակության հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար:

Лиана Арутюнян, Роль семьи в процессе воспитания ребенка-Основная цель воспитания- формирование и дальнейшее развитие личности ребенка. От воспитания зависит восприятие ребенком реальности, его взаимоотношение с окружающими людьми. В семье закладывается основа морального, эстетического и трудо-

вого воспитания. Для ребенка семья -это готовый пример построения собственной жизни.

Liana Harutyunyan, The role of the family in the child rearing process-The main purpose of upbringing is to develop the child's personality and its further development. The child's perception of reality depends on upbringing, his relationships with the people around him.

The basis of the family is moral, aesthetic, and the basis of economic upbringing. For a child, the family is a ready example of building one's own life.

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՆԿՅՈՒՆ

ԱՐԴԻ ԴՊՐՈՑԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԼԻՆՅԱ ՇԱՀԲԱՉՅԱՆ

Սեպտեմբերի 21-ին մասնակցում էի ՀՀ անկախության 26-րդ տարելիցին նվիրված համայնքային փոքրիկ ցերեկույթին: Հենց այնպես, հերթական միջոցառում չէր այն ինձ համար: Կարծում եմ նաև հավաքվածներից շատ-շատերի համար նույնպես: Մի տեսակ անբացատրելի հպարտություն էի ապրում, մի անսովոր ուրախություն և հուզմունք: Նայում էի բեմի երկու կողմերում եռագույնը ուրախ թափահարող դպրոցականներին ու մտածում. “Այս ինչ նոր, քաջ, համարձակ ու ինքնուրույն սերունդ է ապրում մեր հայրենիքում, ինչ անկախ են, ուժեղ ու հաստատակամ”: Այս ամենը մտածում էի ոչ որպես տնօրեն, ոչ ի պաշտոնե, այլ ուղղակի որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Իսկ եթե ավելի լուրջ մտտենանք այս հարցին, արդեն որպես տնօրեն, մարդ, որին վստահված է 400 և ավելի աշակերտների կրթության և դաստիարակության մեծ պատասխանատվություն պահանջող գործը, կարծում եմ, որ այսօր դպրոցը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Կրկին հիշեցի կրթության և գիտության փոխնախարար պարոն Մ. Մկրտչյանի խոսքերը. “Երբորդ հազարամյակ թնակոխած մարդկության աշխարհահայացքն այնքան խիստ է կաղապարված դաս, դասարան, դասացուցակ, դասամատյան, դասագիրք, ուսումնական առարկա, ուսուցիչ, դպրոց, բուհ, դասախոս հասկացություններով, որ կրթության կազմակերպումը այս ձևերից դուրս ոչ միայն չի պատկերացվում, այլև նույնիսկ այդ մասին քննարկումները համարվում են անհեթեթ”: Ասել, թե 21-րդ դարի դպրոցը պետք է ներառի ավելի լայնամասշտաբ գործառնություններ, քան 20-րդ դարեվերջին, կնշանակի ոչինչ չասել: Այս հողվածում սակայն ինձ հուզող հիմնահարցը դպրոցի հետզհետե աճող դերն է աշակերտների՝ որպես հայ մարդու դաստիարակման գործում: Եթե դրան ավելացնենք նաև համամարդկային արժեքներ ձևավորելու գործառնությունը, սոցիալականացման խնդիրները, ապա կունենաք մի լայն շրջանակ, որի կենտրոնում աշակերտն է: Ավելի հանգամանորեն քննարկելու դեպքում կհասկանանք, որ դպրոցն այսօր այն կրթօջախն է, որը վճռորոշ նշանակություն ունի ցանկացած սովորողի կյանքում: Անկասկած դպրոցն այսօր շատ ավելի սերտ կապերով է կապված ծնողական համայնքի, հասարակության հետ ընդհանրապես: Հետևաբար ավելի պարզ է դառնում նաև ուսուցիչների, դպրոցի աշխատանքների թափանցիկությունն ու վերահսկելիությունը: 21-րդ դարը գերհագեցված է տեղեկատվական տեխնոլոգիաներով համացանցը դարձել է մարդու առօրյայի անբաժան մասը, դպրոցն էլ, բնականաբար, չի կարող անմասն մնալ այդ ամենից: Մեր փոքրիկ հանրապետությունում դժվար կգտնես դպրոց, որը համակարգիչներով և համացանցով ապահովված չէ: Սա ունի և դրական և բացասական կողմեր, սակայն խնդիրն այստեղ այլ է՝ կարողանալ մեծածավալ տեղեկատվական հորձանոտում պահպանել հայ աշակերտի Հայ մարդ տեսակը՝ իր բոլոր բարձր արժանիքներով, հայրենասիրությունով, անձնուրացությունով հանդերձ: Եվ կրկին հպարտությամբ նշեմ, որ դա հաջողվում է շնորհիվ հայագրային դպրոցի, որն այնքան քննադատվում է, որն այնքան հաճախ է հայտնվում բոլորի ուշադրության կիզակետում՝ այս կամ այն արատավոր երևույթի հետ

կապված: Ուրեմն որքան պարտավորեցնող է հայ տնօրենի գործը, այն տնօրենի որ ամեն օր առնչվում է ուսուցչական համայնքի, աշակերտական համայնքի, ծնողական համայնքի, իր վերադասի հետ: Հայ դպրոցը, հայ ուսուցիչները մեծ հարգանքի, գնահատանքի են արժանացել բոլոր ժամանակաշրջաններում: Պետականության բացակայության պայմաններում դպրոցն ու ուսուցիչն են կատարել ազգապահպան գործառույթը, որի շնորհիվ հասել ենք մինչև այսօր: Ուրեմն գնահատենք դպրոցն ու ուսուցչին ըստ արժանվույն և չնոռանանք նրանց դերը մեր օրերում ևս:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայ ազգագրական գիտությունը Խորհրդային շրջանում
(1920-1940-ական թթ.) ----- 5

ԴԱՎԻԹ ԹԻՆՈՅԱՆ

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Լևոն
2-րդի կառավարման շրջանում ----- 29

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի մարտական ուղին
(1991-1994թթ.) ----- 37

ՆՎԵՐ ՄԻՍՈՆՅԱՆ

Բոլշևիկները Հայաստանի խորհրդայնացման նախաշեմին ----- 46

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Արևմտահայության ազատագրության խնդիրն ըստ Դրոշակ պարբերականի
մի քանի հրապարակումների (1891թ. սեպտեմբեր, 1892թ. փետրվար) ----- 53

ԼԻԱՆԱ ՄԱՍՅԱՆ

ԱՄՆ-ի հայ համայնքի ձևավորումը և ամերիկահայ առաջին լոբբիստական
կազմակերպությունների գործունեությունը ----- 59

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լիբանանահայրալեզվական պատերազմը (2006թ). Մի շարք մտեցումներ և դիր-
քորոշումներ ----- 73

ԼԻԱՆԱ ՄԱՍՅԱՆ

Ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների կողմից Հայոց ցե-
ղասպանության ճանաչման համար տարվող պայքարը Միավորված Ազգերի
Կազմակերպությունում (1965-1991 թթ.)----- 80

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԽՍՀ-ում քաղաքականությունը կրոնի ու եկեղեցու նկատմամբ
1920-ական թթ. ----- 88

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԼՎԱՐԴ ՔԻԼԱՐՁՅԱՆ

Բառակազմական հնարանքները Վ.Թեքեյանի չափածոյի լեզվաոճական մշա-
կումներում ----- 95

ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լեզվաերկրագիտության նշանակությունը օտար լեզվի ուսուցման գործընթա-
ցում ----- 102

GAÏANÉ GASPARIAN

Les particularités du sens implicite dans le roman de Gustave Flaubert «Madame
Bovary» ----- 106

KRISTINE HARUTYUNYAN

Personal names in English and Armenian tales ----- 115

JEMMA MILITONYAN	
Effective Grammar Teaching: The What, Why and How -----	122
АНЖЕЛА АЙДИНЯН	
О роли и месте русскоязычных СМИ в едином информационном пространстве РА -----	128
ԱԻԴԱ ՍԱՐԶԱԴՅԱՆ	
Վ.Դավթյանի ասքերի ոգու և լեզվի գեղագիտությունը -----	132
ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
Փոքր մարդու դրաման Երուխանի նովելներում -----	140

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ	
Միգրանտների քաղաքական ներգրավվածության գնահատման ցուցիչները Եվրոպացի հետազոտողների կողմից -----	145
ГАЙАНЕ СОЛАХЯН	
Политико-идеологические основы концепции Евразийского союза в совре- менных реалиях -----	154
ՌԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ	
Հավատի իմացաբանությունը գիտության մեջ -----	160

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ	
Կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման սոցիալ տնտեսական հիմնախնդ- րները -----	165
ԱՐՓԻՆԵ ԵԳԱՆՅԱՆ	
Հարկային բեռի գնահատման եղանակների հարցի շուրջ -----	170
ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՎԵՀԱՆՈՒՇ ՄԱՐԴԱՆՅԱՆ	
Ֆինանսական և հարկային հաշվառման համեմատական վերլուծություն -----	175

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ	
Էթիկական մարտահրավերները ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին -----	182
ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ	
Հայկական հեռուստատեսային կոնտենտի ինտերնետ արխիվացումը ՅուԹյուբում (YouTube.com) -----	187
ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ	
ԶԼՄ-ների կառուցվածքային վերափոխումների ազդեցությունը լեզվական իրողության վրա -----	194

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱԶԱՐՅԱՆ	
Ազգային ինքնության հիմնախնդիրը մշակույթի հարացույցում -----	198

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱԲԱԶՅԱՆ

Ճի'շտ խոսենք ----- 202

ԳԱԳԻԿ ԷՄԻՆՅԱՆ, ԴԱՎԻԹ ՅՈԼՉՅԱՆ

Գյուղական և քաղաքային դպրոցների սովորողների ուսուցման և դաստիարակության կազմակերպման մի քանի առանձնահատկություններ ----- 211

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ, ՎԱԼՅԱ ԿՈԼՈՅԱՆ

Ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնախնդիրները տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների տարածվածության պայմաններում ----- 216

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ընտանքի դերը երեխայի դաստիարակության գործընթացում ----- 221

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՆԿՅՈՒՆ

ԼԻԼՅԱ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Արդի դպրոցը հայ իրականության մեջ ----- 230

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:

Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբ-յուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի - բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում:

Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):

Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(16)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Թ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Չափսը՝ 70x100¹/₁₆ . Տպ. Մանուկը՝ 14.375. Տպաքանակ՝ 100

ԵՊՀ հրատարակչություն

Ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1

A K U N Q
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
NUMBER 2(16)

Number-responsible – A.A. NERSISYAN

Combuter designer – T. V. SARGSYAN

Size- $70 \times 100 \frac{1}{16}$. Press- 14.375. Edition- 100.

YSU publishing-house

c. Yerevan, 0025, Al. Manukyan 1